

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ

ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝

մի կողմից, և

ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԻՌԼԱՆԴԻԱՆ,

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆԸ,

ՀՈՒՆԳԱՐԻԱՆ,

ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՌՈՒՄԻՆԻԱՆ,

ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,

ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՄԻՍՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,

«Եվրոպական միության մասին» պայմանագրի, «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի և «Ատոմային էներգիայի եվրոպական համայնք ստեղծելու մասին» պայմանագրի պայմանավորվող կողմերը, այսուհետ՝ անդամ պետություններ,

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ և

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ, այսուհետ՝ Եվրատոմ՝

մյուս կողմից,

այսուհետ համատեղ՝ Կողմեր,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ Կողմերի միջև սերտ կապերն ու նրանց ընդհանուր արժեքները, ինչպես նաև 1996 թվականի ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում ստորագրված և 1999 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Եվրոպական Համայնքների ու դրանց անդամ պետությունների՝ մի կողմից և Հայաստանի Հանրապետության՝ մյուս կողմից միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրով (ԳՀՀ) նախկինում հաստատված կապերն ամրապնդելու և Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ու Արևելյան գործընկերության, ինչպես նաև սույն Համաձայնագրի շրջանակներում հավասար գործընկերության վրա հիմնված սերտ և կանոնավոր համագործակցությունը խթանելու նրանց ցանկությունը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ համատեղ ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի, այդ թվում՝ դրա ներածական դրույթների ներդրումը, և գործընկերության առաջնությունների կարևորությունը՝ Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերություններն ամրապնդելու և օգնելու առաջ մղելու Հայաստանի Հանրապետությունում բարեփոխման ու մոտարկման գործընթացը, ինչպես հիշատակվում է այսուհետ, այդպիսով նպաստելով քաղաքական և տնտեսական ընդլայնված համագործակցությանը.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ էլ ավելի ամրապնդել հիմնարար ազատությունների, մարդու իրավունքների, այդ թվում՝ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման նկատմամբ հարգանքը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ ժողովրդավարության և շուկայական տնտեսության ամրապնդմանն ուղղված ներքին բարեփոխումները՝ մի կողմից, և հակամարտությունների տևական կարգավորումը՝ մյուս կողմից, փոխկապակցված են: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում կայուն ժողովրդավարական բարեփոխման գործընթացը կնպաստի ամբողջ տարածաշրջանում վստահության և կայունության մթնոլորտ ստեղծելուն.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ էլ ավելի խթանել Հայաստանի Հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացումը, օրինակ՝ քաղաքացիական հասարակության զարգացման, պետական կառույցների կայացման, պետական կառավարման և քաղաքացիական ծառայության բարեփոխման, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցով, ինչպես նաև ընդլայնված առևտրային ու տնտեսական համագործակցության, այդ թվում՝ հարկային ոլորտում արդյունավետ կառավարման, աղքատության նվազեցման և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտների լայն շրջանակում, այդ թվում՝ արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտում լայնածավալ համագործակցության միջոցով.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ լիարժեք իրականացնել Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Միավորված ազգերի կազմակերպության 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1950 թվականի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության համաժողովի 1975 թվականի Հելսինկյան եզրափակիչ ակտի (ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտ) նպատակները, սկզբունքները և դրույթները.

ԿՐԿԻՆ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՎ միջազգային խաղաղությունը և անվտանգությունը խթանելու, ինչպես նաև համաձայնեցված ձևաչափերով արդյունավետ բազմակողմանիության և վեճերի խաղաղ կարգավորման մեջ ներգրավվելու իրենց կամքը, մասնավորապես՝ այդ նպատակով համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում.

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԼԻՆԵԼՈՎ զանգվածային ոչնչացման զենքերի (ԶՈԶ) տարածման և դրանց մատակարարման միջոցների դեմ պայքարի համար և զինաթափման ու չտարածման, ինչպես նաև միջուկային ապահովության և անվտանգության հարցերով համագործակցության համար միջազգային պարտավորություններին.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Հայաստանի Հանրապետության ակտիվ մասնակցության կարևորությունը տարածաշրջանային համագործակցության ձևաչափերում՝ ներառյալ Եվրոպական միության կողմից աջակցվողները. ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից՝ միջազգային կազմակերպություններում և համագործակցության ձևաչափերում իր մասնակցությանը և դրանից բխող իր ստանձնած պարտավորություններին տրվող կարևորությունը.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ էլ ավելի զարգացնել փոխադարձ հետաքրքրություններ կայացնող երկկողմ և միջազգային հարցերի, այդ թվում՝ տարածաշրջանային ասպեկտների վերաբերյալ կանոնավոր քաղաքական երկխոսությունը՝ հաշվի առնելով Եվրոպական միության ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը, այդ թվում՝ ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականությունն ու համապատասխան ոլորտներում Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը. ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից՝ միջազգային կազմակերպություններում և համագործակցության ձևաչափերում իր մասնակցությանը և դրանից բխող իր ստանձնած պարտավորություններին տրվող կարևորությունը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և տևական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության հանձնառության կարևորությունը և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից վարվող բանակցությունների շրջանակներում այդ կարգավորմանը հնարավորինս շուտ հասնելու անհրաժեշտությունը. ընդունելով նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված նպատակների և սկզբունքների հիման վրա այդ կարգավորմանը հասնելու անհրաժեշտությունը, մասնավորապես, այն նպատակների և սկզբունքների, որոնք առնչվում են ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից հրաժարվելուն, պետությունների տարածքային ամբողջականությանը և ժողովուրդների իրավահավասարությանն ու ինքնորոշմանը, և արտացոլված են ԵԱՀԿ 2008 թվականի նախարարների խորհրդի 16-րդ հանդիպումից ի վեր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում արված բոլոր հայտարարություններում. նշելով նաև կարգավորման այս գործընթացին աջակցելու՝ Եվրոպական միության կողմից հայտարարված հանձնառությունը.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ կանխարգելել կոռուպցիան և պայքարել դրա դեմ, պայքարել կազմակերպված հանցավորության դեմ և ամրապնդել ահաբեկչության դեմ պայքարին ուղղված համագործակցությունը.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ համապարփակ մոտեցմամբ ամրապնդել միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման վերաբերյալ իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուշադրություն դարձնելով օրինական միգրացիային և անօրինական միգրացիայի ու մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված համագործակցությանը, ինչպես նաև 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված և 2014 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետ ընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի (ռեադմիսիայի համաձայնագիր) արդյունավետ իրականացմանը.

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՎ, որ Կողմերի քաղաքացիների ընդլայնված շարժունակությունը անվտանգ և արդյունավետ կառավարվող միջավայրում շարունակում է մնալ հիմնական նպատակը և դիտարկելով պատեհ ժամանակ մեկնարկել Հայաստանի Հանրապետության հետ մուտքի արտոնագրի վերաբերյալ երկխոսությունը՝ պայմանով, որ արդյունավետ կառավարվող և անվտանգ շարժունակության պայմանները, այդ թվում՝ 2012 թվականի դեկտեմբերի 17-ին Բրյուսելում ստորագրված և 2014 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի (վիզաների տրամադրումը դյուրացնելու համաձայնագիր) արդյունավետ իրականացումը, գործում են.

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԼԻՆԵԼՈՎ ազատ շուկայական տնտեսության սկզբունքներին և Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումներին նպաստելու Եվրոպական միության պատրաստակամությունը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Կողմերի՝ տնտեսական համագործակցությունը խորացնելու պատրաստակամությունը, այդ թվում՝ առևտրի հետ կապված ոլորտներում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) Կողմերի անդամակցությունից բխող իրավունքներին ու պարտականություններին համապատասխան և այդ իրավունքների ու պարտականությունների թափանցիկ և ոչ խտրական կիրառման միջոցով.

ՀԱՄՈԶՎԱԾ ԼԻՆԵԼՈՎ, որ սույն Համաձայնագիրը Կողմերի միջև տնտեսական հարաբերությունների և առավելապես առևտրի ու ներդրումների զարգացման համար կստեղծի նոր միջավայր և կխթանի մրցակցությունը, որոնք տնտեսության վերակառուցման և արդիականացման համար կարևոր նշանակություն ունեն.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ հարգել կայուն զարգացման սկզբունքները.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ ապահովել շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ ներառյալ անդրսահմանային համագործակցությունը և բազմակողմ միջազգային պայմանագրերի իրագործումը.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ բարձրացնել էներգիայի մատակարարման անվտանգության և ապահովության մակարդակը՝ դյուրացնելով համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը, մեծացնելով շուկայի ինտեգրումը և նորմատիվային հիմքերի աստիճանական մոտարկումն այսուհետ հիշատակվող ԵՄ օրենսդրության առանցքային տարրերի հետ, ներառյալ, *inter alia*, խթանելով էներգաարդյունավետությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության՝ էներգիայի մատակարարողի, տարանցման և սպառող երկրների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքներին հավատարիմ լինելու հանձնառությունները.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ ապահովել այսուհետ հիշատակվող միջուկային ապահովության և միջուկային անվտանգության բարձր մակարդակներ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ընդլայնված էներգետիկ համագործակցության անհրաժեշտությունը և էներգետիկ խարտիայի պայմանագրի դրույթների լիակատար պահպանման վերաբերյալ Կոդմերի հանձնառությունը.

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ բարելավել հանրային առողջության և անվտանգության ու մարդու առողջության պաշտպանության մակարդակը՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները, բնապահպանական կարիքները և կլիմայական փոփոխությունը.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ ընդլայնել տարբեր երկրների մարդկանց միջև շփումները, այդ թվում՝ գիտության և տեխնոլոգիայի, կրթության և մշակույթի, երիտասարդության և սպորտի բնագավառներում համագործակցության ու փորձի փոխանակման միջոցով.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ խթանել միջսահմանային և միջտարածաշրջանային համագործակցությունը.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Հայաստանի Հանրապետության հանձնառությունը՝ իր օրենսդրությունն աստիճանաբար Եվրոպական միության օրենսդրության համապատասխան մասերին մոտարկելու, որպես լայնածավալ բարեփոխումներին ուղղված իր ջանքերի մաս՝ այն արդյունավետորեն իրականացնելու, և իր վարչական ու ինստիտուցիոնալ կարողությունները սույն Համաձայնագրի կատարման համար անհրաժեշտ ծավալով զարգացնելու մասով, և ընդունելով համագործակցության բոլոր առկա փաստաթղթերի համաձայն Եվրոպական միության կայուն աջակցությունը, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության բարեփոխումների արագությունն ու տնտեսական կարիքներն արտացոլող այդ հանձնառության հետ կապված տեխնիկական, ֆինանսական և տնտեսական աջակցությունը.

ՆՇԵԼՈՎ, որ եթե սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը որոշեն ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում կնքել հատուկ համաձայնագրեր, որոնք Եվրոպական միության կողմից կկնքվեն «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի երրորդ մասի V բաժնի համաձայն, ապա նման ապագա համաձայնագրերի դրույթները պարտադիր չեն լինի Միացյալ Թագավորության և (կամ) Իռլանդիայի համար, եթե Եվրոպական միությունը Միացյալ Թագավորության և (կամ) Իռլանդիայի հետ միաժամանակ իրենց նախորդ համապատասխան երկկողմ հարաբերությունների հետ կապված Հայաստանի Հանրապետությանը չի տեղեկացնում այն մասին, որ նման համաձայնագրերը պարտադիր են դարձել Միացյալ Թագավորության և (կամ) Իռլանդիայի համար՝ որպես Եվրոպական միության մաս՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրին և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրին կից՝ ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտների առնչությամբ Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման վերաբերյալ թիվ 21 արձանագրությանը համապատասխան: Նմանապես, Եվրոպական միության՝ հետագա ցանկացած ներքին միջոցառում, որն ընդունվել է սույն Համաձայնագրի իրականացման համար՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի երրորդ մասի V բաժնի համաձայն, պարտադիր չէ Միացյալ Թագավորության և (կամ) Իռլանդիայի համար, եթե վերջիններս չեն տեղեկացնում այդ միջոցառումներին մասնակցելու կամ դրանք ընդունելու իրենց ցանկության մասին՝ թիվ 21 արձանագրությանը համապատասխան. հաշվի առնելով նաև, որ նման ապագա համաձայնագրերը կամ Եվրոպական միության՝ նման ապագա ներքին միջոցառումները պետք է համապատասխանեն նշված Պայմանագրերին կից՝ Դանիայի դիրքորոշման վերաբերյալ թիվ 22 արձանագրությանը.

ՀԱՄԱԶԱՅՆԵՑԻՆ ՆԵՐՔՈՆՀԻՇՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ՄԱՍ I

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 1

Նպատակները

Սույն Համաձայնագրի նպատակներն են՝

- (a) ամրապնդել Կողմերի միջև համապարփակ քաղաքական և տնտեսական գործընկերությունն ու համագործակցությունը՝ հիմնված ընդհանուր արժեքների և սերտ կապերի վրա, այդ թվում՝ բարձրացնելով Հայաստանի Հանրապետության մասնակցությունը Եվրոպական միության քաղաքականությանը, ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին.
- (b) ամրապնդել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտների վերաբերյալ քաղաքական երկխոսության շրջանակները՝ խթանելով Կողմերի միջև սերտ քաղաքական հարաբերությունների զարգացումը.
- (c) նպաստել Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության և քաղաքական, տնտեսական ու ինստիտուցիոնալ կայունության ամրապնդմանը.
- (d) խթանել, պահպանել և ամրապնդել խաղաղությունն ու կայունությունը և՛ տարածաշրջանային, և՛ միջազգային մակարդակներով, այդ թվում՝ լարվածության աղբյուրները վերացնելու համար ջանքերը համախմբելու, սահմանային անվտանգությունն ուժեղացնելու միջոցով, ինչպես նաև միջսահմանային համագործակցությունն ու բարիդրացիական հարաբերությունները խթանելով.
- (e) ընդլայնել համագործակցությունն ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտում՝ նպատակ ունենալով ամրապնդելու իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը.

- (f) ընդլայնել շարժունակությունը և տարբեր երկրների մարդկանց միջև շփումը.
- (g) աջակցել Հայաստանի Հանրապետության ջանքերին՝ ուղղված միջազգային համագործակցության միջոցով, այդ թվում՝ իր օրենսդրությունը ԵՄ այսուհետ հիշատակվող օրենսդրությանը մոտարկելու միջոցով իր տնտեսական ներուժի զարգացմանը.
- (h) հաստատել առևտրի ոլորտում ընդլայնված համագործակցություն, որը համապատասխան ոլորտներում ապահովում է կանոնակարգող կայուն համագործակցություն՝ ԱՀԿ-ին անդամակցությունից բխող իրավունքներին և պարտականություններին համապատասխան, և
- (i) ստեղծել պայմաններ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում ավելի ու ավելի սերտ համագործակցության համար:

ՀՈԴՎԱԾ 2

Ընդհանուր սկզբունքները

1. Ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը՝ ամրագրված, մասնավորապես, ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում և 1990 թվականի Նոր Եվրոպայի փարիզյան խարտիայում, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան այլ փաստաթղթերում, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, կազմում է Կողմերի ներքին և արտաքին քաղաքականության հիմքը և սույն Համաձայնագրի կարևոր տարրը:

2. Կողմերը վերահաստատում են ազատ շուկայական տնտեսության սկզբունքների, կայուն զարգացման, տարածաշրջանային համագործակցության և արդյունավետ բազմակողմանիության վերաբերյալ իրենց հանձնառությունը:

3. Կողմերը վերահաստատում են իրենց կողմից արդյունավետ կառավարման սկզբունքների, ինչպես նաև իրենց միջազգային պարտավորությունների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների նկատմամբ հարգանքը:

4. Կողմերը պարտավորվում են պայքարել կոռուպցիայի դեմ, պայքարել անդրազգային կազմակերպված հանցավորության և ահաբեկչության տարբեր տեսակների դեմ, խթանել կայուն զարգացումը, արդյունավետ բազմակողմանիությունը և պայքարել ՋՈՁ-երի տարածման և դրանց մատակարարման համակարգերի դեմ, այդ թվում՝ ԵՄ քիմիական, կենսաբանական, ճառագայթային և ատոմային ռիսկերի նվազեցման կենտրոնի Գերազանցության նախաձեռնության միջոցով: Այս հանձնառությունը Կողմերի միջև հարաբերությունների և համագործակցության զարգացման առանցքային գործոնն է և նպաստում է տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը:

ՄԱՍ II

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՈՒՄԸ.
ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 3

Քաղաքական երկխոսության նպատակները

1. Կողմերի միջև քաղաքական երկխոսությունը փոխադարձ հետաքրքրություններ կայացնող բոլոր ոլորտներում, այդ թվում՝ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի, ինչպես նաև ներքին բարեփոխումների վերաբերյալ պետք է շարունակի զարգանալ և ամրապնդվել: Այդ երկխոսությամբ կբարձրացվի արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի վերաբերյալ քաղաքական համագործակցության արդյունավետությունը՝ ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից՝ միջազգային կազմակերպություններում և համագործակցության ձևաչափերում իր մասնակցությանը և դրանից բխող իր ստանձնած պարտավորություններին տրվող կարևորությունը:

2. Քաղաքական երկխոսության նպատակներն են՝
- (a) էլ ավելի զարգացնել և ամրապնդել փոխադարձ հետաքրքրություններ կայացնող բոլոր ոլորտների վերաբերյալ քաղաքական երկխոսությունը,
 - (b) ընդլայնել քաղաքական գործընկերությունը և բարձրացնել արտաքին ու անվտանգության քաղաքականության ոլորտում համագործակցության արդյունավետությունը,
 - (c) խթանել արդյունավետ բազմակողմանիության վրա հիմնված միջազգային խաղաղությունը, կայունությունը և անվտանգությունը,
 - (d) ամրապնդել միջազգային անվտանգության և ճգնաժամի կառավարման վերաբերյալ Կողմերի միջև համագործակցությունը և երկխոսությունը, մասնավորապես՝ համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերները և դրանց հետ կապված սպառնալիքները հաղթահարելու նպատակով,
 - (e) ամրապնդել ՁՈԶ-երի տարածման և դրանց մատակարարման համակարգերի դեմ պայքարին ուղղված համագործակցությունը,
 - (f) աջակցել Կողմերի միջև կոնկրետ արդյունքների ուղղված և գործնական համագործակցությանը՝ եվրոպական մայրցամաքում խաղաղության, անվտանգության և կայունության հասնելու համար,
 - (g) ամրապնդել ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, արդյունավետ կառավարման և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների ազատության և փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների նկատմամբ հարգանքը, և նպաստել համախմբված ներքին քաղաքական բարեփոխումներին,
 - (h) զարգացնել Կողմերի միջև երկխոսությունն ու խորացնել համագործակցությունն անվտանգության և պաշտպանության ոլորտում,

- (i) խթանել հակամարտությունների խաղաղ կարգավորումը,
- (j) խթանել ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված դրա նպատակներն ու սկզբունքները և մասնակից պետությունների միջև հարաբերություններն ուղղորդող սկզբունքները՝ սահմանված ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտով, և
- (k) խթանել տարածաշրջանային համագործակցությունը, զարգացնել բարիդրացիական հարաբերությունները և բարձրացնել տարածաշրջանային անվտանգության մակարդակը, այդ թվում՝ տարածաշրջանային առևտուրը և միջսահմանային տեղաշարժը խթանելու համար սահմանները բացելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելով:

ՀՈՒՎԱԾ 4

Ներքին բարեփոխումները

Կողմերը պետք է համագործակցեն հետևյալ ոլորտներում՝

- (a) ժողովրդավարական հաստատությունների կայունության ու արդյունավետության և իրավունքի գերակայության զարգացում, համախմբվածություն ու ամրապնդում,
- (b) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում,
- (c) դատական և իրավական բարեփոխումների հետագա առաջընթացի ապահովում այնպես, որ երաշխավորվի դատական համակարգի, քրեական հետապնդման և իրավապահ համակարգի անկախությունը, որակն ու արդյունավետությունը,
- (d) վարչական կարողությունների ամրապնդում և իրավապահ մարմինների անկողմնակալության և արդյունավետ աշխատանքի երաշխավորում,

- (e) պետական կառավարման ոլորտում բարեփոխում և հաշվետու, արդյունավետ, թափանցիկ ու մասնագիտացված քաղաքացիական ծառայության հետագա զարգացում, և
- (f) կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետության ապահովում, մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդման և համապատասխան միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերի արդյունավետ իրականացման նպատակով, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի 2003 թվականի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան:

ՀՈԴՎԱԾ 5

Արտաքին և անվտանգության քաղաքականությունը

1. Կողմերը պետք է ակտիվացնեն արտաքին և անվտանգության քաղաքականության, այդ թվում՝ ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության ոլորտում իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից՝ միջազգային կազմակերպություններում և համագործակցության ձևաչափերում իր մասնակցությունը և դրանից բխող իր առկա պարտավորություններին տրվող կարևորությունը, ինչպես նաև պետք է լուծեն, մասնավորապես, հակամարտության կանխարգելման և ձգնաժամի կառավարման, ռիսկի նվազեցման, կիբեռանվտանգության, անվտանգության ոլորտի բարեփոխման, տարածաշրջանային կայունության, գլխաթափման, չտարածման, սպառազինությունների վերահսկման և արտահանման վերահսկման հետ կապված խնդիրներ: Համագործակցությունը պետք է հիմնված լինի ընդհանուր արժեքների ու փոխադարձ հետաքրքրությունների վրա և պետք է ուղղված լինի դրա արդյունավետության բարձրացմանը՝ օգտվելով երկկողմ, միջազգային և տարածաշրջանային հարթակներից, մասնավորապես՝ ԵԱՀԿ:

2. Կողմերը վերահաստատում են միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վերաբերյալ իրենց հանձնառությունը՝ ներառյալ այն սկզբունքներն ու նորմերը, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում, և իրենց հանձնառությունը երկկողմ ու բազմակողմ հարաբերություններում խթանելու այդ սկզբունքները:

ՀՈՒՎԱԾ 6

Միջազգային նշանակության ծանր հանցագործությունները և Միջազգային քրեական դատարանը

1. Կողմերը վերահաստատում են, որ միջազգային հանրության համար մտահոգիչ ամենածանր հանցագործությունները իրենց ամբողջության մեջ չպետք է անպատիժ մնան, և որ դրանց արդյունավետ քրեական հետապնդումը պետք է ապահովվի ազգային և միջազգային մակարդակով, այդ թվում՝ Միջազգային քրեական դատարանի մակարդակով միջոցներ ձեռնարկելու միջոցով:
2. Կողմերը համարում են, որ Միջազգային քրեական դատարանի ստեղծումը և դրա արդյունավետ գործունեությունը միջազգային խաղաղության ու արդարադատության համար կարևոր զարգացում է: Կողմերի նպատակը պետք է լինի ամրապնել խաղաղության և միջազգային արդարադատության խթանման հարցում համագործակցությունը՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը և դրան հարակից փաստաթղթերը վավերացնելու և կիրարկելու միջոցով՝ հաշվի առնելով իրենց իրավական ու սահմանադրական շրջանակները:
3. Կողմերը համաձայնում են սերտորեն համագործակցել ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների կանխարգելման գործում՝ օգտվելով համապատասխան երկկողմ և բազմակողմ շրջանակներից:

ՀՈԴՎԱԾ 7

Հակամարտության կանխարգելումը և ճգնաժամի կառավարումը

Կողմերը պետք է ամրապնդեն հակամարտության կանխարգելման և ճգնաժամի կառավարման ոլորտում գործնական համագործակցությունը, մասնավորապես, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հնարավոր մասնակցությունը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ԵՄ-ի կողմից իրականացվող ճգնաժամի կառավարման քաղաքացիական և ռազմական գործողություններին, ինչպես նաև համապատասխան վարժանքներին և վերապատրաստման դասընթացներին:

ՀՈԴՎԱԾ 8

Տարածաշրջանային կայունությունը և հակամարտությունների խաղաղ կարգավորումը

1. Կողմերը պետք է ակտիվացնեն իրենց համատեղ ջանքերը հետագա տարածաշրջանային համագործակցության պայմանները բարելավելու համար՝ խթանելով միջսահմանային տեղաշարժով բաց սահմանների առկայությունը, բարիդրացիական հարաբերությունները և ժողովրդավարական զարգացումը՝ այդպիսով նպաստելով կայունությանը և անվտանգությանը, ինչպես նաև պետք է աջխատեն հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ:

2. 1-ին պարբերությունում նշված ջանքերը պետք է հաջորդեն միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման ընդհանուր սկզբունքներին, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում և այլ համապատասխան բազմակողմ փաստաթղթերում, որոնց Կողմերը միացել են: Կողմերն ընդգծում են հակամարտությունների խաղաղ կարգավորման համար համաձայնեցված առկա ձևաչափերի կարևորությունը:

3. Կողմերն ընդգծում են, որ սպառազինությունների վերահսկողությունը և վստահության ու անվտանգության մթնոլորտ ստեղծելուն ուղղված միջոցառումները շարունակում են Եվրոպայում անվտանգության, կանխատեսելիության և կայունության համար մեծ կարևորություն ունենալ:

ՀՈՒՎԱԾ 9

Զանգվածային ոչնչացման զենքերը, դրանց չտարածումը և զինաթափումը

1. Կողմերը համարում են, որ ՁՈԶ-երի տարածումը և դրանց մատակարարման միջոցները՝ թե՛ պետական և թե՛ ոչ պետական դերակատարներին, ինչպիսիք են օրինակ՝ ահաբեկիչները և մյուս հանցավոր խմբերը, ամենալուրջ սպառնալիքներից մեկն են միջազգային խաղաղության և կայունության համար: Հետևաբար, Կողմերը համաձայնում են համագործակցել ՁՈԶ-երի տարածման և դրանց մատակարարման միջոցների դեմ պայքարի մասով և նպաստել դրան՝ լիարժեք համապատասխանելով զինաթափման և չտարածման վերաբերյալ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ներքո իրենց ստանձնած պարտավորություններին և ազգային մակարդակով կատարելով դրանք, ինչպես նաև այլ համապատասխան միջազգային պարտավորությունները: Կողմերը համաձայնում են, որ այս դրույթը սույն Համաձայնագրի կարևոր տարր է:

2. Կողմերը համաձայնում են համագործակցել ՁՈԶ-երի տարածման և դրանց մատակարարման միջոցների դեմ պայքարի մասով և նպաստել դրան՝

(a) համապատասխան դեպքերում մյուս բոլոր վերաբերելի միջազգային փաստաթղթերը ստորագրելու, վավերացնելու կամ դրանց միանալու և դրանք լիարժեք իրականացնելու համար քայլեր ձեռնարկելու միջոցով, և

(b) ազգային մակարդակով արտահանման նկատմամբ վերահսկողության, այդ թվում՝ ՁՈԶ-ի հետ կապված ապրանքների արտահանման և տարանցման նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև երկակի նշանակության տեխնոլոգիաներով ՁՈԶ-ի վերջնական սպառման նկատմամբ վերահսկողության արդյունավետ համակարգը էլ ավելի զարգացնելու միջոցով:

3. Կողմերը համաձայնում են հաստատել կանոնավոր քաղաքական երկխոսություն, որը կուղեկցի և կհամախմբի սույն հոդվածում նշված տարրերը:

ՀՈՂՎԱԾ 10

Փոքր տրամաչափի զինատեսակների և թեթև զենքերի ու սովորական զենքի արտահանման նկատմամբ վերահսկողությունը

1. Կողմերն ընդունում են, որ փոքր տրամաչափի զինատեսակների և թեթև զենքերի (ՓՏԶԹԶ), այդ թվում՝ դրանց զինամթերքի ապօրինի արտադրությունը և առևտուրը, ինչպես նաև դրանց չափազանց մեծ կուտակումը, կառավարման ցածր մակարդակը, ոչ պատշաճ ապահովված պաշարները և դրանց չվերահսկվող տարածումը շարունակում են լուրջ սպառնալիք ներակայացնել միջազգային խաղաղության և անվտանգության համար:
2. Կողմերը համաձայնում են պահպանել և լիարժեքորեն կատարել ՓՏԶԹԶ-ների, այդ թվում՝ դրանց զինամթերքի ապօրինի առևտրի հետ կապված իրենց համապատասխան պարտավորությունները՝ համաձայն այն առկա միջազգային համաձայնագրերի, որոնց կողմն են նրանք, և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, ինչպես նաև համաձայն այդ ոլորտում կիրառելի այլ միջազգային փաստաթղթերի շրջանակներում իրենց հանձնառությունների, ինչպես օրինակ՝ իր բոլոր ասպեկտներով ՓՏԶԹԶ-ների ապօրինի առևտրի կանխարգելմանը, դրա դեմ պայքարին և այն վերացնելուն ուղղված՝ ՄԱԿ-ի գործողությունների ծրագիրը:
3. Կողմերը պարտավորվում են համագործակցել և ապահովել ՓՏԶԹԶ-ների, այդ թվում՝ դրանց զինամթերքի ապօրինի առևտրի և ավելորդ կուտակումների ոչնչացման հետ կապված իրենց ջանքերի մասով համակարգումը, փոխլրացումը և փոխգործակցությունը՝ համաշխարհային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և, համապատասխան դեպքերում, ազգային մակարդակներով:
4. Բացի այդ, Կողմերը համաձայնում են շարունակել համագործակցել սովորական զենքերի վերահսկման ոլորտում՝ ռազմական տեխնոլոգիայի և սարքավորումների արտահանման վերահսկողությունը կարգավորող ընդհանուր կանոններ սահմանող՝ Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 8-ի Ընդհանուր դիրքորոշմանը և Հայաստանի Հանրապետության համապատասխան ներպետական օրենսդրությանը համահունչ:

5. Կողմերը համաձայնում են հաստատել կանոնավոր քաղաքական երկխոսություն, որը կուղեկցի և կհամախմբի սույն հոդվածում նշված տարրերը:

ՀՈԴՎԱԾ 11

Ահաբեկչության դեմ պայքարը

1. Կողմերը վերահաստատում են ահաբեկչության դեմ պայքարի և դրա կանխարգելման կարևորությունը և համաձայնում են միասին աշխատել երկկողմ, տարածաշրջանային և միջազգային մակարդակով՝ ահաբեկչությունն իր բոլոր ձևերով և դրսևորումներով կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար:

2. Կողմերը համաձայնում են, որ էական է, որպեսզի ահաբեկչության դեմ պայքարն իրականացվի՝ լիովին պահպանելով իրավունքի գերակայությունը և միջազգային իրավունքին, այդ թվում՝ մարդու իրավունքների միջազգային նորմերին, փախստականների վերաբերյալ միջազգային նորմերին և միջազգային մարդասիրական իրավունքին, ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին և ահաբեկչության դեմ պայքարին վերաբերելի բոլոր համապատասխան միջազգային փաստաթղթերին լիովին համապատասխան:

3. Կողմերը կարևորում են ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ պայքարին վերաբերելի բոլոր կոնվենցիաների և արձանագրությունների համընդհանուր վավերացումն ու լիարժեք իրագործումը: Կողմերը համաձայնում են շարունակել խթանել Միջազգային ահաբեկչության մասին համապարփակ կոնվենցիայի նախագծի վերաբերյալ երկխոսությունը և համագործակցել ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ պայքարի համաշխարհային ռազմավարության, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի և Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների կիրառման հարցում: Կողմերը նաև համաձայնում են համագործակցել ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասով միջազգային կոնսենսուսի հասնելուն նպաստելու համար:

ՄԱՍ III

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 12

Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը

1. Ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում իրենց համագործակցության մեջ Կողմերը պետք է հատկապես կարևորեն իրավունքի գերակայության, այդ թվում՝ դատական համակարգի անկախության ամրապնդումը, արդարադատության մատչելիությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքը և քրեական գործերով ու տուժողների իրավունքների դատավարական երաշխիքները:

2. Կողմերը պետք է լիովին համագործակցեն իրավապահ, կոռուպցիայի դեմ պայքարի և արդարադատության իրականացման ոլորտների հաստատությունների արդյունավետ գործունեության հարցում:

3. Մարդու իրավունքները, անխտրականությունը և հիմնարար ազատությունները հարգելը պետք է ուղղորդեն ազատության, անվտանգության և արդարադատության մասով ամբողջ համագործակցությունը:

ՀՈԴՎԱԾ 13

Անձնական տվյալների պաշտպանությունը

Կողմերը անձնական տվյալների բարձր մակարդակով պաշտպանությունն ապահովելու նպատակով համաձայնում են համագործակցել՝ Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կառույցների միջազգային իրավական փաստաթղթերին և ստանդարտներին համապատասխան:

Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությունը

1. Կողմերը վերահաստատում են իրենց տարածքների միջև միգրացիոն հոսքերի համատեղ կառավարման կարևորությունը և պետք է հաստատեն համապարփակ երկխոսություն միգրացիային վերաբերելի բոլոր հարցերի շուրջ, այդ թվում՝ օրինական միգրացիայի, միջազգային պաշտպանության և անօրինական միգրացիայի դեմ պայքարի, մարդկանց ապօրինի տեղափոխման և թրաֆիքինգի վերաբերյալ:

2. Համագործակցությունը պետք է հիմնված լինի հատուկ կարիքների գնահատման վրա, որն իրականացվում է Կողմերի միջև փոխադարձ խորհրդակցության միջոցով և պետք է իրականացվի իրենց համապատասխան օրենսդրության համաձայն: Մասնավորապես, այն պետք է կենտրոնանա՝

- (a) միգրացիայի հիմքում ընկած պատճառներին,
- (b) միջազգային պաշտպանության մասով ներպետական օրենսդրության և գործելակերպի մշակմանը և կիրարկմանը՝ նպատակ ունենալով կատարելու 1951 թվականի «Փախստականների կարգավիճակի մասին» Ժնևի կոնվենցիայի և «Փախստականների կարգավիճակի մասին» 1967 թվականի արձանագրության և այլ այնպիսի վերաբերելի միջազգային փաստաթղթերի դրույթները, ինչպիսին է օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, և ապահովելու «չվերադարձելիության» սկզբունքի պահպանումը,
- (c) ընդունման կանոնների և ընդունված անձանց իրավունքների ու կարգավիճակի, օրինական բնակվող՝ քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ արդարացի վերաբերմունքի և նրանց ինտեգրման, կրթության և վերապատրաստման, ինչպես նաև ռասիզմի ու քսենոֆոբիայի դեմ ուղղված միջոցառումներին,

- (d) անօրինական միգրացիայի, միգրանտների ապօրինի տեղափոխման և մարդկանց թրաֆիքինգի դեմ ուղղված արդյունավետ և կանխարգելիչ քաղաքականության մշակմանը, այդ թվում՝ այն խնդրի լուծմանը, թե ինչպես պետք է պայքարել անօրինական ճանապարհով միգրանտներ ներս բերող և թրաֆիքինգ իրականացնող անձանց ցանցի դեմ, և թե ինչպես պետք է համապատասխան միջազգային փաստաթղթերի շրջանակներում պաշտպանել այդպիսի թրաֆիքինգի գոհերին,
 - (e) այնպիսի հարցերին, ինչպիսիք են միգրացիայի կառավարման, փաստաթղթերի անվտանգության, մուտքի արտոնագրի քաղաքականության, սահմանների կառավարման և միգրացիայի տեղեկատվական համակարգերի ոլորտներում կազմակերպումը, վերապատրաստումը, լավագույն փորձը և մյուս գործառնական միջոցները:
3. Համագործակցությունը կարող է նաև դյուրացնել զարգացման նպատակով շրջանառու միգրացիան:

ՀՈԴՎԱԾ 15

Անձանց տեղաշարժը և հետընդունումը

1. Կողմերն ապահովում են հետևյալ համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարումը՝
- (a) Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագիր, և
 - (b) Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր:

2. Կողմերը պետք է շարունակեն խթանել վիզաների տրամադրումը դյուրացնելու համաձայնագրի միջոցով քաղաքացիների շարժունակությունը և պատեհ ժամանակ կղիտարկեն մուտքի արտոնագրի ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու հարցը՝ պայմանով, որ արդյունավետ կառավարվող և անվտանգ շարժունակության վերաբերյալ պայմանները գործեն: Նրանք պետք է համագործակցեն անկանոն միգրացիայի դեմ պայքարում, այդ թվում՝ ռեադմիսիայի համաձայնագիրը կիրառելու, ինչպես նաև սահմանների կառավարման քաղաքականությունը, ինչպես նաև իրավական ու գործառնական շրջանակները խթանելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 16

Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը

1. Կողմերը պետք է համագործակցեն քրեական և ապօրինի գործունեության, ներառյալ այնպիսի անդրազգային գործունեության՝ կազմակերպված կամ այլ ձևով, դեմ պայքարում և դրանց կանխարգելման գործում ինչպես օրինակ՝

- (a) միգրանտների ապօրինի տեղափոխումը և մարդկանց թրաֆիքինգը,
- (b) հրազենի, այդ թվում՝ ՓՏԶԹ-ների մաքսանենգությունը և առևտուրը,
- (c) արգելված թմրանյութերի մաքսանենգությունը և ապօրինի շրջանառությունը,
- (d) ապրանքների մաքսանենգությունը և առևտուրը,

- (e) տնտեսական և ֆինանսական ապօրինի գործունեությունը, ինչպես օրինակ՝ կեղծումը, հարկային խարդախությունը և պետական գնումների հետ կապված խարդախությունը,
- (f) միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցների յուրացումը,
- (g) ակտիվ և պասիվ կոռուպցիան՝ և՛ մասնավոր, և՛ պետական ոլորտներում,
- (h) փաստաթղթերի կեղծումը և կեղծ հայտարարությունների տարածումը, և
- (i) կիրեռհանցագործությունը:

2. Կողմերը պետք է ամրապնդեն իրավապահ մարմինների միջև երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը՝ ներառյալ Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության (Եվրոպոլի) և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների միջև համագործակցության հնարավոր զարգացումը: Կողմերը պարտավորություն են ստանձնել արդյունավետորեն ներդնելու համապատասխան միջազգային ստանդարտները, մասնավորապես այն ստանդարտները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի 2000 թվականի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում և դրա երեք արձանագրություններում: Կողմերը պետք է համագործակցեն կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի 2003 թվականի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՕ) և ՏՀԶԿ-ի առաջարկություններին համապատասխան, գույքի հայտարարագրման ոլորտում թափանցիկության ապահովման, խախտումների մասին տեղեկացնող անձանց պաշտպանության և իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման հարցերով:

ՀՈՂՎԱԾ 17

Արգելված թմրանյութերը

1. Իրենց համապատասխան լիազորությունների և իրավասությունների շրջանակներում Կողմերը պետք է համագործակցեն՝ արգելված թմրանյութերի, ինչպես նաև նոր հոգեակտիվ նյութերի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված հավասարակշռված և ինտեգրված մոտեցում ապահովելու համար: Թմրանյութերի հետ կապված քաղաքականությունը և գործողությունները պետք է ուղղված լինեն արգելված թմրանյութերի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին, արգելված թմրանյութերի մատակարարումը, առևտուրը և պահանջարկը նվազեցնելուն, ինչպես նաև թմրանյութերից կախվածության հետ կապված առողջական և սոցիալական հետևանքների հաղթահարմանն ուղղված կառույցների ամրապնդմանը՝ նպատակ ունենալով նվազեցնելու հասցվող վնասը, ինչպես նաև արդյունավետորեն կանխելու թմրադեղերի, հոգեներգործուն կամ հոգեակտիվ նյութերի ապօրինի արտադրության համար օգտագործվող քիմիական պրեկուրսորների նպատակային օգտագործումից շեղումները:

2. Կողմերը պետք է համաձայնության գան 1-ին պարբերությունում նշված նպատակներին հասնելու համար համագործակցության անհրաժեշտ մեթոդների վերաբերյալ: Գործողությունները պետք է հիմնված լինեն համապատասխան միջազգային կոնվենցիաներով սահմանված ընդհանուր համաձայնեցված սկզբունքների վրա և պետք է ուղղված լինեն ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի՝ 2016 թվականի ապրիլին անցկացված՝ աշխարհում թմրանյութերի խնդրի վերաբերյալ հատուկ նիստի արդյունքների ամփոփիչ փաստաթղթում ամրագրված առաջարկությունների իրականացմանը:

ՀՈՂՎԱԾ 18

Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորումը

1. Կողմերը պետք է համագործակցեն ընդհանրապես հանցավոր գործությունների և մասնավորապես թմրանյութերի հետ կապված հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման նպատակով իրենց ֆինանսական և համապատասխան ոչ ֆինանսական համակարգերի օգտագործումը կանխելու նպատակով: Այդ համագործակցությունը տարածվում է հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների կամ դրամական միջոցների բռնագանձման վրա:

2. Այս ոլորտում համագործակցությունը հնարավորություն է տալիս Կողմերի համապատասխան օրենսդրության և համապատասխան միջազգային

փաստաթղթերի շրջանակներում իրականացնել համապատասխան տեղեկությունների փոխանակում, ինչպես նաև ընդունել փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման և դրանց դեմ պայքարի համապատասխան ստանդարտներ, որոնք համարժեք կլինեն այս ոլորտում ակտիվ համապատասխան միջազգային մարմինների, ինչպես օրինակ՝ Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական գործողությունների հանձնախմբի կողմից ընդունված ստանդարտներին:

ՀՈԴՎԱԾ 19

Ահաբեկչության դեմ պայքարում համագործակցությունը

1. 11-րդ հոդվածով սահմանված՝ ահաբեկչության դեմ պայքարի հիմքում ընկած սկզբունքներին համապատասխան՝ Կողմերը վերահաստատում են ահաբեկչության դեմ պայքարի նկատմամբ իրավունքի և դատական նորմերի կիրառման մոտեցման կարևորությունը և համաձայնում են համագործակցել ահաբեկչության կանխարգելման և դրա վերացման հարցերով, մասնավորապես՝

- (a) ահաբեկչական խմբերի և անհատների ու դրանց աջակցող ցանցերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով՝ միջազգային և ներպետական իրավունքին համապատասխան, մասնավորապես, անձնական տվյալների պաշտպանության և անձնական կյանքի պաշտպանության վերաբերյալ,
- (b) ահաբեկչության կանխարգելման և վերացման, միջոցների և մեթոդների և դրանց տեխնիկական ասպեկտների, ինչպես նաև վերապատրաստումներ կազմակերպելու հետ կապված փորձի փոխանակման միջոցով՝ համաձայն կիրառելի օրենսդրության,
- (c) արմատականացման և հավաքագրման և արմատականացման դեմ պայքարելու և վերականգնումը խթանելու եղանակների վերաբերյալ տեսակետների փոխանակման միջոցով,
- (d) ահաբեկչության մեջ կասկածվողների միջսահմանային տեղաշարժի և տեղափոխումների, ինչպես նաև ահաբեկչական սպառնալիքների վերաբերյալ տեսակետների և փորձի փոխանակման միջոցով,

- (e) ահաբեկչության դեմ պայքարում մարդու իրավունքների պաշտպանության, մասնավորապես՝ քրեական վարույթի հետ կապված լավագույն փորձի փոխանակման միջոցով,
- (f) ահաբեկչական հանցագործությունների քրեականացումն ապահովելու միջոցով, և
- (g) քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային ահաբեկչության սպառնալիքների դեմ ուղղված միջոցներ ձեռնարկելու և քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային նյութերի՝ ահաբեկչական նպատակներով ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կանխարգելելու, ինչպես նաև բարձր ռիսկայնության քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային կառույցների դեմ անօրինական գործողությունների կանխարգելման համար միջոցներ ձեռնարկելու միջոցով:

2. Համագործակցությունը պետք է հիմնված լինի համապատասխան առկա գնահատումների վրա և իրականացվի Կողմերի միջև փոխադարձ խորհրդակցության միջոցով:

ՀՈԴՎԱԾ 20

Իրավական համագործակցությունը

1. Կողմերը համաձայնում են զարգացնել քաղաքացիական և առևտրային գործերով դատական համագործակցությունը՝ քաղաքացիական գործերով դատական համագործակցության վերաբերյալ բազմակողմ կոնվենցիաների և, մասնավորապես, միջազգային իրավական համագործակցության և վեճերի կարգավորման, ինչպես նաև երեխաների պաշտպանության բնագավառներում միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ Հաագայի համաժողովի կոնվենցիաների վերաբերյալ բանակցությունների, դրանց վավերացման և կիրարկման մասով:

2. Ինչ վերաբերում է քրեական գործերով դատական համագործակցությանը, ապա Կողմերը պետք է փորձեն ամրապնդել համապատասխան բազմակողմ համաձայնագրերի հիման վրա փոխադարձ իրավական աջակցության շուրջ համագործակցությունը: Համապատասխան դեպքերում, այդպիսի համագործակցությունը պետք է ներառի ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի

համապատասխան միջազգային փաստաթղթերին միանալը և դրանք կատարելը, ինչպես նաև Եվրոջաստի և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև ավելի սերտ համագործակցությունը:

ՀՈԴՎԱԾ 21

Հյուպատոսական պաշտպանությունը

Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է, որ ցանկացած ներկայացված անդամ պետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինները պետք է ապահովեն պաշտպանություն այնպիսի անդամ պետության ցանկացած քաղաքացու համար, որը Հայաստանի Հանրապետությունում չունի մշտական ներկայացուցչություն՝ կոնկրետ դեպքում արդյունավետորեն ապահովելու համար հյուպատոսական պաշտպանություն այն նույն պայմաններով, ինչ այդ անդամ պետության քաղաքացիների համար:

ՄԱՍ IV

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 22

1. Եվրոպական միությունը և Հայաստանի Հանրապետությունը պետք է խթանեն տնտեսական բարեփոխումների գործընթացը՝ յուրաքանչյուր տնտեսության հիմնարար սկզբունքների ընդհանուր ընկալումը և տնտեսական քաղաքականությունների ձևավորումն ու իրականացումը բարելավելու միջոցով:

2. Հայաստանի Հանրապետությունը պետք է լրացուցիչ քայլեր ձեռնարկի՝ արդյունավետ գործող շուկայական տնտեսություն զարգացնելու և իր տնտեսական ու ֆինանսական կարգավորումներն ու քաղաքականությունները սույն Համաձայնագրով համաձայնեցված դեպքերում Եվրոպական միության տնտեսական ու ֆինանսական կարգավորումներին ու քաղաքականություններին աստիճանական մոտարկելու ուղղությամբ: Եվրոպական միությունը կաջակցի Հայաստանի Հանրապետությանը՝ ապահովելու կայուն մակրոտնտեսական քաղաքականություններ՝ ներառյալ կենտրոնական բանկի անկախությունը և գների կայունությունը, կայուն պետական ֆինանսները և արտարժույթի փոխանակման դրույքաչափի կայուն համակարգն ու վճարային հաշվեկշիռը:

ՀՈՂՎԱԾ 23

Կողմերն այդ նպատակով համաձայնում են անցկացնել կանոնավոր տնտեսական երկխոսություն, որն ուղղված կլինի՝

- (a) մակրոտնտեսական միտումների և քաղաքականությունների, ինչպես նաև՝ կառուցվածքային բարեփոխումների, այդ թվում՝ տնտեսական զարգացման ռազմավարությունների վերաբերյալ տեղեկությունների փոխանակմանը,
- (b) փորձառության և լավագույն գործելակերպերի փոխանակմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պետական ֆինանսները, դրամավարկային և արտարժույթի փոխանակման դրույքաչափին առնչվող քաղաքականության շրջանակները, ֆինանսական հատվածի քաղաքականությունը և տնտեսական վիճակագրությունը,
- (c) տարածաշրջանային տնտեսական ինտեգրմանը, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և արժույթային միության գործունեության վերաբերյալ տեղեկությունների ու փորձի փոխանակմանը,
- (d) տնտեսության, ֆինանսների և վիճակագրության բնագավառներում երկկողմ համագործակցության կարգավիճակի վերանայմանը:

Պետական հատվածի ներքին հսկողությունը և աուդիտի միջոցառումները

Կողմերը պետք է համագործակցեն պետական հատվածի ներքին հսկողության և արտաքին աուդիտի իրականացման հարցում՝ հետևյալ նպատակներով՝

- (a) ապակենտրոնացված կառավարչական հաշվետվողականության սկզբունքին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում ամբողջ պետական հատվածի համար անկախ ներքին աուդիտի գործառույթին համապատասխան՝ պետական ներքին հսկողության համակարգի հետագա զարգացումը և կիրարկումը՝ համընդհանուր ընդունված միջազգային ստանդարտների, շրջանակային հայեցակարգերի և ուղեցույցների ու Եվրոպական միության պատշաճ գործելակերպի հետ մոտարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հավանության արժանացած՝ պետական ներքին ֆինանսական հսկողության բարեփոխումների ծրագրի հիման վրա.
- (b) Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ստուգումների այնպիսի համարժեք համակարգի մշակումը, որը կլրացնի ներքին աուդիտի գործառույթը, այլ ոչ թե կկրկնօրինակի այն.
- (c) Հայաստանի Հանրապետությունում պետական ներքին ֆինանսական հսկողության կենտրոնացված ներդաշնակեցման ստորաբաժանմանն աջակցումը և բարեփոխումների գործընթացն ուղղորդելուն առնչվող դրա կարողության ամրապնդումը.
- (d) Հաշվեքննիչ պալատի՝ որպես Հայաստանի Հանրապետության՝ աուդիտ իրականացնող բարձրագույն հաստատության դերի հետագա ամրապնդումը՝ մասնավորապես դրա ֆինանսական, կազմակերպական և գործառնական անկախության տեսանկյունից՝ արտաքին աուդիտի (INTOSAI) միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան, և
- (e) տեղեկությունների, փորձի և պատշաճ գործելակերպի փոխանակման ապահովումը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՐԿՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 25

Կողմերը համագործակցում են հարկային ոլորտում պատշաճ կառավարումն ընդլայնելու հարցում՝ տնտեսական հարաբերությունների, առևտրի, ներդրումների և արդար համագործակցության հետագա կատարելագործման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 26

Վկայակոչելով 25-րդ հոդվածը՝ Կողմերն ընդունում են և պարտավորվում են իրականացնել հարկային ոլորտում պատշաճ կառավարման սկզբունքները, այսինքն՝ թափանցիկության, տեղեկությունների փոխանակման և հարկային արդար մրցակցության սկզբունքները, այնպես, ինչպես Եվրոպական միության մակարդակով դրանք որդեգրել են անդամ պետությունները: Այդ նպատակով, չհակասելով Եվրոպական միության և անդամ պետությունների իրավասություններին՝ Կողմերը պետք է բարելավեն միջազգային համագործակցությունը հարկային ոլորտում, դյուրացնեն հարկային եկամուտների հավաքագրման գործընթացը և մշակեն միջոցառումներ՝ արդյունավետ կառավարման այդ սկզբունքներն արդյունավետ իրականացնելու համար:

ՀՈՂՎԱԾ 27

Կողմերը պետք է ընդլայնեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի և հարկային վարչարարության կատարելագործմանն ու զարգացմանը, այդ թվում՝ հարկահավաքման և հսկողության կարողությունների ընդլայնմանը, ապահովեն արդյունավետ հարկային հավաքագրում և ամրապնդեն հարկային խարդախությունների ու հարկերի վճարումից խուսափելու դեմ պայքարը: Կողմերը չպետք է խտրականություն դնեն ներմուծված արտադրանքի և նմանատիպ տեղական արտադրանքի միջև՝ 1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՄԱԳՀ 1994) I և III հոդվածներին համապատասխան: Կողմերը պետք է ձգտեն ընդլայնել հարկային խարդախությունների և հարկերի վճարումից խուսափելու, մասնավորապես՝ «կարուսելային» խարդախությունների դեմ պայքարի փորձը կիսելու գործընթացը և համագործակցությունը, նաև՝ տրանսֆերային գնագոյացման և հակաօֆշորային կարգավորման հարցերում:

ՀՈՂՎԱԾ 28

Կողմերը պետք է զարգացնեն իրենց համագործակցությունը՝ խարդախությանը հակազդելու ու դրա դեմ պայքարելու և ակցիզային հարկով հարկվող ապրանքների մաքսանենգության դեմ պայքարի համատեղ քաղաքականություններ որդեգրելու նպատակով: Համագործակցությունը պետք է ներառի տեղեկությունների փոխանակում: Կողմերն այդ նպատակով պետք է ձգտեն ամրապնդել իրենց համագործակցությունը տարածաշրջանային համատեքստում և Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2003 թվականի՝ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիային համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 29

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ԳԼՈՒԽ 3

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 30

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն վիճակագրությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրենց համագործակցությունը՝ դրանով նպաստելով միջազգային մակարդակով համադրելի և արժանահավատ վիճակագրական տվյալներ ժամանակին տրամադրելու երկարաժամկետ նպատակի ապահովմանը: Ակնկալվում է, որ կայուն, արդյունավետ և մասնագիտական անկախ ազգային վիճակագրական համակարգի միջոցով կտրամադրվեն այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերելի են Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների, գործարարության և որոշում կայացնողների համար՝ նրանց ընձեռելով դրանց հիման վրա տեղեկացված ձևով որոշումներ կայացնելու հնարավորություն: Ազգային վիճակագրական համակարգի միջոցով պետք է պահպանվեն ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները և հաշվի առնվեն վիճակագրության ոլորտի ԵՄ օրենսդրությունը՝ ներառյալ Եվրոպական վիճակագրության գործավարության կանոնագիրքը՝ ազգային վիճակագրական տվյալների ձևավորումը եվրոպական նորմերի և ստանդարտների հետ համապատասխանեցնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 31

Վիճակագրության ոլորտում համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի՝

- (a) ազգային վիճակագրական համակարգի կարողությունների, այդ թվում՝ իրավական հիմքի հետագա ամրապնդմանը, որակյալ տվյալների և մեթատվյալների ձևավորմանը, տարածման քաղաքականությանը և օգտագործողի համար հարմարավետությանը, և հաշվի առնելով պետական ու մասնավոր հատվածների, գիտական համայնքի և ընդհանուր առմամբ հասարակության օգտագործողներին.

- (b) Եվրոպական վիճակագրական համակարգում կիրառվող նորմերին և փորձին Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգի աստիճանական մոտարկմանը.
- (c) Եվրոպական միությանը տվյալների տրամադրման գործընթացի ճշգրիտ համակարգմանը՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային և եվրոպական մեթոդաբանությունների, այդ թվում՝ դասակարգումների կիրառումը.
- (d) ազգային վիճակագրական ծառայության անձնակազմի մասնագիտական և կառավարման կարողությունների ընդլայնմանը՝ Եվրոպական միության վիճակագրական ստանդարտների կիրառումը խթանելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգի զարգացմանը նպաստելու նպատակով.
- (e) վիճակագրական «նոու-հաու»-ի զարգացման վերաբերյալ փորձի փոխանակմանը, և
- (f) վիճակագրական տվյալների ստեղծման բոլոր գործընթացների և դրանց տարածման հարցում որակի ապահովման ու կառավարման խթանմանը:

ՀՈԴՎԱԾ 32

Կողմերը պետք է համագործակցեն Եվրոպական վիճակագրական համակարգի շրջանակներում, որտեղ Եվրոստատը Եվրոպական միության վիճակագրական գրասենյակն է: Այդ համագործակցությունը պետք է ապահովի վիճակագրական գրասենյակի մասնագիտական անկախությունը և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքների կիրառումը, ինչպես նաև կենտրոնացված լինի հետևյալ ոլորտների վրա՝

- (a) Ժողովրդավարական վիճակագրություն՝ ներառյալ մարդահամարն ու սոցիալական վիճակագրությունը,
- (b) գյուղատնտեսության վիճակագրություն՝ ներառյալ գյուղատնտեսական մարդահամարները,

- (c) բիզնես վիճակագրություն՝ ներառյալ բիզնես ռեզիստրները և վիճակագրական նպատակներով վարչական աղբյուրների կիրառումը,
- (d) մակրոտնտեսական վիճակագրություն՝ ներառյալ ազգային հաշիվները, արտաքին առևտրի վիճակագրությունը, վճարային հաշվեկշիռների վիճակագրությունը և օտարերկրյա ուղղակի ներդրումների վիճակագրությունը,
- (e) էներգետիկայի վիճակագրություն՝ ներառյալ հաշվեկշիռները,
- (f) շրջակա միջավայրի վիճակագրություն,
- (g) տարածաշրջանային վիճակագրություն, և
- (h) հորիզոնական գործունեություն՝ ներառյալ որակի ապահովումն ու կառավարումը, վիճակագրական դասակարգումները, ուսուցումը, տարածումը և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

ՀՈՂՎԱԾ 33

Կողմերը, *inter alia*, պետք է փոխանակեն տեղեկությունները և փորձառությունն ու զարգացնեն իրենց համագործակցությունը՝ հաշվի առնելով աջակցության տարաբնույթ ծրագրերի շրջանակներում մեկնարկած վիճակագրական համակարգի բարեփոխման գործընթացում կուտակված փորձը: Ջանքերը պետք է ուղղված լինեն վիճակագրությանն առնչվող ԵՄ օրենսդրության հետ հետագա համահարթեցմանը՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգի զարգացման ազգային ռազմավարության վրա և հաշվի առնելով Եվրոպական վիճակագրական համակարգի զարգացումը: Վիճակագրական տվյալների ստեղծման գործընթացում պետք է շեշտադրվի վարչական փաստաթղթերի ընդլայնված կիրառումը և վիճակագրական ուսումնասիրությունների պարզեցումը՝ միևնույն ժամանակ նկատի ունենալով նաև արձագանքների ստացման բեռի թեթևացման անհրաժեշտությունը: Ստեղծված տվյալները պետք է վերաբերելի լինեն սոցիալական և տնտեսական կյանքի առանցքային ոլորտներում քաղաքականությունների մշակմանը և դրանց մոնիթորինգին:

ՀՈՂՎԱԾ 34

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն: Հնարավորության սահմաններում, Եվրոպական վիճակագրական համակարգի շրջանակներում նախաձեռնված գործողությունները, այդ թվում՝ ուսուցումը, պետք է բաց լինեն Հայաստանի Հանրապետության մասնակցության համար:

ՀՈՂՎԱԾ 35

Հայաստանի Հանրապետության օրենսդրության աստիճանական մոտարկումը վիճակագրությանն առնչվող ԵՄ օրենսդրությանը պետք է իրականացվի Եվրոստատի կողմից ստեղծված՝ ամեն տարի թարմացվող Վիճակագրական պահանջների ժողովածուի համաձայն, որը Կողմերը սույն Համաձայնագրի հավելված են համարում:

ՄԱՍ V

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

ՀՈԴՎԱԾ 36

Կողմերը պետք է՝

- (a) ընդլայնեն և ամրապնդեն տրանսպորտի ոլորտում իրենց համագործակցությունը՝ կայուն տրանսպորտային համակարգերի զարգացմանը նպաստելու նպատակով,
- (b) խթանեն արդյունավետ, ապահով և անվտանգ տրանսպորտի աշխատանքը, ինչպես նաև՝ տրանսպորտային համակարգերի ինտեգրացիայի և փոխգործողությունների, և
- (c) փորձեն ընդլայնել իրենց տարածքների միջև հիմնական տրանսպորտային հաղորդակցության ուղիները:

Տրանսպորտի ոլորտում համագործակցությունը պետք է ընդգրկի հետևյալ ոլորտները՝

- (a) կայուն ազգային տրանսպորտային այնպիսի քաղաքականության մշակումը, որը ներառում է տրանսպորտի բոլոր տեսակները՝ մասնավորապես նպատակ ունենալով ապահովելու շրջակա միջավայրը չվնասող, արդյունավետ, ապահով և անվտանգ տրանսպորտային համակարգեր և խթանելու տրանսպորտի ոլորտի հետ կապված նկատառումները քաղաքականության այլ ոլորտներում ինտեգրելու գործընթացը.
- (b) ոլորտային ռազմավարությունների մշակումը՝ ազգային տրանսպորտային քաղաքականության լույսի ներքո (այդ թվում՝ միջազգային ամենաբարձր ստանդարտներին համապատասխանելու նպատակով տեխնիկական սարքավորումների և տրանսպորտային միջոցների նորացմանը ներկայացվող իրավական պահանջները)՝ ճանապարհների, երկաթուղիների, ներքին ջրուղիների, ծովագնացության, ավիացիայի և ինտերմոդալության համար, այդ թվում՝ ժամանակացույցներ ու հենանիշեր՝ իրականացման, վարչական պատասխանատվությունների, ինչպես նաև՝ ֆինանսական պլանների համար.
- (c) ենթակառուցվածքներին առնչվող քաղաքականության կատարելագործումը՝ տրանսպորտի տարբեր տեսակներին առնչվող ենթակառուցվածքների վերաբերյալ նախագծերը լավագույնս նախանշելու և գնահատելու նպատակով.
- (d) սպասարկմանը, կարողությունների սահմանափակումներին և հաղորդակցության բացակայող ենթակառուցվածքին միտված ֆինանսավորման ռազմավարությունների մշակումը, ինչպես նաև՝ տրանսպորտին առնչվող նախագծերում մասնավոր հատվածի մասնակցության ակտիվացումն ու խթանումը.
- (e) համապատասխան միջազգային տրանսպորտային կազմակերպություններին և համաձայնագրերին, այդ թվում՝ միջազգային տրանսպորտային համաձայնագրերի և կոնվենցիաների հետևողական կիրարկումն ու արդյունավետ իրականացումն ապահովելու ընթացակարգերին միանալը.

- (f) համագործակցությունն ու տեղեկությունների փոխանակումը՝ տրանսպորտի բնագավառի այնպիսի տեխնոլոգիաների զարգացման և կատարելագործման նպատակով, ինչպիսիք են օրինակ՝ «խելացի» տրանսպորտային համակարգերը, և
- (g) տրանսպորտի բոլոր տեսակների կառավարման և շահագործման մեջ «խելացի» տրանսպորտային համակարգերի ու տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը խթանելը, ինչպես նաև՝ ինտերմոդալությանը և տրանսպորտի աշխատանքը դյուրացնող՝ կոմերցիոն կիրառությունների և տիեզերական համակարգերի օգտագործման գործընթացում համագործակցությանն աջակցելը:

ՀՈՂՎԱԾ 38

1. Համագործակցությունը պետք է նաև միտված լինի ուղևորների և ապրանքների տեղաշարժի բարելավմանը՝ մեծացնելով Հայաստանի Հանրապետության, Եվրոպական միության և տարածաշրջանում երրորդ երկրների միջև տրանսպորտային հոսքերի անընդհատ երթևեկությունը, խթանելով միջսահմանային տեղաշարժով բաց սահմանների առկայությունը՝ վարչական, տեխնիկական և այլ տեսակի խոչընդոտները վերացնելու միջոցով, ընդլայնելով գոյություն ունեցող տրանսպորտային ցանցերի շահագործումը և զարգացնելով ենթակառուցվածքը, մասնավորապես՝ Կողմերը միմյանց կապող հիմնական ցանցերում:
2. Համագործակցությունը պետք է ներառի սահմանային հատումները խթանող գործողություններ՝ հաշվի առնելով դեպի ծով ելք չունեցող երկրների առանձնահատկությունները, ինչը նշված է համապատասխան միջազգային փաստաթղթերում:
3. Համագործակցությունը պետք է ներառի տեղեկությունների փոխանակումն ու համատեղ գործունեությունը՝
 - (a) տարածաշրջանային մակարդակով՝ մասնավորապես նկատի ունենալով տարածաշրջանային տրանսպորտային համագործակցության այնպիսի միջոցառումների շրջանակներում արձանագրված առաջընթացը, ինչպիսիք են Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքը (ՏՐԱՍԵԿԱ) և տրանսպորտի ոլորտում միջազգային մակարդակով ձեռնարկված մյուս նախաձեռնությունները, այդ թվում՝ միջազգային տրանսպորտային կազմակերպությունների և Կողմերի վավերացրած միջազգային համաձայնագրերի ու կոնվենցիաների մասով, և

- (b) Եվրոպական միության տարբեր տրանսպորտային գործակալությունների, ինչպես նաև՝ Արևելյան գործընկերության շրջանակներում:

ՀՈՂՎԱԾ 39

1. Կողմերի միջև փոխադարձ առևտրային կարիքներին հարմարեցված՝ օդային տրանսպորտի համակարգված զարգացում և աստիճանական ազատականացում ապահովելու նպատակով՝ օդային տրանսպորտի բնագավառում շուկայի փոխադարձ հասանելիության պայմանները պետք է դիտարկվեն Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրին համապատասխան:

2. Նախքան Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագիրը կնքելը՝ Կողմերը չպետք է ձեռնարկեն այնպիսի քայլեր կամ գործողություններ, որոնք առավել սահմանափակող կամ խտրական են՝ նախքան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը առկա իրավիճակի համեմատությամբ:

ՀՈՂՎԱԾ 40

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ՀՈՂՎԱԾ 41

1. Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում I Հավելվածում նշված՝ Եվրոպական միության ակտերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

2. Մոտարկումը կարող է իրականացվել նաև՝ ոլորտային համաձայնագրերի միջոցով:

ԳԼՈՒԽ 2

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 42

1. Կողմերը պետք է համագործակցեն էներգետիկ հարցերի մասով՝ գործընկերության, փոխադարձ շահի, թափանցիկության և կանխատեսելիության սկզբունքների հիման վրա: Համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի այսուհետ դիտարկվելիք էներգետիկ հատվածի ոլորտներում կարգավորիչ մոտարկմանը՝ հաշվի առնելով անվտանգ, շրջակա միջավայրը չվնասող և մատչելի էներգիայի հասանելիությունն ապահովելու անհրաժեշտությունը:

2. Համագործակցությունը պետք է ընդգրկի, *inter alia*, հետևյալ ոլորտները՝

- (a) էներգետիկ ռազմավարություններ և քաղաքականություններ, այդ թվում՝ էներգետիկ անվտանգությունը և էներգիայի մատակարարների ու էներգիայի արտադրության բազմազանությունը խթանելու նպատակով.
- (b) էներգետիկ անվտանգության ընդլայնում, այդ թվում՝ էներգիայի աղբյուրների և դրա փոխանցման ուղիների բազմազանեցումը խթանելու միջոցով.
- (c) մրցունակ էներգետիկ շուկաների զարգացում.
- (d) վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման, էներգաարդյունավետության և էներգախնայողության խթանում.

- (e) էներգիայի և տարածաշրջանային շուկաներ ինտեգրման շուրջ տարածաշրջանային համագործակցության խթանում.
- (f) ընդհանուր կարգավորիչ դաշտի խթանում՝ նավթամթերքի, էլեկտրաէներգիայի և հնարավոր այլ էներգետիկ հումքի առևտուրը դյուրացնելու նպատակով, ինչպես նաև՝ միջուկային անվտանգության առումով անվտանգության և ապահովության բարձր մակարդակին ուղղված մրցակցային հավասար պայմանների խթանում.
- (g) քաղաքացիական միջուկային էներգետիկայի հատված՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները և կենտրոնանալով, մասնավորապես, միջուկային անվտանգության բարձր մակարդակների վրա՝ հիմք ընդունելով այսուհետ դիտարկվելիք Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ՄՏԷՄԳ) ստանդարտները և Եվրոպական միության ստանդարտներն ու փորձը, նաև՝ կենտրոնանալով միջուկային անվտանգության բարձր մակարդակների վրա՝ հիմք ընդունելով միջազգային ուղենիշներն ու փորձը: Այդ ոլորտում համագործակցությունը պետք է ներառի՝
- (i) ապահովության, անվտանգության և թափոնների կառավարման ոլորտներում տեխնոլոգիաների, լավագույն գործելակերպերի փոխանակումը և վերապատրաստումը՝ ատոմային էլեկտրակայանների անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով,
- (ii) Մեծամորի ատոմային էլեկտրակայանի փակումն ու անվտանգ ապագործարկումը և այդ առումով ճանապարհային քարտեզի կամ գործողությունների պլանի հնարավորինս շուտ ընդունումը՝ հաշվի առնելով նոր հզորությամբ դրա փոխարինման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը և կայուն զարգացման պայմաններն ապահովելու նպատակով.
- (h) գնային քաղաքականություններ, տարանցում և փոխադրում, մասնավորապես՝ էներգետիկ պաշարների փոխանցման համար ծախսերի վրա հիմնված ընդհանուր համակարգը, և անհրաժեշտության դեպքում՝ ածխաջրածնի պաշարների հասանելիության մասով հետագա ճշգրտումներ՝ համապատասխան դեպքերում.

- (i) Էներգետիկ շուկայի կարգավորման առանցքային սկզբունքներն արտացոլող կարգավորիչ ասպեկտների, ինչպես նաև՝ մրցունակ, թափանցիկ և ծախսարդյունավետ սակագներով էներգետիկ ցանցերի ու էնթալառուցվածքների ոչ խտրական հասանելիության խթանում, և համարժեք ու անկախ վերահսկողություն.

- (j) գիտական և տեխնիկական համագործակցություն, այդ թվում՝ էներգիայի արտադրության, փոխադրման, մատակարարման և վերջնական օգտագործման ոլորտներում տեխնոլոգիաների զարգացման և կատարելագործման վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը՝ առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահելով էներգաարդյունավետ և շրջակա միջավայրը չվնասող տեխնոլոգիաները:

ՀՈՂՎԱԾ 43

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ՀՈՂՎԱԾ 44

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում սույն Համաձայնագրի II Հավելվածում նշված փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 3

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

ՀՈԴՎԱԾ 45

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն շրջակա միջավայրին առնչվող հարցերի մասով իրենց համագործակցությունը՝ դրանով նպաստելով կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի ապահովմանը: Ակնկալվում է, որ շրջակա միջավայրի ընդլայնված պաշտպանությունից կշահեն Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ու գործարարությունը, այդ թվում՝ հանրային առողջության բարելավման, բնական պաշարների պահպանման և տնտեսական ու բնապահպանական արդյունավետության բարելավման, ինչպես նաև՝ առավել կայուն արտադրության կառուցվածքների ապահովմանը նպաստող ժամանակակից, ավելի մաքուր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով: Համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով Կողմերի՝ հավասարության և փոխադարձ օգուտի վրա հիմնված շահերը, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում Կողմերի միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունը և այդ ոլորտում գործող բազմակողմ համաձայնագրերը:

ՀՈԴՎԱԾ 46

1. Համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի շրջակա միջավայրի պահպանությանը, պաշտպանությանը, բարելավմանը և որակի վերականգնմանը, մարդու առողջության պաշտպանությանը, բնական պաշարների կայուն օգտահանմանը և տարածաշրջանային կամ գլոբալ բնապահպանական հիմնախնդիրներին առնչվող՝ միջազգային մակարդակով ձեռնարկվող միջոցառումների խթանմանը, այդ թվում՝ ստորև նշված ոլորտներում՝

(a) բնապահպանական կառավարում և հորիզոնական հարցեր՝ ներառյալ ռազմավարական պլանավորումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատումը, կրթությունն ու վերապատրաստումը, մոնիթորինգն ու շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվական համակարգերը, տեսչական ստուգումներն ու գործողությունների իրականացումը, բնապահպանական պատասխանատվությունը, բնապահպանական հանցագործությունների դեմ պայքարը, անդրսահմանային համագործակցությունը, հանրության համար շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հասանելիությունը, որոշումների կայացման գործընթացները և վարչական ու դատական վերանայման արդյունավետ ընթացակարգերը.

(b) օդի որակ.

(c) ջրի որակի և պաշարների կառավարում՝ ներառյալ հեղեղումների ռիսկի կառավարումը, ջրի սակավությունն ու երաշտները.

(d) թափոնների կառավարում.

(e) բնության պաշտպանություն՝ ներառյալ անտառաբուծությունը և կենսաբանական բազմազանության պահպանումը.

(f) արդյունաբերական աղտոտում և արդյունաբերական վտանգներ.

(g) քիմիական նյութերի կառավարում:

2. Համագործակցությունը պետք է նաև նպատակաուղղված լինի շրջակա միջավայրը, բնապահպանական քաղաքականությունից բացի, այլ ուղորտային քաղաքականությունների մեջ ինտեգրելու գործընթացին:

ՀՈՂՎԱԾ 47

Կողմերը, *inter alia*, պետք է՝

- (a) փոխանակեն տեղեկություններ և փորձառություն.
- (b) համագործակցեն տարածաշրջանային և միջազգային մակարդակով՝ հատկապես Կողմերի վավերացրած բնապահպանական բազմակողմ համաձայնագրերի մասով, և
- (c) անհրաժեշտության դեպքում, համագործակցեն համապատասխան գործակալությունների շրջանակներում:

ՀՈՂՎԱԾ 48

Համագործակցությունը պետք է ընդգրկի, *inter alia*, հետևյալ նպատակները՝

- (a) Հայաստանի Հանրապետության համար շրջակա միջավայրին առնչվող այնպիսի ընդհանուր ազգային ռազմավարության մշակում, որն ընդգրկում է՝
 - (i) ծրագրված ինստիտուցիոնալ բարեփոխումներ (ժամանակացույցներով)՝ բնապահպանական օրենսդրության կիրարկումն ու իրականացումն ապահովելու նպատակով.
 - (ii) բնապահպանական վարչարարության իրավասությունների բաշխում՝ ազգային, տարածաշրջանային և համայնքային մակարդակներով.
 - (iii) որոշումներ կայացնելու ընթացակարգեր և որոշումների իրականացում.

- (iv) այլ ոլորտային քաղաքականությունների մեջ շրջակա միջավայրի ինտեգրման գործընթացը խթանելու ընթացակարգեր.
 - (v) կանաչ տնտեսությանը և էկոնորարարությանն ուղղված միջոցառումների խթանում, մարդկային և ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսների ու վերահսկողության մեխանիզմի բացահայտում, և
- (b) Հայաստանի Հանրապետության համար ոլորտային այն ռազմավարությունների մշակում (այդ թվում՝ գործողությունների իրականացման հստակ սահմանված ժամանակացույցները և հենանիշները, վարչական պատասխանատվությունները, ինչպես նաև՝ ենթակառուցվածքներում ու տեխնոլոգիաներում ներդրումների ֆինանսավորման ռազմավարությունները), որոնք առնչվում են՝
- (i) օդի որակին.
 - (ii) ջրի որակին և պաշարների կառավարմանը.
 - (iii) թափոնների կառավարմանը.
 - (iv) կենսաբազմազանությանը, բնության պահպանմանը և անտառային տնտեսությանը.
 - (v) արդյունաբերական աղտոտմանը և արդյունաբերական վտանգներին, և
 - (vi) քիմիական նյութերին:

ՀՈԴՎԱԾ 49

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ՀՈՂՎԱԾ 50

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում III Հավելվածում նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 4

ԿԼԻՄԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 51

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործընթացում: Համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով Կողմերի՝ հավասարության և փոխադարձ օգուտի վրա հիմնված շահերը, ինչպես նաև այդ ոլորտում երկկողմ և բազմակողմ հանձնառությունների միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունը:

ՀՈՂՎԱԾ 52

Համագործակցությունը պետք է խթանի ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակով ձեռնարկվող միջոցառումները՝ կապված՝

- (a) կլիմայի փոփոխության մեղմացման,

- (b) կլիմայի փոփոխությանը հարմարեցման,
- (c) կլիմայի փոփոխության հարցերին անդրադառնալու շուկայական և ոչ շուկայական մեխանիզմի,
- (d) նոր, անվտանգ, կայուն և հարմարեցված նորարարական ցածր ածխածնային տեխնոլոգիաների ուսումնասիրության, մշակման, ցուցադրման, տեղաբաշխման, փոխանցման ու տարածման,
- (e) դեպի ընդհանուր և ոլորտային քաղաքականություններ կլիմայի հարցերով դիտարկումների ուղղորդման, և
- (f) իրազեկության բարձրացման, կրթության և վերապատրաստման հետ:

ՀՈԴՎԱԾ 53

1. Կողմերը, *inter alia*, պետք է՝
 - (a) փոխանակեն տեղեկություններ և փորձառություն,
 - (b) ավելի մաքուր և շրջակա միջավայրի համար բարենպաստ տեխնոլոգիաների վերաբերյալ իրականացնեն համատեղ ուսումնասիրություններ և տեղեկությունների փոխանակում,
 - (c) տարածաշրջանային և միջազգային մակարդակով իրականացնեն համատեղ գործունեություն, այդ թվում՝ Կողմերի վավերացրած բնապահպանական բազմակողմ այնպիսի համաձայնագրերի մասով, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպության 1992 թվականի՝ Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիան (ՄԱԿ-ի ԿՓՇԿ) և 2015 թվականի Փարիզյան համաձայնագիրը և, անհրաժեշտության դեպքում, համատեղ գործունեություն իրականացնեն համապատասխան գործակալությունների շրջանակներում:

2. Կողմերը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն անդրսահմանային հիմնահարցերին և տարածաշրջանային համագործակցությանը:

ՀՈԴՎԱԾ 54

Համագործակցությունը պետք է ընդգրկի, *inter alia*, հետևյալ նպատակները՝

- (a) Փարիզյան համաձայնագրի իրականացման միջոցառումները՝ սույն Համաձայնագրով սահմանված սկզբունքներին համապատասխան,
- (b) կլիմայի փոփոխությանն առնչվող արդյունավետ գործողություններ ձեռնարկելու նպատակով կարողությունների շրջանակի ընդլայնմանն ուղղված միջոցառումները,
- (c) կլիմայի փոփոխության երկարաժամկետ մեղմացման և դրան հարմարեցման համար կլիմային առնչվող ընդհանուր ռազմավարության և գործողությունների պլանի մշակումը,
- (d) խոցելիության և հարմարեցման գնահատումների մշակումը,
- (e) ցածր ածխածնային զարգացման պլանի մշակումը,
- (f) կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների հարցին անդրադառնալու միջոցով,
- (g) ածխածնի արտանետումների քվոտաների վաճառքի միջոցառումները,
- (h) տեխնոլոգիաների փոխանցման գործընթացի խթանմանն ուղղված միջոցառումները,

- (i) կլիմայի հարցերով դիտարկումները դեպի ոլորտային քաղաքականություններ ուղղորդելուն միտված միջոցառումները, և
- (j) օգոնային շերտը քայքայող նյութերին և ֆտոր պարունակող գազերին առնչվող միջոցառումները:

ՀՈՂՎԱԾ 55

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ՀՈՂՎԱԾ 56

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում IV Հավելվածում նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 5

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՂՎԱԾ 57

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը արդյունաբերական և ձեռնարկատիրական քաղաքականության շուրջ՝ դրանով բարելավելով գործարար միջավայրը բոլոր տնտեսական օպերատորների համար, սակայն առանձնահատուկ շեշտադրելով փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ-ներ): Ընդլայնված համագործակցությամբ պետք է բարելավվի վարչական և կարգավորիչ իրավական դաշտը՝ Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում գործող՝ Եվրոպական միության բիզնես գործունեության համար և Հայաստանի Հանրապետության բիզնես գործունեության համար, և դա պետք է հիմնվի Եվրոպական միության ՓՄՁ-ների և արդյունաբերական քաղաքականությունների վրա՝ հաշվի առնելով այդ ոլորտում միջազգայնորեն ընդունված սկզբունքներն ու գործելակերպը:

ՀՈՂՎԱԾ 58

Կողմերը պետք է համագործակցեն՝ հետևյալ նպատակներով՝

- (a) Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի սկզբունքների հիման վրա ՓՄՁ-ների զարգացման համար ռազմավարությունների իրականացում և իրականացման գործընթացի մոնիթորինգ՝ կանոնավոր հաշվետվություններ ներկայացնելու և երկխոսություն անցկացնելու միջոցով: Այդ համագործակցությունը պետք է նաև կենտրոնացած լինի միկրո- և արհեստագործակցական ձեռնարկատիրության վրա, որոնք չափազանց կարևոր են թե՛ Եվրոպական միության և թե՛ Հայաստանի Հանրապետության տնտեսությունների համար.

- (b) տեղեկությունների և պատշաճ գործելակերպի փոխանակման միջոցով ծրագրային ավելի լավ պայմանների ստեղծում՝ դրանով նպաստելով բարելավված մրցունակությանը: Այդ համագործակցությունը պետք է ներառի կառուցվածքային փոփոխությունների (վերակազմավորման) կառավարումը և բնապահպանական ու եներգետիկ այնպիսի հարցեր, ինչպիսիք են եներգաարդյունավետությունը և ավելի մաքուր արտադրությունը.
- (c) կարգավորումների ու կարգավորիչ գործունեության պարզեցում և ռացիոնալացում՝ կարգավորիչ միջոցներին, այդ թվում՝ Եվրոպական միության սկզբունքներին առնչվող պատշաճ գործելակերպի փոխանակման առանձնահատուկ շեշտադրմամբ.
- (d) նորարարական քաղաքականության զարգացման խրախուսում՝ գիտահետազոտական և նախագծային աշխատանքների առևտրայնացմանն առնչվող տեղեկությունների (այդ թվում՝ տեխնոլոգիաների վրա հիմնված բիզնեսի մեկնարկի համար օժանդակ փաստաթղթերը) և պատշաճ գործելակերպի փոխանակման, կլաստերի զարգացման և ֆինանսների հասանելիության միջոցով.
- (e) Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության բիզնես գործունեությունների և Եվրոպական միությունում ու Հայաստանի Հանրապետությունում այդ բիզնես գործունեությունների և իշխանությունների միջև կապերի ընդլայնման խրախուսում.
- (f) Հայաստանի Հանրապետությունում արտահանումը խթանող գործունեությունն ստեղծելու գործընթացին աջակցություն.
- (g) ավելի բարենպաստ գործարար միջավայրի առկայության խթանում՝ նպատակ ունենալով ընդլայնելու աճի ներուժը և ներդրումների հնարավորությունները, և
- (h) որոշակի ոլորտներում Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության արդյունաբերության արդիականացման ու վերակազմավորման գործընթացի դյուրացում:

ՀՈՂՎԱԾ 59

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն: Այդ երկխոսությանը պետք է ներգրավված լինեն նաև Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության բիզնես համայնքի ներկայացուցիչները:

ԳԼՈՒԽ 6

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ,
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ,
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 60

1. Կողմերն ընդունում են ընկերությունների գործունեությունը կարգավորող իրավունքի և կորպորատիվ կառավարման, ինչպես նաև՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի, գործող շուկայական տնտեսության ոլորտներում գործուն նորմերի և գործելակերպերի փաթեթի կարևորությունը՝ կանխատեսելի և թափանցիկ գործարար միջավայրի հետ մեկտեղ, և ընդգծում այդ ոլորտներում կարգավորիչ համապատասխանեցման գործընթացը խթանելու կարևորությունը:

2. Կողմերը պետք է համագործակցեն հետևյալի մասով՝

(a) գրանցված ընկերությունների կազմավորմանը և ներկայացուցչությանն առնչվող տեղեկությունների մատչելիության և հասանելիության ապահովման վերաբերյալ լավագույն գործելակերպերի փոխանակում՝ թափանցիկ և մատչելի ձևով.

- (b) կորպորատիվ կառավարման քաղաքականության հետագա զարգացում՝ միջազգային և մասնավորապես՝ ՏՀԶԿ-ի ստանդարտներին համապատասխան.
- (c) ցուցակում ընդգրկված ընկերությունների համախմբված ֆինանսական հաշվետվություններին առնչվող Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) իրականացում և հետևողական կիրառում.
- (d) աուդիտորի և հաշվապահի մասնագիտական գործունեության կարգավորում և դրա նկատմամբ վերահսկողություն.
- (e) աուդիտի միջազգային ստանդարտներ և Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ) Էթիկայի կանոնագիրք՝ նպատակ ունենալով մասնագիտացված կազմակերպությունների, աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից ստանդարտների և Էթիկայի նորմերի պահպանման միջոցով կատարելագործելու աուդիտորների մասնագիտական մակարդակը:

ԳԼՈՒԽ 7

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԱՅԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

ՀՈՂՎԱԾ 61

Կողմերը համաձայնում են արդյունավետ օրենսդրության և գործելակերպերի կարևորության հարցում և պայմանավորվում են համագործակցել ֆինանսական ծառայությունների ոլորտում՝ հետևյալ նպատակներով՝

- (a) ֆինանսական ծառայությունների կարգավորման գործընթացի կատարելագործում,

- (b) ներդրողների և ֆինանսական ծառայություններն սպառողների արդյունավետ և համարժեք պաշտպանության ապահովում,
- (c) գլոբալ ֆինանսական համակարգի կայունությանը և ամբողջականությանը նպաստում,
- (d) ֆինանսական համակարգի տարբեր սուբյեկտների, այդ թվում՝ կարգավորում և վերահսկողություն իրականացնողների միջև համագործակցության խթանում,
- (e) անկախ և արդյունավետ վերահսկողության գործընթացի խթանում:

ԳԼՈՒԽ 8

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 62

Կողմերը պետք է խթանեն տեղեկատվական հասարակության զարգացմանը նպաստող համագործակցությունը՝ հոգուտ քաղաքացիների ու գործարարության՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) լայնածավալ հասանելիության և մատչելի գներով ծառայությունների ավելի լավ որակի ապահովման միջոցով: Այդ համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի էլեկտրոնային հաղորդակցության շուկաների հասանելիությունը դյուրացնելուն և խթանի այդ ոլորտում մրցակցությունն ու ներդրումները:

ՀՈՂՎԱԾ 63

Համագործակցությունը պետք է ընդգրկի, *inter alia*, հետևյալ թեմաները՝

- (a) տեղեկատվական հասարակությանն առնչվող ազգային ռազմավարությունների իրականացման վերաբերյալ տեղեկությունների և լավագույն գործելակերպերի փոխանակում՝ ներառելով, *inter alia*, լայնաշերտ հասանելիությունը, ցանցային անվտանգության բարելավումը և հանրության համար առցանց ծառայությունների զարգացումը խթանելուն միտված նախաձեռնությունները.
- (b) տեղեկատվության, լավագույն գործելակերպերի և փորձի փոխանակում՝ նպատակ ունենալով խթանելու էլեկտրոնային հաղորդակցությանն առնչվող համապարփակ կարգավորիչ շրջանակի մշակման գործընթացը և մասնավորապես՝ ամրապնդելու կարգավորում իրականացնող ազգային անկախ մարմնի վարչական կարողությունը, խթանելու ոլորտային ռեսուրսների բարելավված օգտագործումը և նպաստելու Հայաստանի Հանրապետությունում և Եվրոպական միության հետ ցանցերի միջև փոխգործողությանը:

ՀՈՂՎԱԾ 64

Կողմերը պետք է խթանեն էլեկտրոնային հաղորդակցությունների ոլորտում Եվրոպական միության կարգավորում իրականացնողների և Հայաստանի Հանրապետության կարգավորում իրականացնող ազգային մարմնի միջև համագործակցությունը:

ՀՈՂՎԱԾ 65

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում V Հավելվածում նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 9

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 66

Կողմերը պետք է համագործակցեն զբոսաշրջության ոլորտում՝ նպատակ ունենալով ամրապնդելու մրցակցային և կայուն զբոսաշրջային արդյունաբերության զարգացումը՝ որպես տնտեսական աճի, հզորացման, զբաղվածության և արտարժույթի պահուստների շարժիչ ուժ:

ՀՈԴՎԱԾ 67

Երկկողմ, տարածաշրջանային և եվրոպական մակարդակով համագործակցությունը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա՝

- (a) տեղական համայնքների, մասնավորապես՝ գյուղական վայրերում, ամբողջականության և դրանց շահերի նկատմամբ հարգանքը,
- (b) մշակութային ժառանգության կարևորությունը, և
- (c) զբոսաշրջության ու շրջակա միջավայրի պահպանման միջև դրական փոխազդեցությունը:

ՀՈՂՎԱԾ 68

Համագործակցությունը պետք է ուղղված լինի հետևյալ թեմաներին՝

- (a) տեղեկությունների, լավագույն գործելակերպերի, փորձի փոխանակում և «նոու-հաու»-ի փոխանցում, այդ թվում՝ նորարարական տեխնոլոգիաների առնչությամբ,
- (b) պետական, մասնավոր հատվածների և համայնքների շահերի միջև ռազմավարական գործընկերության հաստատում՝ զբոսաշրջության կայուն զարգացումն ապահովելու նպատակով,
- (c) զբոսաշրջային արտադրանքի և շուկաների, ենթակառուցվածքի, մարդկային ռեսուրսների և ինստիտուցիոնալ կառույցների խթանում և զարգացում, ինչպես նաև՝ ճանապարհորդական ծառայություններում ի հայտ եկած խոչընդոտների հայտնաբերում ու վերացում,
- (d) արդյունավետ քաղաքականությունների և ռազմավարությունների, այդ թվում՝ իրավական, վարչական և ֆինանսական պատշաճ հայեցակարգերի մշակում ու իրականացում,
- (e) զբոսաշրջության վերաբերյալ վերապատրաստումներ և կարողությունների զարգացում՝ ծառայությունների ստանդարտները բարելավելու նպատակով, և
- (f) համայնքային զբոսաշրջության զարգացում և խթանում:

ՀՈՂՎԱԾ 69

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ԳԼՈՒԽ 10

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 70

Կողմերը պետք է համագործակցեն գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացումը խթանելու հարցում՝ մասնավորապես քաղաքականությունների և օրենսդրության աստիճանական մոտարկման միջոցով:

ՀՈՂՎԱԾ 71

Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ոլորտում Կողմերի միջև համագործակցությունը պետք է ընդգրկի, *inter alia*, հետևյալ նպատակները՝

- (a) գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման քաղաքականություններին առնչվող փոխըմբռնման գործընթացի դյուրացում,
- (b) քաղաքականությունների պլանավորման, գնահատման և իրականացման գործընթացներում վարչական կարողությունների ընդլայնում կենտրոնական և տեղական մակարդակով՝ Եվրոպական միության օրենսդրության և լավագույն գործելակերպերի համաձայն,
- (c) գյուղատնտեսական արտադրանքի կայունության և արդիականացման խթանում,
- (d) գյուղատնտեսական համայնքների տնտեսական բարեկեցությունը խթանելու նպատակով գյուղական համայնքների զարգացման քաղաքականություններին առնչվող գիտելիքների և լավագույն գործելակերպերի փոխանակում,

- (e) գյուղատնտեսական հատվածի մրցունակության և շուկաների արդյունավետության ու թափանցիկության բարելավում,
- (f) որակի քաղաքականությունների և դրանց վերահսկման մեխանիզմների, մասնավորապես՝ աշխարհագրական նշումների ու օրգանական գյուղատնտեսության խթանում,
- (g) գյուղատնտեսական արտադրողների շրջանում գյուղատնտեսությանն առնչվող գիտելիքների և փորձի տարածման ծառայությունների խթանում, և
- (h) միջազգային այն կազմակերպությունների շրջանակում դիտարկվող հարցերի ներդաշնակեցման գործընթացի ընդլայնում, որոնց երկու Կողմերն էլ անդամակցում են:

ԳԼՈՒԽ 11

ԶԿԼԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՈՎԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 72

Կողմերը պետք է համագործակցեն փոխադարձ հետաքրքրություններ կայացնող այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնք վերաբերում են ձկնարդյունաբերության և ծովագնացության կառավարմանը՝ դրանով նպաստելով ձկնարդյունաբերության ոլորտում ավելի սերտ երկկողմանի, բազմակողմանի և միջազգային համագործակցության զարգացմանը:

ՀՈՂՎԱԾ 73

Կողմերը պետք է ձեռնարկեն համատեղ գործողություններ, փոխանակեն տեղեկություններ և ցուցաբերեն փոխադարձ աջակցություն՝ նպատակ ունենալով խթանելու՝

- (a) կայուն զարգացման սկզբունքներին համահունչ՝ ձկնորսության և ձկնարդյունաբերության պատասխանատու կառավարումը՝ ձկան պաշարները և էկոհամակարգերը առողջ վիճակում պահպանելու նպատակով, և
- (b) ջրային կենդանի ռեսուրսների կառավարման և պահպանման համար պատասխանատու՝ բազմակողմ և միջազգային համապատասխան կազմակերպությունների միջոցով համագործակցությունը՝ մասնավորապես համապատասխան միջազգային մոնիթորինգի և իրավակիրառ գործիքների ամրապնդման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 74

Կողմերը պետք է աջակցեն այնպիսի նախաձեռնություններին, ինչպիսիք են փորձի փոխադարձ փոխանակումը և աջակցության տրամադրումը՝ ձկնարդյունաբերության կայուն քաղաքականության իրականացում ապահովելու նպատակով, որն ընդգրկում է՝

- (a) ձկնարդյունաբերության և ակվակուլտուրաների պաշարների կառավարումը,
- (b) ձկնորսական գործունեության ստուգումն ու վերահսկողությունը,
- (c) որսին, տարածքում տեղակայմանն առնչվող, կենսաբանական և տնտեսական տվյալների հավաքագրումը,
- (d) շուկաների արդյունավետության բարելավումը, մասնավորապես՝ արտադրական կազմակերպությունների գործունեությունը խթանելու, ինչպես նաև սպառողներին տեղեկություններ տրամադրելու և շուկայահանման ստանդարտների ու հետազոտելիության միջոցով,
- (e) լճափ կամ նաև՝ լճակներ կամ գետաբերան ներառող տարածքների կայուն զարգացումը՝ ձկնարդյունաբերության ոլորտում զբաղվածության զգալի մակարդակի հետ մեկտեղ, և

(f) կայուն ակվակուլտուրաների վերաբերյալ օրենսդրությանն առնչվող փորձի՝ ինստիտուցիոնալ մակարդակով փոխանակումը և դրա գործնական կիրառումը բնական ավազաններում ու արհեստական լճերում:

ՀՈԴՎԱԾ 75

Հաշվի առնելով ձկնարդյունաբերության, տրանսպորտի, բնապահպանության ոլորտներում իրենց համագործակցությունը և ծովային հարցերին առնչվող այլ քաղաքականությունները՝ Կողմերը պետք է նաև համագործակցեն և անհրաժեշտության դեպքում՝ փոխադարձ աջակցություն ցուցաբերեն ծովագնացության հարցերի մասով, մասնավորապես՝ համապատասխան տարածաշրջանային և միջազգային ֆորումներում ծովագնացության հիմնահարցերի և պատշաճ կառավարման վերաբերյալ ինտեգրված մոտեցմանը ակտիվ աջակցություն ցուցաբերելով:

ԳԼՈՒԽ 12

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 76

Կողմերը պետք է զարգացնեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը հանքարդյունաբերության և հումքի արտադրության ոլորտներում՝ նպատակ ունենալով խթանելու փոխադարձ ըմբռնումը, բարելավելու գործարար միջավայրը, փոխանակելու տեղեկություններ և համագործակցելու էներգետիկ ոլորտին չառնչվող հարցերի շուրջ, մասնավորապես մետաղական հանքաքարերի և արդյունաբերական նշանակության հանքանյութերի արդյունահանման վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 77

Կողմերը պետք է համագործակցեն հետևյալ նպատակներով՝

- (a) Կողմերի միջև նրանց հանքարդյունաբերության և հումքի ոլորտներում ընթացող զարգացումների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում,
- (b) երկկողմ փոխանակումների գործընթացը խթանելու նպատակով հումքի առևտրին առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակում,
- (c) հանքարդյունաբերության կայուն զարգացմանն առնչվող տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակում, և
- (d) հանքարդյունաբերության ոլորտում վերապատրաստմանը, հմտություններին և անվտանգությանն առնչվող տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակում:

ԳԼՈՒԽ 13

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 78

Կողմերը փոխշահավետության հիման վրա և ապահովելով մտավոր սեփականության իրավունքների պատշաճ և արդյունավետ պաշտպանություն, պետք է խթանեն քաղաքացիական գիտահետազոտության, տեխնոլոգիական զարգացման և նորարարության բոլոր ոլորտներում համագործակցությունը:

ՀՈԴՎԱԾ 79

78-րդ հոդվածում նշված համագործակցությունը պետք է ընդգրկի՝

- (a) երկխոսության քաղաքականությունը և գիտական ու տեխնոլոգիական տեղեկությունների փոխանակումը,
- (b) յուրաքանչյուր Կողմի համապատասխան ծրագրերին համարժեք հասանելիության ապահովման դյուրացումը,
- (c) հետազոտական հնարավորությունների ու Եվրոպական միության՝ հետազոտությունների և նորարարությունների շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության հետազոտական կառույցների մասնակցության ընդլայնման հետ կապված նախաձեռնությունները,
- (d) հետազոտության և նորարարության բոլոր ոլորտներում հետազոտական գործունեությանն առնչվող համատեղ նախագծերի խթանումը,
- (e) հետազոտական և նորարարական աշխատանքներին երկու կողմերից ներգրավված գիտնականների, հետազոտողների և հետազոտական այլ անձնակազմի համար վերապատրաստումները և շարժունակության ծրագրերը,
- (f) կիրառելի օրենսդրության շրջանակներում՝ սույն Համաձայնագրով նախատեսված գործունեությանը մասնակցող գիտաշխատողների ազատ տեղաշարժի և այդ գործունեության մեջ օգտագործման համար նախատեսված ապրանքների միջսահմանային տեղաշարժի դյուրացումը, և
- (g) փոխադարձ համաձայնության հիման վրա՝ հետազոտության և նորարարության ոլորտում համագործակցության մյուս ձևերը:

ՀՈԴՎԱԾ 80

Համագործակցության այսպիսի գործունեություն իրականացնելիս պետք է ձգտել փոխգործակցության՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) կողմից ֆինանսավորվող գործունեության և Եվրոպական միության ու Հայաստանի Հանրապետության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում իրականացվող այլ գործունեությունների հետ՝ ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի VII մասի 1-ին գլխում:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 81

Կողմերը պետք է համագործակցեն՝ սպառողների պաշտպանության բարձր մակարդակ և սպառողների պաշտպանության իրենց համակարգերի միջև համատեղելիություն ապահովելու համար:

ՀՈԴՎԱԾ 82

Սույն գլխի նպատակներով, համագործակցությունը կարող է ներառել՝

- (a) Եվրոպական միության օրենսդրությանը Հայաստանի Հանրապետության՝ սպառողներին առնչվող օրենսդրության մոտարկմանը նպատակաուղղվածություն՝ միևնույն ժամանակ խուսափելով առևտրում խոչընդոտներից,
- (b) սպառողների պաշտպանության համակարգերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման, այդ թվում՝ սպառողներին առնչվող օրենսդրության և դրա կատարման, սպառողական արտադրանքի անվտանգության, տեղեկությունների փոխանակման համակարգերի, սպառողների կրթության և հնարավորությունների ընդլայնման ու սպառողների իրավական պաշտպանության խթանում,
- (c) վարչական աշխատողների և սպառողների շահերը ներկայացնող այլ անձանց վերապատրաստումներ, և
- (d) սպառողների անկախ ասոցիացիաների զարգացման և սպառողների ներկայացուցիչների միջև շփումների խրախուսում:

ՀՈՂՎԱԾ 83

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում VI Հավելվածում նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 15

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 84

Կողմերը պետք է ամրապնդեն իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, զբաղվածության քաղաքականությունը, աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը, սոցիալական երկխոսությունը, սոցիալական պաշտպանությունը, սոցիալական ներգրավվածությունը, կանանց և տղամարդկանց հավասարությունը և խտրականության բացառումը խթանելուն՝ դրանով նպաստելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական համերաշխության ընդլայնմանը, կայուն զարգացմանը և կյանքի որակի բարելավմանը:

ՀՈՂՎԱԾ 85

Տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակման վրա հիմնված համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ ոլորտներում հասցեագրման ենթակա որոշակի թվով հարցեր՝

(a) աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում,

- (b) զբաղվածության քաղաքականություն՝ ուղղված արժանապատիվ աշխատանքային պայմաններով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր ստեղծելուն՝ այդ թվում՝ ստվերային տնտեսության և ստվերային զբաղվածության մակարդակը նվազեցնելու նպատակով,
- (c) աշխատաշուկային ուղղված ակտիվ միջոցառումների և զբաղվածության արդյունավետ ծառայությունների խթանում՝ աշխատաշուկաներն արդիականացնելու և աշխատաշուկայի կարիքներին համապատասխանություն ապահովելու համար,
- (d) առավել ընդգրկուն աշխատաշուկաների և սոցիալական ապահովության այնպիսի համակարգերի խթանում, որոնցում ներառված են անապահով անձինք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք և փոքրամասնությունների խմբերը ներկայացնող անձինք,
- (e) հավասար հնարավորություններ և ոչ խտրական վերաբերմունք՝ ուղղված կանանց և տղամարդկանց միջև հավասար հնարավորությունների ապահովմանը և կանանց և տղամարդկանց միջև հավասարության ընդլայնմանը, ինչպես նաև՝ սեռի, ռասայական կամ էթնիկ ծագման, կրոնի կամ դավանանքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ պայքարին,
- (f) սոցիալական քաղաքականություն՝ ուղղված սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը և սոցիալական պաշտպանության համակարգերի արդիականացմանը՝ որակի, հասանելիության և ֆինանսական կայունության առումով,
- (g) սոցիալական գործընկերների մասնակցության ընդլայնում և սոցիալական երկխոսության խթանում, այդ թվում՝ համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի հնարավորություններն ամրապնդելու միջոցով,
- (h) աշխատավայրում առողջության և անվտանգության խթանում, և
- (i) կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խթանում:

ՀՈՂՎԱԾ 86

Կողմերը պետք է խրախուսեն համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավորապես՝ սոցիալական գործընկերների ներգրավումը Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության մշակման և բարեփոխումների գործընթացին և Կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությանը:

ՀՈՂՎԱԾ 87

Կողմերը պետք է ձգտեն ընդլայնել զբաղվածության և սոցիալական քաղաքականության հարցերի վերաբերյալ համագործակցությունը՝ տարածաշրջանային, բազմակողմ և միջազգային համապատասխան բոլոր ֆորումներում և կազմակերպություններում:

ՀՈՂՎԱԾ 88

Կողմերը պետք է խթանեն կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը և խրախուսեն պատասխանատու այնպիսի գործարար գործելակերպը, ինչպիսին է Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ ուղեցույցներով, ՄԱԿ-ի Գլոբալ Կոմպակտ նախաձեռնությամբ, ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագրով և ISO 26000-ով խրախուսվող գործելակերպը:

ՀՈՂՎԱԾ 89

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ՀՈՂՎԱԾ 90

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում VII Հավելվածում նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 16

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՈՂՎԱԾ 91

Առողջապահությանն առնչվող համընդհանուր արժեքներին և սկզբունքներին համապատասխան և որպես կայուն զարգացման ու տնտեսական աճի նախապայման՝ Կողմերը պետք է զարգացնեն իրենց համագործակցությունը հանրային առողջապահության ոլորտում՝ դրա մակարդակը բարձրացնելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 92

Համագործակցությունը պետք է անդրադառնա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու դրանց նկատմամբ հսկողությանը, այդ թվում՝ առողջապահության վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով՝ «բոլոր տեսակի քաղաքականությունների դեպքում՝ առողջապահության սկզբունք» մոտեցման խթանմանը, միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցությանը, և առողջապահությանն առնչվող այնպիսի միջազգային համաձայնագրերի իրականացման խթանմանը, ինչպիսիք են Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2003 թվականի՝ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիան և Միջազգային առողջապահական կանոնակարգերը:

ԳԼՈՒԽ 17

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՐԱՊԱՏՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ
ՀԱՐՅԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 93

Համագործակցությունն ու քաղաքական երկխոսությունն ակտիվացնելու համար Կողմերը պետք է փոխգործակցեն կրթության և վերապատրաստման ոլորտում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և վերապատրաստման համակարգերը Եվրոպական միության քաղաքականություններին ու գործելակերպերին մոտարկելու նպատակով: Կողմերը պետք է համագործակցեն ամբողջ կյանքի ընթացքում կրթությունը խթանելու հարցում, ինչպես նաև խրախուսեն կրթության և վերապատրաստման բոլոր մակարդակներում համագործակցությունն ու թափանցիկությունը՝ հատուկ ուշադրության կենտրոնում պահելով մասնագիտական և բարձրագույն կրթությունը:

ՀՈՂՎԱԾ 94

Կրթության և վերապատրաստման ոլորտում համագործակցությունը պետք է կենտրոնացած լինի, *inter alia*, հետևյալ ոլորտների վրա՝

- (a) մշտական կրթության խթանում, ինչն աճի և աշխատատեղեր ստեղծելու բանալին է, և քաղաքացիներին կարող է ընձեռել հասարակության մեջ լիարժեք կերպով ներգրավվելու հնարավորություն,
- (b) կրթության և վերապատրաստման համակարգերի, այդ թվում՝ հանրային/քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համակարգերի արդիականացում, ինչպես նաև որակի, վերաբերելիության և հասանելիության մակարդակի բարձրացում կրթության բոլոր աստիճաններում՝ վաղ մանկական կրթությունից ու խնամքից մինչև միջնակարգ և բարձրագույն կրթություն,
- (c) բարձրագույն կրթության ոլորտում համապատասխանեցման և համակարգված բարեփոխումների գործընթացի խթանում, ինչը բխում է Եվրոպական միության՝ Բարձրագույն կրթության օրակարգից և Եվրոպական Բարձրագույն կրթության տարածքից (Բոլոնիայի գործընթաց),

- (d) միջազգային գիտական համագործակցության ամրապնդում, Եվրոպական միության համագործակցության ծրագրերին մասնակցության ընդլայնում, ինչպես նաև ուսանողների և ուսուցիչների շարժունակության բարելավում,
- (e) խրախուսում օտար լեզուներ սովորելը,
- (f) ազգային որակավորումների շրջանակի մշակում՝ Եվրոպական որակավորումների շրջանակին միացած Տեղեկատվական կենտրոնների Եվրոպական ցանցի և Ազգային ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնների (ՏԿԵՅ-ԱԱՃՏԿ) համայնքի շրջանակներում որակավորումների և մասնագիտացման ճանաչումն ու թափանցիկությունը բարելավելու նպատակով,
- (g) մասնագիտական կրթության և վերապատրաստման հետագա զարգացման նպատակով համագործակցության ընդլայնում՝ հաշվի առնելով Եվրոպական միությունում պատշաճ գործելակերպը, և
- (h) Եվրոպական ինտեգրման գործընթացի ընկալում և դրա վերաբերյալ իրազեկության ամրապնդում, ԵՄ-Արևելյան գործընկերություն հարաբերությունների մասին գիտական երկխոսություն և Եվրոպական միության համապատասխան ծրագրերին մասնակցություն, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության ոլորտում:

ՀՈԴՎԱԾ 95

Կողմերը համաձայնում են փոխգործակցել երիտասարդությանն առնչվող հարցերում՝ նպատակ ունենալով՝

- (a) ամրապնդելու երիտասարդությանն առնչվող քաղաքականության և երիտասարդների ու երիտասարդ աշխատողների համար ոչ ֆորմալ կրթության ոլորտում համագործակցությունն ու փոխանակումները,
- (b) դյուրացնելու հասարակական կյանքում բոլոր երիտասարդների ակտիվ մասնակցությունը,

- (c) աջակցելու երիտասարդների և երիտասարդ աշխատողների շարժունակությանը՝ որպես ֆորմալ կրթական համակարգերից դուրս միջմշակութային երկխոսությունը խթանելու և գիտելիք, հմտություններ ու մասնագիտացում ձեռք բերելու միջոց, այդ թվում՝ նաև կամավոր գործունեության միջոցով, և
- (d) քաղաքացիական հասարակությանն աջակցելու նպատակով խթանելու երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությունը:

ԳԼՈՒԽ 18

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 96

Կողմերը պետք է խթանեն մշակութային համագործակցությունը՝ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայում ամրագրված սկզբունքների համաձայն: Կողմերը պետք է ձգտեն քաղաքական կանոնավոր երկխոսության՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող, այդ թվում՝ Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում մշակութային արդյունաբերության զարգացման ոլորտներում: Կողմերի միջև համագործակցությունը պետք է խթանի միջմշակութային երկխոսությունը, այդ թվում՝ Եվրոպական միությունից և Հայաստանի Հանրապետությունից մշակույթի ոլորտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության միջոցով:

ՀՈԴՎԱԾ 97

Համագործակցությունը պետք է կենտրոնացած լինի, *inter alia*՝

- (a) մշակութային համագործակցության և մշակութային փոխանակումների վրա,

- (b) արվեստի և արվեստագետների շարժունակության ու մշակութային ոլորտի հնարավորությունների ամրապնդման վրա,
- (c) միջմշակութային երկխոսության վրա,
- (d) մշակութային քաղաքականությանն առնչվող երկխոսության վրա,
- (e) «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի վրա, և
- (f) այնպիսի միջազգային ֆորումներում համագործակցության վրա, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն և Եվրոպայի խորհուրդը՝ մշակութային բազմազանությանը աջակցելու և մշակութային ու պատմական ժառանգությունը պահպանելու և արժևորելու նպատակով:

ԳԼՈՒԽ 19

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 98

Կողմերը պետք է խթանեն համագործակցությունը տեսալսողական արդյունաբերության ոլորտում: Համագործակցությունը պետք է ամրապնդի Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում տեսալսողական արդյունաբերությունը, մասնավորապես՝ մասնագետների վերապատրաստման և տեղեկությունների փոխանակման միջոցով:

ՀՈՂՎԱԾ 99

1. Կողմերը տեսալսողական արդյունաբերության և լրատվական քաղաքականությունների մասով պետք է զարգացնեն կանոնավոր երկխոսություն և համագործակցեն լրատվամիջոցների անկախությունն ու պրոֆեսիոնալիզմը, ինչպես նաև՝ Եվրոպական միության լրատվամիջոցների հետ կապերն ամրապնդելու համար՝ Եվրոպական ստանդարտներին, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի ստանդարտներին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիային համապատասխան:

2. Համագործակցությունը, *inter alia*, կարող է ընդգրկել լրագրողներին և լրատվական դաշտի այլ մասնագետներին վերապատրաստելու, ինչպես նաև՝ լրատվական դաշտին աջակցելու հարցը:

ՀՈՂՎԱԾ 100

Համագործակցությունը պետք է կենտրոնացած լինի, *inter alia*՝

- (a) տեսալսողական արդյունաբերության և լրատվության քաղաքականությունների վերաբերյալ երկխոսության վրա,
- (b) միջազգային հարթակներում (ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն և ԱՀԿ-ն) համագործակցության վրա, և
- (c) տեսալսողական արդյունաբերության և լրատվության դաշտում համագործակցության, այդ թվում՝ կինոյի ոլորտում համագործակցության վրա:

ԳԼՈՒԽ 20

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 101

Կողմերը պետք է խթանեն համագործակցությունը սպորտի և ֆիզիկական ակտիվության ոլորտում, մասնավորապես՝ տեղեկությունների և պատշաճ գործելակերպի փոխանակման միջոցով՝ նպատակ ունենալով խթանելու առողջ ապրելակերպը, պատշաճ կառավարումը, ինչպես նաև՝ սպորտի դերը՝ սոցիալական և կրթական տեսանկյունից, և պայքարել սպորտի բնագավառում ի հայտ եկող այնպիսի սպառնալիքների դեմ, ինչպիսիք են Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում դոպինգի կիրառումը, պայմանավորված խաղերի կազմակերպումը, ռասիզմը և բռնությունը:

ԳԼՈՒԽ 21

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 102

Կողմերը քաղաքացիական հասարակության հետ համագործակցության վերաբերյալ պետք է հաստատեն երկխոսություն՝ նպատակ ունենալով՝

- (a) ամրապնդելու Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության բոլոր հատվածների միջև շփումները և տեղեկությունների ու փորձի փոխանակումը,

- (b) ապահովելու Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ դրա պատմության և մշակույթի ավելի լավ իմացությունը և ընկալումը Եվրոպական միությունում և մասնավորապես՝ անդամ պետություններում գտնվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շրջանում՝ այդպիսով հետագա հարաբերությունների համար ապահովելով հնարավորությունների և մարտահրավերների մասին իրազեկության ավելի բարձր մակարդակ, և
- (c) ապահովելու Եվրոպական միության ավելի լավ իմացությունը և ընկալումը Հայաստանի Հանրապետությունում և մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շրջանում՝ չբացառելով այն արժեքների վրա կենտրոնացումը, որոնց վրա հիմնված են Եվրոպական միությունը, դրա քաղաքականություններն ու գործունեությունը:

ՀՈՒՎԱԾ 103

1. Կողմերը պետք է խթանեն երկու կողմերից քաղաքացիական հասարակության շահագրգիռ անձանց միջև երկխոսությունը և համագործակցությունը՝ որպես Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների անբաժանելի մաս:
2. Այդպիսի երկխոսության և համագործակցության նպատակներն են՝
 - (a) ապահովել քաղաքացիական հասարակության ներգրավումը Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերություններին,
 - (b) ընդլայնել պետական որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցությունը, մասնավորապես՝ մի կողմից պետական հաստատությունների և մյուս կողմից՝ ներկայացուցչական ընկերակցությունների ու քաղաքացիական հասարակության միջև բաց, թափանցիկ և կանոնավոր երկխոսություն հաստատելու միջոցով,

- (c) խթանել ինստիտուցիոնալ զարգացման և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համախմբման գործընթացը տարբեր եղանակներով, այդ թվում, *inter alia*, իրավական պաշտպանության, ոչ պաշտոնական և պաշտոնական կապերի ստեղծման, փոխայցելությունների և աշխատաժողովների միջոցով, մասնավորապես՝ նկատի ունենալով քաղաքացիական հասարակության համար իրավական դաշտի կատարելագործումը, և
- (d) յուրաքանչյուր կողմից քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ընձեռել մյուս կողմի քաղաքացիական և սոցիալական գործընկերների միջև խորհրդակցությունների տրամադրման և երկխոսությունների անցկացման գործընթացներին ծանոթանալու հնարավորություն, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում պետական որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական հասարակությանն առավել ինտեգրելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 104

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ Կողմերի միջև պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՎ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 105

1. Կողմերը պետք է խթանեն տարածաշրջանային զարգացման քաղաքականության ոլորտում փոխադարձ ըմբռնումը և երկկողմանի համագործակցությունը, այդ թվում՝ տարածաշրջանային քաղաքականությունների ձևավորման և իրականացման մեթոդները, բազմամակարդակ կառավարումը և գործընկերությունը՝ առանձնահատուկ շեշտադրելով անբարենպաստ վիճակում գտնվող տարածքների զարգացումը և տարածքային համագործակցությունը՝ ազգային, տարածաշրջանային և տեղական իշխանությունների, սոցիալ-տնտեսական գործիչների և քաղաքացիական հասարակության միջև հաղորդակցության ուղիներ ստեղծելու և տեղեկությունների ու փորձի փոխանակման գործընթացն ընդլայնելու նպատակով:

2. Մասնավորապես, Կողմերը պետք է համագործակցեն՝ Հայաստանի Հանրապետության գործելակերպը հետևյալ սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով՝

- (a) բազմամակարդակ կառավարման գործընթացի ամրապնդում այնքանով, որքանով այն ազդեցություն ունի կենտրոնական, տարածաշրջանային և տեղական կառավարման մակարդակների վրա՝ հատուկ շեշտադրելով տարածաշրջանային և տեղական շահագրգիռ կողմերին ներգրավելու գործընթացի ընդլայնման եղանակները,
- (b) տարածաշրջանային զարգացման գործընթացում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի միջև գործընկերության ամրապնդում, և
- (c) տարածաշրջանային զարգացման ծրագրերի և նախագծերի իրականացման գործընթացում ներգրավված Կողմերի կողմից ֆինանսական աջակցության միջոցով համաֆինանսավորումը:

ՀՈԴՎԱԾ 106

1. Կողմերը պետք է աջակցեն և ամրապնդեն տարածաշրջանային քաղաքականության հետ կապված համագործակցությունը, այդ թվում՝ միջսահմանային համագործակցությունը և դրանց առնչվող կառավարման կառույցներում տեղական ու տարածաշրջանային մակարդակի իշխանությունների ներգրավվածությունը, իրավակիրատ օրենսդրական շրջանակի ստեղծման միջոցով ընդլայնեն համագործակցությունը, աջակցեն և զարգացնեն հնարավորությունների ստեղծման միջոցառումները և խթանեն միջսահմանային ու տարածաշրջանային տնտեսական և գործարար ցանցերի ամրապնդումը:

2. Կողմերը պետք է համագործակցեն՝ տարածաշրջանային զարգացման և հողօգտագործման պլանավորման ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառույցների ինստիտուցիոնալ և գործառնական հնարավորություններն ամրապնդելու համար, *inter alia*, հետևյալի միջոցով՝
 - (a) միջինստիտուցիոնալ համակարգման գործընթացի, մասնավորապես՝ տարածաշրջանային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում կենտրոնական և տեղական վարչարարություն իրականացնող մարմինների ուղղահայաց և հորիզոնական փոխգործունեության մեխանիզմի կատարելագործում,
 - (b) միջսահմանային համագործակցությունը խթանելու համար տարածաշրջանային և տեղական իշխանությունների հնարավորությունների զարգացում՝ հաշվի առնելով Եվրոպական միության կարգավորումներն ու գործելակերպը, և
 - (c) տարածաշրջանային զարգացման քաղաքականություններին առնչվող գիտելիքների, տեղեկությունների և լավագույն գործելակերպերի փոխանակում՝ տեղական համայնքների տնտեսական բարեկեցությունը և շրջանների միատեսակ զարգացումը խթանելու համար:

ՀՈՒՎԱԾ 107

1. Կողմերը պետք է ամրապնդեն և խրախուսեն միջսահմանային համագործակցության զարգացումը՝ սույն Համաձայնագրով նախատեսված այլ ոլորտներում, ինչպիսիք են, *inter alia*, տրանսպորտը, էներգետիկան, բնապահպանությունը, հաղորդակցության ցանցերը, մշակույթը, կրթությունը, զբոսաշրջությունը և առողջապահությունը:

2. Կողմերն անդրազգային և միջտարածաշրջանային ծրագրերի միջոցով պետք է ակտիվացնեն իրենց շրջանների միջև համագործակցությունը՝ խրախուսելով Հայաստանի Հանրապետության շրջանների մասնակցությունը Եվրոպական տարածաշրջանային կառույցներում և կազմակերպություններում և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նախագծերի իրականացման միջոցով խթանելով դրանց տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացումը:

3. 2-րդ պարբերության մեջ նշված միջոցառումները պետք է տեղի ունենան ստորև նշվածների համատեքստում՝
 - (a) Եվրոպական տարածաշրջանների հետ տարածքային համագործակցությունը շարունակելը (այդ թվում՝ անդրազգային և միջսահմանային համագործակցության ծրագրերի միջոցով),
 - (b) Արևելյան գործընկերության շրջանակներում և Եվրոպական միության մարմինների, այդ թվում՝ Տարածաշրջանների կոմիտեի հետ համագործակցությունը, և Եվրոպայի տարածաշրջանային տարբեր նախագծերին ու նախաձեռնություններին մասնակցությունը, և
 - (c) համագործակցությունը, *inter alia*, Սոցիալական և տնտեսական հարցերով Եվրոպական կոմիտեի (ՍՏԵԿ) և Եվրոպական տիեզերական պլանավորման դիտարկումների ցանցի (ԵՏՊԴՑ) հետ:

ՀՈՒՎԱԾ 108

Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն:

ԳԼՈՒԽ 23

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՒՎԱԾ 109

Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը բնական և տեխնաձին աղետների դեմ պայքարի հարցերով: Համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով Կողմերի՝ հավասարության և փոխադարձ օգուտի վրա հիմնված շահերը, ինչպես նաև Կողմերի միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունը և այդ ոլորտում իրականացվող բազմակողմ միջոցառումները:

ՀՈՒՎԱԾ 110

Համագործակցությունը պետք է ուղղված լինի բնական և տեխնաձին աղետները կանխարգելելու, դրանց նախապատրաստվելու և արձագանքելու գործընթացների բարելավմանը:

ՀՈԴՎԱԾ 111

Կողմերը, *inter alia*, երկկողմանի հիմունքներով և (կամ) բազմակողմ ծրագրերի շրջանակներում պետք է փոխանակեն տեղեկություններ ու փորձ և իրականացնեն համատեղ միջոցառումներ: Համագործակցությունը կարող է ընթանալ, *inter alia*, քաղաքացիական պաշտպանության ոլորտում Կողմերի միջև կնքված հատուկ համաձայնագրերի և (կամ) ձեռք բերված վարչական պայմանավորվածությունների իրականացման միջոցով: Կողմերը սույն Համաձայնագրով նախատեսված կամ ծրագրված միջոցառումների համար կարող են համատեղ սահմանել հատուկ ուղեցույցներ և (կամ) աշխատանքային պլաններ:

ՀՈԴՎԱԾ 112

Համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ նպատակները՝

- (a) կոնտակտային տվյալների փոխանակում և դրանց կանոնավոր թարմացում՝ երկխոսության շարունակականությունն ապահովելու և 24-ժամյա ռեժիմով միմյանց հետ կապ պահպանելու նպատակով,
- (b) խոշոր արտակարգ իրավիճակների դեպքում փոխադարձ աջակցության դրսևացում՝ անհրաժեշտության և բավարար ռեսուրսների առկայության դեպքում,
- (c) Եվրոպական միության կամ Հայաստանի Հանրապետության վրա ազդեցություն ունեցող լայնամասշտաբ արտակարգ իրավիճակների վերաբերյալ 24-ժամյա ռեժիմով նախազգուշացումների և թարմացված տեղեկությունների, այդ թվում՝ աջակցության վերաբերյալ պահանջների և առաջարկների փոխանակում,
- (d) արտակարգ իրավիճակների դեպքում Կողմերի կողմից այն երրորդ երկրներին աջակցություն տրամադրելու վերաբերյալ տեղեկությունների փոխանակում, որտեղ գործում է ԵՄ Քաղաքացիական պաշտպանության մեխանիզմը,

- (e) հյուրընկալող երկրի աջակցության շուրջ համագործակցություն՝ աջակցություն խնդրելու կամ տրամադրելու դեպքում,
- (f) աղետները կանխարգելելու, դրանց նախապատրաստվելու և արձագանքելու ոլորտում լավագույն գործելակերպի և ուղեցույցների փոխանակում,
- (g) աղետների ռիսկի նվազեցման շուրջ համագործակցություն, *inter alia*, հասցեագրելով ինստիտուցիոնալ կապերն ու պաշտպանությունը, տեղեկատվությունը, կրթությունն ու հաղորդակցությունը, և լավագույն գործելակերպը՝ միտված տարերային աղետների ազդեցությունը կանխարգելելուն կամ մեղմելուն,
- (h) աղետների կառավարմանն առնչվող վտանգի ու ռիսկի գնահատման և աղետների վերաբերյալ գիտելիքների բազայի կատարելագործման շուրջ համագործակցություն,
- (i) շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա աղետների ազդեցության գնահատման շուրջ համագործակցություն,
- (j) քաղաքացիական պաշտպանության հարցերին առնչվող մասնագիտական տեխնիկական աշխատաժողովներին և գիտաժողովներին փորձագետների հրավիրում,
- (k) յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար՝ Եվրոպական միության և (կամ) Հայաստանի Հանրապետության կողմից կազմակերպվող հատուկ պրակտիկ դասընթացներին և վերապատրաստումներին դիտորդների հրավիրում, և
- (l) քաղաքացիական պաշտպանության առկա հնարավորությունների առավել արդյունավետ կիրառության շուրջ համագործակցության ամրապնդում:

ՄԱՍ VI

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ

ՀՈԴՎԱԾ 113

Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ապրանքների համար պետք է տրամադրի ազգերի առավել բարենպաստության ռեժիմ՝ 1994 թվականի ապրիլի 15-ին կնքված Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնադրման Մարաքեշի Համաձայնագրի (ԱՀԿ համաձայնագիր) 1A հավելվածում ընդգրկված՝ ՍԱԳՀ 1994-ի I հոդվածի, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրությունների համաձայն, որոնք ներառվել են սույն Համաձայնագրում և կազմում են դրա անբաժանելի մասը *mutatis mutandis* :
2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը չի կիրառվում Կողմերից որևէ մեկի կողմից մեկ այլ երկրի ապրանքների համար տրամադրվող արտոնյալ ռեժիմի նկատմամբ՝ ՍԱԳՀ 1994-ի համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 114

Ազգային ռեժիմը

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ապրանքների համար տրամադրում է ազգային ռեժիմ՝ ՍՍԳՀ 1994-ի III հոդվածին, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրություններին համապատասխան, որոնք ներառվել են սույն Համաձայնագրում և, *mutatis mutandis*, կազմում են դրա անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 115

Ներմուծման տուրքերը և վճարները

Յուրաքանչյուր Կողմ կիրառում է ներմուծման տուրքեր և վճարներ՝ ԱՀԿ համաձայնագրով սահմանված՝ իր կողմից ստանձնված պարտավորություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 116

Արտահանման տուրքերը, հարկերը և մյուս վճարները

Որևէ Կողմ չի կարող սահմանել կամ շարունակել կիրառել տուրքեր, հարկեր կամ մյուս Կողմի տարածք ապրանքների արտահանման համար սահմանված կամ դրա հետ կապված որևէ այլ վճար, որը գերազանցում է ներքին շուկայի համար նախատեսված նույնանման ապրանքների համար սահմանված չափը:

ՀՈՒՎԱԾ 117

Ներմուծման և արտահանման սահմանափակումները

1. Կողմերից որևէ մեկը, ՍԱԳՀ 1994-ի XI հոդվածին և դրա բացատրական ծանոթագրություններին համապատասխան, մյուս Կողմի որևէ ապրանքի ներմուծման կամ մյուս Կողմի տարածք որևէ ապրանքի արտահանման կամ արտահանման նպատակով վաճառքի համար, տուրքերից, հարկերից կամ այլ վճարներից բացի, չի կարող սահմանել կամ կիրառել որևէ արգելք կամ սահմանափակում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանք ներդրվել են քվոտաների, ներմուծման կամ արտահանման լիցենզիաների կամ այլ միջոցների կիրառման արդյունքում: Այս նպատակով, ՍԱԳՀ 1994-ի XI հոդվածը, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրությունները, ներառվել են սույն Համաձայնագրում և, *mutatis mutandis*, կազմում են դրա անբաժանելի մասը:

2. Կողմերը պետք է փոխանակեն երկակի նշանակության ապրանքների արտահանման նկատմամբ հսկողությանը վերաբերող տեղեկությունները և լավագույն փորձը՝ նպատակ ունենալով ապահովելու Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում արտահանման նկատմամբ հսկողության միանման մոտեցում:

ՀՈՒՎԱԾ 118

Վերամշակման ենթարկված ապրանքները

1. Կողմերը համաձայնում են վերամշակման ենթարկված ապրանքների համար տրամադրել այն նույն ռեժիմը, որը տրամադրվում է նոր արտադրված նույնանման ապրանքների համար: Կողմը կարող է պահանջել վերամշակման ենթարկված ապրանքների հատուկ պիտակավորում՝ սպառողներին շփոթության մեջ զգելուց խուսափելու նպատակով:

2. Առավել որոշակիության համար, 117-րդ հոդվածի 1-ին պարբերությունը վերաբերում է վերամշակման ենթարկված ապրանքների նկատմամբ կիրառվող արգելքներին և սահմանափակումներին:

3. Սույն Համաձայնագրի և ԱՀԿ համաձայնագրերի շրջանակներում իր կողմից ստանձնված պարտավորություններին համապատասխան՝ Կողմը կարող է պահանջել, որպեսզի վերամշակման ենթարկված ապրանքները՝

(a) իր տարածքում բաշխման կամ վաճառքի նպատակներով ճանաչվեն այդպիսին, և

(b) համապատասխանեն բոլոր կիրառելի տեխնիկական պահանջներին, որոնք կիրառվում են նոր արտադրված համարժեք ապրանքների նկատմամբ:

4. Եթե Կողմը սահմանում կամ շարունակում է կիրառել արգելքներ կամ սահմանափակումներ օգտագործված ապրանքների նկատմամբ, ապա այն չպետք է կիրառի այդ միջոցները վերամշակված ապրանքների նկատմամբ:

5. Սույն հոդվածի նպատակներով, վերամշակված ապրանք նշանակում է այն ապրանքը, որը՝

(a) ամբողջությամբ կամ մասամբ բաղկացած է նախկինում օգտագործված ապրանքների մասերից, և

(b) նոր արտադրված բնօրինակի համեմատությամբ ունի օգտագործման և շահագործման նույնանման պայմաններ և դրա համար տրվում է նույնպիսի երաշխիք, ինչ նոր ապրանքի համար:

ՀՈԴՎԱԾ 119

Ապրանքների ժամանակավոր ներմուծումը

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ազատում է ժամանակավոր ներմուծված ապրանքների համար ներմուծման վճարներից և տուրքերից՝ դրա համար պարտադիր ուժ ունեցող՝ ապրանքների ժամանակավոր ներմուծման վերաբերյալ միջազգային համաձայնագրերով նախատեսված դեպքերում և այդ համաձայնագրերի ընթացակարգերին համապատասխան: Վճարներից ազատելու այս ընթացակարգը կիրառվում է յուրաքանչյուր Կողմի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան:

ՀՈՒՎԱԾ 120

Տարանցիկ փոխադրումը

Կողմերը համաձայնում են, որ տարանցման ազատության սկզբունքը սույն Համաձայնագրի նպատակների իրականացման կարևոր պայման է: Այդ հանգամանքով պայմանավորված՝ յուրաքանչյուր Կողմ պարտավոր է տրամադրել մյուս Կողմի մաքսային տարածքից փոխադրվող կամ մյուս Կողմի մաքսային տարածք ուղևորվող ապրանքների՝ իր տարածքով տարանցման ազատություն՝ ՍԱԳՀ 1994-ի V հոդվածին, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրություններին համապատասխան, որոնք ներառվել են սույն Համաձայնագրում և *mutatis mutandis* կազմում են դրա անբաժանելի մասը:

ՀՈՒՎԱԾ 121

Առևտրի պաշտպանությունը

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չի սահմանափակում կամ ազդում հետևյալ փաստաթղթերին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմի իրավունքների և պարտավորությունների վրա.
 - (a) ՍԱԳՀ 1994-ի XIX հոդված և ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում ընդգրկված՝ «Պաշտպանական միջոցների մասին» համաձայնագիր,
 - (b) ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում ընդգրկված՝ «Գյուղատնտեսության մասին» համաձայնագրի՝ հատուկ պաշտպանական միջոցների վերաբերյալ 5-րդ հոդված, և

(c) ՍՍԳՀ 1994-ի VI հոդված, ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում ընդգրկված՝ «1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի VI հոդվածի իրականացման մասին» համաձայնագիր և ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում ընդգրկված՝ «Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագիր:

2. 1-ին պարբերության մեջ նշված՝ գործող իրավունքների և պարտավորությունների ու դրանցից բխող միջոցառումների նկատմամբ չեն կիրառվում սույն Համաձայնագրի՝ վեճերի լուծման մասին դրույթները:

ՀՈԴՎԱԾ 122

Բացառություններ

1. Կողմերը հաստատում են, որ ՍՍԳՀ 1994-ի XX հոդվածով, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրություններով իրենց վերապահված իրավունքները և պարտավորությունները կիրառվում են սույն Համաձայնագրով նախատեսված ապրանքների առևտրի նկատմամբ: Այդ նպատակով ՍՍԳՀ 1994-ի XX հոդվածը, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրությունները ներառվել են սույն Համաձայնագրում և, *mutatis mutandis*, կազմում են դրա անբաժանելի մասը:

2. Կողմերը գիտակցում են, որ ՍՍԳՀ 1994-ի XX հոդվածի (i) և (j) ենթապարբերություններով նախատեսված որևէ միջոց ձեռնարկելուց առաջ այն Կողմը, որը մտադիր է միջոցներ ձեռնարկել, մյուս Կողմին տրամադրում է ամբողջ համապատասխան տեղեկությունները՝ Կողմերի համար ընդունելի լուծում գտնելու նպատակով: Կողմերը կարող են համաձայնության գալ տարաձայնություններին վերջ դնելու համար անհրաժեշտ ցանկացած միջոցի վերաբերյալ: Եթե այդ տեղեկությունները տրամադրելուց հետո 30 օրվա ընթացքում ձեռք չի բերվում համաձայնություն, ապա Կողմը կարող է տվյալ ապրանքի նկատմամբ կիրառել սույն հոդվածով սահմանված միջոցները: Եթե անհապաղ գործողություններ պահանջող բացառիկ և ծայրահեղ հանգամանքները անհնար են դարձնում նախնական տեղեկությունների տրամադրումը կամ ուսումնասիրության կատարումը, ապա միջոցներ ձեռնարկելու մտադրություն ունեցող Կողմը կարող է անմիջապես կիրառել այնպիսի նախազգուշական միջոցներ, որոնք անհրաժեշտ են իրավիճակը կարգավորելու համար, ու դրա մասին անմիջապես տեղեկացնում է մյուս Կողմին:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏԸ

ՀՈԴՎԱԾ 123

Մաքսային համագործակցությունը

1. Կողմերն ամրապնդում են մաքսային ոլորտում համագործակցությունը՝ առևտուրը խթանելու, առևտրի թափանցիկ միջավայր ապահովելու, մատակարարման շղթայի անվտանգության մակարդակը բարձրացնելու, սպառողների անվտանգությունն ապահովելու, մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների հոսքը կանխելու, ինչպես նաև մաքսանենգության և խարդախության դեմ պայքարելու նպատակով:
2. 1-ին պարբերությունում նշված խնդիրներն իրագործելու նպատակով և հասանելի ռեսուրսների սահմաններում Կողմերը, *inter alia*, համագործակցում են՝
 - (a) մաքսային օրենսդրությունը, կանոնակարգերը, գործելակերպը և դրա հետ կապված պարտադիր ուժ ունեցող որոշումները բարելավելու և մաքսային ընթացակարգերը պարզեցնելու նպատակով՝ մաքսային և առևտրի դյուրացման ոլորտում կիրառվող, այդ թվում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից մշակված միջազգային կոնվենցիաներին ու ստանդարտներին, մասնավորապես՝ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» միջազգային կոնվենցիային (Վերանայված Գիոտոյի կոնվենցիա) համապատասխան, և հաշվի առնելով Եվրոպական միության կողմից մշակված գործիքները և լավագույն գործելակերպերը, այդ թվում՝ մաքսային հայեցակարգերը.

- (b) արդիական մաքսային համակարգեր, այդ թվում՝ մաքսազերծման տեխնոլոգիաներ, լիազորված տնտեսական օպերատորների վերաբերյալ դրույթներ, ռիսկի վրա հիմնված վերլուծությունների և հսկողության ավտոմատացված համակարգեր, ապրանքների բացթողման պարզեցված ընթացակարգեր, հետմաքսային հսկողության համակարգեր, մաքսային արժեքի որոշման թափանցիկ համակարգ, ինչպես նաև մաքսային և գործարար ոլորտների միջև գործընկերության մասին դրույթներ ներդնելու նպատակով.
- (c) մաքսային ոլորտում, մասնավորապես՝ սահմանին ամբողջականության բարձր ստանդարտների կիրառումը խրախուսելու նպատակով՝ 2003 թվականի հունիսին վերջին անգամ վերանայված՝ Մաքսային ոլորտում արդյունավետ կառավարման և ամբողջականության վերաբերյալ Մաքսային համագործակցության խորհրդի հռչակագրում (Մաքսային համաշխարհային կազմակերպության Վերանայված Արուշայի հռչակագիր) ամրագրված սկզբունքներն արտացոլող միջոցների կիրառմամբ.
- (d) լավագույն փորձի փոխանակման, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու և տեխնիկական աջակցություն տրամադրելու նպատակով՝ պլանավորման ու կարողությունների զարգացման, ինչպես նաև ամբողջականության բարձր ստանդարտներ ապահովելու համար.
- (e) անհրաժեշտության դեպքում համապատասխան տեղեկություններ և տվյալներ փոխանակելու նպատակով՝ պահպանելով հատուկ կատեգորիայի տվյալների գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ յուրաքանչյուր Կողմի իրավական պահանջները.
- (f) անհրաժեշտ և նպատակահարմար լինելու դեպքում՝ Կողմերի մաքսային մարմինների կողմից իրականացվող համակարգված մաքսային գործողություններին մասնակցելու նպատակով,
- (g) անհրաժեշտ և նպատակահարմար լինելու դեպքում՝ լիազորված տնտեսական օպերատորների վերաբերյալ ծրագրերի և մաքսային հսկողության, այդ թվում՝ առևտրի դյուրացմանն ուղղված համարժեք միջոցառումների փոխադարձ ճանաչումն ապահովելու նպատակով.
- (h) անհրաժեշտ և նպատակահարմար լինելու դեպքում՝ համապատասխան մաքսային տարանցման համակարգերի փոխկապակցվածությունն ապահովելու հնարավորությունների ստեղծման նպատակով, և

- (i) Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև երկկողմ առևտրային հարաբերություններում մաքսային ոլորտին առնչվող պարտավորությունների կատարումը խթանելու, այդ թվում՝ ապրանքների ծագման երկիրը որոշելու հետ կապված համագործակցության նպատակով:

ՀՈԴՎԱԾ 124

Փոխադարձ վարչական աջակցությունը

Չհակասելով սույն Համաձայնագրով, մասնավորապես՝ դրա 123-րդ հոդվածով նախատեսված համագործակցության մյուս ձևերին, Կողմերը պարտավորվում են մաքսային հարցերի վերաբերյալ միմյանց տրամադրել փոխադարձ վարչական աջակցություն՝ սույն Համաձայնագրի՝ «Մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցության վերաբերյալ» II Արձանագրության դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 125

Մաքսային արժեքը

1. Կողմերը «ՍՍԳՀ 1994-ի VII հոդվածի իրականացման մասին» համաձայնագրի դրույթները, այդ թվում՝ հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխություն, կիրառում են Կողմերի միջև առևտրում մաքսային նպատակներով ապրանքների մաքսային արժեքի որոշման նկատմամբ: Այդ դրույթները ներառվում են սույն Համաձայնագրում և, *mutatis mutandis*, կազմում են դրա անբաժանելի մասը:
2. Կողմերը համագործակցում են՝ մաքսային արժեքի որոշման հետ կապված հարցերի վերաբերյալ միասնական մոտեցում ունենալու նպատակով:

Մաքսային հարցերով ենթակումիտեն

1. Սույնով ստեղծվում է Մաքսային հարցերով ենթակումիտեն:
2. Մաքսային հարցերով ենթակումիտեն պարբերաբար անցկացնում է հանդիպումներ և վերահսկում է սույն գլխի կիրարկումը՝ ներառյալ առևտուրը դյուրացնող մաքսային համագործակցության, միջսահմանային մաքսային համագործակցության և կառավարման, մաքսային ոլորտին առնչվող տեխնիկական աջակցության հարցերը, ապրանքների ծագման երկիրը որոշելու մասին կանոնները, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը մաքսային ընթացակարգերի կիրառման միջոցով, ինչպես նաև մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցությունը:
3. Մաքսային հարցերով ենթակումիտեն, *inter alia*,
 - (a) ապահովում է սույն գլխի և սույն Համաձայնագրի՝ «Մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցության վերաբերյալ» II Արձանագրության պատշաճ իրագործումը,
 - (b) սույն գլուխը և սույն Համաձայնագրի՝ «Մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցության վերաբերյալ» II Արձանագրությունը կիրարկելու նպատակով կատարում է գործնական կարգավորումներ ու ձեռնարկում միջոցառումներ, այդ թվում՝ տեղեկությունների և տվյալների փոխանակման, մաքսային հսկողության և առևտրային գործընկերության ծրագրերի փոխադարձ ճանաչման և փոխհամաձայնեցված օգուտների վերաբերյալ,
 - (c) փոխանակում է կարծիքներ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող որևէ դրույթի, այդ թվում՝ դրա կիրարկման և կիրառման համար անհրաժեշտ հետազոտ միջոցների և ռեսուրսների շուրջ, և
 - (d) անհրաժեշտության դեպքում Գործընկերության կումիտեին տալիս է առաջարկություններ:

ԳԼՈՒԽ 3

ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 127

Նպատակը

Սույն գլխով նպատակ է հետապնդվում Կողմերի միջև դյուրացնել ապրանքների առևտուրը՝ ԱՀԿ Համաձայնագրի 1A հավելվածում ընդգրկված՝ «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի (ԱՏԽ համաձայնագիր) շրջանակներում ստեղծելով առևտրի ավելորդ խոչընդոտները կանխելու, բացահայտելու և վերացնելու համակարգ:

ՀՈԴՎԱԾ 128

Գործողության ոլորտը և սահմանումները

1. Սույն գլուխը կիրառվում է ԱՏԽ համաձայնագրով սահմանված այն ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի՝ Կողմերի կողմից նախապատրաստման, ընդունման և կիրառման նկատմամբ, որոնք ազդում են կամ կարող են ազդել Կողմերի միջև իրականացվող ապրանքների առևտրի վրա:

2. Չնայած 1-ին պարբերությանը՝ սույն գլուխը չի կիրառվում ԱՀԿ Համաձայնագրի 1A հավելվածում ներկայացված՝ «Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների իրականացման մասին» համաձայնագրում (ՄԲՄ համաձայնագիր) սահմանված սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների նկատմամբ, ինչպես նաև պետական մարմինների կողմից սեփական արտադրության կամ իրենց սպառման պահանջների համար պատրաստված գնման մասնագրերի նկատմամբ:

3. Սույն գլխի նպատակներով կիրառվում են ԱՏԽ համաձայնագրի 1-ին հավելվածով սահմանված սահմանումները:

ՀՈԴՎԱԾ 129

ԱՏԽ համաձայնագիրը

Կողմերը հաստատում են ԱՏԽ համաձայնագրին համապատասխան միմյանց նկատմամբ ունեցած իրավունքներն ու պարտավորությունները, որը ներառված է սույն Համաձայնագրում և կազմում է դրա անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 130

Առևտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով համագործակցությունը

1. Կողմերն ամրապնդում են ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, չափազիտության, շուկայի ուսումնասիրության, հավաստագրման և համապատասխանության գնահատման ընթացակարգերի շուրջ իրենց համագործակցությունը՝ նպատակ ունենալով ընդլայնելու փոխադարձ պատկերացումներն իրենց համապատասխան համակարգերի մասին և դյուրացնելու մուտքը իրենց համապատասխան շուկաներ: Այդ նպատակով, Կողմերը փորձում են սահմանել և մշակել որոշակի հարցին կամ ոլորտին վերաբերելի կարգավորման հարցերով համագործակցության մեխանիզմներ և նախաձեռնություններ, որոնք, կարող են ներառել հետևյալը, բայց չսահմանափակվել դրանցով՝

- (a) իրենց համապատասխան տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի պատրաստման և կիրառման վերաբերյալ տեղեկությունների և փորձի փոխանակում,
- (b) տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի համապատասխանեցման կամ համաձայնեցման հնարավորության ուղղությամբ աշխատանք,

(c) չափազիտության, ստանդարտացման, համապատասխանության գնահատման և հավաստագրման համար պատասխանատու Կողմերի համապատասխան մարմինների միջև համագործակցության խրախուսում, և

(d) ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և հավաստագրման վերաբերյալ զարգացումների մասին համապատասխան տարածաշրջանային և միջազգային ֆորումներում տեղեկությունների փոխանակում:

2. Փոխադարձ առևտուրը խթանելու նպատակով Կողմերը պետք է՝

(a) փորձեն նվազեցնել տեխնիկական կանոնակարգերի, չափազիտության, ստանդարտացման, շուկայի ուսումնասիրության, հավաստագրման և համապատասխանության գնահատման ընթացակարգերի հետ կապված իրենց միջև առկա տարբերությունները, այդ թվում՝ խրախուսելով միջազգայնորեն համաձայնեցված գործիքների կիրառումը,

(b) խրախուսեն միջազգային նորմերին համապատասխան հավաստագրման գործընթացի կիրառումը՝ օժանդակելով համապատասխանության գնահատման մարմինների տեխնիկական կարողությունների և նրանց գործունեության գնահատմանը, և

(c) խրախուսեն Հայաստանի Հանրապետության և դրա համապատասխան ազգային մարմինների մասնակցությունն այն եվրոպական և միջազգային կազմակերպությունների աշխատանքներին ու հնարավորության դեպքում՝ այդ կառույցներին անդամակցությունը, որոնք գործունեություն են իրականացնում ստանդարտների, համապատասխանության գնահատման, հավաստագրման, չափազիտության ոլորտներում և ունեն դրանց հետ կապված գործառնություններ:

3. Կողմերը պետք է նախաձեռնեն և իրականացնեն այնպիսի գործընթաց, որով կարելի է հասնել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի աստիճանական մոտարկման:

4. Այն ոլորտների համար, որոնցում հասել են համապատասխանեցման, Կողմերը կարող են դիտարկել համապատասխանության գնահատման մասին համաձայնագրերի շուրջ բանակցություններ վարելու և արդյունաբերական արտադրանքը ճանաչելու հնարավորությունը:

ՀՈԴՎԱԾ 131

Մակնշումը և պիտակավորումը

1. Չհակասելով սույն Համաձայնագրի 129-րդ հոդվածի դրույթներին և հաշվի առնելով մակնշմանն ու պիտակավորմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերը՝ Կողմերը վերահաստատում են ԱՏԽ համաձայնագրի 2.2 հոդվածի սկզբունքները, որոնց համաձայն՝ այդ պահանջները չեն մշակվում, ընդունվում կամ կիրառվում միջազգային առևտրի անհարկի խոչընդոտներ ստեղծելու նպատակով կամ այդ դիտավորությամբ: Այդ նպատակով, մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող այդպիսի պահանջներով չպետք է սահմանափակվի առևտուրն ավելի, քան անհրաժեշտ է օրինական նպատակին հասնելու համար՝ հաշվի առնելով այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ դրանք չկատարելու հետևանքով: Կողմերը խրախուսում են մակնշմանը ներկայացվող՝ միջազգայնորեն ներդաշնակեցված պահանջների կիրառումը: Հնարավորության դեպքում, Կողմերը պետք է ընդունեն պոզիտիվ կամ ոչ մշտական պիտակներով դրոշմավորումը:

2. Մասնավորապես, պարտադիր մակնշման կամ պիտակավորման պահանջների առնչությամբ Կողմերը պետք է՝

- (a) փորձեն երկկողմանի առևտրում նվազագույնի հասցնել մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող իրենց համապատասխան պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անհրաժեշտ են առողջության, անվտանգության, շրջակա միջավայրի պաշտպանության համար, պետական քաղաքականության այլ ողջամիտ նպատակներով, և
- (b) իրենց իրավունք վերապահեն՝ պիտակի կամ մականշվածքի վրա զետեղվող տեղեկությունները Կողմի կողմից նշված լեզվով ձևակերպելու պահանջ ներկայացնելու:

Թափանցիկությունը

1. Չհակասելով 12-րդ գլխի դրույթներին՝ յուրաքանչյուր Կողմ իր՝ տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման ընթացակարգերով ապահովում է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հանրային քննարկումները համապատասխան վաղ փուլում, երբ դեռևս կարելի է ներկայացնել և հաշվի առնել հանրային քննարկումների ընթացքում արված դիտողությունները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա հնարավոր չէ արտակարգ իրավիճակի կամ դրա վտանգի առկայության պատճառով՝ պայմանավորված անվտանգության, առողջության, շրջակա միջավայրի պաշտպանությամբ կամ ազգային անվտանգությամբ:

2. ԱՏԽ համաձայնագրի 2.9 հոդվածին համապատասխան յուրաքանչյուր Կողմ առաջարկվող տեխնիկական կանոնակարգերի կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին ծանուցելուց հետո դիտողություններ ներկայացնելու համար համապատասխան վաղ փուլում տրամադրում է որոշակի ժամկետ: Այն դեպքում, երբ տեխնիկական կանոնակարգերի կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերի առաջարկվող նախագծերի վերաբերյալ խորհրդակցության գործընթացը բաց է հասարակության համար, յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս մյուս Կողմին կամ մյուս Կողմի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասնակցելու հանրային քննարկումներին իր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համեմատությամբ ոչ պակաս բարենպաստ պայմաններով:

3. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է իր կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի՝ հանրության համար հասանելիությունը:

ԳԼՈՒԽ 4

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 133

Նպատակը

Սույն գլխի նպատակն է սահմանել Կողմերի միջև առևտրում, ինչպես նաև կենդանիների բարեկեցության հարցում համագործակցության գործընթացում սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների (ՄԲՍ) նկատմամբ կիրառելի սկզբունքները: Կողմերն այդ սկզբունքները կիրառում են այնպես, որպեսզի դյուրացնեն առևտուրը՝ պահպանելով յուրաքանչյուր Կողմի՝ մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության մակարդակը:

ՀՈԴՎԱԾ 134

Բազմակողմ պարտավորությունները

Կողմերը հաստատում են ՄԲՍ համաձայնագրով ստանձնած իրենց իրավունքները և պարտավորությունները:

ՀՈՒՎԱԾ 135

Սկզբունքները

1. Կողմերն ապահովում են ՄԲՍ միջոցառումների մշակումը և կիրառումը համաչափության, թափանցիկության, խտրականության բացառման և գիտական հիմնավորման սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները, ինչպես օրինակ՝ 1951 թվականի Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայով (ԲՊՄԿ), Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (ԿԱՀԿ) և Կողեքս Ալիմենտարիուս հանձնաժողովի (Կողեքս) կողմից սահմանված ստանդարտները:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր ՄԲՍ միջոցառումներով կամայականորեն կամ անհիմն տարբերակում չդրվի իր տարածքի և մյուս Կողմի տարածքի միջև այն դեպքում, երբ գերակայում են նույնական կամ նույնանման պայմանները: ՄԲՍ միջոցառումները չեն կարող կիրառվել որպես առևտուրը սահմանափակող քողարկված միջոցներ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է ՄԲՍ միջոցառումների, ընթացակարգերի և հսկողության իրականացումը:

4. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի իրավասու մարմնից ստացված՝ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ հարցմանն արձագանքում է ոչ ուշ, քան հարցումն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում և ներմուծված ապրանքների համար ոչ պակաս բարենպաստ ձևով՝ ի համեմատություն նույնանման տեղական արտադրանքի:

ՀՈՒՎԱԾ 136

Ներմուծմանը ներկայացվող պահանջները

1. Ներմուծող Կողմի՝ ներմուծմանը ներկայացվող պահանջները կիրառելի են արտահանող Կողմի ամբողջ տարածքում՝ 137-րդ հոդվածին համապատասխան:

2. Հավաստագրերով սահմանված՝ ներմուծմանը ներկայացվող պահանջները հիմնված են Կոդեքսի, ԿԱՀԿ-ի և ԲՊՄԿ-ի սկզբունքների վրա, եթե ներմուծմանը ներկայացվող պահանջների համար հիմք չի ծառայում ռիսկերի գիտական գնահատումը, որն իրականացվել է ՄԲՍ համաձայնագրի դրույթներին համապատասխան:

3. Ներմուծման թույլտվության մեջ նշված պահանջները չպետք է ներառեն ավելի խիստ սանիտարական և անասնաբուժական պայմաններ, քան սահմանված է 2-րդ պարբերության մեջ նշված հավաստագրերում:

ՀՈԴՎԱԾ 137

Կենդանիների և բույսերի առողջության հետ կապված միջոցառումները

1. Կողմերը ճանաչում են վնասատուներից ու հիվանդություններից զերծ տարածքների և վնասատուների ու հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակ ունեցող տարածքների հայեցակարգը՝ ՄԲՍ համաձայնագրի և Կոդեքսի, ԿԱՀԿ-ի և ԲՊՄԿ-ի համապատասխան սկզբունքների, ուղեցույցների և առաջարկությունների համաձայն:

2. Վնասատուներից ու հիվանդություններից զերծ տարածքները և վնասատուների ու հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակ ունեցող տարածքները որոշելիս Կողմերը դիտարկում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխարհագրական տեղադիրքը, էկոհամակարգերը, համաճարակաբանական վերահսկողությունը և այդ տարածքներում սանիտարական կամ բուսասանիտարական հսկողության արդյունավետությունը:

ՀՈԴՎԱԾ 138

Ստուգումները և աուդիտը

Ներմուծող Կողմը կարող է արտահանող Կողմի տարածքում վերջինիս ստուգումների և հավաստագրման համակարգերը գնահատելու նպատակով իր հաշվին իրականացնել ստուգումներ և աուդիտ: Այդ ստուգումները և աուդիտն իրականացվում են համապատասխան միջազգային ստանդարտների, ուղեցույցների և առաջարկությունների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 139

Տեղեկությունների փոխանակումը և համագործակցությունը

1. Կողմերը քննարկում են ՄԲՍ ու կենդանիների բարեկեցությանն ուղղված առկա միջոցառումների և դրանց մշակման ու իրականացման վերաբերյալ տեղեկությունները և փոխանակում են դրանք: Այսպիսի քննարկումներ և տեղեկությունների փոխանակում իրականացնելիս անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնել ՄԲՍ համաձայնագիրն ու Կողեքսի, ԿԱՀԿ-ի և ԲՊՄԿ-ի ստանդարտները, ուղեցույցները կամ առաջարկությունները:
2. Կողմերը համաձայնում են համագործակցել կենդանիների առողջության, կենդանիների բարեկեցության կամ բույսերի առողջության հետ կապված հարցերով՝ այդ ոլորտներում կարողությունների զարգացման նպատակով իրականացնելով տեղեկությունների, հատուկ գիտելիքների և փորձի փոխանակում:
3. Կողմերից որևէ մեկի խնդրանքի հիման վրա Կողմերը ժամանակին սկսում են ՄԲՍ հարցերի վերաբերյալ երկխոսություն՝ ՄԲՍ-ի հետ կապված հարցերը և սույն գլխով նախատեսված ցանկացած հրատապ հարց քննարկելու նպատակով: Գործընկերության կոմիտեն կարող է ընդունել այդպիսի երկխոսություններ վարելու ընթացակարգային կանոններ:

4. Կողմերը նշանակում և պարբերաբար փոփոխում են սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ հաղորդակցության նպատակով կապի ապահովման կենտրոններ:

ՀՈԴՎԱԾ 140

Թափանցիկությունը

Յուրաքանչյուր Կողմ պետք է՝

- (a) առևտրի նկատմամբ կիրառվող ՄԲՍ միջոցառումների և, մասնավորապես, մյուս Կողմի ներմուծման նկատմամբ կիրառվող ՄԲՍ պահանջների մասով ապահովի թափանցիկություն,
- (b) մյուս Կողմի հարցման հիման վրա և այդ հարցումն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում պետք է ուղարկի ՄԲՍ այն պահանջները, որոնք կիրառվում են որոշակի արտադրանքի ներմուծման նկատմամբ, այդ թվում՝ տեղեկություն այն մասին, թե արդյոք անհրաժեշտ է ռիսկի գնահատում, և
- (c) մյուս Կողմին ծանուցում է հանրության, կենդանիների կամ բույսերի առողջության համար որևէ լուրջ կամ զգալի ռիսկի, այդ թվում՝ պարենի խիստ պակասության մասին: Այս ծանուցումը կատարվում է գրավոր՝ այդ ռիսկի հայտնաբերման օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 5

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԱՌԵՎՏՈՒՐԸ

ԲԱԺԻՆ A

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 141

Նպատակը, գործողության ոլորտը և շրջանակը

1. Կողմերը, հաստատելով ԱՀԿ համաձայնագրով ստանձնած իրենց համապատասխան հանձնառությունները, սույնով սահմանում են հիմնադրման և ծառայությունների առևտրի փոխադարձ աստիճանական ազատականացման և էլեկտրոնային առևտրի հարցերով համագործակցության համար անհրաժեշտ միջոցառումները:
2. Սույն գլխում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ Կողմերի համար սահմանվի 8-րդ գլխով կարգավորվող պետական գնումների մասով որևէ պարտավորություն:
3. Սույն գլուխը չի կիրառվում Կողմի կողմից տրամադրված՝ 10-րդ գլխով կարգավորվող սուբսիդիաների նկատմամբ:
4. Սույն գլխին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմի վերապահվում է քաղաքականության իրավաչափ նպատակներին հասնելու համար միջոցներ ձեռնարկելու և պահպանելու իրավունք:
5. Սույն գլուխը չի կիրառվում Կողմի աշխատաշուկա մուտք գործելու փորձ կատարող ֆիզիկական անձանց վերաբերող միջոցառումների, ինչպես նաև քաղաքացիությանը, ռեզիդենտությանը կամ մշտական հիմունքներով զբաղվածությանը վերաբերող միջոցառումների նկատմամբ:

6. Սույն գլխով որևէ Կողմի չի արգելվում միջոցներ կիրառել՝ կարգավորելու համար ֆիզիկական անձանց մուտքը կամ նրանց ժամանակավոր կացությունն իր տարածքում, այդ թվում՝ այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են իր սահմանների ամբողջականությունը պահպանելու և իր սահմաններով ֆիզիկական անձանց պատշաճ տեղաշարժն ապահովելու համար՝ պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվում այնպես, որպեսզի վերացվեն կամ նվազեն սույն գլխին կամ սույն Համաձայնագրի հավելվածներին համապատասխան որևէ առանձին հանձնառության շրջանակներում մյուս Կողմի կողմից ստացվող առավելությունները:

ՀՈԴՎԱԾ 142

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

- (a) «միջոցներ» նշանակում է Կողմի կողմից իրականացվող ցանկացած միջոց՝ օրենքի, կանոնակարգի, կանոնի, ընթացակարգի, որոշման, վարչական ներգործության միջոցների կամ ցանկացած այլ ձևով.
- (b) «Կողմի կողմից ընդունվող կամ կիրառվող միջոցներ» նշանակում է միջոցներ, որոնք ձեռնարկվել են՝
 - (i) Կողմի կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների ու իշխանությունների կողմից, և
 - (ii) Կողմի ոչ պետական մարմինների կողմից՝ այդ Կողմի կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ իշխանությունների կողմից պատվիրակված լիազորություններն իրականացնելիս.
- (c) «Կողմի ֆիզիկական անձ» նշանակում է որևէ անդամ պետության քաղաքացի՝ դրա օրենսդրությանը համապատասխան, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ դրա օրենսդրությանը համապատասխան.

- (d) «իրավաբանական անձ» նշանակում է կիրառելի օրենսդրությանը համապատասխան՝ պատշաճորեն հիմնադրված կամ այլ կերպ կազմավորված կազմակերպություն, որը հետապնդում է շահույթ ստանալու կամ այլ նպատակ, և մասնավոր կամ պետական սեփականություն է, այդ թվում՝ կորպորացիա, վստահության վրա հիմնված ընկերակցություն, գործընկերություն, համատեղ ձեռնարկություն, անհատ ձեռնարկատեր կամ ասոցիացիա.
- (e) «Կողմի իրավաբանական անձ» նշանակում է իրավաբանական անձ, որն ստեղծվել է անդամ պետության և Եվրոպական միության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և որի իրավաբանական հասցեն, կենտրոնական վարչական մարմինը կամ գործունեության հիմնական վայրն այն տարածքում է, որի նկատմամբ կիրառվում է «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը, կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում.

այն իրավաբանական անձը, որի միայն իրավաբանական հասցեն կամ կենտրոնական վարչական մարմինն է գտնվում այն տարածքում, որի նկատմամբ կիրառվում է «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, չի համարվում Եվրոպական միության կամ Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ, եթե դրա գործունեությունն իրական կամ շարունակական կապվածություն չունի համապատասխանաբար Եվրոպական միության կամ Հայաստանի Հանրապետության տնտեսության հետ.

- (f) չնայած նախորդ կետին՝ Եվրոպական միությունից կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված և համապատասխանաբար Եվրոպական միության անդամ պետությունների կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից վերահսկվող ծովային բեռնափոխադրումներ իրականացնող ընկերությունները նույնպես օգտվում են սույն Համաձայնագրի դրույթներից, եթե դրանց նավերը գրանցված են անդամ պետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում՝ դրանց համապատասխան օրենսդրության համաձայն, և նավարկում են այդ անդամ պետության կամ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո.

- (g) «Կողմի իրավաբանական անձի դուստր ընկերություն» նշանակում է իրավաբանական անձ, որը փաստացի վերահսկվում է այդ Կողմի մեկ այլ իրավաբանական անձի կողմից¹
- (h) «իրավաբանական անձի մասնաճյուղ» նշանակում է իրավաբանական անձ չհամարվող ստորաբաժանում, որը մշտական բնույթ ունի, օրինակ՝ կազմում է մայր ընկերության մասը, ունի կառավարման կառուցվածք և նյութական միջոցներ՝ երրորդ կողմի հետ գործնական հարցերով բանակցելու համար, այնպես, որ վերջինս, գիտենալով հանդերձ, որ անհրաժեշտության դեպքում կարող է իրավական բնույթի փոփոխարարություններ ունենալ մայր ընկերության՝ այլ երկրում գտնվող գլխամասային գրասենյակի հետ, ստիպված չէ անմիջականորեն գործ ունենալ մայր ընկերության հետ, այլ կարող է բիզնես գործարքներ իրականացնել մայր ընկերության մաս հանդիսացող ստորաբաժանման միջոցով.
- (i) «հիմնադրում» նշանակում է՝
- (i) Կողմի իրավաբանական անձանց մասով՝ իրավաբանական անձինք, որոնք համապատասխանաբար Եվրոպական միությունում կամ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձի ստեղծման, այդ թվում՝ ձեռքբերման կամ մասնաճյուղ կամ ներկայացուցչություն հիմնելու միջոցով նախաձեռնում կամ իրականացնում են տնտեսական գործունեություն,
- (ii) Կողմի ֆիզիկական անձանց մասով՝ ֆիզիկական անձինք, որոնք, որպես ինքնազբաղված անձ, նախաձեռնում և իրականացնում են տնտեսական գործունեություն կամ հիմնում են այնպիսի ձեռնարկություններ, մասնավորապես՝ ընկերություններ, որոնք կլինեն նրանց փաստացի վերահսկողության ներքո.
- (j) «տնտեսական գործունեություն»՝ ներառում է արդյունաբերական, առևտրային և մասնագիտական բնույթի գործունեությունը և արհեստագործական աշխատանքները, և չի ներառում այն գործունեությունը, որն իրականացվում է պետական իշխանության լիազորություններ իրականացնելիս.

¹ Մեկ իրավաբանական անձը վերահսկում է մեկ այլ իրավաբանական անձի, եթե առաջին իրավաբանական անձն իրավասու է նշանակել երկրորդ իրավաբանական անձի տնօրենների մեծ մասին կամ օրինական հիմքով ուղղորդել դրա գործողությունները:

- (k) «գործառնություններ» նշանակում է տնտեսական գործունեության իրականացում.
- (l) «ծառայություններ» նշանակում է ցանկացած ոլորտում մատուցվող ցանկացած ծառայություն՝ բացառությամբ այն ծառայությունների, որոնք մատուցվում են պետական իշխանության լիազորություններ իրականացնելիս.
- (m) «պետական իշխանության լիազորություններ իրականացնելիս մատուցվող ծառայություններ և իրականացվող այլ աշխատանքներ» նշանակում է այն ծառայությունները կամ աշխատանքները, որոնք կատարվում են ո՛չ առևտրային հիմունքներով, և ո՛չ էլ մրցակցության մեջ մտնելով մեկ կամ մի քանի տնտեսական օպերատորների հետ.
- (n) «ծառայությունների միջսահմանային մատուցում» նշանակում է ծառայությունների մատուցում՝
 - (i) մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք, կամ
 - (ii) մի Կողմի տարածքում մյուս Կողմի ծառայության սպառողին,
- (o) «ծառայություն մատուցող» նշանակում է Կողմի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը մատուցում կամ ցանկանում է մատուցել ծառայություն, և
- (p) «ձեռնարկատեր» նշանակում է Կողմի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հաստատություն հիմնելու միջոցով իրականացնում կամ ցանկանում է իրականացնել տնտեսական գործունեություն:

ԲԱԺԻՆ Ե

ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 143

Գործողության ոլորտը

Սույն բաժինը կիրառվում է տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում հիմնադրմանը վերաբերող՝ Կողմերի կողմից ընդունված կամ կիրառվող միջոցների նկատմամբ՝ բացառությամբ

- (a) միջուկային նյութերի օգտահանման, արտադրության և մշակման¹,
- (b) զենքի, զինամթերքի և ռազմական գույքի արտադրության և առևտրի,
- (c) տեսալսողական ծառայությունների,
- (d) ազգային ծովային կաբոտաժի², և

¹ Առավել հստակության համար, միջուկային նյութերի մշակումը ներառում է ՄՍՃԴ-ի 3.1 խմբագրության 2330 ծածկագրի տակ ՄԱ բոլոր աշխատանքները:

² Չսահմանափակելով այն գործունեության տեսակների շրջանակը, որոնք համապատասխան ազգային օրենսդրությամբ կարող են համարվել կաբոտաժ, սույն գլխի շրջանակներում ազգային ծովային կաբոտաժը ներառում է Հայաստանի Հանրապետությունում կամ անդամ պետությունում գտնվող նավահանգստից կամ կետից Հայաստանի Հանրապետությունում կամ անդամ պետությունում գտնվող մյուս նավահանգիստ կամ կետ, այդ թվում՝ դրա մայրցամաքային ծանծաղուտ փոխադրումը՝ «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգով, և Հայաստանի Հանրապետությունում կամ անդամ պետությունում գտնվող միննույն նավահանգստից կամ կետից իրականացվող և այդ վայրում դադարեցվող փոխադրումը:

- (e) չվացուցակով նախատեսված կամ չնախատեսված ներպետական և միջազգային օդային փոխադրումների ծառայությունների¹, և այն ծառայությունների, որոնք անմիջականորեն կապված են փոխադրումների ընթացքում իրավունքների իրացման հետ՝ բացառությամբ՝
- (i) օդանավի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների, որոնց ընթացքում դադարեցվում է օդանավի շահագործումը,
 - (ii) օդային փոխադրման ծառայությունների վաճառքի և շուկայահանման,
 - (iii) համակարգչային ամրագրման համակարգերի (ՀԱՀ) ծառայությունների,
 - (iv) վերգետնյա սպասարկման ծառայությունների, և
 - (v) օդանավակայանի շահագործման ծառայությունների:

ՀՈԴՎԱԾ 144

Ազգային ռեժիմը և ազգերի առավել բարենպաստության ռեժիմը

1. VIII-E Հավելվածում նշված վերապահումներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից տրամադրում է.

- (a) Եվրոպական միության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից դուստր ընկերությունների, մասնաձյուղերի և ներկայացուցչությունների հիմնադրման մասով՝ իր իրավաբանական անձանց, մասնաձյուղերին և ներկայացուցչություններին կամ ցանկացած երրորդ երկրի իրավաբանական անձանց, մասնաձյուղերին և ներկայացուցչություններին տրամադրվող ռեժիմի համեմատությամբ ոչ պակաս բարենպաստ ռեժիմ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե որն է ավելի բարենպաստ, և

¹ Օդային փոխադրման համար շուկայի փոխադարձ հասանելիության պայմանները կսահմանվեն Կողմերի միջև Ընդհանուր ավիացիոն գոտի ստեղծելու մասին ապագա համաձայնագրով:

(b) Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից դուստր ընկերությունների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության մասով՝ հիմնադրվելու դեպքում իր իրավաբանական անձանց, մասնաճյուղերին և ներկայացուցչություններին կամ ցանկացած երրորդ երկրի իրավաբանական անձանց, մասնաճյուղերին և ներկայացուցչություններին տրամադրվող ռեժիմի համեմատությամբ ոչ պակաս բարենպաստ ռեժիմ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե որն է ավելի բարենպաստ¹:

2. VIII-A Հավելվածում նշված վերապահումներին համապատասխան՝ Եվրոպական միությունը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից տրամադրում է.

(a) Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից դուստր ընկերությունների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հիմնադրման մասով՝ իր իրավաբանական անձանց, մասնաճյուղերին և ներկայացուցչություններին կամ ցանկացած երրորդ երկրի իրավաբանական անձանց, մասնաճյուղերին և ներկայացուցչություններին Եվրոպական միության կողմից տրամադրվող ռեժիմի համեմատությամբ ոչ պակաս բարենպաստ ռեժիմ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե որն է ավելի բարենպաստ, և

(b) Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից դուստր ընկերությունների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության մասով՝ հիմնադրվելու դեպքում իր իրավաբանական անձանց, մասնաճյուղերին և ներկայացուցչություններին կամ ցանկացած երրորդ երկրի իրավաբանական անձանց, մասնաճյուղերին և ներկայացուցչություններին տրամադրվող ռեժիմի համեմատությամբ ոչ պակաս բարենպաստ ռեժիմ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե որն է ավելի բարենպաստ²:

¹ Այս պարտավորությունը չի տարածվում սույն բաժնով չկարգավորված՝ ներդրումների պաշտպանության մասին դրույթների, այդ թվում՝ այլ համաձայնագրերում առկա՝ ներդրողների և պետության միջև ծագած վեճերի լուծման ընթացակարգերի վերաբերյալ դրույթների վրա:

² Այս պարտավորությունը չի տարածվում սույն բաժնով չկարգավորված՝ ներդրումների պաշտպանության մասին դրույթների, այդ թվում՝ այլ համաձայնագրերում առկա՝ ներդրողների և պետության միջև ծագած վեճերի լուծման ընթացակարգերի վերաբերյալ դրույթների վրա:

3. VIII-A և VIII-E Հավելվածներում ներկայացված վերապահումներին համապատասխան՝ Կողմերը չեն կարող ընդունել նոր միջոցներ, որոնցով խտրականություն է արվում իրենց տարածքում մյուս Կողմի իրավաբանական անձանց հիմնադրման մասով կամ, հիմնադրվելու դեպքում, այդ իրավաբանական անձանց գործունեության մասով՝ ի համեմատություն իրենց իրավաբանական անձանց:

ՀՈԴՎԱԾ 145

Գնահատումը

Հիմնադրման պայմաններն աստիճանաբար ազատականացնելու նպատակով Գործընկերության կոմիտեն առևտրի ձևավորման հարցերով հանդիպումներ անցկացնելիս պարբերաբար գնահատում է հաստատության հիմնադրմանը վերաբերող իրավական դաշտը¹ և հիմնադրման միջավայրը:

ՀՈԴՎԱԾ 146

Այլ համաձայնագրերը

Սույն գլխում ոչինչ չի սահմանափակում Կողմերի ներդրողների՝ էլ ավելի բարենպաստ ռեժիմից օգտվելու իրավունքը՝ նախատեսված ներդրումների վերաբերյալ գոյություն ունեցող կամ ապագայում կնքվող որևէ միջազգային համաձայնագրով, որի կողմերն են անդամ պետությունը և Հայաստանի Հանրապետությունը:

¹ Սա ներառում է սույն գլուխը և VIII-A և VIII-E հավելվածները:

Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար ստանդարտ ռեժիմը

1. 144-րդ հոդվածի դրույթներով չի արգելվում Կողմի կողմից իր տարածքում մյուս Կողմի իրավաբանական անձանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների՝ առանց առաջին Կողմի տարածքում գրանցվելու հիմնադրմանը և գործունեությանը վերաբերող որոշակի միջոցների կիրառությունը, եթե այդ միջոցները չեն գրանցվել առաջին Կողմի տարածքում, ինչը հիմնավորվում է իր տարածքում գրանցված իրավաբանական անձանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համեմատությամբ այդ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջև առկա իրավական կամ տեխնիկական բնույթի տարբերություններով, կամ ֆինանսական ծառայությունների դեպքում՝ ողջամիտ պատճառներով:

2. Այդ իրավական կամ տեխնիկական բնույթի տարբերությունների հետևանքով կամ ֆինանսական ծառայությունների դեպքում՝ ողջամիտ պատճառներով պայմանավորված մոտեցման տարբերությունը չպետք է լինի ավելին, քան խստորեն անհրաժեշտ է:

ԲԱԺԻՆ Ը

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 148

Գործողության ոլորտը

Սույն բաժինը կիրառվում է Կողմերի՝ ծառայությունների բոլոր ոլորտներում ծառայությունների միջսահմանային մատուցման հետ կապված միջոցների նկատմամբ՝ բացառությամբ՝

- (a) տեսալսողական ծառայությունների,
- (b) ազգային ծովային կաբոտաժի³, և
- (c) չվացուցակով նախատեսված կամ չնախատեսված ներպետական և միջազգային օդային փոխադրումների ծառայությունների⁴ և այն ծառայությունների, որոնք անմիջականորեն կապված են փոխադրումների իրականացման ժամանակ իրավունքների իրացման հետ՝ բացառությամբ՝
 - (i) օդանավի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների, որոնց ընթացքում դադարեցվում է օդանավի շահագործումը,

³ Չսահմանափակելով այն գործունեության տեսակների շրջանակը, որոնք համապատասխան ազգային օրենսդրությամբ կարող են համարվել կաբոտաժ, սույն գլխի շրջանակներում ազգային ծովային կաբոտաժը ներառում է Հայաստանի Հանրապետությունում կամ անդամ պետությունում գտնվող նավահանգստից կամ կետից Հայաստանի Հանրապետությունում կամ անդամ պետությունում գտնվող մյուս նավահանգիստ կամ կետ, այդ թվում՝ դրա մայրցամաքային շելֆ, մարդկանց տեղափոխումը կամ ապրանքների փոխադրումը «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգով, և Հայաստանի Հանրապետությունում կամ անդամ պետությունում գտնվող միևնույն նավահանգստից կամ կետից իրականացվող և այդ վայրում դադարեցվող փոխադրումը:

⁴ Օդային փոխադրման համար շուկայի փոխադարձ հասանելիության պայմանները կսահմանվեն «Ընդհանուր ավիացիոն գոտի ստեղծելու մասին» համաձայնագրով, որը Կողմերի միջև կկնքվի ապագայում:

- (ii) օդային փոխադրման ծառայությունների վաճառքի և շուկայահանման,
- (iii) համակարգչային ամրագրման համակարգերի (ՀԱՀ) ծառայությունների,
- (iv) վերգետնյա սպասարկման ծառայությունների, և
- (v) օդանավակայանի շահագործման ծառայությունների:

ՀՈԴՎԱԾ 149

Շուկայի հասանելիությունը

1. Ծառայությունների միջսահմանային մատուցման ձևով շուկայի հասանելիության հետ կապված՝ յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ծառայությունների մատուցումը և ծառայություններ մատուցողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը նախատեսված է VIII-B և VIII-F Հավելվածներում առկա հատուկ հանձնառություններով:
2. Այն ոլորտներում, որոնց հետ կապված ստանձնվել են շուկայի հասանելիության ապահովման վերաբերյալ հանձնառություններ, յուրաքանչյուր Կողմ ո՛չ տարածքային ստորաբաժանման և ո՛չ էլ իր ամբողջ տարածքի մակարդակով չի ընդունում կամ չի շարունակում կիրառել հետևյալ միջոցները, եթե այլ բան նշված չէ VIII-B և VIII-F Հավելվածներում.
 - (a) ծառայություն մատուցողների թվի սահմանափակումներ՝ քանակական քվոտաների, մենաշնորհների, ծառայության բացառիկ մատուցողների կամ տնտեսական կարիքները գնահատելու պահանջ առաջադրելու ձևով,

- (b) ծառայության մատուցման հետ կապված գործարքների ընդհանուր արժեքի սահմանափակումներ կամ ակտիվների սահմանափակումներ՝ քանակական քվոտաներ սահմանելու կամ տնտեսական կարիքները գնահատելու պահանջ առաջադրելու ձևով, կամ
- (c) ծառայության հետ կապված գործառնությունների ընդհանուր թվի կամ ծառայության արդյունքի՝ սահմանված թվային միավորներով արտահայտված ընդհանուր քանակի սահմանափակումներ՝ քվոտաների կամ տնտեսական կարիքները գնահատելու պահանջ առաջադրելու ձևով:

ՀՈԴՎԱԾ 150

Ազգային ռեժիմը

1. Այն ոլորտներում, որոնց համար շուկայի հասանելիության ապահովման վերաբերյալ ստանձնած հանձնառությունները ներառված են VIII-B և VIII-F հավելվածներում և հաշվի առնելով դրանցում սահմանված ցանկացած պայման ու չափորոշիչ, յուրաքանչյուր Կողմ միջսահմանային ծառայությունների մատուցման վրա ազդող բոլոր միջոցառումների առնչությամբ մյուս Կողմի ծառայություններին ու ծառայություն մատուցողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որն այդ Կողմը տրամադրել է իր նույնանման ծառայությունների հետ կապված և ծառայություն մատուցողներին:
2. Կողմը կարող է բավարարել 1-ին պարբերության պահանջը՝ մյուս Կողմի ծառայությունների հետ կապված և ծառայություն մատուցողներին ֆորմալ առումով տրամադրելով նույնական կամ տարբերվող ռեժիմ՝ այն ռեժիմի համեմատությամբ, որն ինքը տրամադրել է իր նույնանման ծառայությունների հետ կապված և ծառայություն մատուցողներին:
3. Ֆորմալ առումով նույնական կամ ֆորմալ առումով տարբերվող ռեժիմը համարվում է պակաս բարենպաստ, եթե այն փոփոխում է մրցակցության պայմանները՝ հոգուտ այդ Կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների՝ համեմատած մյուս Կողմի նույնանման ծառայությունների և ծառայություն մատուցողների հետ:

4. Սույն հոդվածին համապատասխան ստանձնած առանձին հանձնառությունները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ որևէ Կողմից փոխհատուցում պահանջվի ներհատուկ մրցակցային անբարենպաստ պայմանի համար, որը համապատասխան ծառայությունների կամ ծառայություն մատուցողների օտարերկրյա ծագում ունենալու հետևանք է:

ՀՈԴՎԱԾ 151

Հանձնառությունների ցանկերը

1. Կողմերից յուրաքանչյուրի կողմից սույն գլխի համաձայն և վերապահումների արդյունքում ազատականացված ոլորտները, այդ ոլորտներում մյուս Կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառվող շուկայի հասանելիության ու ազգային ռեժիմի սահմանափակումները սահմանված են VIII-B և VIII-F Հավելվածներում ներառված հանձնառությունների ցանկերում:

2. Չսահմանափակելով Կողմերի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք գոյություն ունեն կամ կարող էին ծագել «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» 1989 թվականի եվրոպական կոնվենցիայի և «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» 1992 թվականի եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ VIII-B և VIII-F Հավելվածներում ներառված հանձնառությունների ցանկերը չեն ներառում տեսալսողական ծառայությունների վերաբերյալ հանձնառությունները:

ՀՈԴՎԱԾ 152

Գնահատումը

Կողմերի միջև ծառայությունների միջսահմանային մատուցումն աստիճանաբար ազատականացնելու նպատակով Գործընկերության կոմիտեն առևտրի հարցերով հանդիպելիս պարբերաբար գնահատում է 149-ից 151-րդ հոդվածներում նշված հանձնառությունների ցանկը: Այդ գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվում, *inter alia*, 169-րդ, 180-րդ և 192-րդ հոդվածներում նշված աստիճանական մոտարկման գործընթացը և դրա ազդեցությունը Կողմերի միջև ծառայությունների միջսահմանային մատուցման համար մնացյալ խոչընդոտների վերացման վրա:

ԲԱԺԻՆ D

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

ՀՈԴՎԱԾ 153

Գործողության ոլորտը և սահմանումները

1. Սույն բաժինը վերաբերում է Կողմերի՝ իրենց տարածքներ հիմնական աշխատակիցների, վերապատրաստում անցնող շրջանավարտների, առևտրային ներկայացուցիչների, պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցողների և անկախ մասնագետների մուտք գործելու և այնտեղ ժամանակավոր կացության հետ կապված միջոցառումներին՝ չսահմանափակելով 141-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը:

2. Սույն բաժնի նպատակներով՝

- (a) «հիմնական աշխատակիցներ» նշանակում է ֆիզիկական անձինք, որոնք աշխատում են Կողմերից մեկի՝ շահույթ չհետապնդող կազմակերպություն չհանդիսացող իրավաբանական անձի կազմում¹, պատասխանատու են հաստատության հիմնադրման կամ պատշաճ հսկողության, կառավարման և գործունեության համար և որոնք համարվում են կամ «բիզնես այցելուներ՝ հիմնադրման նպատակներով» կամ «ներկորպորատիվ փոխադրվողներ».
- (b) «բիզնես այցելուներ՝ հիմնադրման նպատակներով» նշանակում է ավագ պաշտոն զբաղեցնող ֆիզիկական անձինք, որոնք պատասխանատու են հաստատություն հիմնելու համար, չեն առաջարկում կամ մատուցում ծառայություններ կամ չեն ներգրավվում հաստատության գործունեության նպատակների համար չպահանջվող ցանկացած տնտեսական գործունեության մեջ և վարձատրություն չեն ստանում ընդունող Կողմի տարածքում գտնվող աղբյուրից.
- (c) «ներկորպորատիվ փոխադրվողներ» նշանակում է ֆիզիկական անձինք, որոնք առնվազն մեկ տարի աշխատել են Կողմի իրավաբանական անձի մոտ կամ այնտեղ եղել են գործընկեր, ժամանակավորապես տեղափոխվել են այնպիսի հաստատություն, որը կարող է լինել մյուս Կողմի տարածքում իրավաբանական անձի դուստր ընկերությունը, մասնաճյուղը կամ գլխավոր ընկերությունը և որը դասվում է կամ «կառավարիչների» կամ «մասնագետների» շարքին.
- (d) «կառավարիչներ» նշանակում է իրավաբանական անձի կազմում ավագ պաշտոն զբաղեցնող ֆիզիկական անձինք, որոնք հիմնականում պատասխանատու են հաստատության կառավարման համար՝ ենթարկվելով ընդհանուր վերահսկողության կամ ղեկավարվելով գլխավորապես տնօրենների խորհրդի կողմից կամ կազմակերպության բաժնետերերի կամ նրանց համարժեք անձանց կողմից և որոնց պարտականությունները ներառում են առնվազն՝

¹ «Շահույթ չհետապնդող կազմակերպություն» չհանդիսացող հղումը կիրառվում է միայն Բելգիայի, Չեխիայի Հանրապետության, Դանիայի, Գերմանիայի, Իռլանդիայի, Հունաստանի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Կիպրոսի, Լատվիայի, Լիտվայի, Լյուքսեմբուրգի, Մալթայի, Նիդերլանդների, Ավստրիայի, Պորտուգալիայի, Սլովենիայի, Ֆինլանդիայի և Միացյալ Թագավորության դեպքում:

- (i) հաստատությունը կամ դրա վարչությունը կամ ստորաբաժանումը դեկավարելը,
 - (ii) վերահսկման, մասնագիտական կամ կառավարչական գործառույթներ իրականացնող այլ աշխատակիցների վերահսկելը կամ հսկողությունը, և
 - (iii) անձամբ աշխատանքի վերցնելու կամ աշխատանքից ազատելու կամ պաշտոնները համալրելու, պաշտոնից ազատելու կամ մյուս աշխատակիցներին ցուցումներ տալու իրավասությունը.
- (e) «մասնագետներ» նշանակում է Կողմի իրավաբանական անձի կազմում աշխատող անձինք, որոնք ունեն հաստատության արտադրության, գիտահետազոտական սարքավորումների, արտադրության տեխնոլոգիաների, գործընթացների, ընթացակարգերի կամ կառավարման համար կարևոր նեղ մասնագիտական գիտելիքներ.

այդ գիտելիքները գնահատելիս պետք է հաշվի առնել ոչ միայն հաստատության նպատակներով հատուկ գիտելիքները, այլև այն, թե արդյոք անձն ունի հատուկ տեխնիկական գիտելիքներ ենթադրող աշխատանքի կամ առևտրի տեսակին վերաբերող պատշաճ մասնագիտական փորձ ներառող որակավորման բարձր աստիճան՝ ներառյալ անդամությունը հավատարմագրված մասնագիտական կառույցին.

- (f) «վերապատրաստում անցնող շրջանավարտներ» նշանակում է ֆիզիկական անձինք, որոնք առնվազն մեկ տարի աշխատում են մի Կողմի իրավաբանական անձի մոտ կամ դրա մասնաճյուղում, ունեն բարձրագույն կրթության դիպլոմ և ժամանակավորապես տեղափոխվել են իրավաբանական անձի՝ մյուս Կողմի տարածքում գտնվող հաստատություն՝ մասնագիտական առաջխաղացման նպատակներով կամ բիզնեսի արտադրական տեխնոլոգիաների կամ մեթոդների վերաբերյալ վերապատրաստում անցնելու նպատակով¹.

¹ Ընդունող հաստատությունից կարող է պահանջվել գտնվելու ժամանակահատվածն ընդգրկող վերապատրաստման ծրագիրը ներկայացնել նախնական հաստատման արագուցելու համար, որ գտնվելու նպատակը վերապատրաստումն է: Չեխիայի Հանրապետության, Գերմանիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Լիտվայի, Հունգարիայի և Ավստրիայի դեպքում վերապատրաստումը պետք է առնչություն ունենա բարձրագույն կրթության այն դիպլոմի հետ, որը ձեռք է բերվել:

- (g) «առևտրային ներկայացուցիչներ»⁵ նշանակում է ֆիզիկական անձինք, որոնք մի Կողմի ծառայություններ մատուցողների կամ ապրանքներ մատակարարողների ներկայացուցիչներն են, որոնք ցանկանում են մուտք գործել մյուս Կողմի տարածք և ժամանակավորապես գտնվել այնտեղ՝ ծառայությունների կամ ապրանքների վաճառքի վերաբերյալ բանակցելու կամ այդ մատակարարի համար ծառայություններ կամ ապրանքներ վաճառելու վերաբերյալ համաձայնություններ ձեռք բերելու նպատակով, որոնք չեն ներգրավվում հանրության համար ուղղակիորեն վաճառք իրականացնելու գործընթացում, վարձատրություն չեն ստանում ընդունող Կողմի տարածքում տեղակայված աղբյուրից և որոնք կոմիսիոներ չեն.
- (h) «պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցողներ» նշանակում է ֆիզիկական անձինք, որոնք աշխատում են Կողմի իրավաբանական անձի մոտ, որն անձնակազմի աշխատանքի տեղավորման և աշխատողների տրամադրման ծառայություններ իրականացնող գործակալություն չէ, չի գործում այդպիսի գործակալության միջոցով, մյուս Կողմի տարածքում հաստատություն չունի և կնքել է վերջին Կողմի տարածքում վերջնական սպառողին ծառայություններ մատուցելու վերաբերյալ *bona fide* պայմանագիր, որով նախատեսվում է նրա աշխատողների՝ ժամանակավոր հիմունքներով ներկայությունն այդ Կողմի տարածքում՝ ծառայությունների մատուցման պայմանագիրը կատարելու նպատակով⁶.
- (i) «անկախ մասնագետներ» նշանակում է ֆիզիկական անձինք, որոնք ներգրավված են ծառայության մատուցման մեջ և Կողմի տարածքում հիմնադրված են որպես ինքնազբաղված անձինք, որոնք մյուս Կողմի տարածքում հաստատություն չունեն և որոնք կնքել են վերջին Կողմի տարածքում վերջնական սպառողին ծառայություններ մատուցելու վերաբերյալ *bona fide* պայմանագիր (բացի անձնակազմի աշխատանքի տեղավորման և աշխատողների տրամադրման ծառայություններ իրականացնող գործակալության միջոցով), որով նախատեսվում է նրանց՝ ժամանակավոր հիմունքներով ներկայությունն այդ Կողմի տարածքում՝ ծառայությունների մատուցման պայմանագիրը կատարելու նպատակով³ և

⁵ Միացյալ Թագավորություն. առևտրային ներկայացուցիչ կատեգորիան ճանաչվում է միայն ծառայություններ վաճառողների դեպքում:

⁶ (h) և (i) կետերում նշված ծառայությունների մատուցման պայմանագիրը պետք է համապատասխանի այն Կողմի օրենքներին և կանոնակարգերին և մյուս պահանջներին, որտեղ կատարվում է պայմանագիրը:

³ (h) և (i) կետերում նշված ծառայությունների մատուցման պայմանագիրը պետք է համապատասխանի այն Կողմի օրենքներին և կանոնակարգերին և մյուս պահանջներին, որտեղ կատարվում է պայմանագիրը:

- (j) «որակավորում» նշանակում է դիպլոմներ, վկայագրեր և ֆորմալ որակավորման մասին այլ ապացույցներ, որոնք տրվել են օրենսդրական, կարգավորող կամ վարչական դրույթներին համապատասխան նշանակված մարմնի կողմից, և որոնք հավաստում են մասնագիտական վերապատրաստումը հաջողությամբ ավարտելը:

ՀՈՒՎԱԾ 154

Հիմնական աշխատակիցները և վերապատրաստում անցնող շրջանավարտները

1. B բաժնի համաձայն կատարված և VIII-C Հավելվածում նշված վերապահումներով կարգավորվող յուրաքանչյուր ոլորտի դեպքում յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս մյուս Կողմի ձեռնարկատերերին իրենց հաստատությունում աշխատանքի վերցնել այդ մյուս Կողմի ֆիզիկական անձանց՝ պայմանով, որ այդ աշխատողները 153-րդ հոդվածով սահմանված հիմնական աշխատակիցներ և վերապատրաստում անցնող շրջանավարտներ են: Հիմնական աշխատակիցների և վերապատրաստում անցնող շրջանավարտների մուտքը և ժամանակավոր կացությունը ներկրպորատիվ փոխադրվողների դեպքում մինչև երեք տարի ժամանակահատվածով է, հաստատության գործունեության նպատակներով բիզնես այցելուների դեպքում՝ 90 օր՝ ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում, և մեկ տարի՝ վերապատրաստում անցնող շրջանավարտների դեպքում:

2. B բաժնին համապատասխան յուրաքանչյուր ոլորտի դեպքում այն միջոցները, որոնք Կողմը չի ընդունում կամ կիրառում կա՛մ տարածաշրջանային ստորաբաժանման կա՛մ էլ իր ամբողջ տարածքի մակարդակով, սահմանվում են որպես այն ֆիզիկական անձանց ընդհանուր թվի՝ թվային քվոտաների կամ տնտեսական կարիքների գնահատման պահանջի ձևով սահմանափակումներ, ինչպես նաև որպես խտրական սահմանափակումներ, որոնց ձեռնարկատերը կարող է կոնկրետ ոլորտում աշխատանքի վերցնել որպես հիմնական աշխատակիցներ և վերապատրաստում անցնող շրջանավարտներ, եթե VIII-C հավելվածով այլ բան նախատեսված չէ:

ՀՈԴՎԱԾ 155

Առևտրային ներկայացուցիչները

Ե կամ Ը բաժիններին համապատասխան կատարված և VIII-Բ Հավելվածում նշված վերապահումներով կարգավորվող յուրաքանչյուր ոլորտի դեպքում յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս առևտրային ներկայացուցիչների մուտքը և ժամանակավոր կացությունը մինչև 90 օր ժամկետով՝ ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում:

ՀՈԴՎԱԾ 156

Պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցողները

1. Կողմերը հաստատում են պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցողների մուտքի և ժամանակավոր կացության վերաբերյալ իրենց համապատասխան պարտավորությունները, որոնք բխում են ԱՀԿ-ի՝ «Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագրով» ստանձնած իրենց հանձնառություններից:
2. VIII-Դ և VIII-Գ Հավելվածներին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս իր տարածքում ծառայությունների մատուցումը մյուս Կողմի պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցողների կողմից՝ հետևյալ պայմաններին համապատասխան.
 - (a) Ֆիզիկական անձինք պետք է ծառայությունների մատուցման մեջ ներգրավված լինեն ժամանակավոր հիմունքներով՝ որպես այն իրավաբանական անձի աշխատողներ, որը ստորագրել է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 12 ամիսը չգերազանցող ժամկետով.

- (b) մյուս Կողմի տարածք մուտք գործող ֆիզիկական անձինք պետք է առաջարկեն այդ ծառայությունները որպես այն իրավաբանական անձի աշխատողներ, որը ծառայություններ է մատուցել մյուս Կողմի տարածք մուտք գործելու վերաբերյալ դիմում ներկայացնելու օրվան անմիջապես նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում, և բացի դրանից, մյուս Կողմի տարածք մուտք գործելու վերաբերյալ դիմում ներկայացնելու օրվա դրությամբ պայմանագրի առարկա հանդիսացող գործունեության ոլորտում պետք է ունենան առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ¹.
- (c) մյուս Կողմի տարածք մուտք գործող ֆիզիկական անձինք պետք է ունենան՝
- (i) բարձրագույն կրթության դիպլոմ կամ համարժեք մակարդակի գիտելիքների առկայությունը հավաստող որակավորում,² և
 - (ii) մասնագիտական որակավորումներ, որոնք պահանջվում են այն Կողմի օրենքների և կանոնակարգերի կամ այլ միջոցների համաձայն գործունեություն իրականացնելու համար, որտեղ մատուցվում է ծառայությունը.
- (d) մյուս Կողմի տարածքում ծառայություններ մատուցելու դիմաց ֆիզիկական անձինք չեն ստանում այլ վարձատրություն, բացի այն իրավաբանական անձի կողմից վճարվող վարձատրությունից, որի մոտ աշխատում է ֆիզիկական անձը.
- (e) շահագրգիռ Կողմի տարածք ֆիզիկական անձի մուտք գործելը և ժամանակավոր կացությունն ընդհանուր առմամբ չի կարող գերազանցել վեց ամիսը կամ, Լյուքսեմբուրգի դեպքում, 25 շաբաթը՝ ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածի ընթացքում կամ պայմանագրի տևողության ժամկետով՝ նայած որն է ավելի կարճ.
- (f) սույն հոդվածի դրույթներով տրամադրվող հասանելիությունը վերաբերում է միայն ծառայությունների մատուցում հանդիսացող այն գործունեությանը, որը պայմանագրի առարկան է, և չի ենթադրում այն Կողմի տարածքում տրվող մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնելու իրավունք, որտեղ մատուցվում է ծառայությունը, և

¹ Փորձ, որը ձեռք է բերվում չափահաս դառնալուց հետո:

² Այն դեպքում, երբ դիպլոմը կամ որակավորումը ձեռք չի բերվել այն Կողմի տարածքում, որտեղ մատուցվում է ծառայությունը, այդ Կողմը կարող է գնահատել, թե արդյոք այն համարժեք է բարձրագույն կրթության դիպլոմին, որը պահանջվում է իր տարածքում:

- (g) ծառայությունների մատուցման պայմանագրով ընդգրկված անձանց թիվը չի կարող լինել ավելին, քան անհրաժեշտ է պայմանագիրը կատարելու համար՝ այն Կողմի օրենքներին և կանոնակարգերին կամ այլ միջոցներին համապատասխան, որտեղ մատուցվում է ծառայությունը:

ՀՈԴՎԱԾ 157

Անկախ մասնագետները

VIII-D և VIII-G հավելվածներին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս դեպի իր տարածք ծառայությունների մատուցումը մյուս Կողմի անկախ մասնագետների կողմից՝ հետևյալ պայմաններին համապատասխան.

- (a) ֆիզիկական անձինք պետք է ծառայությունների մատուցման մեջ ներգրավված լինեն ժամանակավոր հիմունքներով՝ որպես մյուս Կողմի տարածքում հիմնադրված ինքնազբաղված անձինք, և պետք է ստորագրած լինեն ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 12 ամիսը չգերազանցող ժամկետով.
- (b) մյուս Կողմի տարածք մուտք գործող ֆիզիկական անձինք մյուս Կողմի տարածք մուտք գործելու վերաբերյալ դիմում ներկայացնելու օրվա դրությամբ պետք է պայմանագրի առարկա հանդիսացող գործունեության ոլորտում ունենան առնվազն վեց տարվա մասնագիտական փորձ.

- (c) մյուս Կողմի տարածք մուտք գործող ֆիզիկական անձինք պետք է ունենան՝
- (i) բարձրագույն կրթության դիպլոմ կամ համարժեք մակարդակի գիտելիքների առկայությունը հավաստող որակավորում¹, և
 - (ii) մասնագիտական որակավորումներ, որոնք պահանջվում են այն Կողմի օրենքների և կանոնակարգերի կամ այլ միջոցների համաձայն գործունեություն իրականացնելու համար, որտեղ մատուցվում է ծառայությունը.
- (d) շահագրգիռ Կողմի տարածք ֆիզիկական անձի մուտք գործելը և այնտեղ ժամանակավոր կացությունն ընդհանուր առմամբ չի կարող գերազանցել վեց ամիսը կամ, Լյուքսեմբուրգի դեպքում, 25 շաբաթը՝ ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածի ընթացքում կամ պայմանագրի տևողության ժամկետով՝ նայած որն է ավելի կարճ, և
- (e) սույն հոդվածի դրույթներով տրամադրվող հասանելիությունը վերաբերում է միայն ծառայությունների մատուցում հանդիսացող այն գործունեությանը, որը պայմանագրի առարկան է, և չի ենթադրում այն Կողմի տարածքում տրվող մասնագիտական կոչումով գործունեություն իրականացնելու իրավունք, որտեղ մատուցվում է ծառայությունը:

¹ Այն դեպքում, երբ դիպլոմը կամ որակավորումը ձեռք չի բերվել այն Կողմի տարածքում, որտեղ մատուցվում է ծառայությունը, այդ Կողմը կարող է գնահատել, թե արդյոք այն համարժեք է բարձրագույն կրթության դիպլոմին, որը պահանջվում է իր տարածքում:

ԲԱԺԻՆ Ե

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԵՆԹԱԲԱԺԻՆ I

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 158

Գործողության ոլորտը և սահմանումները

1. Սույն բաժինը կիրառվում է Կողմերի՝ լիցենզավորմանը ներկայացվող պահանջների և ընթացակարգերի, որակավորմանը ներկայացվող պահանջների և ընթացակարգերի հետ կապված այն միջոցների նկատմամբ, որոնք վերաբերում են՝

- (a) ծառայությունների միջսահմանային մատուցմանը,
- (b) իրենց տարածքում Կողմի ֆիզիկական և իրավաբանական անձանց հիմնադրվելուն, և
- (c) իրենց տարածքում 153-րդ հոդվածում նշված ֆիզիկական անձանց կատեգորիաների ժամանակավոր կացությանը:

2. Ծառայությունների միջսահմանային մատուցման դեպքում սույն բաժինը կիրառվում է միայն այն ոլորտների նկատմամբ, որոնց մասով Կողմը ստանձնել է որոշակի հանձնառություններ, և այնքանով, որքանով կիրառվում են այդ հանձնառությունները: Հաստատության դեպքում սույն բաժինը չի կիրառվում ոլորտների նկատմամբ այն մասով, որի վերաբերյալ ներկայացվել է VIII-A և VIII-E Հավելվածներում նշված վերապահումը: Ֆիզիկական անձանց ժամանակավոր կացության դեպքում սույն բաժինը չի կիրառվում ոլորտների նկատմամբ այն մասով, որի վերաբերյալ ներկայացվել է VIII-C, VIII-D և VIII-G Հավելվածներում նշված վերապահումը:

3. Սույն բաժինը չի կիրառվում միջոցների նկատմամբ այնքանով, որքանով դրանք ըստ ժամանակացույցի սահմանափակումներ են:

4. Սույն բաժնի նպատակներով՝

(a) «լիցենզավորման պահանջներ» նշանակում է որակավորմանը ներկայացվող պահանջներից տարբերվող էական պահանջներ, որոնց ֆիզիկական կամ իրավաբանական անձը պետք է համապատասխանի, որպեսզի 1-ին պարբերության մեջ նշված գործունեությունն իրականացնելու համար թույլտվություն ստանա, փոփոխի այն կամ երկարաձգի դրա ժամկետը.

(b) «լիցենզավորման ընթացակարգեր» նշանակում է վարչական կամ ընթացակարգային կանոններ, որոնք պետք է պահպանի այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը ցանկանում է ձեռք բերել 1-ին պարբերության մեջ նշված գործունեությունն իրականացնելու թույլտվություն՝ ներառյալ լիցենզիայի փոփոխումը կամ դրա ժամկետի երկարաձգումը, որպեսզի կարողանա ապահովել լիցենզավորման պահանջների կատարումը.

(c) «որակավորման պահանջներ» նշանակում է էական պահանջներ, որոնք վերաբերում են ֆիզիկական անձի՝ ծառայություն մատուցելու իրավասությանը, և որոնք պահանջվում է ներկայացնել ծառայություն մատուցելու թույլտվություն ստանալու նպատակով.

(d) «որակավորման ընթացակարգեր» նշանակում է վարչական կամ ընթացակարգային կանոններ, որոնք պետք է պահպանի ֆիզիկական անձը, որպեսզի ապահովի համապատասխանությունը որակավորման պահանջներին՝ ծառայություն մատուցելու թույլտվություն ստանալու նպատակով, և

- (e) «իրավասու մարմին» նշանակում է ցանկացած կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարություն և մարմին կամ ոչ կառավարական մարմին, որն իրականացնում է կենտրոնական կամ տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ մարմինների կողմից վերապահված լիազորություններ, որը որոշում է կայացնում ծառայություններ մատուցելու թույլտվության վերաբերյալ, այդ թվում՝ հաստատության միջոցով, կամ ծառայությունների մատուցումից զատ այլ տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով հաստատություն հիմնադրելու թույլտվության վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 159

Լիցենզավորման և որակավորման պայմանները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի լիցենզավորմանը ներկայացվող պահանջների և ընթացակարգերի, ինչպես նաև որակավորմանը ներկայացվող պահանջների և ընթացակարգերի հետ կապված միջոցառումները հիմնված լինեն այնպիսի չափորոշիչների վրա, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն չեն տալիս կամայականորեն իրականացնելու գնահատման իրենց լիազորությունները:
2. 1-ին պարբերությունում նշված չափանիշներն են՝
 - (a) հանրային քաղաքականության նպատակին համաչափ,
 - (b) հստակ և ոչ երկիմաստ,
 - (c) օբյեկտիվ,
 - (d) նախասահմանված,
 - (e) նախապես հրապարակված, և
 - (f) թափանցիկ և մատչելի:

3. Թույլտվությունը կամ լիցենզիան շնորհվում է այն ժամանակ, երբ պատշաճ ուսումնասիրության արդյունքում սահմանվում է, որ թույլտվություն կամ լիցենզիա ստանալու պայմանները բավարարվել են:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է ունենա կամ ձևավորի դատական, արբիտրաժային կամ վարչական ատյաններ կամ ընթացակարգեր, որոնք, շահագրգիռ ձեռնարկատիրոջ կամ ծառայություններ մատուցողի պահանջի դեպքում, կապահովեն գործի անհապաղ վերանայում, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում, կտրամադրեն իրավական պաշտպանության պատշաճ միջոցներ այն վարչական որոշումների մասով, որոնք վերաբերում են հիմնադրմանը, ծառայությունների միջսահմանային մատուցմանը կամ ֆիզիկական անձանց՝ բիզնես նպատակներով ժամանակավոր ներկայությանը: Եթե այդպիսի ընթացակարգերն անկախ չեն այն գործակալությունից, որի իրավասությանն է վերապահված նշված վարչական որոշում կայացնելը, ապա Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ ընթացակարգերով փաստացի նախատեսվեն օբյեկտիվ և անկողմնակալ վերանայման մեխանիզմներ:

5. Այն դեպքում, երբ տվյալ գործունեության համար նախատեսված լիցենզիաների թիվը սահմանափակ է առկա բնական ռեսուրսների կամ տեխնիկական հնարավորությունների սղության պատճառով, յուրաքանչյուր Կողմ հնարավոր թեկնածուների նկատմամբ կիրառում է ընտրության ընթացակարգ, որն ապահովում է անկողմնակալության և թափանցիկության լիարժեք երաշխիքներ՝ ներառյալ, մասնավորապես, ընթացակարգի մեկնարկի, իրականացման և ավարտի մասին պատշաճ հրապարակայնությունը:

6. Սույն հոդվածում նշված պահանջներին համապատասխան՝ ընտրության գործընթացի կանոնները սահմանելիս յուրաքանչյուր Կողմ կարող է հաշվի առնել հանրային քաղաքականության օրինական նպատակները, այդ թվում՝ առողջության, անվտանգության, շրջակա միջավայրի պաշտպանության և մշակութային ժառանգության պահպանության նկատառումները:

Լիցենզավորման և որակավորման ընթացակարգերը

1. Լիցենզավորման և որակավորման ընթացակարգերը և պաշտոնական ընթացակարգերը պետք է լինեն հստակ, նախապես հրապարակվեն և լինեն այնպիսին, որ դիմումատուների համար ապահովվի իրենց դիմումների օբյեկտիվ և անկողմնակալ ուսումնասիրություն:

2. Լիցենզավորման և որակավորման ընթացակարգերը և պաշտոնական ընթացակարգերը պետք է լինեն հնարավորինս պարզ և չպետք է անտեղի բարդացնեն կամ հետաձգեն ծառայության մատուցումը: Լիցենզավորման համար վճարվող ցանկացած վճար¹, որը դիմումատուները հնարավոր է վճարեն իրենց դիմումների հետ կապված, պետք է լինի ողջամիտ և թույլտվություն տրամադրելու նշված ընթացակարգերի արժեքին համաչափ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է լիցենզավորման կամ թույլտվություն տրամադրելու գործընթացում իրավասու մարմնի կողմից օգտագործվող ընթացակարգերի և նրա կողմից կայացված որոշումների անկողմնակալություն բոլոր դիմումատուների համար: Իրավասու մարմինն անկախ է որոշումներ կայացնելիս և հաշվետու չէ այն ծառայություններ մատուցողին, որի համար պահանջվում է լիցենզիան կամ թույլտվությունը:

4. Այն դեպքում, երբ դիմումներ ներկայացնելու համար սահմանված են որոշակի ժամկետներ, դիմումը ներկայացնելու նպատակով դիմումատուին տրամադրվում է ողջամիտ ժամկետ: Իրավասու մարմինը դիմումին ընթացք է տալիս առանց անհարկի ուշացման: Հնարավորության դեպքում, դիմումներն ընդունվում են էլեկտրոնային ձևաչափով՝ վավերականության նույն պայմաններով, ինչ թղթային տարբերակի դեպքում:

¹ Լիցենզավորման վճարները չեն ներառում աճուրդի, մրցույթի համար նախատեսված վճարները կամ կոնցեսիա տրամադրելու ոչ խտրական այլ միջոցներ, կամ համընդհանուր ծառայություններ մատուցելու համար նախատեսված պարտադիր վճարները:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է դիմումի ուսումնասիրություն, այդ թվում՝ դրա վերաբերյալ վերջնական որոշման կայացում՝ լրացված դիմումը ներկայացնելուց հետո ողջամիտ ժամկետում: Յուրաքանչյուր Կողմ միջոցներ է ձեռնարկում դիմումն ուսումնասիրելու համար ողջամիտ ժամկետներ սահմանելու ուղղությամբ:

6. Իրավասու մարմինը դիմումը թերի համարելու դեպքում, այն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում այդ մասին տեղեկացնում է դիմումատուին, հնարավորություն է տալիս ուղղելու թերությունները և հնարավորության դեպքում տրամադրելու դիմումն ամբողջականացնելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ:

7. Հնարավորության դեպքում, փաստաթղթերի բնօրինակների փոխարեն կարող են ընդունվել փաստաթղթերի հաստատված օրինակները:

8. Եթե դիմումը մերժվում է, ապա իրավասու մարմինն այդ մասին գրավոր և առանց անհարկի ուշացման տեղեկացնում է դիմումատուին: Որպես կանոն, դիմումատուն տեղեկացվում է նաև դիմումը մերժելու պատճառների և որոշումը բողոքարկելու ժամկետի մասին՝ այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում:

9. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ լիցենզիան կամ թույլտվությունը տրամադրվելուն պես ուժի մեջ մտնեն առանց անհարկի ուշացման՝ դրանում նշված ժամկետներին և պայմաններին համապատասխան:

ԵՆԹԱԲԱԺԻՆ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 161

Փոխադարձ ճանաչումը

1. Սույն գլխում ոչինչ չի խոչընդոտում Կողմին՝ պահանջել, որ ֆիզիկական անձինք ունենան անհրաժեշտ որակավորումներ և մասնագիտական փորձ, որոնք գործունեության նշված ոլորտի համար պահանջվում են այն տարածքում, որտեղ ծառայությունը մատուցվում է:

2. Յուրաքանչյուր Կողմ իր տարածքում համապատասխան մասնագիտական մարմիններին խրախուսում է որակավորումների և մասնագիտական փորձի փոխադարձ ճանաչման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Գործընկերության կոմիտե՝ առևտրի հարցերով հանդիպման ժամանակ՝ թույլտվության տրամադրման, լիցենզավորման, ձեռնարկատերերի և ծառայություններ մատուցողների գործունեության ու հավաստագրման և, մասնավորապես, մասնագիտական ծառայությունների համար յուրաքանչյուր Կողմի կիրառած չափանիշները ձեռնարկատերերի և ծառայություններ մատուցողների կողմից, ամբողջապես կամ մասամբ, կատարելու նպատակով:

3. 2-րդ պարբերության մեջ նշված առաջարկությունը ստանալուն պես Գործընկերության կոմիտեն իր առևտրի հարցերով հանդիպման ժամանակ ողջամիտ ժամկետում ուսումնասիրում է այդ առաջարկությունը՝ պարզելու համար, թե արդյոք այն համապատասխանում է սույն Համաձայնագրին, և այնտեղ ներառված տեղեկությունների հիման վրա գնահատում է, մասնավորապես՝

(a) որքանով են ծառայություններ մատուցողների և ձեռնարկատերերի թույլտվության, լիցենզիաների, գործունեության և հավաստագրման համար յուրաքանչյուր Կողմի կիրառած ստանդարտներն ու չափանիշները համընկնում, և

(b) որակավորումների և մասնագիտական փորձի փոխադարձ ճանաչման վերաբերյալ համաձայնագրի հնարավոր ազդեցությունը տնտեսության վրա:

4. Եթե 3-րդ պարբերության մեջ նշված պահանջները բավարարվում են, ապա Գործընկերության կոմիտեն, իր առևտրի հարցերով հանդիպման ժամանակ, սահմանում է փոխադարձ ճանաչման վերաբերյալ համաձայնագրի վերաբերյալ բանակցելու համար անհրաժեշտ քայլերը, և դրանից հետո Կողմերի իրավասու մարմիններին առաջարկում է սկսել բանակցությունները:

5. Ցանկացած այդպիսի համաձայնագիր պետք է համապատասխանի ԱՀԿ համաձայնագրի համապատասխան դրույթներին և, մասնավորապես՝ ԱՀԿ համաձայնագրի 1B հավելվածում ընդգրկված՝ Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագրի (ՇԱԳՀ) VII հոդվածին:

ՀՈԴՎԱԾ 162

Թափանցիկությունը և գաղտնի տեղեկությունների բացահայտումը

1. Յուրաքանչյուր Կողմ անհապաղ պատասխանում է մյուս Կողմի՝ ընդհանուր կիրառության իր որևէ միջոցառման կամ միջազգային համաձայնագրի վերաբերյալ որոշակի տեղեկություններ տրամադրելու մասին բոլոր պահանջներին, որոնք առնչվում են սույն Համաձայնագրին կամ ազդում են դրա վրա: Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմի ձեռնարկատերերին և ծառայություն մատուցողներին, պահանջի հիման վրա, այդ հարցերի վերաբերյալ որոշակի տեղեկություններ տրամադրելու նպատակով նաև հիմնում է մեկ կամ ավելի տեղեկատվական կետեր: Կողմերը միմյանց ծանուցում են տեղեկատվական կետերի մասին սույն Համաձայնագրին ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում: Պարտադիր չէ, որ տեղեկատվական կետերն օրենքների և կանոնակարգերի ավանդապահներ լինեն:

2. Սույն Համաձայնագրով չի կարող նախատեսվել որևէ Կողմի կողմից այնպիսի գաղտնի տեղեկություններ տրամադրելու պահանջ, որոնց բացահայտումը կխոչընդոտի օրենքի կատարման ապահովումը կամ որևէ այլ կերպ կհակասի հանրային շահին, կամ որոնք կարող են սահմանափակել պետական կամ մասնավոր առանձին ձեռնարկությունների օրինական առևտրային շահերը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ III

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 163

Համակարգչային ծառայությունների վերաբերյալ պայմանավորվածությունը

1. Համակարգչային ծառայությունների առևտուրը B, C և D բաժիններին համապատասխան ազատականացնելիս Կողմերն ապահովում են 2-ից 4-րդ պարբերություններին համապատասխանությունը:

2. Հիմնական ապրանքների դասակարգում (ՀԱԴ⁷) 84-ը, որը Միավորված ազգերի կազմակերպության կողմից համակարգչային և հարակից ծառայությունները նկարագրելու համար օգտագործվող ծածկագիրն է, ընդգրկում է համակարգչային և հարակից բոլոր ծառայությունները մատուցելու համար օգտագործվող հիմնական գործառույթները՝ համակարգչային ծրագրեր, որոնք սահմանվում են որպես հրահանգների խմբեր, որոնք անհրաժեշտ են համակարգիչն աշխատեցնելու և հաղորդակցելու համար (ներառյալ դրանց մշակումն ու իրականացումը), տվյալների մշակում և պահում, և հարակից ծառայություններ, ինչպիսիք են խորհրդատվությունը և հաճախորդների աշխատակիցների վերապատրաստումը: Տեխնոլոգիական առաջընթացը հանգեցրել է այդ ծառայությունների առաջարկի աճի՝ որպես հարակից ծառայությունների ամբողջություն կամ փաթեթ, որը կարող է ներառել այս հիմնական գործառույթների որոշ մասը կամ բոլորը: Օրինակ՝ այնպիսի ծառայությունները, ինչպիսիք են կայքերի կամ դոմենների տեղաբաշխումը, տվյալների խորքային վերլուծության ծառայությունները և ցանցային հաշվարկը, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է համակարգչային հիմնական գործառույթների համակցությունից:

⁷ Հիմնական ապրանքների դասակարգում՝ ինչպես սահմանված է Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական բյուրոյի վիճակագրական փաստաթղթերի M շարքի թիվ 77-ում, ՀԱԴ, 1991 թվական:

3. Համակարգչային և հարակից ծառայությունները, անկախ նրանից, թե արդյոք դրանք մատուցվում են ցանցի միջոցով, այդ թվում՝ ինտերնետի, ներառում են բոլոր այն ծառայությունները, որոնց համաձայն տրամադրվում է՝

- (a) համակարգիչների կամ համակարգչային համակարգերի կամ դրանց մասով խորհրդատվություն, մարտավարություն, վերլուծություն, պլանավորում, մասնագրում, դիզայն, մշակում, տեղադրում, իրականացում, ինտեգրում, փորձարկում, վրիպագերծում, թարմացում, աջակցություն, տեխնիկական աջակցություն, կամ կառավարում,
- (b) համակարգչային ծրագրեր, որոնք սահմանվում են որպես հրահանգների խմբեր, որոնք անհրաժեշտ են համակարգիչն աշխատեցնելու և հաղորդակցելու համար (իրար միջև և իրենցից)՝ ներառյալ համակարգիչների կամ համակարգչային ծրագրերի կամ դրանց մասով խորհրդատվություն, մարտավարություն, վերլուծություն, պլանավորում, մասնագրում, դիզայն, մշակում, տեղադրում, իրականացում, ինտեգրում, փորձարկում, վրիպագերծում, թարմացում, ադապտացում, ընթացիկ սպասարկում, աջակցություն, տեխնիկական աջակցություն, կառավարում կամ օգտագործում,
- (c) տվյալների մշակում, տվյալների պահում, տվյալների տեղաբաշխում կամ տվյալների բազային առնչվող ծառայություն,
- (d) գրասենյակային մեքենաների և սարքավորումների՝ ներառյալ համակարգիչների սպասարկման և վերանորոգման ծառայություններ, կամ
- (e) հաճախորդների անձնակազմի վերապատրաստման ծառայություններ՝ կապված համակարգչային ծրագրերի, համակարգիչների կամ համակարգչային համակարգերի հետ, և այլուր չդասակարգված:

4. Համակարգչային և հարակից ծառայությունները հնարավորություն են տալիս մատուցելու այլ ծառայություններ, ինչպես օրինակ՝ բանկային, և՛ էլեկտրոնային, և՛ այլ միջոցներով: Այդպիսի դեպքերում կարևոր է տարբերակել հնարավորություն սվող ծառայությունը, ինչպես օրինակ՝ կայքերի տեղաբաշխման կամ հավելվածների տեղաբաշխման, և բովանդակությունը կամ էլեկտրոնային տարբերակով մատուցվող հիմնական ծառայությունը, ինչպես օրինակ՝ բանկային ծառայությունը, որը մատակարարվում է էլեկտրոնային եղանակով: Այդպիսի դեպքերում բովանդակությունը կամ հիմնական ծառայությունը չի կարգավորվում ՀԱԴ 84-ով:

ԵՆԹԱԲԱԺԻՆ IV

ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

ՀՈԴՎԱԾ 164

Գործողության ոլորտը և սահմանումները

1. Սույն ենթաբաժնով սահմանվում են փոստային բոլոր ծառայությունների կարգավորման շրջանակի սկզբունքները:
2. Սույն ենթաբաժնի և B, C և D բաժինների նպատակով՝
 - (a) «լիցենզիա» նշանակում է կարգավորող մարմնի կողմից անհատ մատակարարին շնորհված թույլտվություն, որը պահանջվում է՝ նախքան տվյալ ծառայությունը մատուցելու գործունեությունն սկսելը, և
 - (b) «համընդհանուր ծառայություն» նշանակում է Կողմի տարածքի բոլոր կետերում սահմանված որակի փոստային ծառայությունների նվազագույն փաթեթի մշտական մատուցում:

ՀՈԴՎԱԾ 165

Շուկայի գործունեությունը խաթարող գործելակերպի կանխարգելումը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի համընդհանուր ծառայությունների հետ կապված պարտավորություններին կամ փոստային մենաշնորհին ենթակա փոստային ծառայություններ մատուցողը ձեռնպահ մնա շուկայի գործունեությունը խաթարող գործելակերպից, ինչպիսիք են՝

¹ Սույն բաժինը կիրառվում է թե՛ ՀԱԴ 7511-ի, և թե՛ ՀԱԴ 7512-ի նկատմամբ:

- (a) այդպիսի ծառայությունների մատուցումից ստացված շահույթի օգտագործումն էքսպրես առաքման ծառայությունների կամ որևէ ոչ համընդհանուր առաքման ծառայության մատուցման խաչաձև սուբսիդավորման նպատակով, և
- (b) սակագների կամ համընդհանուր ծառայությունների հետ կապված պարտավորություններին կամ փոստային մենաշնորհին ենթակա փոստային ծառայությունների մատուցման այլ ժամկետների ու պայմանների մասով այնպիսի հաճախորդների միջև անհիմն տարբերակումը, ինչպիսիք են բիզնես հաճախորդները, մեծ քանակությամբ նամակներ ուղարկողները կամ էքսպեդիտորները:

ՀՈԴՎԱԾ 166

Համընդհանուր ծառայությունները

1. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի սահմանելու համընդհանուր ծառայության մասով պարտավորության այն տեսակը, որը ցանկանում է ունենալ: Այդպիսի պարտավորությունները, *per se*, չեն համարվի հակամրցակցային՝ պայմանով, որ դրանք կիրառվեն թափանցիկ, ոչ խտրական և մրցակցային տեսակետից չեզոք եղանակով և անհրաժեշտից ավելի ծանրաբեռնող չլինեն տվյալ Կողմի սահմանած՝ համընդհանուր ծառայության այդ տեսակի համար:
2. Օգտագործողների կարիքները բավարարելու նկատառումով՝ համընդհանուր ծառայության սակագները պետք է մատչելի լինեն:

ՀՈԴՎԱԾ 167

Լիցենզիաները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է միջոցներ ձեռնարկի՝ համընդհանուր ծառայության մեջ չընդգրկված ծառայությունների համար պահանջվող լիցենզիաները պարզ գրանցմամբ փոխարինելու համար:

2. Այն դեպքում, երբ պահանջվում է լիցենզիա՝
- (a) լիցենզիաների ժամկետներն ու պայմանները, որոնք չեն կարող լինել ավելի խիստ, քան անհրաժեշտ է դրանցով հետապնդվող նպատակին հասնելու համար, պետք է հասանելի լինեն հանրությանը,
 - (b) դիմումատուն պետք է տեղեկացվի լիցենզիա տալը մերժելու հիմքերի մասին՝ նման պահանջ ներկայացվելու դեպքում, և
 - (c) յուրաքանչյուր Կողմ պետք է նախատեսի անկախ մարմնի միջոցով բողոքարկման այնպիսի ընթացակարգ, որը կլինի թափանցիկ, ոչ խտրական և օբյեկտիվ չափանիշների վրա հիմնված:

ՀՈԴՎԱԾ 168

Կարգավորող մարմնի անկախությունը

Կարգավորող մարմինը պետք է իրավաբանորեն առանձին լինի փոստային և առաքման ծառայություններ մատուցողից և հաշվետու չլինի նրան: Կարգավորող մարմնի որոշումները և դրա կողմից կիրառվող ընթացակարգերը պետք է անկողմնակալ լինեն շուկայի բոլոր մասնակիցների համար:

ՀՈԴՎԱԾ 169

Աստիճանական մոտարկումը

Կողմերն ընդունում են Հայաստանի Հանրապետության՝ փոստային ծառայությունների վերաբերյալ օրենսդրությունը Եվրոպական միության օրենսդրությանն աստիճանական մոտարկման կարևորությունը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ V

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՅԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 170

Գործողության ոլորտը և սահմանումները

1. Սույն ենթաբաժնով սահմանվում են էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների մատուցման կարգավորման շրջանակի սկզբունքները, որոնք ազատականացվել են B, C և D բաժինների համաձայն:
2. Սույն ենթաբաժնի նպատակներով՝
 - (a) «էլեկտրոնային հաղորդակցության ցանց» նշանակում է փոխանցման համակարգեր և, եթե կիրառելի է, փոխանջատման կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ՝ ներառյալ ոչ ակտիվ ցանցային տարրերը, որոնք թույլ են տալիս ազդանշաններ փոխանցել մալուխով, ռադիոյով, օպտիկական կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով.
 - (b) «էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն» նշանակում է ծառայություն, որն ամբողջությամբ կամ հիմնականում բաղկացած է էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ազդանշանների փոխանցումից՝ ներառյալ ցանցերի միջոցով հեռարձակման նպատակով օգտագործվող հեռահաղորդակցության ծառայությունները և փոխանցման ծառայությունները. այդ ծառայությունները չեն ներառում այնպիսի ծառայություններ, որոնք մատուցում կամ իրականացնում են խմբագրական հսկողություն այն բովանդակության նկատմամբ, որը հեռարձակվում է էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների միջոցով.
 - (c) «հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն» նշանակում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայության որևէ տեսակ, որը Կողմն ուղղակիորեն կամ ըստ էության պահանջում է, որպեսզի հասանելի լինի հանրությանը.

- (d) «հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց» նշանակում է էլեկտրոնային հաղորդակցության ցանց, որն ամբողջությամբ կամ հիմնականում օգտագործվում է հանրությանը հասանելի էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու նպատակով և որն օժանդակում է տեղեկությունների փոխանցմանը ցանցային վերջնակետերի միջև.
- (e) «հանրային հեռահաղորդակցության ծառայություն» նշանակում է հեռահաղորդակցության ցանկացած փոխադրման ծառայություն, որը Կողմն ուղղակիորեն կամ ըստ էության պահանջում է, որ հասանելի լինի հանրությանը. այդպիսի ծառայությունները կարող են ներառել, *inter alia*, հեռագիրը, հեռախոսը, տելեքսը և տվյալների փոխանցումը, որը սովորաբար ներառում է երկու կամ ավելի կետերի միջև հաճախորդի կողմից մատակարարվող տեղեկությունների փոխանցումն իրական ժամանակում՝ առանց հաճախորդի տեղեկությունների ձևի կամ բովանդակության որևէ փոփոխության վերջնակայանների միջև.
- (f) «էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում կարգավորող մարմին» նշանակում է այն մարմինը կամ մարմինները, որոնց Կողմը տվել է սույն ենթաբաժնում նշված էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորելու իրավասություն.
- (g) «էական հարմարություններ» նշանակում է հանրային հաղորդակցության ցանցի և ծառայության հարմարություններ, որոնք՝
- (i) բացառապես կամ առավելապես մատուցվում են մեկ կամ սահմանափակ թվով մատակարարների կողմից, և
 - (ii) ծառայություն մատուցելու նպատակով չեն կարող տնտեսապես կամ տեխնիկապես փոխարինվել.

- (h) «հարակից հարմարություններ» նշանակում է այն հարակից ծառայությունները, ֆիզիկական ենթակառուցվածքները և մյուս հարմարությունները կամ տարրերը, որոնք գործում են էլեկտրոնային հաղորդակցության ցանցին կամ ծառայությանը հարակից՝ հնարավոր դարձնելով այդ ցանցով կամ ծառայության միջոցով ծառայությունների մատուցումը կամ նման հնարավորություն ունեն և, *inter alia*, ներառում են շենքերը կամ շենքերի մուտքերը, շենքի մալուխային գծերը, ալեհավաքները, աշտարակները և մյուս օժանդակ կառույցները, անցուղիները, խողովակաշարերը, կայմերը, դիտահորերը և խցիկները.
- (i) «խոշոր օպերատորը»⁸ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում՝ էական հարմարությունների նկատմամբ հսկողության կամ շուկայում իր դիրքն օգտագործելու արդյունքում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համապատասխան շուկայում մասնակցության պայմանների վրա (հաշվի առնելով գինը և մատակարարումը) էականորեն ազդելու կարողություն ունեցող մատակարարն է.
- (j) «հասանելիություն» նշանակում է հարմարությունները կամ ծառայություններն այլ մատակարարին սահմանված պայմաններով հասանելի դարձնելը՝ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու նպատակով, որը ներառում է, *inter alia*,
- (i) ցանցային տարրերի և հարակից հարմարությունների հասանելիությունը, որը կարող է ներառել սարքավորումների հաղորդակցությունը ֆիքսված կամ ոչ ֆիքսված միջոցներով, մասնավորապես, դա ներառում է տեղական հանգույցի և այն հարմարությունների ու ծառայությունների հասանելիությունը, որոնք անհրաժեշտ են տեղական հանգույցի միջոցով ծառայություն մատուցելու համար,
- (ii) ֆիզիկական ենթակառուցվածքին հասանելիությունը՝ ներառյալ շենքերին, անցուղիներին և կայմերին,
- (iii) համակարգչային ծրագրերի համապատասխան համակարգերին, այդ թվում՝ գործառնական աջակցության համակարգերին հասանելիությունը,
- (iv) տեղեկատվական համակարգերին կամ տվյալների բազաներին հասանելիությունը՝ նախնական պատվիրման, տրամադրման, պատվիրման, սպասարկման և վերանորոգման հայտերի և գանձումների նպատակով,

⁸ Կողմերը համաձայնում են, որ «խոշոր օպերատորը» համարժեք է շուկայում զգալի դիրք ունեցող մատակարարին:

- (v) համարների վերահաղորդմանը կամ համարժեք գործառույթներ առաջարկող համակարգերին հասանելիությունը,
 - (vi) ֆիքսված և շարժական ցանցերին հասանելիությունը, մասնավորապես՝ ռոումինգի նպատակով, և
 - (vii) վիրտուալ ցանցային ծառայություններին հասանելիությունը.
- (k) «փոխկապակցում» նշանակում է միևնույն կամ տարբեր մատակարարների կողմից օգտագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ֆիզիկական և տրամաբանական կապակցում՝ մեկ մատակարարի օգտագործողներին միևնույն կամ մեկ այլ մատակարարի օգտագործողների հետ հաղորդակցվելու հնարավորություն տալու կամ մեկ այլ մատակարարի կողմից մատուցվող ծառայություններին հասանելիություն ունենալու նպատակով, այնպիսի ծառայությունները, որոնք կարող են մատուցել ներգրավված կողմերը կամ ցանցերին հասանելիություն ունեցող այլ կողմեր.
- (l) «համընդհանուր ծառայություն» նշանակում է սահմանված որակի ծառայությունների նվազագույն փաթեթը, որը պետք է Կողմի տարածքում հասանելի լինի բոլոր օգտագործողներին՝ անկախ աշխարհագրական դիրքից, և լինի մատչելի. դրանց շրջանակը և իրականացումը որոշում է Կողմերից յուրաքանչյուրը, և.
- (m) «համարի տեղափոխելիություն» նշանակում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների բոլոր այն բաժանորդներին ընձեռված հնարավորություն, որոնք հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների միևնույն կատեգորիայի մատուցողների միջև անցում կատարելիս դիմում են միևնույն վայրում միևնույն հեռախոսահամարները պահպանելու պահանջով՝ առանց որակի, վստահելիության կամ հարմարության վատթարացման:

Կարգավորող մարմինը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները կարգավորող մարմիններն իրավաբանորեն առանձին և գործառույթի մասով անկախ լինեն էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկացած մատուցողից կամ էլեկտրոնային սարքավորումների ցանկացած մատակարարից:

2. Այն Կողմը, որն ունի էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կամ ծառայություններ մատուցողների նկատմամբ սեփականության կամ հսկողության իրավունք, ապահովում է կարգավորող գործառույթի կառուցվածքային արդյունավետ առանձնացումը սեփականության կամ հսկողության իրավունքի հետ կապված գործունեությունից: Կարգավորող մարմինը գործում է անկախ և ազգային օրենսդրությամբ իրեն վերապահված այդ գործառույթների կատարման առնչությամբ ցուցումներ չպետք է հայցի կամ ստանա որևէ այլ մարմնից:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր կարգավորող մարմիններն ունենան բավականաչափ լիազորություններ, որպեսզի կարգավորեն ոլորտը, և ունենան համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի կատարեն իրենց հանձնարարված առաջադրանքը: Միայն 7-րդ պարբերության մեջ նշված բողոքարկման մարմինները լիազորություն ունեն կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու կարգավորող մարմինների որոշումները:

Կարգավորող մարմինն վերապահված գործառույթները հրապարակվում են հեշտությամբ հասանելի և պարզ ձևով, մասնավորապես, եթե այդ գործառույթները վերապահված են մեկից ավելի մարմինների: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր կարգավորող մարմիններն ունենան առանձին տարեկան բյուջեներ: Բյուջեները պետք է հրապարակվեն:

4. Կարգավորող մարմինների որոշումները և դրանց կողմից կիրառվող ընթացակարգերը պետք է անկողմնակալ լինեն շուկայի բոլոր մասնակիցների նկատմամբ:

5. Կարգավորող մարմինների լիազորություններն իրականացվում են թափանցիկ և ժամանակին:

6. Կարգավորող մարմինները պետք է լիազորություն ունենան ապահովելու, որ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորները և ծառայություններ մատուցողները, նման պահանջ ներկայացվելու դեպքում, իրենց անհապաղ տրամադրեն բոլոր տեղեկությունները՝ ներառյալ ֆինանսական տեղեկությունները, որոնք կարգավորող մարմիններին անհրաժեշտ են իրենց առաջադրված խնդիրներն իրագործելու համար՝ սույն ենթաբաժնին համապատասխան: Պահանջված տեղեկությունները պետք է լինեն կարգավորող մարմինների կողմից իրենց առջև դրված խնդիրների կատարմանը համաչափ, և դրանց հետ պետք է գործ ունենալ զաղտնիության պահանջների պահպանմամբ:

7. Ցանկացած օգտագործող կամ օպերատոր, որին վերաբերում է կարգավորող մարմնի որոշումը, իրավունք ունի բողոքարկելու այդ որոշումը ներգրավված կողմերից անկախ գործող բողոքարկման մարմնին: Այդ մարմինը, որը կարող է լինել դատարանը, պետք է ունենա համապատասխան մասնագիտական փորձառություն, որպեսզի կարողանա արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները: Գործի հանգամանքները պետք է պատշաճորեն հաշվի առնվեն, իսկ բողոքարկման մեխանիզմը պետք է արդյունավետ լինի: Վերանայման ընթացակարգերի համար պատասխանատու այն մարմինների մասով, որոնք իրենց բնույթով դատական մարմիններ չեն, յուրաքանչյուր Կողմ ապահովվում է, որ դրանց կողմից ընդունված որոշումների համար միշտ ներկայացվի գրավոր հիմնավորում, իսկ դրանց որոշումները նաև ենթակա լինեն վերանայման անկողմնակալ և անկախ դատական մարմնի կողմից: Բողոքարկման մարմինների կողմից ընդունված որոշումները պետք է արդյունավետորեն կատարվեն: Կախված բողոքարկման արդյունքից՝ կարգավորող մարմնի որոշումը պահպանում է իր ուժը, եթե միջանկյալ միջոցներ չեն շնորհվում՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան:

8. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ կարգավորող մարմնի ղեկավարը կամ, եթե կիրառելի է, կոլեգիալ մարմնի՝ կարգավորող մարմնի կազմում այդ գործառույթն իրականացնող անդամները կամ նրանց փոխարինող անձինք պաշտոնից ազատվեն միայն այն դեպքում, եթե նրանք այլևս չեն բավարարում ներպետական օրենսդրությամբ նախապես սահմանված՝ իրենց պարտականությունների կատարման համար պահանջվող պայմանները: Պաշտոնից ազատելու այդպիսի որոշումը պետք է հրապարակվի պաշտոնից ազատելու պահին: Կարգավորող մարմնի՝ պաշտոնից ազատված ղեկավարին կամ, եթե կիրառելի է, այդ գործառույթն իրականացնող կոլեգիալ մարմնի անդամներին տրվում է ազատման պատճառները հիմնավորող փաստաթուղթ, և նրանք իրավունք ունեն պահանջելու դրա հրապարակումը, եթե դա այլ կերպ չի կարող տեղի ունենալ, ինչի դեպքում այն պետք է հրապարակվի:

ՀՈՒՎԱԾ 172

Էլեկտրոնային հաղորդակցության ցանցեր տրամադրելու և ծառայություններ մատուցելու թույլտվությունը

1. Յուրաքանչյուր Կողմ թույլատրում է էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի տրամադրումը կամ ծառայությունների մատուցումը, եթե դա հնարավոր է, պարզ ծանուցման միջոցով: Չի պահանջվում, որ ծանուցումից հետո տվյալ ծառայություն մատուցողը՝ նախքան թույլտվությունից բխող իրավունքներն իրականացնելը, կարգավորող մարմնից ստանա հստակ որոշում կամ որևէ այլ վարչական ակտ: Այդպիսի թույլտվությունից բխող իրավունքներն ու պարտականությունները հրապարակվում են հեշտորեն հասանելի ձևով: Պարտականությունները պետք է համաչափ լինեն տվյալ ծառայության բովանդակությանը:

2. Անհրաժեշտության դեպքում, Կողմը կարող է պահանջել ռադիոհաճախականությունների և թվերի օգտագործման իրավունքի լիցենզիա, որպեսզի հնարավոր լինի՝

- (a) խուսափել վնասակար միջամտությունից,
- (b) ապահովել ծառայության տեխնիկական որակը,

(c) երաշխավորել ռադիոհաճախականության տիրույթի արդյունավետ օգտագործումը, կամ

(d) իրականացնել ընդհանուր շահերից բխող այլ նպատակներ:

3. Եթե Կողմը պահանջում է լիցենզիա, ապա նա պետք է՝

(a) հրապարակի լիցենզավորման բոլոր չափանիշները և լիցենզիայի համար ներկայացված դիմումի հետ կապված որոշում կայացնելու համար սովորաբար պահանջվող ողջամիտ ժամանակահատվածի մասին տեղեկություն,

(b) լիցենզիա տրամադրելը մերժելու պատճառները գրավոր տրամադրի դիմումատուին՝ այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում, և

(c) դիմումատուին հնարավորություն տա լիցենզիա տրամադրելը մերժելու դեպքում դիմելու բողոքարկման մարմին:

4. Վարչական բոլոր ծախսերը դրվում են մատակարարների վրա՝ օբյեկտիվ, թափանցիկ, համաչափ և ծախսերի նվազեցման ձևով: 1-ին պարբերության մեջ նշված թույլտվության կամ 2-րդ պարբերության մեջ նշված լիցենզիայով ծառայություն մատուցող կամ ցանց տրամադրող օպերատորների նկատմամբ Կողմի կողմից նշանակված ցանկացած վարչական ծախս, ընդհանուր առմամբ, սահմանափակվում է միայն տվյալ թույլտվության և լիցենզիայի տրամադրման, վերահսկման և իրականացման համար փաստացի վարչական ծախսերով: Այդ վարչական ծախսերը կարող են ներառել միջազգային համագործակցության, ներդաշնակեցման և ստանդարտացման, շուկայի վերլուծության, մոնիթորինգի համապատասխանության և շուկայի այլ հսկողության, ինչպես նաև կարգավորման աշխատանքների հետ կապված ծախսերը, որոնք ներառում են օրենսդրության և վարչական որոշումների, ինչպես օրինակ՝ հասանելիության և փոխկապակցման վերաբերյալ որոշումների նախապատրաստումն ու կատարումը:

Առաջին ենթապարբերության մեջ նշված վարչական ծախսերը չեն ներառում աճուրդի, տենդերի համար նախատեսված վճարները կամ կոնցեսիա տրամադրելու ոչ խտրական մյուս միջոցները կամ համընդհանուր ծառայությունների մատուցման համար նախատեսված պարտադիր վճարները:

ՀՈԴՎԱԾ 173

Սահմանափակ ռեսուրսները

1. Սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ ռադիոհաճախականության տիրույթի, թվերի և սերվիտուտի իրավունքի բաշխումը և դրանք օգտագործելու իրավունքի շնորհումն իրականացվում են բաց, օբյեկտիվ, ժամանակին, թափանցիկ, ոչ խտրական և համաչափ ձևով: Յուրաքանչյուր Կողմ պետք է այնպես անի, որ իր ընթացակարգերը հիմնված լինեն օբյեկտիվության, թափանցիկության, ոչ խտրականության և համաչափության չափանիշների վրա:

2. Բաշխված հաճախականությունների միջակայքերի ընթացիկ իրավիճակի մասին տեղեկությունները ենթակա են հրապարակման, իսկ կառավարության կողմից առանձին նպատակներով օգտագործման համար բաշխված ռադիոհաճախականության տիրույթների վերաբերյալ մանրամասների հրապարակում չի պահանջվում:

3. Յուրաքանչյուր Կողմ իրեն իրավունք է վերապահում սահմանելու և կիրառելու տիրույթի և հաճախականության կառավարման միջոցառումներ, որոնց արդյունքում կարող են սահմանափակվել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների թիվը՝ պայմանով, որ դա արվի սույն Համաձայնագրին համապատասխան: Այդ իրավունքը ներառում է հաճախականությունների միջակայքերը բաշխելու հնարավորությունը՝ հաշվի առնելով ներկա և ապագա կարիքներն ու տիրույթների հասանելիությունը: Կողմի՝ տիրույթներ բաշխելու և տրամադրելու, ինչպես նաև հաճախականությունը կառավարելու միջոցառումները, per se, 144-րդ, 149-րդ և 150-րդ հոդվածներին չհամապատասխանող միջոցառումներ չեն:

Հասանելիությունը և փոխկապակցվածությունը

1. Հասանելիությունը և փոխկապակցվածությունը պետք է սկզբունքորեն համաձայնեցվեն տվյալ օպերատորների միջև առևտրային բանակցությունների հիման վրա:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների բոլոր օպերատորներն ունենան իրար հետ փոխկապակցման շուրջ բանակցելու իրավունք, իսկ մեկ այլ օպերատորի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում՝ պարտավորություն՝ հանրությանը հասանելի էլեկտրոնային հաղորդակցության ցանցեր տրամադրելու և ծառայություններ մատուցելու նպատակով: Որևէ Կողմ չպետք է կիրառի իրավական կամ վարչական ներգործության որևէ միջոց, որը հասանելիություն կամ փոխկապակցում շնորհող օպերատորներին պարտավորեցնում է համարժեք ծառայությունների համար տարբեր օպերատորների առաջարկել տարբեր պայմաններ կամ նրանց վրա դնել այնպիսի պարտավորություններ, որոնք առնչություն չունեն մատուցվող ծառայությունների հետ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ մատակարարները, որոնք հասանելիության կամ փոխկապակցման վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռք բերելու նպատակով իրականացվող բանակցությունների ընթացքում մեկ այլ մատակարարից ձեռք են բերում տեղեկություններ, այդ տեղեկությունները կարողանան օգտագործել բացառապես այն նպատակով, որի համար դրանք տրամադրվել են և շարունակաբար պահպանեն փոխանցված կամ պահված տեղեկությունների գաղտնիությունը:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր տարածքում խոշոր օպերատորն էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողներին ողջամիտ և ոչ խտրական՝ ժամկետներով ու պայմաններով ընձեռի իր այն հիմնական հարմարություններին հասանելիության հնարավորություն, որոնք, *inter alia*, ներառում են ցանցային տարրեր, հարակից հարմարություններ և օժանդակ ծառայություններ:

¹ Սույն ենթաբաժնի նպատակով՝ «ոչ խտրական» եզրույթը վերաբերում է 150-րդ հոդվածով սահմանված ազգային ռեժիմին, ինչպես նաև այս եզրույթը ոլորտին հատուկ իմաստով գործածվում է արտացոլելու այն «ժամկետները և պայմանները, որոնք պակաս բարենպաստ չեն, քան միևնույն հանգամանքներում նմանատիպ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի որևէ օգտագործողի տրամադրված պայմանները»

5. Հանրային հեռահաղորդակցության ծառայությունների դեպքում խոշոր օպերատորի հետ փոխկապակցումն ապահովվում է ցանցի՝ տեխնիկապես հնարավոր ցանկացած կետում: Այդպիսի փոխկապակցում տրամադրվում է՝

- (a) ոչ խտրական ժամկետներով, պայմաններով (այդ թվում՝ տեխնիկական ստանդարտների, մասնագրերի, որակի և պահպանման առումով) և դրույքաչափով, ինչպես նաև այնպիսի որակով, որը պակաս բարենպաստ չէ, քան այն, որը տրամադրվում է այդպիսի խոշոր օպերատորի կողմից տրամադրվող նույնատիպ ծառայությունների համար, կամ իրար հետ չփոխկապակցված օպերատորների կողմից տրամադրվող նույնատիպ ծառայությունների կամ էլ դրանց դուստր ձեռնարկությունների կամ այլ փոխկապակցված անձանց համար:
- (b) ժամանակին, այնպիսի ժամկետներով, պայմաններով (այդ թվում՝ տեխնիկական ստանդարտների, մասնագրերի, որակի և պահպանման առումով) և ծախսերի վրա հիմնված դրույքաչափով, որոնք թափանցիկ են, ողջամիտ, հաշվի են առնում տնտեսական իրագործելիությունը և բավարար չափով տարանջատված են այնպես, որ օպերատորը կարիք չունենա վճարելու այն ցանցային տարրերի կամ հարմարությունների համար, որոնք մատուցվող ծառայության համար չեն պահանջվում, և
- (c) պահանջի դեպքում՝ օգտագործողների մեծ մասին առաջարկվող ցանցային վերջնակետերից բացի այն կետերում, որոնց համար վճարվում են այնպիսի գումարներ, որոնք ներառում են անհրաժեշտ օժանդակ հարմարություններ կառուցելու ծախսը:

6. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հրապարակվեն խոշոր օպերատորի նկատմամբ կիրառելի փոխկապակցման ընթացակարգերը, իսկ այդ խոշոր օպերատորները հրապարակեն կա՛մ իրենց փոխկապակցման համաձայնագրերը, կա՛մ, հնարավորության դեպքում, փոխկապակցման իրենց օրինակելի առաջարկները:

ՀՈՒՎԱԾ 175

Խոշոր օպերատորների մրցակցային երաշխիքները

Յուրաքանչյուր Կողմ համապատասխան միջոցներ է ընդունում կամ իրականացնում՝ առանձին կամ միասին խոշոր օպերատոր հանդիսացող մատակարարների հակամրցակցային գործելակերպը կանխելու նպատակով: Այդ հակամրցակցային գործելակերպը, մասնավորապես, ներառում է՝

- (a) հակամրցակցային խաչաձև սուբսիդավորման մեջ ներգրավվելը,
- (b) մրցակիցներից ստացված տեղեկությունները հակամրցակցային նպատակներով օգտագործելը, և
- (c) էական հարմարությունների մասին տեխնիկական այն տեղեկությունները և առևտրային առումով համապատասխան այն տեղեկություններն այլ ծառայություններ մատուցողների համար ժամանակին հասանելի չդարձնելը, որոնք նրանց անհրաժեշտ են ծառայություններ մատուցելու համար:

ՀՈՒՎԱԾ 176

Համընդհանուր ծառայությունը

1. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի սահմանելու համընդհանուր ծառայություն մատուցելու պարտավորության այն տեսակը, որը ցանկանում է ունենալ:

2. Համընդհանուր ծառայություն մատուցելու այդ պարտավորությունները *per se* չեն համարվում հակամրցակցային՝ պայմանով, որ դրանք կիրառվեն համաչափ, թափանցիկ, օբյեկտիվ և ոչ խտրական ձևով: Այդպիսի պարտավորությունների կիրառումը պետք է նաև չեզոք լինի մրցակցության նկատմամբ և չլինի ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է Կողմի սահմանած համընդհանուր ծառայության տեսակի համար:

3. Բոլոր էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորները և (կամ) ծառայություններ մատուցողները պարտավոր են մատուցել համընդհանուր ծառայություններ: Համընդհանուր ծառայություններ մատուցողների նշանակումը կատարվում է արդյունավետ, թափանցիկ և ոչ խտրական մեխանիզմի միջոցով: Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր Կողմ գնահատում է, թե արդյոք համընդհանուր ծառայություն մատուցելը ոչ արդարացի բեռ է համընդհանուր ծառայություն մատուցելու համար նշանակված օպերատորի (օպերատորների) համար: Այդպիսի գնահատման արդյունքներով արդարացված լինելու դեպքում և հաշվի առնելով շուկայի շահույթը, որը ստանում է համընդհանուր ծառայություն առաջարկող օպերատորը, կարգավորող մարմինները սահմանում են, թե արդյոք անհրաժեշտ է սահմանել մեխանիզմ՝ տվյալ օպերատորին (օպերատորներին) փոխհատուցում տրամադրելու կամ համընդհանուր ծառայության պարտավորությունների գծով զուտ ծախսերը կիսելու համար:

ՀՈՒՎԱԾ 177

Հեռախոսահամարների տեղափոխելիությունը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հանրային հաղորդակցության էլեկտրոնային ծառայություններ մատուցողներն ապահովեն ողջամիտ ժամկետներով և պայմաններով հեռախոսահամարների տեղափոխելիությունը:

ՀՈԴՎԱԾ 178

Տեղեկատվության գաղտնիությունը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է էլեկտրոնային հաղորդակցության և հարակից տվյալների հոսքի գաղտնիությունը հանրային հաղորդակցության էլեկտրոնային ցանցերի և հանրորեն հասանելի էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների միջոցով՝ չսահմանափակելով ծառայությունների առևտուրը:

ՀՈԴՎԱԾ 179

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծագած վեճերի լուծումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կամ ծառայություններ մատուցողների միջև սույն ենթաբաժնից բխող իրավունքների և պարտավորությունների առնչությամբ վեճ առաջանալու դեպքում նշված կարգավորող մարմինը, շահագրգիռ կողմերից մեկի պահանջով, պարտադիր որոշում կայացնի՝ վեճը հնարավորինս սեղմ ժամկետում և ցանկացած դեպքում չորս ամսվա ընթացքում լուծելու համար՝ բացառությամբ բացառիկ հանգամանքների:
2. Այն դեպքում, երբ այդպիսի վեճը վերաբերում է ծառայությունների միջսահմանային մատուցմանը, կարգավորող մարմինները համակարգում են իրենց ջանքերը, որպեսզի հասնեն վեճի լուծմանը:
3. Կարգավորող մարմնի որոշումը հրապարակվում է՝ հաշվի առնելով առևտրային գաղտնիքի վերաբերյալ պահանջները: Շահագրգիռ կողմերին ներկայացվում են այն հիմնավորումները, որոնք կարգավորող մարմինը որպես հիմք է ընդունել որոշում կայացնելիս, և շահագրգիռ կողմերն ունեն այդ որոշումը բողոքարկելու իրավունք՝ 171-րդ հոդվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

4. Սույն հոդվածում նշված ընթացակարգը չի սահմանափակում շահագրգիռ կողմերից որևէ մեկի՝ դատարան հայց ներկայացնելու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 180

Աստիճանական մոտարկումը

Կողմերն ընդունում են էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրոպական Միության համապատասխան օրենսդրության հետ աստիճանական մոտարկման կարևորությունը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ VI

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 181

Գործողության ոլորտը և սահմանումները

1. Սույն ենթաբաժինը վերաբերում է ֆինանսական ծառայությունների մատուցմանը վերաբերող միջոցներին, երբ ֆինանսական ծառայություններն ազատականացվում են՝ B, C և D բաժինների համաձայն:

2. Սույն գլխի նպատակներով՝ «ֆինանսական ծառայություն» նշանակում է ֆինանսական բնույթի ցանկացած ծառայություն, որն առաջարկում է Կողմի ֆինանսական ծառայություն մատուցողը: Ֆինանսական ծառայությունների մեջ մտնում են ապահովագրական և ապահովագրությանն առնչվող ծառայությունները, ինչպես նաև բանկային և մյուս ֆինանսական ծառայությունները:

3. 2-րդ պարբերության մեջ նշված ապահովագրական և ապահովագրությանն առնչվող ծառայությունների մեջ մտնում են՝

- (a) ուղղակի ապահովագրությունը (ներառյալ համաապահովագրությունը)
 - (i) կյանքի, և
 - (ii) ոչ կյանքի,
- (b) վերաապահովագրությունը և ռետրոցեսսիան,
- (c) ապահովագրական միջնորդությունը, ինչպես օրինակ՝ բրոքերությունն ու գործակալությունը, և
- (d) ապահովագրությանն օժանդակ ծառայությունները, ինչպես օրինակ՝ խորհրդատվական, ակտուարային, ռիսկերի գնահատման և պահանջների կառավարման ծառայությունները:

4. 2-րդ պարբերության մեջ նշված բանկային և այլ ֆինանսական ծառայությունների (բացառությամբ ապահովագրական և ապահովագրությանն առնչվող ծառայությունների) մեջ մտնում են՝

- (a) հանրությունից ավանդների և վճարման ենթակա այլ միջոցների ընդունումը,
- (b) բոլոր տեսակի փոխատվությունների տրամադրումը՝ ներառյալ սպառողական վարկերը, հիպոթեքային վարկերը, ֆակտորինգը և առևտրային գործարքի ֆինանսավորումը,
- (c) ֆինանսական լիզինգը,
- (d) վճարային և դրամական փոխանցումների բոլոր ծառայությունները՝ ներառյալ վարկային, վճարային և դեբետային քարտերը, ճամփորդական չեկերը և բանկային վճարագրերը,

- (e) երաշխիքներն ու հանձնառությունները,
- (f) հետևյալի առքուվաճառքը՝ իր հաշվին կամ հաճախորդների հաշվին, բորսայում, արտաբորսայական շուկայում կամ այլ կերպ.
 - (i) դրամական շուկայի գործիքներ (այդ թվում՝ չեկեր, մուրհակներ, ավանդային հավաստագրեր),
 - (ii) արտարժույթ,
 - (iii) ածանցյալ գործիքներ՝ ներառելով ֆյուչերսներն ու օպցիոնները՝ սակայն չսահմանափակվելով դրանով,
 - (iv) փոխարժույթի և տոկոսադրույքի հետ կապված գործիքներ, այդ թվում՝ այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ սվոպերը, դրույքաչափի վերաբերյալ ֆորվարդային համաձայնագրերը,
 - (v) փոխանցելի արժեթղթեր, և
 - (vi) այլ փոխանցելի գործիքներ և ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝ ձուլածո.
- (g) արժեթղթերի բոլոր տեսակների թողարկմանը մասնակցությունը՝ ներառյալ երաշխավորմանը և տեղաբաշխմանը որպես գործակալ (հանրային կամ մասնավոր) մասնակցությունը և այդպիսի թողարկման հետ կապված ծառայությունների տրամադրումը,
- (h) դրամական միջնորդությունը,
 - (i) ակտիվների կառավարումը, ինչպես օրինակ՝ կանխիկ միջոցների կամ պորտֆելի կառավարումը, կոլեկտիվ ներդրումների կառավարման բոլոր տեսակները, կենսաթոշակային ֆոնդի կառավարումը, պահառության, դեպոզիտար և տրաստային ծառայությունները,
 - (j) ֆինանսական ակտիվների, այդ թվում՝ արժեթղթերի, ածանցյալ գործիքների և այլ փոխանցելի գործիքների համար վճարային և քլիրինգային ծառայությունները,

(k) ֆինանսական տեղեկությունների տրամադրումն ու փոխանցումը, ինչպես նաև ֆինանսական տվյալների մշակումը և հարակից ծրագրային ապահովումը, և

(l) խորհրդատվական, միջնորդային և այլ օժանդակ ֆինանսական ծառայությունները՝ սույն պարբերության մեջ նշված բոլոր գործողությունների առնչությամբ՝ ներառյալ վարկային տեղեկատվությունն ու վերլուծությունը, ներդրումների և պորտֆելի վերաբերյալ ուսումնասիրությունն ու խորհրդատվությունը, ձեռքբերման, կորպորատիվ վերակազմակերպման և ռազմավարության վերաբերյալ խորհրդատվությունը:

5. Սույն ենթաբաժնի նպատակներով՝

(a) «ֆինանսական ծառայություն մատուցող» նշանակում է Կողմի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը ցանկանում է մատուցել կամ մատուցում է ֆինանսական ծառայություններ, ինչը սակայն չի ներառում հանրային սուբյեկտներին.

(b) «հանրային սուբյեկտ» նշանակում է՝

(i) Կողմի կառավարություն, կենտրոնական բանկ կամ ֆինանսական մարմին, կամ Կողմի սեփականությունը հանդիսացող կամ դրա հսկողության ներքո գործող սուբյեկտ, որն ըստ էության իրականացնում է կառավարության գործառույթներ կամ կառավարության նպատակներով գործունեություն՝ բացառությամբ այն սուբյեկտի, որն ըստ էության առևտրային պայմաններով ֆինանսական ծառայություններ է մատուցում, կամ

(ii) մասնավոր սուբյեկտ, որն այդ գործառույթները կատարելիս իրականացնում է սովորաբար կենտրոնական բանկի կամ ֆինանսական մարմնի կողմից իրականացվող գործառույթներ, և

(c) «ֆինանսական նոր ծառայություն» նշանակում է ֆինանսական բնույթի ծառայություն, այդ թվում՝ ծառայություններ, որոնք առնչվում են այն գոյություն ունեցող կամ նոր պրոդուկտին կամ այդ պրոդուկտը մատուցելու եղանակին, որոնք Կողմի տարածքում չեն մատուցվում որևէ ֆինանսական ծառայություն մատուցողի կողմից, որոնք սակայն մատուցվում են մյուս Կողմի տարածքում:

ՀՈԴՎԱԾ 182

Պրուդենցիալ կարգավորում

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող խոչընդոտել Կողմին պրուդենցիալ նպատակներով ընդունել կամ շարունակել կիրառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝
 - (a) ներդրողների, ավանդատուների, ապահովագրված անձանց կամ այն անձանց պաշտպանությունը, որոնց նկատմամբ ֆինանսական ծառայություն մատուցողը կրում է ֆիդուցիար պարտասխանատվություն, կամ
 - (b) դրա ֆինանսական համակարգի ամբողջականության և կայունության ապահովումը:
2. Այդ միջոցներն ավելի ծանրաբեռնող չեն կարող լինել, քան անհրաժեշտ է դրանցով հետապնդվող նպատակներին հասնելու համար:
3. Սույն Համաձայնագրում նշված ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի Կողմից պահանջվի բացահայտել անհատ սպառողների գործերի կամ հաշիվների վերաբերյալ տեղեկություններ կամ հանրային սուբյեկտների տիրապետության տակ գտնվող որևէ գաղտնի կամ ծառայողական տեղեկություն:

ՀՈԴՎԱԾ 183

Արդյունավետ և թափանցիկ կարգավորումը

1. Կողմերից յուրաքանչյուրը գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը, որպեսզի շահագրգիռ բոլոր անձանց նախապես տրամադրի իր կողմից ընդունման համար ներկայացված ընդհանուր կիրառության որևէ միջոցի մասին տեղեկություններ՝ շահագրգիռ անձանց այդ միջոցների վերաբերյալ դիտարկումներ անելու հնարավորություն ընձեռելու նպատակով: Այդ ներկայացված միջոցները տրամադրվում են՝
 - (a) պաշտոնական հրապարակման միջոցով, կամ

(b) գրավոր կամ էլեկտրոնային այլ ձևով:

2. Յուրաքանչյուր Կողմ շահագրգիռ անձանց համար հասանելի է դարձնում ֆինանսական ծառայությունների մատուցման վերաբերյալ դիմումները լրացնելու հետ կապված իր պահանջները:

Դիմումատուի պահանջով տվյալ Կողմը դիմումատուին տեղեկացնում է նրա դիմումի կարգավիճակի մասին: Եթե տվյալ Կողմը դիմումատուից լրացուցիչ տեղեկատվություն է պահանջում, ապա այդ մասին պետք է դիմումատուին տեղեկացնի առանց անհիմն ուշացումների:

3. Յուրաքանչյուր Կողմ գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը՝ ապահովելու համար իր տարածքում ֆինանսական ծառայությունների բնագավառն ու հարկերից խուսափելու դեմ պայքարը կարգավորելու և վերահսկելու հետ կապված միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտների իրագործումն ու կիրառումը: Միջազգայնորեն համաձայնեցված այդպիսի ստանդարտներից են, *inter alia*,

(a) Բազելյան կոմիտեի «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքները»,

(b) Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի «Ապահովագրության հիմնարար սկզբունքները»,

(c) Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության «Արժեթղթերի կարգավորման նպատակներն ու սկզբունքները»,

(d) ՏՀԶԿ-ի «Հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման համաձայնագիրը»,

(e) G20-ի «Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման մասին հայտարարությունը», և

(f) Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական գործողությունների հանձնախմբի «Փողերի լվացման վերաբերյալ քառասուն առաջարկները» և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ ուղղված թվով ինը հատուկ առաջարկությունները:

4. Կողմերը պետք է հաշվի առնեն G7 երկրների ֆինանսների նախարարների կողմից հրապարակված «Տեղեկատվության փոխանակման տասը հիմնական սկզբունքները» և պետք է գործադրեն բոլոր հնարավոր ջանքերը՝ այդ սկզբունքներն իրենց միջև կիրառելու համար:

ՀՈԴՎԱԾ 184

Ֆինանսական նոր ծառայությունները

Յուրաքանչյուր Կողմ մեկ այլ Կողմի ֆինանսական ծառայություններ մատուցողին թույլ է տալիս մատուցել ցանկացած այնպիսի ֆինանսական նոր ծառայություններ, որոնք իրենց տեսակով նման են այն ծառայություններին, որոնք Կողմն իր սեփական ֆինանսական ծառայություններ մատուցողներին թույլ կտար մատուցել այդպիսի հանգամանքներում՝ իր ներպետական օրենսդրությանը համապատասխան: Կողմը կարող է որոշել իրավական այն ձևը, որով ծառայությունը կարող է մատուցվել և կարող է ծառայությունը մատուցելու համար թույլտվություն պահանջել: Այն դեպքում, երբ առկա է այդպիսի թույլտվության պահանջ, ապա ողջամիտ ժամկետում կայացվում է որոշում և թույլտվությունը կարող է մերժվել միայն 182-րդ հոդվածին համապատասխան պրուդենցիալ նկատառումներով:

ՀՈԴՎԱԾ 185

Տվյալների մշակումը

1. Յուրաքանչյուր Կողմ մեկ այլ Կողմի՝ ֆինանսական ծառայություն մատուցողին թույլ է տալիս էլեկտրոնային կամ այլ ձևով տեղեկություններ փոխանցել իր տարածք կամ իր տարածքից, որպեսզի հնարավոր լինի իրականացնել տվյալների մշակում, եթե այդպիսի ֆինանսական ծառայություն մատուցողի գործունեության բնականոն ընթացքի ժամանակ նման մշակում իրականացնելու անհրաժեշտություն կա:

2. 1-ին պարբերության համաձայն՝ ոչինչ չի խոչընդոտում Կողմի՝ անձնական տվյալները պաշտպանելու և գաղտնիություն պահպանելու իրավունքի իրացումն այնքան ժամանակ, քանի դեռ այդ իրավունքը չի օգտագործվում սույն Համաձայնագիրը շրջանցելու համար:

3. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է կամ շարունակում է կիրառել անձնական կյանքի և մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար համարժեք երաշխիքներ՝ կապված, հատկապես, անձնական տվյալների փոխանցման հետ:

ՀՈԴՎԱԾ 186

Հատուկ բացառությունները

1. Սույն գլխում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որպեսզի Կողմին, այդ թվում՝ իր հանրային սուբյեկտներին, արգելվի իր տարածքում բացառիկ իրավունքներով իրականացնել գործողություններ կամ մատուցել ծառայություններ, որոնք հասարակության կենսաթոշակային ապահովման պլանի կամ սոցիալական անվտանգության՝ օրենքով սահմանված համակարգի մաս են կազմում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործողությունները կարող են իրականացվել, Կողմի ներպետական կարգավորմանը համապատասխան, ֆինանսական ծառայություն մատուցողների կողմից՝ հանրային սուբյեկտների կամ մասնավոր հաստատությունների հետ մրցակցային հիմունքներով:

2. Սույն Համաձայնագիրը չի վերաբերում կենտրոնական բանկի կամ ֆինանսական մարմնի կամ որևէ այլ հանրային սուբյեկտի կողմից դրամավարկային կամ արժույթի կարգավորման ոլորտներում իրականացվող գործունեությանը:

3. Սույն գլխում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ Կողմին, այդ թվում՝ իր հանրային սուբյեկտներին, արգելվի իր տարածքում բացառիկ իրավունքներով իրականացնել գործունեություն կամ մատուցել ծառայություններ Կողմի կամ դրա հանրային սուբյեկտների ֆինանսական միջոցների հաշվին կամ դրանց երաշխիքով կամ դրանք օգտագործելով:

ՀՈԴՎԱԾ 187

Ինքնակարգավորվող կազմակերպությունները

Եթե Կողմը պահանջում է ինքնակարգավորվող որևէ կազմակերպության, արժեթղթերի կամ ֆյուչերսների բորսային կամ շուկային, քլիրինգային կազմակերպություններին կամ որևէ այլ կազմակերպությանը կամ ասոցիացիային անդամակցություն, մասնակցություն կամ հասանելիություն, որպեսզի մյուս Կողմի ֆինանսական ծառայություններ մատուցողները կարողանան ֆինանսական ծառայությունները մատուցել տվյալ Կողմի ֆինանսական ծառայություն մատուցողների հետ հավասար հիմունքներով, կամ եթե Կողմն այդպիսի սուբյեկտներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրում է ֆինանսական ծառայություններ մատուցելու հետ կապված արտոնություններ կամ առավելություններ, ապա Կողմն ապահովում է 144-րդ և 150-րդ հոդվածներում նշված պարտավորությունների կատարումը:

ՀՈԴՎԱԾ 188

Քլիրինգային և վճարային համակարգերը

144-րդ և 150-րդ հոդվածներում նշված ազգային ռեժիմ տրամադրող պայմաններին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի՝ իր տարածքում հիմնադրված ֆինանսական ծառայություն մատուցողներին ընձեռում է հանրային սուբյեկտների կողմից գործարկվող վճարային և քլիրինգային համակարգերի, ինչպես նաև սովորական բիզնեսի բնականոն ընթացքի ժամանակ հասանելի պետական ֆինանսավորման և վերաֆինանսավորման գործիքներին հասանելիության հնարավորություն: Սույն հոդվածը նախատեսված չէ Կողմի կենտրոնական բանկի կողմից տրամադրվող փոխառություններին հասանելիություն ապահովելու համար:

ՀՈԴՎԱԾ 189

Ֆինանսական կայունությունը և ֆինանսական ծառայությունների կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում

Կողմերն ընդունում են ֆինանսական ծառայությունների համապատասխան կարգավորման կարևորությունը՝ ֆինանսական կայունություն, արդար և արդյունավետ շուկաներ և ներդրողների, ավանդապահների, ապահովագրված անձանց և այն անձանց պաշտպանությունն ապահովելու նպատակով, որոնց նկատմամբ ֆինանսական ծառայություն մատուցողը կրում է ֆիդուցիար պատասխանատվություն: Ֆինանսական ծառայությունների այդպիսի կարգավորման դեպքում միջազգային լավագույն փորձի չափանիշներն ընդհանուր ուղենիշ են մասնավորապես այն առումով, թե ինչպես են դրանք իրականացվում Եվրոպական միությունում: Այդ համատեքստում, Հայաստանի Հանրապետությունը պետք է համապատասխան ձևով իրականացնի ֆինանսական ծառայությունների իր կարգավորումների մոտարկումը Եվրոպական միության օրենսդրությանը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ VII

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 190

Գործողության ոլորտը և նպատակները

Սույն ենթաբաժնով սահմանվում են միջազգային տրանսպորտային ծառայությունների ազատականացման վերաբերյալ սկզբունքները՝ B, C և D բաժինների համաձայն:

Սահմանումները

1. Սույն ենթաբաժնի և B, C և D բաժինների նպատակներով՝
 - (a) «միջազգային ծովային փոխադրում» ներառում է «դռնից դուռ» և խառը տիպի փոխադրումների գործառնություններ, որը մեկից ավելի փոխադրամիջոցների օգտագործմամբ ապրանքների փոխադրումն է՝ ներառյալ ծովային հատվածը, մեկ ընդհանուր տրանսպորտային փաստաթղթի հիման վրա և, այս կապակցությամբ, ներառում է փոխադրման այլ եղանակներով փոխադրումներ իրականացնողների հետ ուղիղ կապ հաստատելու իրավունքը.
 - (b) «ծովային բեռների բեռնման և բեռնաթափման ծառայություններ» նշանակում է նավահանգստային բեռնորդ ընկերությունների, այդ թվում՝ տերմինալների օպերատորների, բայց ոչ նավահանգստի աշխատողների կողմից իրականացվող գործողություններ, երբ այս աշխատուժը ձևավորվում է բեռնման և բեռնաթափման աշխատանքներ իրականացնող ընկերություններից և տերմինալների օպերատորներից անկախ: Նշված գործողությունները ներառում են հետևյալ գործողությունների կազմակերպումը և վերահսկումը՝
 - (i) բեռների բեռնումը նավի վրա կամ դրանց բեռնաթափումը նավից,
 - (ii) բեռների ամրացումը կառանաթոկերով կամ դրանց անջատումը կառանաթոկերից,
 - (iii) բեռների ընդունումը (առաքումը) կամ պահպանումը՝ նախքան առաքումը կամ բեռնաթափումից հետո.
 - (c) «մաքսազերծման ծառայություններ» կամ «մաքսային բրոքերների ծառայություններ» նշանակում է մեկ այլ Կողմի անունից ներմուծման, արտահանման կամ բեռների տարանցիկ փոխադրման հետ կապված մաքսային ձևակերպումներ իրականացնելու գործունեություն՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ծառայությունը ծառայություն տրամադրողի հիմնական գործունեությունն է, թե դրան սովորաբար լրացնող ծառայություն.

- (d) «բեռնարկերի տեղակայման և պահեստավորման ծառայություններ» նշանակում է նավահանգստում կամ ցամաքային տարածքում բեռների պահեստավորման գործողություններ՝ դրանք բեռնելու կամ բեռնաթափելու, վերանորոգելու կամ ապրանքներն ուղարկելու համար հասանելի դարձնելու նպատակով.
- (e) «ծովային գործակալության ծառայություններ» նշանակում է գործունեություն, որը ներառում է աշխարհագրական տվյալ տարածքում որպես գործակալ բեռնափոխադրման մեկ կամ ավելի գծերի կամ բեռնափոխադրման ընկերությունների առևտրային շահերը ներկայացնելը՝ հետևյալ նպատակներով՝
- (i) ծովային փոխադրումների և հարակից ծառայությունների շուկայահանում և վաճառք, սակագներ առաջարկելուց մինչև հաշիվ ապրանքագրեր, և ընկերությունների անունից նավաբեռնագրերի տրամադրում, անհրաժեշտ հարակից ծառայությունների ձեռքբերում և վերավաճառք, փաստաթղթերի պատրաստում և բիզնես տեղեկությունների տրամադրում, և
- (ii) նավի պայմանականչը կամ, անհրաժեշտության դեպքում, բեռների տեղափոխումը կազմակերպող ընկերությունների անունից գործելը.
- (f) «բեռնառաքման ծառայություններ» նշանակում է գործունեություն, որը ներառում է բեռն ուղարկողի անունից առաքումը կազմակերպելու և վերահսկելու գործողությունները՝ փոխադրման և հարակից ծառայությունների ձեռքբերման, փաստաթղթերի նախապատրաստման և բիզնես տեղեկությունների տրամադրման միջոցով, և
- (g) «ֆիդերային ծառայություններ» նշանակում է Կողմի տարածքում տեղակայված նավահանգիստների միջև միջազգային բեռների նախնական և դեպի վերջնակետ փոխադրումը ծովով, մասնավորապես՝ բեռնարկերով:

2. Ինչ վերաբերում է միջազգային ծովային փոխադրումներին, ապա Կողմերը պետք է ապահովեն առևտրային հիմունքներով բեռների առանց սահմանափակումների հասանելիության, միջազգային ծովային ծառայություններ մատուցելու ազատության սկզբունքի, ինչպես նաև այդպիսի ծառայություններ մատուցելու շրջանակներում ազգային ռեժիմի արդյունավետ կիրառությունը:

3. Հաշվի առնելով միջազգային ծովային փոխադրումների շրջանակում Կողմերի միջև ազատականացման ներկա մակարդակը՝ յուրաքանչյուր Կողմ պետք է՝

- (a) արդյունավետորեն կիրառի միջազգային ծովային շուկաների առանց սահմանափակումների հասանելիության և կոմերցիոն ու ոչ խտրական հիմունքներով առևտրի սկզբունքը, և
- (b) մյուս Կողմի դրոշը կրող կամ մյուս Կողմի ծառայություն մատուցողների կողմից գործարկվող նավերին առաջարկի ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան առաջարկում է իր սեփական նավերին կամ երրորդ երկրի նավերին՝ կախված այն հանգամանքից, թե դրանցից որն է առավել բարենպաստ՝ կապված, *inter alia*, նավահանգիստների հասանելիության, նավահանգիստների ենթակառուցվածքից և ծառայություններից օգտվելու և ծովային օժանդակ ծառայություններից օգտվելու, ինչպես նաև դրանց հետ կապված՝ տուրքերի և վճարների, մաքսային հարմարությունների և բեռնման ու բեռնաթափման համար նախատեսված նավամատուցների, հարմարանքների տրամադրման հետ:

4. 3-րդ պարբերությունում նշված սկզբունքները կիրառելիս յուրաքանչյուր Կողմ՝

- (a) երրորդ երկրների հետ միջազգային ծովային փոխադրման ծառայությունների վերաբերյալ կնքվող հետագա համաձայնագրերում բեռների փոխադրման գործողությունները բաշխելու վերաբերյալ կետեր չի նշում՝ ներառյալ չոր և հեղուկ բեռներն ու զծային փոխադրումները, իսկ նախկինում կնքված համաձայնագրերում բեռների փոխադրման գործողությունները բաշխելու վերաբերյալ կետերի առկայության դեպքում՝ ողջամիտ ժամկետներում դադարեցնում է դրանք, և
- (b) սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո վերացնում է ցանկացած միակողմանի միջոց և վարչական, տեխնիկական և այլ խոչընդոտ կամ զերծ է մնում այդպիսի խոչընդոտներ ստեղծելուց, որոնք կարող են քողարկված սահմանափակումներ լինել կամ խտրական ազդեցություն ունենալ միջազգային ծովային փոխադրումների ոլորտում ծառայություններն ազատ մատուցելու վրա:

5. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի՝ միջազգային ծովային փոխադրումների ծառայություններ մատուցողներին թույլ է տալիս իր տարածքում ունենալ հաստատություն՝ հիմնադրմանը և շահագործմանը ներկայացվող ոչ պակաս բարենպաստ պայմաններով, քան այն պայմանները, որոնք տրամադրվել են իր երկրի կամ երրորդ երկրի ծառայություն մատուցողներին՝ պայմանավորված այն հանգամանքով, թե դրանցից որն է առավել բարենպաստ:

6. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի՝ միջազգային ծովային փոխադրումների ծառայություններ մատուցողների համար ողջամիտ և ոչ խտրական ժամկետներով ու պայմաններում հասանելի է դարձնում հետևյալ ծառայությունները՝ նավահանգստում՝ նավարկում, քարշակում և օգնություն քարշակելիս, լիցքավորում, մթերքներով, վառելիքով և ջրով ապահովում, աղբահանություն և բալաստային թափոնների հեռացում, նավահանգստի կապիտանի ծառայություններ, նավիգացիոն սարքավորումներ, խարսխակայան, նավակայան և կառանման ծառայություններ ինչպես նաև ափամերձ գործառնական ծառայություններ, որոնք կարևոր են նավի շահագործման համար, այդ թվում՝ կապ, ջրամատակարարում և էլեկտրամատակարարում:

7. Յուրաքանչյուր Կողմ թույլատրում է այնպիսի սարքավորումների տեղաշարժը, ինչպիսիք են դատարկ բեռնարկղերը, որոնք, որպես բեռ, փոխհատուցման դիմաց չեն փոխադրվում Հայաստանի Հանրապետության նավահանգիստների կամ անդամ պետության նավահանգիստների միջև:

8. Յուրաքանչյուր Կողմ, ըստ իրավասու մարմնի կողմից տրված թույլտվության, մյուս Կողմի միջազգային ծովային փոխադրումների ծառայություններ մատուցողներին թույլ է տալիս մատուցել ֆիդերային ծառայություններ իրենց ազգային նավահանգիստների միջև:

ՀՈՒՎԱԾ 192

Աստիճանական մոտարկումը

Կողմերն ընդունում են տրանսպորտային ծառայությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրոպական Միության համապատասխան օրենսդրությանն աստիճանական մոտարկման կարևորությունը:

ԲԱԺԻՆ Բ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

ԵՆԹԱԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 193

Նպատակներն ու սկզբունքները

1. Կողմերը, ընդունելով, որ էլեկտրոնային առևտուրը բարձրացնում է առևտրի հնարավորությունները բազմաթիվ ոլորտներում, նպատակ ունեն խթանելու իրենց միջև էլեկտրոնային առևտրի զարգացումը՝ մասնավորապես համագործակցելով էլեկտրոնային առևտրի վերաբերյալ սույն գլխով նախատեսված դրույթների շրջանակներում:
2. Կողմերը համաձայնում են, որ էլեկտրոնային առևտրի զարգացումը պետք է լիարժեք ձևով համապատասխանի տվյալների պաշտպանության միջազգային ամենաբարձր ստանդարտներին, որպեսզի հնարավոր լինի ապահովել էլեկտրոնային առևտրով զբաղվողների տվյալների գաղտնիությունը:
3. Կողմերը էլեկտրոնային փոխանցումները C բաժնի իմաստով պետք է դիտարկեն որպես ծառայությունների մատուցում, որի համար մաքսատուրքեր չեն վճարվում:

Էլեկտրոնային առևտրի կարգավորիչ ասպեկտները

1. Կողմերն իրականացնում են երկխոսություն էլեկտրոնային առևտրի շրջանակներում բարձրացված կարգավորիչ հարցերի վերաբերյալ: Երկխոսությունը, *inter alia*, վերաբերում է հետևյալ հարցերին՝

(a) հանրությանը տրված էլեկտրոնային ստորագրությունների հավաստագրերի ճանաչում և հավաստագրման միջսահմանային ծառայությունների դյուրացում,

(b) միջնորդ ծառայություն մատուցողների պատասխանատվություն՝ կապված տեղեկությունների փոխանցման կամ պահման հետ՝

(i) անցանկալի էլեկտրոնային առևտրային հաղորդագրությունների վերաբերյալ մոտեցումների ձևավորում, և

(ii) էլեկտրոնային առևտրի շրջանակներում սպառողների պաշտպանություն, և

(c) էլեկտրոնային առևտրի զարգացման հետ առնչություն ունեցող ցանկացած այլ հարց:

2. Այդպիսի երկխոսությունը կարող է իրականացվել 1-ին պարբերության մեջ նշված հարցերի վերաբերյալ յուրաքանչյուր Կողմի օրենսդրության, ինչպես նաև այդ օրենսդրության կիրարկման վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով:

ԵՆԹԱԲԱԺԻՆ II

ՄԻՋՆՈՐԴ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 195

Միջնորդների ծառայություններից օգտվելը

Կողմերն ընդունում են, որ երրորդ կողմերը կարող են իրենց համապատասխան ներպետական օրենսդրությունը խախտող գործողությունների հետ կապված օգտվել միջնորդների ծառայություններից: Հաշվի առնելով այդ հնարավորությունը՝ յուրաքանչյուր Կողմ պետք է միջնորդ ծառայություններ մատուցողների համար ընդունի կամ շարունակի կիրառել սույն ենթաբաժնում նշված պատասխանատվության միջոցները:

ՀՈԴՎԱԾ 196

Միջնորդ ծառայություն մատուցողների պատասխանատվությունը.
«զուտ փոխանցում»

1. Այն դեպքում, երբ մատուցվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, որը ներառում է ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկությունների՝ հաղորդակցության ցանցով փոխանցում կամ հաղորդակցության ցանցի հասանելիության ապահովում, յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի ծառայություն մատուցողը պատասխանատվություն չկրի՝ փոխանցված տեղեկությունների համար՝ պայմանով, որ ծառայություն մատուցողը՝

- (a) չի նախաձեռնում տեղեկությունների փոխանցումը,
- (b) չի ընտրում փոխանցված տեղեկությունները ստացողին, և

(c) չի ընտրում կամ փոփոխում փոխանցվող տեղեկությունները:

2. 1-ին պարբերության մեջ նշված տեղեկությունների փոխանցումը և հասանելիության ապահովումը ներառում է փոխանցված տեղեկությունների ավտոմատ, միջանկյալ և ժամանակավոր պահպանումը, քանի որ այն կատարվում է միայն հաղորդակցության ցանցում տեղեկությունների փոխանցման նպատակով և պայմանով, որ տեղեկությունները չեն պահվում ավելի երկար ժամանակով, քան անհրաժեշտ է փոխանցման համար:

3 Սույն հոդվածը, յուրաքանչյուր Կողմի իրավական համակարգերին համապատասխան, չի սահմանափակում դատարանի կամ վարչական իշխանության իրավասությունը՝ պահանջելու վերացնել կամ կանխել ծառայություն մատուցողի կողմից թույլ տրված իրավախախտումը:

ՀՈՒՎԱԾ 197

Միջնորդ ծառայություն մատուցողների պատասխանատվությունը. «շտեմում»

1. Այն դեպքում, երբ մատուցվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, որը ներառում է ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկությունների՝ հաղորդակցության ցանցով փոխանցում, յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի ծառայություն մատուցողը պատասխանատվություն չկրի այդ տեղեկությունների ավտոմատ, միջանկյալ և ժամանակավոր պահպանման համար, որի կատարման միակ նպատակը ծառայություն ստացողի պահանջով տեղեկությունների հետագա փոխանցումն է՝ պայմանով, որ ծառայություն մատուցողը՝

(a) չի փոփոխում տեղեկությունները,

(b) կատարում է տեղեկությունների հասանելիության վերաբերյալ պայմանները,

- (c) պահպանում է տեղեկությունների թարմացմանը վերաբերող՝ տվյալ ոլորտում լայն ճանաչում ունեցող և կիրառվող կանոնները,
- (d) տեղեկությունների օգտագործման վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու համար չի միջամտում լայն ճանաչում ունեցող և տվյալ ոլորտում կիրառվող տեխնոլոգիայի օրինական օգտագործմանը, և
- (e) գործում է արագ՝ հանելու համար իր կողմից պահված տեղեկությունները կամ արգելափակելու դրանց հասանելիությունը, երբ տեղեկանա, որ փոխանցման առաջնային աղբյուրում տեղեկությունները հանվել են ցանցից կամ արգելափակվել է դրանց հասանելիությունը, կամ դատարանը կամ վարչական մարմինը կարգադրել են տեղեկությունների հանումը կամ դրանց հասանելիության արգելափակումը:

2. Սույն հոդվածը չի սահմանափակում դատարանի կամ վարչական մարմնի հնարավորությունը՝ պահանջելու վերացնել կամ կանխել ծառայություն մատուցողի կողմից թույլ տված իրավախախտումը՝ յուրաքանչյուր Կողմի իրավական համակարգին համապատասխան:

ՀՈՒՎԱԾ 198

Միջնորդ ծառայություն մատուցողների պատասխանատվությունը. «հոսթինգ»

1. Այն դեպքում, երբ մատուցվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, որը ներառում է ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկությունների պահպանում, Կողմերն ապահովում են, որպեսզի ծառայություն մատուցողը պատասխանատվություն չկրի ծառայություն ստացողի խնդրանքով պահված տեղեկությունների համար՝ պայմանով, որ ծառայություն մատուցողը.

- (a) տեղյակ չէ կամ չունի տեղեկություններ անօրինական գործողության մասին և, ինչ վերաբերում է վնասի հատուցման պահանջին, ապա տեղեկացված չէ այն փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք վկայում են անօրինական գործողության կամ տեղեկությունների մասին, կամ

(b) նման տեղեկություն ստանալով, արագ գործում է՝ տեղեկությունները հանելու կամ դրանց հասանելիությունը արգելափակելու նպատակով:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում, եթե ծառայություն ստացողը գործում է ծառայություն մատուցողի լիազորության շրջանակներում կամ վերահսկողության ներքո:

3. Սույն հոդվածը չի սահմանափակում դատարանի կամ վարչական իշխանության հնարավորությունը յուրաքանչյուր Կողմի իրավական համակարգերին համապատասխան պահանջելու ծառայություն մատուցողից վերացնել կամ կանխել թույլ տրված իրավախախտումը, կամ Կողմի հնարավորությունը՝ սահմանելու տեղեկությունների հանումը կամ դրանց մատչելիության կասեցումը կարգավորող ընթացակարգերը:

ՀՈԴՎԱԾ 199

Վերահսկման ընդհանուր պարտականություն չսահմանելը

1. Կողմերը ծառայություն մատուցողների համար չեն սահմանում նրանց կողմից 196-րդ, 197-րդ և 198-րդ հոդվածներով կարգավորվող ծառայություններ մատուցելիս փոխանցվող կամ պահվող տեղեկությունների բովանդակության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ անօրինական գործողությունների մասին վկայող փաստեր կամ հանգամանքներ որոնելու ընդհանուր պարտականություն:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողների համար սահմանել պարտականություններ՝ ժամանակին տեղեկացնելու իրավասու պետական մարմիններին՝ ենթադրյալ անօրինական գործողությունների և նրանց ծառայությունը ստացողների կողմից տրամադրված տեղեկությունների մասին, կամ պարտականություններ՝ իրավասու մարմիններին, վերջիններիս պահանջով, տրամադրելու այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավոր են դարձնում նույնականացնել նրանց ծառայությունը ստացողների ինքնությունը, որոնց հետ նրանք կնքել են տեղեկությունները պահպանելու պայմանագրեր:

ԲԱԺԻՆ Գ

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 200

Ընդհանուր բնույթի բացառությունները

1. Չհակասելով սույն Համաձայնագրով նախատեսված ընդհանուր բացառություններին՝ սույն գլխի դրույթները ենթակա են 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված բացառություններին:

2. Այն պահանջը հաշվի առնելով, որ նման միջոցները չեն կարող կիրառվել այնպես, որ դիտարկվեն որպես կամայական կամ չարդարացված խտրականության միջոց այն երկրների միջև, որտեղ առկա են նույնանման պայմաններ, կամ հիմնադրման կամ ծառայությունների միջսահմանային մատուցման հետ կապված թաքնված սահմանափակում, սույն գլխում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ որևէ Կողմի խոչընդոտի ընդունել կամ իրականացնել հետևյալ միջոցները, որոնք՝
 - (a) անհրաժեշտ են հանրային անվտանգությունը կամ հանրային բարոյականությունը պաշտպանելու կամ հանրային կարգը պահպանելու համար,
 - (b) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար,
 - (c) առնչվում են սպառվող բնական ռեսուրսներին, եթե այդպիսի միջոցները կիրառվում են Կողմի ձեռնարկատերերին ներկայացվող կամ ծառայությունների ներպետական մատուցման կամ սպառման հետ կապված սահմանափակումների հետ համատեղ,
 - (d) անհրաժեշտ են ազգային գեղարվեստական, պատմական գանձերի կամ հնագիտական արժեքների պաշտպանության համար,

- (e) անհրաժեշտ են՝ ապահովելու համար համապատասխանությունը սույն գլխի դրույթներին չհակասող օրենքների կամ կանոնակարգերի հետ, այդ թվում՝ այն դրույթների հետ, որոնք վերաբերում են՝
- (i) խաբեության և խարդախության գործելակերպը կամ պայմանագրերը չկատարելու արդյունքում առաջացող հետևանքները կանխարգելելուն,
 - (ii) անհատների անձնական կյանքի պաշտպանությանը՝ կապված անձնական տվյալների մշակման ու տարածման և անհատական գրառումների ու հաշիվների գաղտնիության պաշտպանության հետ, կամ
 - (iii) ապահովությանը, կամ

(f) չեն համապատասխանում 144-րդ և 150-րդ հոդվածներին՝ պայմանով, որ ռեժիմների տարբերությունը պայմանավորված է մյուս Կողմի տնտեսական գործունեության, ձեռնարկատերերի կամ ծառայություններ մատուցողների նկատմամբ արդյունավետ կամ խելամիտ ձևով ուղղակի հարկերի սահմանմամբ և հավաքագրմամբ¹:

3. Սույն գլուխը և սույն Համաձայնագրի VIII Հավելվածը չեն կիրառվում Կողմերի սոցիալական անվտանգության համապատասխան համակարգերի նկատմամբ կամ յուրաքանչյուր Կողմի տարածքում իրականացվող այն գործողությունների նկատմամբ, որոնք, թեկուզ երբեմն, կապված են պետական մարմնի լիազորություններ իրականացնելու հետ:

¹ Ուղղակի հարկերի արդյունավետ կամ խելամիտ ձևով սահմանմանն ու հավաքագրմանն ուղղված միջոցները ներառում են Կողմի իր հարկային համակարգի շրջանակներում ձեռնարկած միջոցները, որոնք՝

- (i) կիրառվում են ոչ ռեզիդենտ ձեռնարկատերերի և ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ ռեզիդենտի համար հարկային պարտավորությունը սահմանվում է Կողմի տարածքում աղբյուր հանդիսացող կամ այդ տարածքում տեղակայված հարկման օբյեկտների մասով, կամ
 - (ii) կիրառվում են ոչ ռեզիդենտների նկատմամբ՝ ապահովելու համար Կողմի տարածքում հարկերի սահմանումն ու հավաքագրումը,
 - (iii) կիրառվում են ոչ ռեզիդենտների կամ ռեզիդենտների նկատմամբ՝ կանխելու համար հարկերից օրինական ճանապարհով խուսափելը կամ հարկային օրենսդրությունը, այդ թվում՝ օրենքի պահպանման միջոցները խախտելը,
 - (iv) կիրառվում են մյուս Կողմի տարածքում կամ տարածքից մատուցվող ծառայությունների սպառողների նկատմամբ՝ ապահովելու համար Կողմի տարածքում ստացված աղբյուրներից այդպիսի սպառողների նկատմամբ հարկեր սահմանելն ու դրանք հավաքագրելը,
 - (v) տարբերակում են համաշխարհային մասշտաբով հարկման օբյեկտների մասով հարկման ենթակա ձեռնարկատերերին և ծառայություններ մատուցողներին այլ ձեռնարկատերերից և ծառայություն մատուցողներից՝ հաշվի առնելով նրանց միջև առկա հարկման բազաների տարբերությունը, կամ
 - (vi) սահմանում, բաշխում կամ բաժանում են ռեզիդենտ անձանց կամ մասնաճյուղերի կամ փոխկապակցված անձանց կամ էլ միևնույն անձի կողմից ղեկավարվող մասնաճյուղերի միջև եկամուտը, շահույթը, հավելվածը, կորուստները, նվազեցումներն ու պարտավորությունները՝ Կողմի հարկման բազան պահպանելու նպատակով:
- (f) կետի մեջ և սույն ծանոթագրության մեջ նշված հարկային տերմիններն ու հասկացությունները մեկնաբանվում են տվյալ միջոցը նախաձեռնող Կողմի ներպետական օրենսդրությամբ նախատեսված հարկային սահմանումներին և հասկացություններին, կամ էլ համարժեք կամ նույնանման սահմանումներին և հասկացություններին համապատասխան:

ՀՈՒՎԱԾ 201

Հարկման միջոցները

Սույն գլխին համապատասխան տրամադրված առավել բարենպաստության ռեժիմը չի տարածվում հարկման այն ռեժիմի վրա, որ Կողմերը տրամադրում են կամ հետագայում կտրամադրեն այն համաձայնագրերի հիման վրա, որոնք կրկնակի հարկումից խուսափելու նպատակով կնքվել են Կողմերի միջև:

ՀՈՒՎԱԾ 202

Անվտանգության նկատառումներով արվող բացառությունները

Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որպեսզի՝

- (a) որևէ Կողմից պահանջվի այնպիսի տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է այդ Կողմի անվտանգության էական շահերին,
- (b) խոչընդոտի որևէ Կողմի այնպիսի գործողություններ ձեռնարկելը, որոնք այդ Կողմն իր անվտանգության էական շահերի պաշտպանության համար համարում է անհրաժեշտ՝
 - (i) զենքի, զինամթերքի կամ ռազմական գույքի արտադրության կամ առևտրի հետ կապված,
 - (ii) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ռազմական հաստատության մատակարարման նպատակով իրականացված տնտեսական գործունեության հետ կապված,

- (iii) տրոհվող և ջերմամիջուկային նյութերի կամ այն նյութերի հետ կապված, որոնցից պատրաստվել են դրանք, կամ
 - (iv) միջազգային հարաբերություններում պատերազմի ժամանակ կամ այլ արտակարգ իրավիճակում իրականացված, կամ
- (c) խոչընդոտի Կողմի կողմից միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման նպատակներով ստանձնած պարտավորությունների համաձայն գործողություններ ձեռնարկելը:

ԲԱԺԻՆ Ի

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 203

Դիտարկումը

Երկկողմ ներդրումները դյուրացնելու նպատակով Կողմերը, ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մտնելուց երեք տարի հետո և, այդուհետ՝ պարբերաբար, համատեղ դիտարկում են ներդրումային միջավայրն ու ներդրումների վերաբերյալ իրավական դաշտը: Այդ դիտարկման հիման վրա Կողմերը քննարկում են բանակցություններ սկսելու հնարավորությունը՝ սույն Համաձայնագիրը ներդրումների, այդ թվում՝ ներդրումների պաշտպանության վերաբերյալ դրույթներով լրացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 6

ԸՆԹԱՑԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ

ՀՈԴՎԱԾ 204

Ընթացիկ վճարումները

Կողմերը չպետք է կիրառեն որևէ սահմանափակում և պետք է թույլ տան Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվին ցանկացած վճարման կամ փոխանցման կատարում ազատ փոխարկելի արժույթով և Միջազգային արժութային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 205

Կապիտալի տեղաշարժը

1. Կապիտալի և վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի հետ կապված գործարքների առնչությամբ Կողմերը, սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, ապահովում են ընդունող երկրի օրենսդրության համաձայն և 5-րդ գլխի դրույթներին համապատասխան կատարված ուղղակի ներդրումներին¹ առնչվող կապիտալի ազատ տեղաշարժը և այդ ներդրված կապիտալի ու դրա արդյունքում ստացված ցանկացած եկամտի վճարումը կամ ռեպատրիացիան:

¹ Ներառյալ ուղղակի ներդրումների հետ կապված անշարժ գույքի ձեռքբերումը:

2. 1-ին պարբերությամբ չկարգավորվող՝ կապիտալի և վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի վերաբերյալ գործարքների առնչությամբ յուրաքանչյուր Կողմ, սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից և չհակասելով սույն Համաձայնագրի մյուս դրույթներին, ապահովում է հետևյալի հետ կապված կապիտալի ազատ տեղաշարժը.

- (a) այն առևտրային գործարքների, այդ թվում՝ ծառայությունների մատուցման հետ կապված վարկեր, որոնցում մասնակցություն ունի Կողմերից մեկի ռեզիդենտը,
- (b) մյուս Կողմի ներդրողների կողմից վերցված բանկային փոխառություններ և վարկեր, և
- (c) իրավաբանական անձի կապիտալում մասնակցություն, ինչպես սահմանված է 142-րդ հոդվածով՝ չունենալով կայուն տնտեսական կապեր հաստատելու կամ պահպանելու մտադրություն:

3. Չհակասելով սույն Համաձայնագրի մյուս դրույթներին՝ Կողմերը Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների միջև կապիտալի տեղաշարժի ու ընթացիկ վճարումների համար չպետք է սահմանեն որևէ նոր սահմանափակում և գործող կարգավորումները չպետք է դարձնեն էլ ավելի սահմանափակող:

ՀՈԴՎԱԾ 206

Բացառությունները

Այն պահանջը հաշվի առնելով, որ այդպիսի միջոցները չեն կիրառվում այնպիսի ձևով, որը կհամարվեր կամայական կամ անարդարացի խտրականության միջոց այն երկրների միջև, որտեղ առկա են նույնանման պայմաններ, կամ քողարկված սահմանափակում՝ կապված կապիտալի տեղաշարժի հետ, սույն գլխում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ որևէ Կողմի կողմից այն միջոցների ընդունմանը կամ իրականացմանը, որոնք՝

- (a) անհրաժեշտ են հանրային անվտանգությունը, հանրային բարոյականությունը պաշտպանելու կամ հանրային կարգը պահպանելու համար,
- (b) անհրաժեշտ են ապահովելու համար համապատասխանությունը այն օրենքների կամ կարգավորումների հետ, որոնք չունեն անհամապատասխանություն սույն մասի դրույթների հետ այդ թվում՝ այն դրույթների հետ, որոնք վերաբերում են՝
 - (i) քրեական հանցագործությունների, խաբեության և խարդախության գործելակերպի կանխմանը, կամ որոնք անհրաժեշտ են պայմանագրի պարտավորությունների չկատարման հետևանքները վերացնելու համար, ինչպես օրինակ՝ սնանկություն, անվճարունակություն և պարտատերերի իրավունքի պաշտպանություն,
 - (ii) Կողմերի ֆինանսական համակարգի ամբողջականությունն ու կայունությունն ապահովելու համար ընդունված կամ կիրառվող միջոցներին,
 - (iii) արժեթղթերի, օպցիոնների, ֆյուչերսների կամ այլ ածանցյալ գործիքների թողարկմանը, առքուվաճառքին կամ դրանցով գործառնությունների կատարմանը,
 - (iv) փոխանցումների վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների կամ հաշիվների վարմանը, երբ անհրաժեշտ է աջակցել իրավապահ կամ ֆինանսական կարգավորման մարմիններին, կամ
 - (v) դատական կամ վարչական վարույթներով որոշումների կամ վճիռների կատարման ապահովմանը:

ՀՈԴՎԱԾ 207

Պաշտպանական միջոցները

Եթե, բացառիկ դեպքերում, ի հայտ են գալիս լուրջ դժվարություններ՝ կապված՝ Հայաստանի Հանրապետության դեպքում՝ փոխարժեքի քաղաքականության կամ դրամավարկային քաղաքականության վարման հետ կամ, Եվրոպական միության դեպքում՝ տնտեսական և դրամավարկային միության գործունեության հետ, կամ եթե Կողմն ունի վճարումների մեծ հաշվեմնացորդ կամ արտաքին ֆինանսավորման հետ կապված դժվարություններ, կամ եթե կա այդպիսի դժվարությունների վտանգ, ապա տվյալ Կողմը կարող է մեկ տարին չգերազանցող ժամկետով ձեռնարկել պաշտպանական միջոցներ, որոնք խիստ անհրաժեշտ են Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև կապիտալի տեղաշարժի, վճարումների կամ փոխանցումների համար: Պաշտպանական միջոցն ընդունող կամ կիրառող Կողմը պետք է տեղեկացնի մյուս Կողմին ցանկացած պաշտպանական միջոցի ընդունման մասին և հնարավորինս շուտ ներկայացնի դրանց վերացման ժամանակացույցը:

ՀՈԴՎԱԾ 208

Դյուրացումը

Կողմերի միջև կապիտալի տեղաշարժը դյուրացնելու նպատակով Կողմերը պետք է խորհրդակցեն միմյանց հետ՝ սույն Համաձայնագրի նպատակների իրականացմանը նպաստելու համար:

ԳԼՈՒԽ 7

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ A

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 209

Նպատակները

Սույն գլխի նպատակներն են՝

- (a) դյուրացնել Կողմերի միջև նորարարական արտադրանքի և ստեղծագործական աշխատանքների արտադրությունն ու առևտրայնացումը՝ նպաստելով յուրաքանչյուր Կողմի համար ավելի կայուն և ներառական տնտեսության ձևավորմանը, և
- (b) հասնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և իրականացման պատշաճ ու արդյունավետ մակարդակի:

ՀՈԴՎԱԾ 210

Պարտավորությունների բնույթը և շրջանակը

1. Կողմերը պետք է ապահովեն մտավոր սեփականությանը վերաբերող այն միջազգային պայմանագրերի պատշաճ և արդյունավետ կիրարկումը, որոնց կողմերն են նրանք՝ ներառյալ ԱՀԿ համաձայնագրի 1C հավելվածում ընդգրկված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող ասպեկտների մասին» ԱՀԿ համաձայնագիրը (ԹԲՓՄ համաձայնագիր): Սույն գլխով լրացվում և էլ ավելի մասնավորեցվում են ԹԲՓՄ համաձայնագրի և մտավոր սեփականության ոլորտում այլ միջազգային պայմանագրերի շրջանակներում Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները:
2. Սույն Համաձայնագրի նպատակով՝ «մտավոր սեփականություն» եզրույթը վերաբերում է առնվազն սույն գլխի B բաժնում նշված մտավոր սեփականության բոլոր կատեգորիաներին:
3. Մտավոր սեփականության պաշտպանությունը ներառում է վերջին անգամ 1967 թվականի Ստոկհոլմյան ակտով վերանայված «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի Փարիզյան կոնվենցիայի (Փարիզյան կոնվենցիա (1967)) 10*bis* հոդվածում նշված կարգով անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանությունը:

ՀՈԴՎԱԾ 211

Իրավունքների սպառումը

Յուրաքանչյուր Կողմ պետք է տրամադրի մտավոր սեփականության իրավունքների ազգային կամ տարածաշրջանային մակարդակով սպառման ռեժիմ:

ԲԱԺԻՆ Ե

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

ԵՆԹԱԲԱԺԻՆ I

Հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները

ՀՈԴՎԱԾ 212

Տրամադրվող պաշտպանությունը

1. Կողմերը պահպանում են այն իրավունքներն ու կատարում այն պարտավորությունները, որոնք սահմանված են՝
 - (a) «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայով (Բեռնի կոնվենցիա),
 - (b) «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» Հռոմի կոնվենցիայով (Հռոմի կոնվենցիա),
 - (c) ԹԲԻՓՍ համաձայնագրով,
 - (d) ՄՍՀԿ-ի «Հեղինակային իրավունքի մասին» պայմանագրով (ՄՀԻՊ),
 - (e) ՄՍՀԿ «Կատարումների և հնչյունագրերի մասին» պայմանագրով (ՄԿՀՊ):

2. Կողմերը պետք է գործադրեն բոլոր ողջամիտ ջանքերը՝ «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագրին միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 213

Հեղինակները

Յուրաքանչյուր Կողմ հեղինակներին վերապահում է բացառիկ իրավունք թույլատրելու կամ արգելելու՝

- (a) իրենց ստեղծագործությունների ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական վերարտադրումը ցանկացած միջոցներով կամ ցանկացած ձևով՝ ամբողջությամբ կամ մասնակի,
- (b) ցանկացած ձևով իրենց ստեղծագործությունների բնօրինակի կամ դրանց օրինակների տարածումը հանրության շրջանում՝ վաճառքի կամ որևէ այլ եղանակով,
- (c) իրենց ստեղծագործությունները հանրությանը հաղորդալարով կամ առանց հաղորդալարի որևէ ձևով հաղորդումը՝ ներառյալ իրենց ստեղծագործությունները հանրությանը մատչելի դարձնելն այնպիսի ձևով, որ հանրության անդամները կարողանան օգտվել դրանցից իրենց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում և պահին, և
- (d) իրենց ստեղծագործությունների բնօրինակի և դրանց օրինակների վարձույթն ու փոխատվությունը:

Կատարողները

Յուրաքանչյուր Կողմ կատարողներին վերապահում է բացառիկ իրավունք թույլատրելու կամ արգելելու՝

- (a) իրենց կատարումների ամրագրումը¹,
- (b) իրենց կատարումների ամրագրված տարբերակների ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական վերարտադրումը ցանկացած միջոցներով կամ ցանկացած ձևով՝ ամբողջությամբ կամ մասնակի,
- (c) ցանկացած ձևով իրենց կատարումների ամրագրված տարբերակների տարածումը հանրության շրջանում՝ վաճառքի կամ որևէ այլ եղանակով,
- (d) իրենց կատարումների ամրագրված տարբերակները հանրությանը հաղորդալարով կամ առանց հաղորդալարի հասանելի դարձնելն այնպիսի ձևով, որ հանրության անդամները կարողանան օգտվել դրանցից իրենց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում և պահին,
- (e) իրենց կատարումների՝ առանց հաղորդալարի հեռարձակումը և դրանք հանրությանը հաղորդումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարումն ինքնին արդեն հեռարձակված կատարում է կամ պատրաստված է ամրագրված կատարումից և
- (f) իրենց կատարումների ամրագրված տարբերակների վարձույթը և փոխաստվությունը:

¹ Ամրագրում նշանակում է հնչյունների կամ պատկերների կամ դրանց ներկայացման ամբողջություն, որը թույլ է տալիս դրանք ընկալել, վերարտադրել կամ հաղորդել սարքի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 215

Հնչյունագրեր արտադրողները

Յուրաքանչյուր Կողմ հնչյունագրեր արտադրողներին վերապահում է բացառիկ իրավունք թույլատրելու կամ արգելելու՝

- (a) իրենց հնչյունագրերի ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական վերարտադրումը ցանկացած միջոցով կամ ցանկացած ձևով՝ ամբողջությամբ կամ մասնակի,
- (b) իրենց հնչյունագրերի, այդ թվում՝ դրանց օրինակների տարածումը հանրության շրջանում՝ վաճառքի կամ որևէ այլ միջոցով,
- (c) իրենց հնչյունագրերն հանրությանը հաղորդալարով կամ առանց հաղորդալարի մատչելի դարձնելն այնպիսի ձևով, որ հանրության անդամները կարողանան օգտվել դրանցից իրենց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում և պահին, և
- (d) իրենց հնչյունագրերի վարձույթը և փոխատվությունը:

ՀՈԴՎԱԾ 216

Հեռարձակող կազմակերպությունները

Յուրաքանչյուր Կողմ հեռարձակող կազմակերպություններին վերապահում է բացառիկ իրավունք թույլատրելու կամ արգելելու՝

- (a) դրանց հաղորդումների ամրագրումը՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք հաղորդվում են հաղորդալարով թե առանց հաղորդալարի՝ ներառյալ մալուխային կամ արբանյակային հաղորդումը,
- (b) իրենց հեռարձակումների ամրագրված տարբերակների ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական վերարտադրումը ցանկացած միջոցով կամ ցանկացած ձևով՝ ամբողջությամբ կամ մասնակի՝ անկախ այն հանգամանքից, թե այս հաղորդումները հեռարձակվում են հաղորդալարով թե առանց հաղորդալարի՝ ներառյալ մալուխային կամ արբանյակային հաղորդումը,
- (c) իրենց հաղորդումների ամրագրված տարբերակները հանրությանը հաղորդալարով կամ առանց հաղորդալարի մատչելի դարձնելն այնպիսի ձևով, որ հանրության անդամները կարողանան օգտվել դրանցից իրենց կողմից անհատապես ընտրված ցանկացած վայրում և պահին,
- (d) իրենց հաղորդումների ամրագրված տարբերակների տարածումը հանրության շրջանում՝ վաճառքի կամ որևէ այլ միջոցով, և
- (e) իրենց հաղորդումների՝ առանց հաղորդալարի վերահեռարձակումը, ինչպես նաև իրենց հաղորդումները հանրությանը հաղորդումը, եթե այդ հաղորդումն իրականացվում է հանրության համար մուտքի վճարի դիմաց հասանելի վայրերում:

ՀՈՒՎԱԾ 217

Հեռարձակումը և հանրությանը հաղորդումը

Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է իրավունք՝ ապահովելու համար օգտագործողի կողմից կատարողներին և հնչունագրեր արտադրողներին միանվագ, արդարացի վարձատրության վճարումը, եթե առևտրային նպատակով լույս ընծայված հնչունագիրը կամ այդ հնչունագրի վերարտադրումն օգտագործվում է առանց հաղորդալարի հեռարձակելու կամ հանրությանը ցանկացած ձևով հաղորդելու համար: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է համապատասխան կատարողների և հնչունագիր արտադրողների միջև նշված վարձատրության բաժանումը: Կատարողների և հնչունագիր արտադրողների միջև համաձայնության բացակայության դեպքում յուրաքանչյուր Կողմ կարող է սահմանել նշված վարձատրությունը միմյանց միջև բաժանելու հետ կապված պայմաններ:

ՀՈՒՎԱԾ 218

Պաշտպանության ժամկետը

1. Բեռնի կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով գրական կամ գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակի տնտեսական իրավունքները գործում են հեղինակի կյանքի ընթացքում և նրա մահից հետո առնվազն 70 տարի՝ անկախ այն օրվանից, երբ ստեղծագործությունն օրինական ճանապարհով մատչելի է դարձվում հանրությանը:
2. Համահեղինակությամբ ստեղծված ստեղծագործության դեպքում 1-ին պարբերությամբ նախատեսված ժամկետը հաշվարկվում է կենդանի մնացած վերջին համահեղինակի մահվանից հետո:

3. Անանուն կամ կեղծանվամբ լույս ընծայված ստեղծագործությունների դեպքում, պաշտպանության ժամկետը առնվազն 70 տարի է՝ ստեղծագործությունն օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դարձնելու պահից: Այնուամենայնիվ, եթե հեղինակի կողմից ընդունված կեղծանունը կասկած չի հարուցում նրա ինքնության վերաբերյալ, կամ եթե հեղինակը հրապարակում է իր ինքնությունն առաջին նախադասության մեջ նշված ժամանակահատվածում, ապա կիրառելի պաշտպանության ժամկետն 1-ին պարբերությամբ սահմանված ժամկետն է:

4. Եթե Կողմը նախատեսում է կոլեկտիվ ստեղծագործությունների վերաբերյալ կամ որպես իրավատեր սահմանված իրավաբանական անձի համար կոնկրետ իրավունքներ, ապա պաշտպանության ժամկետը հաշվարկվում է 3-րդ պարբերությանը համապատասխան՝ բացառությամբ, երբ այդ ստեղծագործությունը ստեղծած ֆիզիկական անձինք ճանաչվում են որպես այդպիսիք ստեղծագործության այն տարբերակներում, որոնք մատչելի են դարձվում հանրությանը: Սույն պարբերությունը չի սահմանափակում նույնականացված հեղինակների իրավունքները, որոնց ճանաչելի ներդրումները ներառված են այդ ստեղծագործություններում, որոնց ներդրումների նկատմամբ կիրառվում են 1-ին կամ 2-րդ պարբերությունները:

5. Եթե ստեղծագործությունը հրատարակվում է հատորներով, մասերով, պրակներով, համարներով կամ միջարկներով, և եթե պահպանության ժամկետն սկսում է գործել ստեղծագործությունն օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դարձնելու պահից, ապա պաշտպանության ժամկետն այդպիսի յուրաքանչյուր մասի համար գործում է առանձին:

6. Այն ստեղծագործությունների դեպքում, որոնց համար պաշտպանության ժամկետը չի հաշվարկվում հեղինակի կամ համահեղինակների մահվանից հետո, և որոնք օրինական ճանապարհով հանրությանը մատչելի չեն դարձվել դրանց ստեղծումից հետո 70 տարվա ընթացքում, պաշտպանությունը դադարում է:

7. Կինեմատոգրաֆիական կամ տեսալսողական ստեղծագործությունների պաշտպանության ժամկետը լրանում է կենդանի մնացած հետևյալ անձանցից վերջինի մահվանից ոչ շուտ, քան 70 տարի հետո, անկախ այն հանգամանքից, թե այդ անձինք ճանաչվել են համահեղինակներ, թե ոչ. գլխավոր ռեժիսոր, սցենարի հեղինակ, երկխոսության հեղինակ և կինեմատոգրաֆիական կամ տեսալսողական ստեղծագործության մեջ օգտագործելու համար հատուկ գրված երաժշտության հեղինակ:

8. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ցանկացած անձ, որը հեղինակային իրավունքի պաշտպանության ժամկետը լրանալուց հետո առաջին անգամ օրինական ճանապարհով հրապարակում կամ օրինական ճանապարհով հանրությանն է հաղորդում նախկինում չհրապարակված ստեղծագործություն, օգտվում է հեղինակի տնտեսական իրավունքներին համարժեք պաշտպանությունից: Այդպիսի իրավունքների պաշտպանության ժամկետը՝ ստեղծագործությունն առաջին անգամ օրինական ճանապարհով հրապարակելու կամ օրինական ճանապարհով հանրությանը հաղորդելու պահից 25 տարի է:

9. Տեսալսողական կատարողների տնտեսական իրավունքները դադարում են կատարման օրվանից առնվազն 50 տարի հետո: Այնուամենայնիվ, եթե կատարման ամրագրումն օրինական ճանապարհով լույս ընծայվել կամ այդ ժամանակահատվածում օրինական ճանապարհով հաղորդվել է հանրությանը, ապա իրավունքները դադարում են այդպիսի առաջին լույս ընծայման կամ առաջին անգամ հանրությանը հաղորդելու օրվանից առնվազն 50 տարի հետո՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել:

10. Կատարողների և հնչյունագրեր արտադրողների տնտեսական իրավունքները դադարում են առաջին լույս ընծայման կամ առաջին անգամ հանրությանը հաղորդելու օրվանից 70 տարի հետո՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել: Կողմը կարող է ընդունել արդյունավետ միջոցներ՝ ապահովելու համար 50 տարի հետո պաշտպանության 20 տարվա ընթացքում ստացված եկամուտների արդարացի բաժանումը կատարողների և արտադրողների միջև:

11. Ֆիլմի առաջին ամրագրման արտադրողների տնտեսական իրավունքները դադարում են ամրագրումը կատարելու պահից առնվազն 50 տարի հետո: Այնուամենայնիվ, եթե այդ ժամանակահատվածում ֆիլմն օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ օրինական ճանապարհով հաղորդվել է հանրությանը, ապա իրավունքները դադարում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը հաղորդելու օրվանից առնվազն 50 տարի հետո՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել:

12. Հեռարձակող կազմակերպությունների տնտեսական իրավունքները դադարում են հաղորդումն առաջին անգամ հեռարձակելու պահից առնվազն 50 տարի հետո, անկախ այն հանգամանքից, թե այդ հաղորդումը հեռարձակվում է հաղորդալարով կամ առանց հաղորդալարի՝ ներառյալ մալուխային կամ արբանյակային կապը:

13. Սույն հոդվածով սահմանված ժամկետները պետք է հաշվարկվեն դրանք ի հայտ բերող իրադարձությանը հաջորդող տարվա հունվարի մեկից:

ՀՈՒՎԱԾ 219

Տեխնիկական միջոցների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի պատշաճ իրավական պաշտպանություն ցանկացած արդյունավետ տեխնոլոգիական միջոց շրջանցելուց, որը տվյալ անձն իրականացնում է՝ գիտակցելով կամ գիտակցելու համար բավարար հիմքեր ունենալով, որ ինքն այդ նպատակն է հետապնդում:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է տրամադրի պատշաճ իրավական պաշտպանություն այնպիսի սարքերի, արտադրանքի կամ բաղադրատարրերի արտադրության, ներմուծման, տարածման, վաճառքի, վարձույթով տալու, վաճառքի կամ վարձույթով տալու նպատակով գովազդի, կամ առևտրային նպատակներով տիրապետման կամ ծառայությունների մատուցման նկատմամբ, որոնք՝

(a) առաջադրվում, գովազդվում կամ շուկայահանվում են որևէ արդյունավետ տեխնոլոգիական միջոց շրջանցելու նպատակով,

(b) ունեն ցանկացած արդյունավետ տեխնոլոգիական միջոց շրջանցելուց բացի այլ, սահմանափակ առևտրային կարևորություն ներկայացնող նպատակ կամ կիրառություն, կամ

(c) հիմնականում նախագծված, արտադրված, հարմարեցված կամ կատարված են ցանկացած արդյունավետ տեխնոլոգիական միջոց շրջանցելու հնարավորություն ստեղծելու կամ այն դուրացնելու նպատակով:

3. Սույն գլխի նպատակներով «տեխնոլոգիական միջոցներ» արտահայտությունը նշանակում է որևէ տեխնոլոգիա, սարք կամ բաղադրատարր, որը նախատեսված է իր բնականոն աշխատանքի ընթացքում կանխարգելելու կամ սահմանափակելու այնպիսի ստեղծագործությունների կամ այլ օբյեկտի նկատմամբ այն գործողությունները, որոնք թույլատրված չեն որևէ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ կողմից՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգով: Տեխնոլոգիական միջոցները համարվում են «արդյունավետ», եթե պահպանվող ստեղծագործության կամ այլ օբյեկտի օգտագործումը վերահսկվում է իրավատերերի կողմից՝ կիրառելով մուտքի վերահսկման կամ պաշտպանության գործընթաց, ինչպես օրինակ՝ ստեղծագործության կամ այլ օբյեկտի ծածկագրումը, խառնաշփոթ դասավորումը կամ այլ ձևով ձևափոխումը կամ պատճենումը վերահսկելու մեխանիզմը, որով ապահովվում է պաշտպանության նպատակը:

ՀՈԴՎԱԾ 220

Իրավունքների կառավարման վերաբերյալ տեղեկությունների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է պատշաճ իրավական պաշտպանություն ցանկացած անձի նկատմամբ, որն առանց թույլտվության, գիտակցաբար իրականացնում է հետևյալ գործողությունները.

- (a) իրավունքների կառավարման վերաբերյալ ցանկացած էլեկտրոնային տեղեկության վերացում կամ փոփոխում և
- (b) սույն գլխով պահպանվող ստեղծագործությունների կամ այլ օբյեկտների տարածում, տարածման նպատակով ներմուծում, հեռարձակում, հանրությանը հաղորդում կամ հանրությանը մատչելի դարձնելը, որոնցում էլեկտրոնային իրավունքի կառավարման վերաբերյալ տեղեկությունը վերացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության,

եթե այդ անձը գիտակցում է կամ բավարար հիմքեր ունի գիտակցելու, որ այդպես վարվելով նա դրդում է ազգային օրենսդրությամբ նախատեսված ցանկացած

հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքի խախտման, ստեղծում է այդպիսի հնարավորություն, նպաստում է դրան կամ թաքցնում է այն:

2. Սույն գլխի նպատակներով, «իրավունքների կառավարման վերաբերյալ տեղեկություն» արտահայտությունը նշանակում է իրավատերերի կողմից տրամադրված ցանկացած տեղեկություն, որով նույնականացվում է սույն գլխում նշված ստեղծագործությունը կամ այլ օբյեկտ, հեղինակը կամ ցանկացած այլ իրավատեր, կամ ստեղծագործության կամ այլ օբյեկտի օգտագործման ժամկետների ու պայմանների մասին տեղեկությունները, ինչպես նաև այդպիսի տեղեկություններ ներկայացնող ցանկացած թիվ կամ ծածկագիր:

3. 1-ին պարբերությունը կիրառվում է այն դեպքում, երբ ցանկացած այդպիսի տեղեկություն կապված է սույն գլխում նշված ստեղծագործության կամ այլ օբյեկտի օրինակի հետ կամ ի հայտ է գալիս այն հանրությանը հաղորդելու առնչությամբ:

ՀՈԴՎԱԾ 221

Բացառությունները և սահմանափակումները

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է առանձին հատուկ դեպքերում նախատեսել 213-ից 218-րդ հոդվածներով սահմանված իրավունքների սահմանափակումներ կամ բացառություններ, որոնք չեն հակասում օբյեկտի բնականոն օգտագործմանը և անհիմն չեն հակասում այն կոնվենցիաներին և միջազգային պայմանագրերին համապատասխան իրավատերերի օրինական շահերին, որոնց կողմերն են նրանք:

2. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է, որ 213-ից 217-րդ հոդվածներում նշված վերարտադրման այն ժամանակավոր գործողությունների վրա, որոնք ունեն կարճաժամկետ կամ կողմնակի բնույթ, կազմում են տեխնոլոգիական գործընթացի անքակտելի և նշանակալից մասը, և որոնց միակ նպատակն է՝ (a) երրորդ անձանց ցանցում միջնորդի կողմից հետազայում ստեղծվելիք ստեղծագործության կամ այլ օբյեկտի հեռարձակման հնարավորություն ստեղծելը, կամ (b) հետազայում ստեղծվելիք ստեղծագործության կամ այլ օբյեկտի օրինական օգտագործման հնարավորություն ստեղծելը, և որոնք չունեն անկախ տնտեսական նշանակություն, 213-ից 217-րդ հոդվածներով նախատեսված վերարտադրման իրավունքը չի տարածվում:

ՀՈԴՎԱԾ 222

Արվեստագետների՝ արվեստի ստեղծագործությունների վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր Կողմ հօգուտ արվեստի ստեղծագործության բնօրինակի հեղինակի նախատեսում է վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունք, որը պետք է սահմանվի որպես հեղինակի կողմից ստեղծագործության առաջին փոխանցումից հետո դրա ցանկացած վերավաճառքի համար ստացած վաճառքի գնի հիման վրա ռոյալթի ստանալու անօտարելի իրավունք, որից հնարավոր չէ հրաժարվել՝ նույնիսկ նախապես:

2. 1-ին պարբերության մեջ նշված իրավունքը կիրառվում է վերավաճառքի բոլոր գործողությունների նկատմամբ, որոնցում որպես վաճառողներ, գնորդներ կամ միջնորդներ ներգրավված են արվեստի շուկայի մասնագետներ, ինչպիսիք են վաճառասրահները, պատկերասրահները և, ընդհանուր առմամբ, արվեստի գործերի ցանկացած դիլեր:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է նախատեսել, որ 1-ին պարբերությունում նշված իրավունքը չի կիրառվում վերավաճառքի գործողությունների նկատմամբ, եթե վաճառողը ստեղծագործությունը ձեռք է բերել անմիջապես հեղինակից՝ վերավաճառքից ավելի քիչ, քան երեք տարի առաջ, և եթե վերավաճառքի գինը չի գերազանցում որոշակի նվազագույն գումարը:

4. Ռոյալթին վճարում է վաճառողը: Յուրաքանչյուր Կողմ կարող է նախատեսել, որ 2-րդ պարբերության մեջ նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից մեկը՝ բացի վաճառողից, միանձնյա կամ վաճառողի հետ համապարտ պատասխանատվություն է կրում ռոյալթիի վճարման համար:

5. Գանձման ընթացակարգը և ռոյալթիների գումարները որոշվում են ներպետական օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 223

Իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման մասով համագործակցությունը

1. Կողմերը խթանում են կոլեկտիվ հիմունքներով կառավարող իրենց համապատասխան կազմակերպությունների միջև համագործակցությունը՝ Կողմերի տարածքներում ստեղծագործությունների և այլ պաշտպանվող կարգավորման առարկաների հասանելիությանը և այդպիսի ստեղծագործություններն ու այլ պաշտպանվող կարգավորման առարկաներ օգտագործելու դիմաց ռոյալթիների փոխանցմանն օժանդակելու նպատակով:

2. Կողմերը պետք է խթանեն կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների թափանցիկությունը, մասնավորապես՝ նրանց կողմից գանձվող ռոյալթիների, նրանց կողմից գանձված ռոյալթիների նկատմամբ կիրառվող նվազեցումների, գանձված ռոյալթիների օգտագործման, բաշխման քաղաքականության և դրանց տեսակակազմի մասով:

3. Կողմերը պարտավորվում են ապահովել, որ այն դեպքում, երբ մի Կողմի տարածքում հիմնադրված կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունը ներկայացուցչության համաձայնագրի միջոցով ներկայացնում է մյուս Կողմի տարածքում հիմնադրված կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությանը, ներկայացնող կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունը խտրականություն չդրսևորի ներկայացվող կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության իրավատերերի նկատմամբ:

4. Ներկայացնող կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունը պետք է պարտք գումարները ճշգրտորեն, պարբերաբար և պատշաճորեն վճարի ներկայացվող կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությանը, ինչպես նաև ներկայացվող կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությանը տրամադրի տեղեկություններ՝ իր անունից գանձված ռոյալթիների գումարի և այդ ռոյալթիներից կատարված նվազեցումների վերաբերյալ:

ԵՆԹԱԲԱԺԻՆ II

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 224

Միջազգային համաձայնագրերը

Յուրաքանչյուր Կողմ՝

- (a) պահպանում է Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի արձանագրության դրույթները,
- (b) պահպանում է Ապրանքային նշանների իրավունքի մասին պայմանագրի և Նշանների գրանցման համար ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման վերաբերյալ Նիցցայի համաձայնագրի պահանջները, և
- (c) գործադրում է բոլոր ողջամիտ ջանքերը՝ Ապրանքային նշանների իրավունքի մասին Սինգապուրի պայմանագրին միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 225

Ապրանքային նշանով վերապահվող իրավունքները

Գրանցված ապրանքային նշանը իրավատիրոջը վերապահում է դրա նկատմամբ բացառիկ իրավունքներ: Իրավատերն իրավունք ունի արգելելու բոլոր երրորդ անձանց առանց իր թույլտվության առևտրի ընթացքում օգտագործել՝

- (a) որևէ նշան, որը նույնական է այն ապրանքների կամ ծառայությունների համար գրանցված ապրանքային նշանի հետ, որոնք նույնական են այն ապրանքների և ծառայությունների հետ, որոնց համար գրանցվել է տվյալ ապրանքային նշանը, և
- (b) ցանկացած նշան, որը նման կամ նույնական է այն ապրանքների կամ ծառայությունների ապրանքային նշանին, որոնք նման կամ նույնական են գրանցված ապրանքային նշան ունեցող ապրանքներին կամ ծառայություններին, եթե դրանց օգտագործման պատճառով կարող էր լինել հանրության կողմից վերջիններս շփոթելու հավանականություն, այդ թվում՝ այդ նշանի և ապրանքային նշանի միջև գուգորդման հավանականություն:

ՀՈԴՎԱԾ 226

Գրանցման ընթացակարգը

1. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է ապրանքային նշանների գրանցման համակարգ, որտեղ ապրանքային նշանների հարցերով համապատասխան մարմնի կողմից կայացված յուրաքանչյուր վերջնական բացասական որոշում հաղորդվում է գրավոր և պատշաճորեն հիմնավորված է:

2. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է ապրանքային նշանի հայտերի դեմ առարկելու հնարավորություն և ապրանքային նշանի հայտատուի համար այդ առարկությանը պատասխանելու հնարավորություն:

3. Յուրաքանչյուր Կողմ տրամադրում է ապրանքային նշանների հայտերի և ապրանքային նշանների գրանցումների վերաբերյալ տվյալների հանրամատչելի էլեկտրոնային բազա: Ապրանքային նշանների հայտերի տվյալների բազան հասանելի է առնվազն այն ժամկետի ընթացքում, երբ հայտի դեմ կարող է առարկություն ներկայացվել:

ՀՈԴՎԱԾ 227

Հանրահայտ ապրանքային նշանները

Հանրահայտ ապրանքային նշանների պահպանությունն ուժի մեջ դնելու նպատակով, ինչպես նշված է Փարիզյան կոնվենցիայի (1967 թվական) 6*bis* հոդվածում և ԹՐԻՓՍ համաձայնագրի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններում, յուրաքանչյուր Կողմ կիրառում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) անդամ պետությունների ասամբլեաների 1999 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 29-ը տեղի ունեցած հանդիպումների երեսունչորսերորդ շարքին Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզի Միության ասամբլեայի և ՄՍՀԿ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Հանրահայտ նշանների պաշտպանության մասին դրույթների վերաբերյալ համատեղ առաջարկությունը:

ՀՈԴՎԱԾ 228

Ապրանքային նշանով վերապահվող իրավունքներից բացառությունները

Յուրաքանչյուր Կողմ՝

- (a) նախատեսում է նկարագրական եզրույթների արդար օգտագործումը, այդ թվում՝ աշխարհագրական նշումների արդար օգտագործումը՝ որպես ապրանքային նշանով վերապահվող իրավունքներից սահմանափակ բացառություններ, և
- (b) կարող է նախատեսել ապրանքային նշանով վերապահվող իրավունքներից այլ սահմանափակ բացառություններ:

Այդպիսի բացառություններ նախատեսելիս յուրաքանչյուր Կողմ պետք է հաշվի առնի ապրանքային նշանի սեփականատիրոջ և երրորդ կողմերի օրինական շահերը:

ՀՈԴՎԱԾ 229

Չեղյալ հայտարարելու հիմքերը

1. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է, որ ապրանքային նշանի գրանցումը ենթակա է չեղյալ հայտարարման, եթե առնվազն երեք տարի անընդմեջ ժամանակահատվածում այն համապատասխան տարածքում իրական օգտագործման մեջ չի դրվել այն ապրանքների և ծառայությունների հետ կապված, որոնց համար գրանցվել է, և չկան չօգտագործման պատշաճ պատճառներ:

Ոչ ոք չի կարող պահանջել, որ ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքները չեղյալ հայտարարվեն, եթե եռամյա նվազագույն ժամկետի ավարտի և գրանցումը չեղյալ հայտարարելու մասին դիմում ներկայացնելու միջև ընկած ժամանակահատվածում սկսվել կամ վերականգնվել է ապրանքային նշանի իրական օգտագործումը:

Այնուամենայնիվ, ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու մասին դիմում ներկայացնելուն նախորդող երեք ամսվա ընթացքում (այդ ժամկետն սկսվել է առնվազն երեք տարի անընդմեջ չօգտագործման ժամկետի ավարտից ոչ շուտ) ապրանքային նշանի օգտագործման սկիզբը կամ վերականգնումը հաշվի չի առնվում, եթե օգտագործումն սկսելու կամ վերականգնելու նախապատրաստումը տեղի է ունեցել միայն այն բանից հետո, երբ ապրանքային նշանի իրավատիրոջը հայտնի է դարձել, որ կարող է ներկայացվել գրանցումը չեղյալ հայտարարելու մասին դիմում:

2. Ապրանքային նշանի գրանցումը նաև ենթակա է չեղյալ հայտարարման, եթե այն գրանցվելու օրվանից հետո՝

- (a) իրավատիրոջ գործունեության կամ անգործության հետևանքով ապրանքային նշանը դարձել է համընդհանուր օգտագործման անվանում այն ապրանքի կամ ծառայության վաճառքի մեջ, որի համար այն գրանցված է, կամ
- (b) ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ այն ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ դրա օգտագործումը, որոնց համար այն գրանցված է, հանրությանը կարող է մոլորության մեջ գցել, մասնավորապես՝ այդ ապրանքների կամ ծառայությունների բնույթի, որակի կամ աշխարհագրական ծագման հարցում:

ԵՆԹԱԲԱԺԻՆ III

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 230

Կիրառության ոլորտը

1. Սույն ենթաբաժինը կիրառվում է այն աշխարհագրական նշումների պահպանության նկատմամբ, որոնք ծագում են Կողմերի տարածքներում:
2. Կողմի այն աշխարհագրական նշումները, որոնք պահպանելու է մյուս Կողմը, ենթակա են միայն սույն ենթաբաժնին, եթե դրանք կարգավորվում են 231-րդ հոդվածում նշված օրենսդրության գործողության շրջանակով:

ՀՈԴՎԱԾ 231

Հաստատված աշխարհագրական նշումները

1. Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության՝ IX Հավելվածի A մասում նշված օրենսդրությունը՝ Եվրոպական միությունը եզրակացնում է, որ այդ օրենսդրությունը համապատասխանում է նույն Հավելվածի B մասում ամրագրված տարրերին:

2. Ուսումնասիրելով Եվրոպական միության՝ IX Հավելվածի A մասում նշված օրենսդրությունը՝ Հայաստանի Հանրապետությունը եզրակացնում է, որ այդ օրենսդրությունը համապատասխանում է նույն Հավելվածի B մասում ամրագրված տարրերին:

3. Ավարտելով առարկության ընթացակարգը և ուսումնասիրելով Եվրոպական միության՝ X Հավելվածում նշված այն աշխարհագրական նշումները, որոնք գրանցվել են Եվրոպական միության կողմից՝ IX Հավելվածի A մասում նշված օրենսդրության համաձայն, Հայաստանի Հանրապետությունը պետք է պահպանի դրանք՝ սույն Համաձայնագրում սահմանված պահպանության մակարդակին համապատասխան:

4. Ավարտելով առարկության ընթացակարգը և ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության՝ X Հավելվածում նշված այն աշխարհագրական նշումները, որոնք գրանցվել են Հայաստանի Հանրապետության կողմից՝ IX Հավելվածի A մասում նշված օրենսդրության համաձայն, Եվրոպական միությունը պետք է պահպանի դրանք՝ սույն Համաձայնագրում սահմանված պահպանության մակարդակին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 232

Նոր աշխարհագրական նշումների ավելացումը

1. Կողմերը կարող են, 240-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան, X Հավելվածում ամրագրված պահպանվող աշխարհագրական նշումների ցանկում ավելացնել նոր աշխարհագրական նշումներ: Այդ աշխարհագրական նշումները կարող են ցանկում ավելացվել յուրաքանչյուր Կողմի համար ընդունելի ձևով առարկության ընթացակարգն ավարտելուց և նոր աշխարհագրական նշումներն ուսումնասիրելուց հետո՝ 231-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերություններին համապատասխան:

2. Կողմերը 1-ին պարբերության մեջ նշված ցանկում նոր աշխարհագրական նշումներ ավելացնելու որևէ պարտավորություն չունեն, եթե՝

- (a) աշխարհագրական նշումը կհակասի բույսի սորտի կամ կենդանու ցեղատեսակի անվանը և, որպես արդյունք, կարող է մոլորեցնել սպառողներին արտադրանքի իրական ծագման առումով,
- (b) համբավ ունեցող կամ հանրահայտ ապրանքային նշանի լույսի ներքո, այդ աշխարհագրական նշման պահպանությունը կարող էր մոլորեցնել սպառողներին արտադրանքի իրական ծագման առնչությամբ, կամ
- (c) եզրույթի անվանումն ընդհանրական է:

ՀՈՒՎԱԾ 233

Աշխարհագրական նշումների պահպանության շրջանակը

1. X Հավելվածում նշված աշխարհագրական նշումները յուրաքանչյուր Կողմի կողմից պաշտպանվում են հետևյալից՝

- (a) պահպանվող անվանման՝ ցանկացած ուղղակի կամ անուղղակի առևտրային օգտագործումից՝ այնպիսի համեմատելի արտադրանքի համար, որը չի համապատասխանում պահպանվող անվանման ապրանքային հատկորոշումներին, կամ այնքանով, որքանով որ այդպիսի օգտագործումը վնասում է աշխարհագրական նշման համբավին,
- (b) ցանկացած չարաշահումից, նմանակումից կամ վերարտադրումից, նույնիսկ եթե արտադրանքի իրական ծագումը նշված է կամ եթե պահպանվող անվանումը թարգմանված է, սղագրված, տառադարձված կամ ուղեկցվում է այնպիսի արտահայտությամբ, ինչպիսին օրինակ՝ «ոճ», «տեսակ», «մեթոդ», «արտադրվում է», «նմանակում», «համ և հոտ», «նման» արտահայտությունն է, կամ նմանատիպ այլ արտահայտությամբ,

- (c) արտադրանքի ծագման վայրի, ծագման, բնույթի կամ էական հատկանիշների հետ կապված որևէ այլ կեղծ կամ մոլորության մեջ գցող նշումից, որը զետեղված է ներքին կամ արտաքին փաթեթավորման վրա, տվյալ արտադրանքին վերաբերող գովազդային նյութերում կամ փաստաթղթերում կամ բեռնարկղի մեջ արտադրանքի փաթեթավորման վրա, ինչը կարող է սխալ տպավորություն ստեղծել դրա ծագման առումով, և
- (d) որևէ այլ գործողությունից, որը կարող է սպառողին մոլորության մեջ գցել արտադրանքի իրական ծագման առումով:

2. Պահպանվող աշխարհագրական նշումները Կողմերի տարածքներում ընդհանրական չեն դառնում:

3. Եթե աշխարհագրական նշումներն ամբողջությամբ կամ մասամբ համանուն են, ապա պահպանությունը շնորհվում է յուրաքանչյուր այդպիսի աշխարհագրական նշմանը՝ պայմանով, որ այն օգտագործվել է բարեխղճորեն՝ պատշաճորեն հաշվի առնելով տեղական և ավանդական կիրառությունը, ինչպես նաև մոլորության գործնական ռիսկերը:

Չսահմանափակելով ԹԳԻՓՍ համաձայնագրի 23-րդ հոդվածը՝ Կողմերը փոխադարձաբար որոշում են օգտագործման այն գործնական պայմանները, որոնցով համանուն աշխարհագրական նշումները կտարբերակվեն միմյանցից՝ հաշվի առնելով շահագրգիռ արտադրողների նկատմամբ արդարացի վերաբերմունք և սպառողներին մոլորության մեջ չգցելն ապահովելու անհրաժեշտությունը:

Այն համանուն անվանումը, որը սպառողներին մոլորության մեջ է գցում՝ կարծելու, որ արտադրանքն ստացվել է այլ տարածքից, չպետք է գրանցվի, եթե նույնիսկ անվանումը ճշգրիտ է այնքանով, որքանով առնչվում է տվյալ արտադրանքի ծագման տարածքին, տարածաշրջանին կամ վայրին:

4. Եթե Կողմը երրորդ երկրի հետ բանակցությունների համատեքստում առաջարկում է պահպանել երրորդ երկրի այն աշխարհագրական նշումը, որը համանուն է սույն ենթաբաժնի համաձայն պահպանվող՝ մյուս Կողմի աշխարհագրական նշման հետ, ապա վերջինիս տեղեկացնում են և տալիս հնարավորություն մեկնաբանելու՝ նախքան երրորդ կողմի աշխարհագրական նշումը դառնա պահպանվող:

5. Սույն ենթաբաժնում ոչինչ չի պարտադրում Կողմին պահպանել մյուս Կողմի այն աշխարհագրական նշումը, որն իր ծագման երկրում չի պահպանվում կամ դադարում է պահպանվել:

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ծանուցում է, թե արդյոք աշխարհագրական նշումը դադարում է պահպանվել իր ծագման երկրում: Այդպիսի ծանուցումը կատարվում է 240-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան:

6. Սույն Համաձայնագրում ոչինչ չի սահմանափակում առևտրի ընթացքում ցանկացած անձի՝ բիզնեսում այդ անձի անվանումը կամ այդ անձի իրավանախորդի անվանումն օգտագործելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անվանումն օգտագործվում է այնպես, որ մոլորեցնում է սպառողներին:

ՀՈԴՎԱԾ 234

Աշխարհագրական նշումներն օգտագործելու իրավունքը

1. Սույն ենթաբաժնով պահպանվող աշխարհագրական նշումը կարող է օգտագործվել համապատասխան հատկորոշումներին համապատասխանող գյուղատնտեսական արտադրանք, սննդամթերք, գինիներ, բուրավետացված գինիներ կամ սպիրտային խմիչքներ շուկայահանող ցանկացած օպերատորի կողմից:

2. Աշխարհագրական նշումը սույն ենթաբաժնով պահպանվող դառնալուց հետո այդպիսի պահպանվող անվանման օգտագործումը ենթակա չէ օգտագործողների որևէ գրանցման կամ լրացուցիչ տուրքերի գանձման:

Ապրանքային նշանների հետ կապը

1. Կողմը մերժում է գրանցել կամ անվավեր է ճանաչում այն ապրանքային նշանը, որը համապատասխանում է 233-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված իրավիճակներից որևէ մեկին՝ կապված նման արտադրանքի պահպանվող աշխարհագրական նշման հետ՝ պայմանով, որ ապրանքային նշանը գրանցելու հայտը ներկայացվել է նշված տարածքում աշխարհագրական նշումը պահպանելու հայտը ներկայացնելու օրվանից հետո:
2. 231-րդ հոդվածում նշված աշխարհագրական նշումների համար պահպանման հայտ ներկայացնելու օրը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրն է:
3. 232-րդ հոդվածում նշված աշխարհագրական նշումների համար պահպանման հայտ ներկայացնելու օրը մյուս Կողմին աշխարհագրական նշումը պահպանելու վերաբերյալ պահանջ փոխանցելու օրն է:
4. Չսահմանափակելով 232-րդ հոդվածի 2-րդ պարբերության (b) կետը՝ յուրաքանչյուր Կողմ X Հավելվածում նշված աշխարհագրական նշումները պահպանում է, եթե առկա է ավելի վաղ գրանցված ապրանքային նշան: Ավելի վաղ գրանցված ապրանքային նշան նշանակում է ապրանքային նշան, որի օգտագործումը համապատասխանում է 233-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված իրավիճակներից մեկին և որի համար մի Կողմի տարածքում հայտ է ներկայացվել, որը գրանցվել կամ բարեխիղճ օգտագործմամբ հաստատվել է, եթե այդպիսի հնարավորություն նախատեսված է Կողմի օրենսդրությամբ, մինչև մյուս Կողմի՝ սույն Համաձայնագրով աշխարհագրական նշումը պահպանելու հայտը ներկայացնելու օրը: Այսպիսի ապրանքային նշանը կարող է շարունակել օգտագործվել, և դրա գործողության ժամկետը կարող է երկարաձգվել՝ անկախ աշխարհագրական նշման պահպանությունից՝ պայմանով, որ Կողմերից որևէ մեկի՝ ապրանքային նշանների մասին օրենսդրությամբ առկա չեն ապրանքային նշանն անվավեր կամ չեղյալ ճանաչելու հիմքեր:

5. 4-րդ պարբերությունից շեղում կատարելով՝ Հայաստանի Հանրապետության այն ավելի վաղ գրանցված ապրանքային նշանները, որոնք բաղկացած են Եվրոպական միության «Կոնյակ» կամ «Շամպայն» աշխարհագրական նշումից կամ պարունակում են այդ նշումները՝ ներառյալ նման արտադրանքի համար գրանցված և համապատասխան հատկորոշմանը չհամապատասխանող սղագրության կամ թարգմանության մեջ, անվավեր կամ չեղյալ են ճանաչվում կամ փոփոխվում, որպեսզի վերացնեն այդ անվանումը որպես ամբողջ ապրանքային նշանի տարր՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո «Կոնյակի» և «Շամպայնի» համար համապատասխանաբար ամենաուշը 14 տարվա և երկու տարվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 236

Պահպանության հետ կապված պահանջների կատարումը

Յուրաքանչյուր Կողմ իր պետական մարմինների կողմից իրականացվող պատշաճ վարչարարության միջոցով ապահովում է 233-ից 235-րդ հոդվածներին համապատասխան աշխարհագրական նշումների պահպանության հետ կապված պահանջների կատարումը: Յուրաքանչյուր Կողմ այդպիսի պահպանությունն ապահովում է նաև շահագրգիռ անձի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 237

Անցումային դրույթները

1. Այն ապրանքները, որոնք, ներպետական օրենսդրությանը համապատասխան, արտադրվել և պիտակավորվել են մինչև սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը, սակայն որոնք չեն համապատասխանում Համաձայնագրի պահանջներին, կարող են շարունակել վաճառվել սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև դրանց պահուստային պաշարները սպառվեն:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո հաշված 24 տարի անցումային ժամկետի ընթացքում «Կոնյակի» համար և սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3 տարի անցումային ժամկետի ընթացքում «Շամպայնի» համար Եվրոպական միության այդ աշխարհագրական նշումների՝ սույն Համաձայնագրի համաձայն պահպանությունը չի բացառում այդ անվանումների օգտագործումը Հայաստանի Հանրապետությունից ծագող և երրորդ երկրներ արտահանվող արտադրանքի վրա, եթե տվյալ երրորդ երկրի օրենքները և կանոնակարգերը թույլ են տալիս այդպես, որպեսզի նշեն և ներկայացնեն Հայաստանի Հանրապետությունից ծագող որոշակի համեմատելի արտադրանք՝ պայմանով, որ՝

- (a) անվանումը պիտակավորված է բացառապես ոչ լատինատառ,
- (b) արտադրանքի իրական ծագումը հստակորեն պիտակավորված է տեսանելիության միևնույն տիրույթում, և
- (c) ներկայացման մեջ ոչինչ մոլորության մեջ չի գցի հանրությանը արտադրանքի իրական ծագման առումով:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո հաշված 13 տարի անցումային ժամկետի ընթացքում «Կոնյակի» համար և սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո հաշված երկու տարի անցումային ժամկետի ընթացքում «Շամպայնի» համար Եվրոպական միության այդ աշխարհագրական նշումների՝ սույն Համաձայնագրի համաձայն պահպանությունը չի բացառում այդ անվանումների օգտագործումը Հայաստանի Հանրապետությունում՝ պայմանով, որ՝

- (a) անվանումը պիտակավորված է բացառապես ոչ լատինատառ,
- (b) արտադրանքի իրական ծագումը հստակորեն պիտակավորված է տեսանելիության միևնույն տիրույթում, և
- (c) ներկայացման մեջ ոչինչ մոլորության մեջ չի գցի սպառողներին արտադրանքի իրական ծագման առումով:

4. Հայաստանի Հանրապետությունից ծագող ապրանքների համար Եվրոպական միության «Կոնյակ» աշխարհագրական նշումի օգտագործման սահուն և արդյունավետ դադարեցումը խթանելու, ինչպես նաև արտահանման շուկաներում Հայաստանի Հանրապետության արդյունաբերությանն իր մրցունակ դիրքը պահպանելուն աջակցելու նպատակով Եվրոպական միությունը Հայաստանի Հանրապետությանը կտրամադրի տեխնիկական և ֆինանսական աջակցություն: Այդ աջակցությունը, որը տրամադրվելու է ԵՄ օրենսդրությանը համապատասխան, մասնավորապես ներառում է գործողություններ՝ ուղղված նոր անուն մշակելուն և ներքին ու արտահանման ավանդական շուկաներում նոր անունը խթանելուն, գովազդելուն և շուկայահանելուն:

5. 4-րդ պարբերության մեջ նշված ԵՄ աջակցության կոնկրետ գումարները, տեսակները, մեխանիզմները և ժամկետները սահմանվում են ֆինանսական և տեխնիկական աջակցության փաթեթում, որի վերաբերյալ Կողմերը միանշանակ համաձայնության կգան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Կողմերը համատեղ մշակում են աջակցության այդպիսի փաթեթի առաջադրանքները՝ հիմնվելով այն կարիքների մանրակրկիտ գնահատման վրա, որոնց ուղղված է այդ աջակցությունը: Այդ գնահատումը պետք է իրականացվի Կողմերի կողմից համատեղ ընտրված միջազգային խորհրդատվական ընկերության կողմից:

6. Այն դեպքում, երբ Եվրոպական միությունը չի տրամադրում 4-րդ պարբերության մեջ նշված ֆինանսական և տեխնիկական աջակցությունը, Հայաստանի Հանրապետությունը կարող է դիմել 13-րդ գլխով նախատեսված վեճերի կարգավորման մեխանիզմին և, հաջողության դեպքում, կասեցնել 2-րդ և 3-րդ պարբերություններից բխող պարտավորությունները:

7. Եվրոպական միության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը տրամադրվում է ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ութ տարվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 238

Ընդհանուր կանոնները

1. 231-րդ և 232-րդ հոդվածներում նշված արտադրանքի ներկրումը, արտահանումը և կոմերցիալիզացիան իրականացվում են այն Կողմի տարածքում կիրառվող օրենքներին և կարգավորումներին համապատասխան, որտեղ արտադրանքը շուկայահանվում է:
2. Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտեն պետք է, 240-րդ հոդվածի համաձայն, դիտարկի այն գրանցված աշխարհագրական նշման արտադրանքի հատկորոշումների վերաբերյալ հարցերը, որը հաստատվել է այն Կողմի իշխանությունների կողմից, որի տարածքում ծագում է այդ արտադրանքը՝ ներառյալ դրա հետ կապված ցանկացած փոփոխության վերաբերյալ հարցերը:
3. Սույն ենթաբաժնով պահպանվող աշխարհագրական նշումները կարող է չեղարկել միայն այն Կողմը, որտեղից ծագում է արտադրանքը:

ՀՈԴՎԱԾ 239

Համագործակցությունն ու թափանցիկությունը

1. Կողմերը կա՛մ ուղղակիորեն, կա՛մ 240-րդ հոդվածի համաձայն ստեղծված Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտեի միջոցով, կապ են պահպանում սույն ենթաբաժնի իրականացման և գործառության հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, Կողմը կարող է մյուս Կողմից պահանջել արտադրանքի հատկորոշումների ու դրանց փոփոխությունների և վերահսկողության ազգային մարմինների կապի ապահովման կենտրոնների վերաբերյալ տեղեկություններ:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է հանրամատչելի դարձնել սույն ենթաբաժնով պահպանվող աշխարհագրական նշումների հատկորոշումները կամ դրանց ամփոփագիրը և մյուս Կողմի՝ սույն ենթաբաժնի համաձայն պահպանվող աշխարհագրական նշումներին համապատասխանող վերահսկողության ազգային մարմինների կապի ապահովման կենտրոնների վերաբերյալ տեղեկությունները:

ՀՈՒՎԱԾ 240

Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտեն

1. Սույնով Կողմերը ստեղծում են Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտե՝ կազմված Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներից՝ սույն ենթաբաժնի իրականացումը վերահսկելու և աշխարհագրական նշումների վերաբերյալ նրանց համագործակցությունն ու երկխոսությունն ամրապնդելու նպատակով:

2. Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտեն որոշումներն ընդունում է կոնսենսուսով: Այն սահմանում է իր սեփական ընթացակարգային կանոնները: Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտեն հանդիպում է Կողմերից ցանկացածի պահանջով՝ հաջորդաբար Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում՝ Կողմերի կողմից համաձայնեցված ժամանակին, վայրում և ձևով, այդ թվում՝ տեսակոնֆերանսի միջոցով, սակայն ոչ ուշ, քան նման պահանջ ներկայացվելուց 90 օր հետո:

3. Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտեն նաև հետևում է սույն ենթաբաժնի պատշաճ գործառությանը և կարող է քննարկել ցանկացած հարց՝ կապված դրա իրականացման և գործառնության հետ: Մասնավորապես, այն պատասխանատու է՝

- (a) յուրաքանչյուր Կողմի տարածքում կիրառելի օրենսդրությանը հղումների առնչությամբ IX Հավելվածի A մասը փոփոխելու համար,
- (b) աշխարհագրական նշումների գրանցման տարրերի և վերահսկողության առնչությամբ IX Հավելվածի B մասը փոփոխելու համար,
- (c) աշխարհագրական նշումների ցանկի առնչությամբ X Հավելվածը փոփոխելու համար,
- (d) աշխարհագրական նշումների վերաբերյալ օրենսդրական և քաղաքականության մշակումների և աշխարհագրական նշումների բնագավառում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ հարցի մասին տեղեկություններ փոխանակելու համար,
- (e) սույն ենթաբաժնին համապատասխան պահպանությունը հաշվի առնելու նպատակով աշխարհագրական նշումների մասին տեղեկություններ փոխանակելու համար:

ԵՆԹԱԲԱԺԻՆ IV

Նմուշները

ՀՈԴՎԱԾ 241

Միջազգային համաձայնագրերը

Կողմերը պահպանում են Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի համաձայնագրի 1999 թվականի Ժնևյան ակտը:

ՀՈԴՎԱԾ 242

Գրանցված նմուշների պահպանությունը

1. Կողմերն ապահովում են ինքնուրույն ստեղծված նոր և ինքնատիպ նմուշների պահպանությունը: Այդ պահպանությունը տրամադրվում է գրանցմամբ և դրանց իրավատերերին վերապահում է բացառիկ իրավունք՝ սույն ենթաբաժնի դրույթներին համապատասխան:

Սույն ենթաբաժնի նպատակներով՝ Կողմը կարող է անհատական բնույթի նմուշը համարել ինքնատիպ:

2. Համալիր արտադրանքի բաղադրիչ մաս կազմող արտադրանքի նկատմամբ կիրառված կամ դրանում ներառված նմուշը համարվում է նոր և ինքնատիպ միայն՝

(a) եթե բաղադրիչ մասը համալիր արտադրանքի մեջ ներառվելուց հետո տեսանելի է մնում վերջինիս բնականոն օգտագործման ընթացքում, և

(b) այնքանով, որքանով բաղադրիչ մասի այդ տեսանելի հատկանիշներն իրենցով բավարարում են նորության և ինքնատիպության մասով պահանջները:

3. 2-րդ պարբերության (a) կետում օգտագործվող «բնականոն օգտագործում» եզրույթը նշանակում է օգտագործում վերջին օգտագործողի կողմից՝ բացառությամբ պահպանման, սպասարկման և վերանորոգման աշխատանքների:

4. Գրանցված նմուշի իրավատերն իրավունք ունի արգելելու սեփականատիրոջ համաձայնությունը չունեցող երրորդ կողմերին այդպիսի արտադրանքն առնվազն պատրաստել, առաջարկել վաճառքի համար, վաճառել, ներկրել, արտահանել, պահեստավորել կամ օգտագործել պահպանվող նմուշը կրող կամ մարմնավորող իրեր, երբ այդպիսի գործողությունները ձեռնարկվում են առևտրային նպատակներով, չափից ավելի վնասում են նմուշի բնականոն շահագործմանը կամ համատեղելի չեն բարեխիղճ առևտրային գործելակերպի հետ:

5. Հասանելի պահպանության տևողությունը կազմում է 25 տարի:

ՀՈԴՎԱԾ 243

Չգրանցված նմուշներին տրամադրվող պահպանությունը

1. Եվրոպական միությունն ու Հայաստանի Հանրապետությունը նախատեսում են իրավական միջոցներ, որպեսզի կանխեն արտադրանքի չգրանցված արտաքին տեսքի օգտագործումը, միայն եթե վիճարկվող օգտագործումն առաջանում է արտադրանքի չգրանցված արտաքին տեսքի կրկնօրինակումից: Այդպիսի օգտագործումն առնվազն ներառում է արտադրանքը վաճառքի համար առաջարկելը, շուկայահանելը, ներմուծելը կամ արտահանելը:

2. Արտադրանքի չգրանցված արտաքին տեսքի համար հասանելի պահպանության տևողությունը կազմում է առնվազն երեք տարի այն օրվանից, երբ նմուշը հանրությանը հասանելի է դարձվել Կողմերից մեկի տարածքում:

ՀՈՒՎԱԾ 244

Բացառություններն ու բացառումները

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է նախատեսել սահմանափակ բացառություններ նմուշների պահպանությունից՝ պայմանով, որ այդպիսի բացառություններն անհիմն կերպով չեն հակասում պահպանվող նմուշների բնականոն շահագործմանը և անհիմն կերպով վնաս չեն պատճառում պահպանվող նմուշի սեփականատիրոջ օրինական շահերին՝ հաշվի առնելով երրորդ կողմերի օրինական շահերը:

2. Նմուշի պահպանությունը չի տարածվում հիմնականում տեխնիկական կամ գործառական նկատառումներով թելադրված նմուշների վրա: Մասնավորապես, նմուշի իրավունքը չի տարածվում արտադրանքի արտաքին տեսքի հատկանիշների վրա, որոնք պարտադիր պետք է վերարտադրվեն իրենց ճշգրիտ ձևով և չափերով, որպեսզի այն արտադրանքը, որում արդյունաբերական նմուշը ներառված է կամ կիրառված, կարողանա մեխանիկորեն կապակցված լինել մեկ այլ արտադրանքի կամ տեղադրված լինել դրա մեջ, շուրջը կամ դիմաց այնպես, որ այդ արտադրանքից յուրաքանչյուրը կարողանա կատարել իր գործառույթը:

ՀՈՒՎԱԾ 245

Հեղինակային իրավունքի հետ կապը

Նմուշը պահպանության իրավունք ունի նաև Կողմի՝ հեղինակային իրավունքի մասին օրենքով՝ այն օրվանից, երբ նմուշը ստեղծվել է կամ որևէ ձևով ամրագրվել: Այն ծավալը և պայմանները, որոնցով այդպիսի պահպանությունը տրամադրվում է՝ ներառյալ ինքնատիպության պահանջվող մակարդակը, որոշում է յուրաքանչյուր Կողմ՝ իր ներպետական օրենքներին և կարգավորումներին համապատասխան:

ԵՆԹԱԲԱԺԻՆ V

ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 246

Միջազգային համաձայնագրերը

Կողմերը պահպանում են Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի դրույթները և գործադրում բոլոր խելամիտ ջանքերը՝ Արտոնագրային իրավունքի մասին պայմանագրին համապատասխանելու համար:

ՀՈԴՎԱԾ 247

Արտոնագրերը և հանրային առողջապահությունը

1. Կողմերն ընդունում են ԱՀԿ նախարարական համաժողովի կողմից 2001 թվականի նոյեմբերի 14-ին ընդունված՝ ԹԲԻՓՍ համաձայնագրի և հանրային առողջապահության մասին հռչակագրի կարևորությունը: Սույն ենթաբաժնով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները մեկնաբանելիս և իրականացնելիս Կողմերն ապահովում են այդ Հռչակագրի հետ համապատասխանությունը:
2. Կողմերը հետևում և նպաստում են ԱՀԿ Գլխավոր խորհրդի 2003 թվականի օգոստոսի 30-ի «ԹԲԻՓՍ համաձայնագրի և հանրային առողջապահության մասին Դոհայի հռչակագրի 6-րդ պարբերության կիրարկման մասին» որոշման իրականացմանը:

Լրացուցիչ պաշտպանության վկայագիրը

1. Կողմերն ընդունում են, որ դեղագործական և բույսերի պաշտպանության արտադրանքի նկատմամբ, որոնք իրենց համապատասխան տարածքներում պաշտպանվում են արտոնագրով, կարող է մինչև շուկայահանվելը կիրառվել վարչական թույլտվության ընթացակարգ: Կողմերն ընդունում են, որ արտոնագրի համար հայտ ներկայացնելու և արտադրանքն իրենց համապատասխան շուկաներում շուկայահանելու առաջին թույլտվության միջև ընկած ժամկետը, ինչպես այդ նպատակով սահմանված է իրենց համապատասխան օրենսդրությամբ, կարող է կրճատել արտոնագրով սահմանված արդյունավետ պաշտպանության ժամկետը:

2. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է պաշտպանության հետագա ժամկետ դեղագործական կամ բույսերի պաշտպանության այն արտադրանքի համար, որը պաշտպանված է արտոնագրով և որի նկատմամբ կիրառվել է վարչական թույլտվության ընթացակարգ, որը հավասար է 1-ին պարբերության երկրորդ նախադասության մեջ նշված ժամկետին՝ նվազեցված հինգ տարի ժամկետով:

3. Չնայած 2-րդ պարբերությանը՝ պաշտպանության հետագա ժամկետի տևողությունը չի կարող գերազանցել հինգ տարին:

Միությունում այն դեղագործական արտադրանքի դեպքում, որի համար իրականացվել են մանկաբարձական ուսումնասիրություններ, և այդ ուսումնասիրությունների արդյունքներն արտացոլված են արտադրանքի մասին տեղեկատվության մեջ, հնարավոր է ժամկետի հետագա 6 ամսով երկարացում:

ԵՆԹԱԲԱԺԻՆ VI

ՉԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 249

Առևտրային գաղտնիքների պաշտպանության շրջանակը

1. Կողմերը հաստատում են ԹԲԻՓՍ համաձայնագրի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված իրենց հանձնառությունները: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է քաղաքացիական դատավարության պատշաճ ընթացակարգեր և իրավական պաշտպանության միջոցներ առևտրային գաղտնիքի տիրապետող ցանկացած անձի համար՝ առևտրային գաղտնիքի ձեռքբերումը, օգտագործումը կամ բացահայտումը կանխելու, և դրա դիմաց վնասի փոխհատուցում ստանալու համար, երբ դա իրականացվել է ազնիվ առևտրային գործելակերպին հակասող ձևով:
2. Սույն ենթաբաժնի նպատակներով՝
 - (a) «առևտրային գաղտնիք» նշանակում է տեղեկություն, որը՝
 - (i) գաղտնի է այն առումով, որ այն ամբողջությամբ կամ իր բաղադրիչների ճշգրիտ փոխդասավորվածությամբ և համախմբությամբ ընդհանուր առմամբ հայտնի չէ կամ դյուրամատչելի չէ այն շրջանակների անձանց, որոնք սովորաբար գործ են ունենում տեղեկությունների նշված տեսակի հետ,
 - (ii) ունի առևտրային արժեք, քանի որ այն գաղտնի է, և
 - (iii) հանգամանքների ներքո ենթարկվել է տեղեկությունն օրինական կերպով վերահսկող անձի կողմից ձեռնարկված ողջամիտ քայլերի՝ այն գաղտնի պահելու նպատակով, և

(b) «առևտրային գաղտնիքի տիրապետող» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օրինական կերպով վերահսկում է առևտրային գաղտնիքը:

3. Սույն ենթաբաժնի նպատակներով՝ ազնիվ առևտրային գործելակերպին հակասող են համարվում արարքի առնվազն հետևյալ ձևերը՝

(a) առևտրային գաղտնիքի ձեռքբերումն առանց առևտրային գաղտնիքի տիրապետողի համաձայնության, երբ դա իրականացվել է առևտրային գաղտնիքի տիրապետողի օրինական վերահսկողության տակ գտնվող այնպիսի փաստաթղթեր, առարկաներ, նյութեր, սուբստանցիաներ կամ էլեկտրոնային ֆայլեր չթույլատրված կերպով մուտք գործելու, դրանց յուրացման կամ կրկնօրինակման միջոցով, որոնք պարունակում են առևտրային գաղտնիք կամ որոնցից կարող է եզրահանգվել առևտրային գաղտնիք.

(b) առևտրային գաղտնիքի օգտագործումը կամ բացահայտումը, երբ դա իրականացվել է առանց առևտրային գաղտնիքի տիրապետողի համաձայնության՝ այն անձի կողմից, որը համարվում է, որ՝

(i) առևտրային գաղտնիքը ձեռք է բերել (a) կետում նշված ձևով,

(ii) խախտել է գաղտնիության մասին համաձայնագիրը կամ առևտրային գաղտնիքը չբացահայտելու որևէ այլ պարտավորություն, կամ

(iii) խախտել է առևտրային գաղտնիքի օգտագործումը սահմանափակելու՝ պայմանագրային կամ որևէ այլ պարտավորություն, և

(c) առևտրային գաղտնիքի ձեռքբերումը, օգտագործումը կամ բացահայտումը, երբ դա իրականացվել է այն անձի կողմից, որը ձեռքբերման, օգտագործման կամ բացահայտման պահին իմացել կամ տվյալ հանգամանքներում պետք է իմացած լիներ, որ առևտրային գաղտնիքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է մեկ այլ անձից, որը (b) կետի իմաստով ապօրինաբար օգտագործում կամ բացահայտում էր առևտրային գաղտնիքը՝ ներառյալ երբ անձը դրդել է մեկ այլ անձի իրականացնելու այդ կետում նշված գործողությունները:

4. Սույն ենթաբաժնում ոչինչ չի հասկացվում որպես որևէ Կողմի ուղղված պահանջ, որ արարքի հետևյալ ձևերից որևէ մեկը համարի ազնիվ առևտրային գործելակերպին հակասող.

- (a) համապատասխան տեղեկության անկախ հայտնաբերում կամ ստեղծում անձի կողմից,
- (b) արտադրանքի հակառակ նախագծում այն անձի կողմից, որն օրինականորեն տիրապետում է դրան և որն ազատ է համապատասխան տեղեկության ձեռքբերումը սահմանափակելու իրավականորեն վավեր որևէ պարտականությունից,
- (c) համապատասխան ներպետական օրենքով պահանջված կամ թույլատրված տեղեկության ձեռքբերումը, օգտագործումը կամ բացահայտումը, և
- (d) բնականոն զբաղվածության ընթացքում ազնվորեն ձեռք բերված իրենց փորձի և հմտությունների օգտագործումն աշխատողների կողմից:

5. Սույն ենթաբաժնում ոչինչ չի հասկացվում որպես արտահայտվելու և տեղեկատվության ազատության սահմանափակում՝ ներառյալ լրատվամիջոցների ազատությունը, որը պաշտպանված է Կողմերից յուրաքանչյուրի իրավագործության ներքո:

ՀՈԴՎԱԾ 250

Քաղաքացիական դատավարության ընթացակարգերն ու առևտրային գաղտնիքների իրավական պաշտպանության միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ 249-րդ հոդվածում նշված քաղաքացիական դատավարությանը մասնակցող կամ այդ իրավական վարույթի մաս կազմող փաստաթղթերին հասանելիություն ունեցող որևէ անձի չթույլատրվի օգտագործել կամ բացահայտել որևէ առևտրային գաղտնիք կամ ենթադրյալ առևտրային գաղտնիք, որն իրավասու դատական մարմինները, ի պատասխան շահագրգիռ կողմի պատշաճ հիմնավորված դիմումի, ճանաչել են գաղտնի, և որի մասին նրանք իմացել են այդպիսի մասնակցության կամ հասանելիության արդյունքում:

2. 249-րդ հոդվածում նշված քաղաքացիական դատավարության ընթացքում յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր դատական մարմիններն ունենան առնվազն հետևյալն անելու լիազորություն.

- (a) ձեռնարկել ժամանակավոր միջոցներ՝ կանխելու համար առևտրային գաղտնիքի՝ ազնիվ առևտրային գործելակերպին հակասող ձևով ձեռքբերումը, օգտագործումը կամ բացահայտումը.
- (b) ձեռնարկել դատական պաշտպանության միջոցներ՝ կանխելու համար առևտրային գաղտնիքի՝ ազնիվ առևտրային գործելակերպին հակասող ձևով ձեռքբերումը, օգտագործումը կամ բացահայտումը.
- (c) կարգադրել այն անձին, որն իմացել կամ պետք է իմացած լիներ, որ ինքն առևտրային գաղտնիքը ձեռք էր բերում, օգտագործում կամ բացահայտում ազնիվ առևտրային գործելակերպին հակասող ձևով, վճարել առևտրային գաղտնիքի տիրապետողին այդպիսի ձեռքբերման, օգտագործման կամ բացահայտման արդյունքում փաստացի կրած վնասի չափին համապատասխան փոխհատուցում.
- (d) ձեռնարկել հատուկ միջոցներ՝ պահպանելու համար առևտրային գաղտնիքի՝ ազնիվ առևտրային գործելակերպին հակասող ձևով ենթադրյալ ձեռքբերման, օգտագործման կամ բացահայտման հետ կապված քաղաքացիական վարույթի ընթացքում հրապարակված ցանկացած առևտրային գաղտնիքի կամ ենթադրյալ առևտրային գաղտնիքի գաղտնիությունը. այդպիսի հատուկ միջոցները, համապատասխան Կողմի ներպետական օրենքին համապատասխան, կարող են ներառել՝
 - (i) որոշ փաստաթղթերին հասանելիությունն ամբողջությամբ կամ մասամբ սահմանափակելու,
 - (ii) լսումներին և դրանց համապատասխան արձանագրություններին կամ տառադարձումներին հասանելիությունը սահմանափակելու, և
 - (iii) դատական որոշման ոչ գաղտնի այն տարբերակը հասանելի դարձնելու հնարավորություն, որում առևտրային գաղտնիք պարունակող հատվածները հեռացվել կամ խմբագրվել են, և

(e) իրավական պաշտպանության միջոցների կամ այդ վարույթի ընթացքում հրապարակված առևտրային գաղտնիքի կամ ենթադրյալ առևտրային գաղտնիքի պաշտպանության առնչությամբ դատարանի կողմից 1-ին պարբերության կամ սույն պարբերության «d» կետի համաձայն ընդունված միջոցների խախտման համար կողմերի նկատմամբ կամ դատարանի իրավագործությանը ենթակա այլ անձանց նկատմամբ կիրառել պատժամիջոցներ:

3. Կողմերից չի պահանջվում ապահովել 249-րդ հոդվածում նշված դատական ընթացակարգեր և իրավական պաշտպանության միջոցներ այն դեպքում, երբ ազնիվ առևտրային գործելակերպին հակասող արարքն իրականացվում է, իրենց համապատասխան ներպետական օրենքի համաձայն, ոչ իրավաչափ արարքը, սխալ արարքը կամ ապօրինի գործողությունը հայտնաբերելու համար կամ օրենքով ճանաչված օրինական շահը պաշտպանելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 251

Դեղագործական արտադրանքը շուկայահանելու թույլտվություն ստանալու համար ներկայացված տվյալների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Կողմ դեղագործական արտադրանքը շուկայահանելու (շուկայահանման թույլտվություն) թույլտվություն ստանալու համար ներկայացված առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները պաշտպանում է երրորդ կողմերին բացահայտելուց, եթե գերիշխող առողջապահական շահերով այլ բան նախատեսված չէ: Ցանկացած գաղտնի բիզնես տեղեկատվություն նույնպես պետք է պաշտպանվի անարդար առևտրային գործելակերպից:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ շահագրգիռ Կողմի տարածքում շուկայահանման առաջին թույլտվությունից հետո՝ ութ տարի ժամկետով, շուկայահանման թույլտվություն շնորհելու համար պատասխանատու պետական մարմինը հաշվի չառնի գաղտնի բիզնես տեղեկատվությունը կամ նախակլինիկական հետազոտությունների կամ կլինիկական փորձարկումների արդյունքները, որոնք տրամադրվել են շուկայահանման թույլտվության առաջին հայտում և հետագայում անձի կամ սուբյեկտի կողմից՝ անկախ նրանից՝ պետական, թե մասնավոր, ներկայացվել են դեղագործական արտադրանքը շուկայահանելու թույլտվության մեկ այլ հայտի օգտին՝ առանց այն անձի կամ սուբյեկտի հստակ համաձայնության, որը ներկայացրել է այդ տվյալները, եթե երկու Կողմերի կողմից ճանաչված միջազգային համաձայնագրերով այլ բան նախատեսված չէ:

3. Շահագրգիռ Կողմի տարածքում շուկայահանման առաջին թույլտվության շնորհման օրվանից հետո տասը տարվա ընթացքում շուկայահանման առաջին թույլտվության մեջ տրամադրված նախակլինիկական հետազոտությունների կամ կլինիկական փորձարկումների արդյունքների հիման վրա հետագայում ներկայացված ցանկացած հայտի համար շնորհված շուկայահանման թույլտվությամբ չի թույլատրվում դեղագործական արտադրանքը շուկայահանել, եթե հետագա հայտատուն չի ներկայացնում նախակլինիկական հետազոտությունների կամ կլինիկական փորձարկումների սեփական արդյունքները (կամ այն նախակլինիկական հետազոտությունների կամ կլինիկական փորձարկումների արդյունքները, որոնք օգտագործվել են այդ տեղեկությունները տրամադրած կողմի համաձայնությամբ)՝ բավարարելով միննույն պահանջները, ինչ առաջին հայտատուն: Սույն պարբերության մեջ սահմանված պահանջներին չհամապատասխանող արտադրանքը շուկայում չի թույլատրվում:

4. Ի հավելումն դրա՝ 3-րդ պարբերության մեջ նշված տասը տարի ժամկետը երկարաձգվում է առավելագույնը մինչև 11 տարի, եթե թույլտվություն ստանալուն հաջորդող առաջին ութ տարվա ընթացքում թույլտվության իրավատերը ստանում է թույլտվություն մեկ կամ ավելի նոր բուժական ցուցումների համար, որոնք ենթադրաբար կստեղծեն կլինիկական զգալի առավելություններ՝ գործող բուժումների համեմատ:

ՀՈՒՎԱԾ 252

Բույսերի պաշտպանության արտադրանքի վերաբերյալ տվյալների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ճանաչում է առաջին անգամ ներկայացված փորձարկման կամ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվության սեփականատիրոջ՝ բույսերի պաշտպանության արտադրանքի շուկայահանման համար թույլտվություն ստանալու ժամանակավոր իրավունքը: Այդպիսի ժամկետի ընթացքում փորձարկման կամ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը չի օգտագործվում հօգուտ որևէ այլ անձի, որը նպատակ ունի ստանալու բույսերի պաշտպանության արտադրանքի շուկայահանման թույլտվություն, բացի այն դեպքից, երբ տրվել է առաջին սեփականատիրոջ հստակ համաձայնությունը: Սույն ենթաբաժնում ժամանակավոր իրավունքն այսուհետ նշվում է որպես «տվյալների պաշտպանություն»:

2. 1-ին պարբերության մեջ նշված փորձարկման կամ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը պետք է բավարարի հետևյալ պայմանները.

(a) անհրաժեշտ լինել թույլտվության կամ թույլտվության մեջ փոփոխություն կատարելու համար՝ այլ մշակաբույսերի վրա օգտագործումը թույլ տալու համար, և

(b) վավերացված լինել որպես պատշաճ լաբորատոր գործելակերպի կամ պատշաճ փորձարարական գործելակերպի սկզբունքներին համապատասխանող:

3. Տվյալների պաշտպանության ժամկետը տվյալ Կողմի տարածքում իրավասու մարմնի կողմից շնորհված առաջին թույլտվությունից հետո առնվազն տասը տարի է: Բույսերի պաշտպանության՝ ցածր ռիսկի արտադրանքի համար ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 13 տարի:

4. 3-րդ պարբերության մեջ նշված ժամկետները փոքրածավալ օգտագործումների համար թույլտվության գործողության ժամկետի յուրաքանչյուր երկարաձգման համար երկարաձգվում են երեք ամսով, եթե այդպիսի թույլտվությունների հայտերը թույլտվության իրավատիրոջ կողմից ներկայացվում են իրավասու մարմնի կողմից առաջին թույլտվության շնորհումից առնվազն հինգ տարի հետո: Տվյալների պաշտպանության ընդհանուր ժամկետը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել 13 տարին: Բույսերի պաշտպանության՝ ցածր ռիսկի արտադրանքի համար տվյալների պաշտպանության ընդհանուր ժամկետը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել 15 տարին:

«Փոքրածավալ օգտագործում» նշանակում է Կողմի տարածքում բույսերի պաշտպանության արտադրանքի օգտագործում այն բույսերի կամ բույսերի արտադրանքի վրա, որոնք լայնորեն չեն աճեցվում տվյալ Կողմի տարածքում կամ լայնորեն չեն աճեցվում բույսերի պաշտպանության բացառիկ կարիքները բավարարելու համար:

5. Հետազոտությունը կամ ուսումնասիրությունը նույնպես պաշտպանվում է, եթե դա անհրաժեշտ է թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման կամ թույլտվության վերանայման համար: Այդպիսի դեպքերում տվյալների պաշտպանության ժամկետը 30 ամիս է:

6. Ողնաշարավոր կենդանիների վրա կատարվող կրկնակի փորձարկումից խուսափելու համար յուրաքանչյուր Կողմ սահմանում է Կողմերի համապատասխան տարածքներում հիմնադրված հայտատուին և նախորդ թույլտվությունների իրավատերերին առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ փոխանակելուն պարտավորեցնող միջոցներ:

ԵՆԹԱԲԱԺԻՆ VII

ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 253

Բույսերի սորտերը

1. Յուրաքանչյուր Կողմ պաշտպանում է բույսերի սորտերի նկատմամբ իրավունքները Բույսերի նոր սորտերի պաշտպանության միջազգային կոնվենցիային (UPOV) համապատասխան, որը ներառում է նաև սելեկցիոների իրավունքներից բացառությունները, որոնք նշված են այդ Կոնվենցիայի 15-րդ հոդվածում, և համագործակցում են՝ այդ իրավունքները պաշտպանելու և դրանց իրականացումն ապահովելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության նկատմամբ սույն հոդվածը կիրառվում է ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի հետո:

ԲԱԺԻՆ Ը

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ԵՆԹԱԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 254

Ընդհանուր պարտավորությունները

1. Կողմերը վերահաստատում են ԹԲԻՓՍ համաձայնագրով, մասնավորապես դրա III մասով իրենց ստանձնած պարտավորությունները: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է սույն բաժնի լրացուցիչ միջոցները, ընթացակարգերը և իրավական պաշտպանության միջոցները, որոնք անհրաժեշտ են մտավոր սեփականության իրավունքների իրականացումն ապահովելու համար: Այդ միջոցները, ընթացակարգերը և իրավական պաշտպանության միջոցները պետք է լինեն արդարացի ու անաչառ և չպետք է առաջացնեն անհարկի բարդություններ կամ ծախսեր կամ պատճառ դառնան չհիմնավորված ժամկետներ սահմանելու կամ անտեղի ուշացումների համար:
2. 1-ին պարբերության մեջ նշված միջոցները, ընթացակարգերը և իրավական պաշտպանության միջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ ու տարհամոզիչ և պետք է կիրառվեն այնպես, որ օրինական առևտրի համար որևէ խոչընդոտ չստեղծեն և նախատեսեն երաշխիքներ դրանց չարաշահումների դեմ:

3. Սույն բաժնի II ենթաբաժնի նպատակներով՝ «մտավոր սեփականության իրավունքներ» հասկացությունը պետք է ընդգրկի առնվազն հետևյալ իրավունքները.

- (a) հեղինակային իրավունքը,
- (b) հեղինակային իրավունքին հարակից այլ իրավունքներ,
- (c) տվյալների բազաներ մշակողի (*sui generis*) իրավունքը,
- (d) կիսահաղորդչային ապրանքների տոպոլոգիաներ մշակողի իրավունքները,
- (e) ապրանքային նշանների նկատմամբ իրավունքները,
- (f) նմուշի նկատմամբ իրավունքները,
- (g) արտոնագրային իրավունքները, այդ թվում՝ լրացուցիչ պաշտպանության վկայագրից ծագող իրավունքները,
- (h) աշխարհագրական նշումների,
- (i) օգտակար մոդելների նկատմամբ իրավունքները,
- (j) բույսերի նոր սորտերի նկատմամբ իրավունքները, և
- (k) ապրանքային անվանումների նկատմամբ իրավունքներն այնքանով, որքանով դրանք, որպես բացառիկ իրավունքներ, պաշտպանվում են տվյալ ներպետական օրենսդրությամբ:

Առևտրային գաղտնիքների նկատմամբ իրավունքները ներառված չեն սույն ենթաբաժնում: Առևտրային գաղտնիքների նկատմամբ իրավունքների իրականացման ապահովմանն անդրադարձ է կատարվում 250-րդ հոդվածում:

Դիմում ներկայացնելու իրավունք ունեցողները

Յուրաքանչյուր Կողմ՝ որպես սույն բաժնով և ԹԲԲՓՍ համաձայնագրի III մասով սահմանված միջոցները, ընթացակարգերը և իրավական պաշտպանության միջոցների կիրառումը պահանջելու իրավունք ունեցող անձինք, ճանաչում է՝

- (a) մտավոր սեփականության իրավունքների իրավատերերին՝ կիրառվող իրավունքին համապատասխան,
- (b) այդ իրավունքներն օգտագործելու թույլտվություն ունեցող մյուս բոլոր անձանց, մասնավորապես՝ լիցենզատուներին, այնքանով, որքանով դա թույլատրվում է կիրառվող օրենքով և դրան համապատասխան,
- (c) մտավոր սեփականության իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող մարմիններին, որոնք պարբերաբար ճանաչվում են որպես մտավոր սեփականության իրավունքների իրավատերերին ներկայացնելու իրավունք ունեցողներ՝ այնքանով, որքանով դա թույլատրվում է կիրառվող օրենքով և դրան համապատասխան, և
- (d) պաշտպանություն իրականացնող մասնագիտացված մարմիններին, որոնք պարբերաբար ճանաչվում են որպես մտավոր սեփականության իրավունքների իրավատերերին ներկայացնելու իրավունք ունեցողներ՝ այնքանով, որքանով դա թույլատրվում է կիրառվող օրենքով և դրան համապատասխան:

ԵՆԹԱԲԱԺԻՆ II

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 256

Ապացույցների պահպանմանն ուղղված միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ, նույնիսկ նախքան գործն ըստ էության քննող վարույթ հարուցելը, իրավասու դատական մարմինները, հիմնվելով այն Կողմի պահանջի վրա, որը ներկայացրել է ողջամտության սահմաններում հասանելի ապացույցներ՝ հիմնավորելու համար իր պնդումներն այն մասին, որ մտավոր սեփականության իր իրավունքը խախտվել է կամ կարող է խախտվել, կարողանան պահանջել ձեռնարկել անհապաղ և արդյունավետ ժամանակավոր միջոցներ՝ ենթադրյալ խախտման վերաբերյալ համապատասխան ապացույցի պահպանման համար՝ գաղտնի տեղեկությունների պաշտպանությունն ապահովելու պայմանով:

2. 1-ին պարբերության մեջ նշված ժամանակավոր միջոցները կարող են ներառել մտավոր սեփականության իրավունքը ենթադրաբար խախտող ապրանքների մանրամասն նկարագրությունը՝ նմուշներ վերցնելու միջոցով կամ առանց դրա, կամ դրանց առգրավումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այդ ապրանքների արտադրության մեջ կամ տարածման համար օգտագործված նյութերն ու սարքավորումները և դրանց վերաբերող փաստաթղթերը: Այդ միջոցները, անհրաժեշտության դեպքում, առանց մյուս կողմին լսելու, կիրառվում են հատկապես այն դեպքում, երբ ցանկացած ուշացում կարող է անդառնալի վնաս պատճառել իրավաստիրոջը, կամ երբ առկա է ապացույցի ոչնչացման ակնհայտ վտանգ: Մյուս Կողմն ունի ողջամիտ ժամկետում լսվելու իրավունք:

Տեղեկություններ ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ մտավոր սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ քաղաքացիական վարույթի ընթացքում և ի պատասխան հայցվորի՝ հիմնավոր ու համաչափ պահանջի՝ իրավասու դատական մարմինները կարողանան իրավախախտից կամ ցանկացած այլ անձից, որը դատական վարույթի մասնակից կամ վկա է, պահանջել տեղեկություններ ներկայացնել մտավոր սեփականության իրավունքը խախտող ապրանքների կամ ծառայությունների ծագման և տարածման ցանցերի վերաբերյալ:

Սույն պարբերության նպատակներով «ցանկացած այլ անձ» եզրույթը նշանակում է այն անձը, որը՝

- (a) ինչպես պարզվել է, առևտրային մակարդակով տիրապետում է հեղինակային իրավունքը խախտող ապրանքներին,
- (b) ինչպես պարզվել է, առևտրային մակարդակով օգտվել է հեղինակային իրավունքը խախտող ծառայություններից,
- (c) ինչպես պարզվել է, առևտրային մակարդակով մատուցել է ծառայություններ, որոնք օգտագործվել են իրավունքը խախտող գործողություններ կատարելու համար, կամ
- (d) սույն պարբերությամբ նախատեսված անձի կողմից նշվել է որպես ապրանքների արտադրության, մշակման կամ տարածման կամ ծառայությունների մատուցման գործունեությամբ զբաղվող անձ:

Սույն պարբերության մեջ նշված տեղեկությունները, անհրաժեշտության դեպքում, ընդգրկում են՝

- (a) ապրանքները կամ ծառայությունները արտադրողների, մշակողների, տարածողների, մատակարարողների և դրանց մյուս նախկին իրավատերերի, ինչպես նաև ենթադրյալ մեծածախ ու մանրածախ առևտրով զբաղվողների անուններն ու հասցեները, և

(b) արտադրված, մշակված, առաքված, ստացված կամ պատվիրված ապրանքների կամ ծառայությունների ծավալների, ինչպես նաև դրանք ձեռք բերելու գների վերաբերյալ տեղեկություններ:

2. Սույն հոդվածը կիրառվում է՝ չհակասելով օրենսդրական մյուս դրույթներին, որոնք՝

(a) իրավատիրոջը տալիս են ավելի ամբողջական տեղեկություններ ստանալու իրավունք,

(b) կարգավորում են սույն հոդվածի համաձայն տրամադրված տեղեկությունների օգտագործումը քաղաքացիական կամ քրեական գործերով վարույթներում,

(c) կարգավորում են տեղեկություններ ստանալու իրավունքի չարաշահման համար նախատեսվող պատասխանատվության հարցը,

(d) հնարավորություն են տալիս հրաժարվել տրամադրելու այնպիսի տեղեկություններ, որոնք 1-ին պարբերության մեջ նշված անձին կստիպեն ընդունել մտավոր սեփականության իրավունքի խախտման մեջ իր կամ իր մերձավոր ազգականների մասնակցության փաստը, կամ

(e) կարգավորում են տեղեկատվության աղբյուրների գաղտնիության պահպանության կամ անձնական տվյալների մշակման հետ կապված հարցերը:

Ժամանակավոր և նախազգուշական միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ դատական մարմինները կարողանան, դիմումատուի պահանջով, ենթադրյալ իրավախախտի մասով ձեռնարկել հայցի ապահովման միջոց՝ մտավոր սեփականության իրավունքի ցանկացած նախապատրաստվող խախտում կանխելու համար: Դատական մարմինները կարող են նաև ժամանակավոր հիմունքներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ պարբերական տուգանքների միջոցով արգելել այդ իրավունքի ենթադրյալ խախտումները, որոնք շարունակական բնույթ ունեն, կամ խախտումը շարունակվելու դեպքում երաշխիքների տրամադրում պահանջելու միջոցով՝ իրավատիրոջ համար փոխհատուցում ապահովելու նպատակով: Հայցի ապահովման միջոց կարող է նույն պայմաններով ձեռնարկվել նաև այն միջնորդի մասով, որի մատուցած ծառայությունները երրորդ կողմն օգտագործում է մտավոր սեփականության իրավունքը խախտելու համար:

2. Հայցի ապահովման միջոց կարող է ձեռնարկվել նաև՝ պահանջելով առգրավել կամ ոչնչացման նպատակով հանձնել մտավոր սեփականության իրավունքի խախտման մեջ կասկածվող ապրանքները՝ առևտրային ցանց դրանց մուտքը կամ տեղաշարժը կանխելու նպատակով:

3. Եթե ենթադրյալ խախտումը կատարվում է առևտրային մակարդակում, ապա յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այն դեպքում, երբ դիմումատուն ներկայացնում է այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են վտանգել վնասների հատուցումը, դատական մարմինները կարողանան հանձնարարել ենթադրյալ իրավախախտի շարժական և անշարժ գույքի վրա, որպես նախազգուշական միջոց, արգելանք դնել, ինչպես նաև սառեցնել նրա բանկային հաշիվները և այլ ակտիվներ: Այդ նպատակով իրավասու մարմինները կարող են պահանջել ներկայացնել բանկային, ֆինանսական կամ առևտրային փաստաթղթեր կամ ապահովել համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

ՀՈՒՎԱԾ 259

Ուղղիչ միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իրավասու դատական մարմինները, դիմումատուի պահանջով և չսահմանափակելով խախտման հետևանքով իրավատիրոջը պատճառված վնասների հատուցման իրավունքը, և առանց որևէ փոխհատուցում նախատեսելու, կարողանան հանձնարարել առնվազն առևտրային ցանցերից վերջնականապես հանել կամ վերացնել այն ապրանքները, որոնք, ինչպես իրենք պարզել են, խախտում են մտավոր սեփականության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում իրավասու դատական մարմինները կարող են հանձնարարել նաև վերացնել այն նյութերը կամ սարքավորումները, որոնք հիմնականում օգտագործվում են մտավոր սեփականության իրավունքը խախտող ապրանքների արտադրության կամ մշակման համար:

2. Կողմերի դատական մարմիններն իրավասություն ունեն հանձնարարելու, որ 1-ին պարբերության մեջ նշված միջոցներն իրականացվեն իրավախախտի հաշվին, եթե որոշակի պատճառներով հակառակը չի հիմնավորվում:

ՀՈՒՎԱԾ 260

Կարգադրությունները

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այն դեպքում, երբ դատարանի որոշմամբ հաստատվում է մտավոր սեփականության իրավունքի խախտման փաստը, դատական մարմինները կարողանան իրավախախտի, ինչպես նաև այն միջնորդի մասով, որի մատուցած ծառայությունները երրորդ կողմն օգտագործում է մտավոր սեփականության իրավունքը խախտելու համար, արձակել կարգադրություն՝ շարունակական բնույթ ունեցող խախտումը վերացնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 261

Այլընտրանքային միջոցները

Կողմը կարող է սահմանել, որ անհրաժեշտության դեպքում և այն անձի պահանջով, որի նկատմամբ կարող են կիրառվել 259-րդ կամ 260-րդ հոդվածով սահմանված միջոցները, իրավասու դատական մարմինները կարող են որոշել, որ նշված հոդվածներով սահմանված միջոցները կիրառելու փոխարեն տուժող կողմին պետք է վճարվի դրամական փոխհատուցում: Այդպիսի դրամական փոխհատուցումը վճարվում է, եթե այդ միջոցների համար պատասխանատու անձը չի գործել դիտավորությամբ կամ անզգուշությամբ, և եթե 259-րդ և 260-րդ հոդվածներով սահմանված միջոցների կիրառումը կարող է անհամաչափ վնաս պատճառել այդ անձին, և եթե տուժող կողմին վճարվող դրամական փոխհատուցումը ողջամտության սահմաններում համարվում է բավարար:

ՀՈԴՎԱԾ 262

Վնասները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ դատական մարմինները, տուժող կողմի դիմումի հիման վրա, իրավախախտից, որը գիտակցաբար կամ գիտակցելու համար բավարար հիմքեր ունենալով զբաղվել է իրավախախտ գործունեությամբ, պահանջեն իրավատիրոջը վճարել նրան պատճառված վնասի դիմաց, որը համաչափ է խախտման արդյունքում իրավատիրոջ կրած իրական վնասին: Դատական մարմինները վնասների չափը որոշելիս՝

(a) հաշվի են առնում համապատասխան բոլոր հանգամանքները, ինչպես օրինակ՝ տնտեսական բացասական հետևանքները, այդ թվում՝ շահույթի կորուստները, որոնք կրել է տուժող կողմը, իրավախախտի կողմից ոչ արդարացի կերպով ստացված շահույթը, իսկ համապատասխան դեպքերում՝ տնտեսական գործոններից տարբեր այլ տարրեր, ինչպես օրինակ՝ խախտման հետևանքով իրավատիրոջը պատճառված բարոյական վնասը, կամ

(b) որպես (a) կետի այլընտրանք՝ նրանք համապատասխան դեպքերում կարող են վնասների չափը սահմանել միանվագ գումարի ձևով՝ հիմնվելով այնպիսի տարրերի վրա, ինչպիսիք են առնվազն թոյալթիները կամ վճարները, որոնք կպահանջվեին, եթե իրավախախտը մտավոր սեփականության տվյալ իրավունքն օգտագործելու թույլտվություն խնդրեր:

2. Եթե իրավախախտն առանց գիտակցելու կամ գիտակցելու համար բավարար հիմքեր չունենալով զբաղվել է իրավախախտ գործունեությամբ, ապա Կողմը կարող է սահմանել, որ դատական մարմինները կարող են հոգուտ տուժող կողմի պահանջել շահույթի վերադարձ կամ վնասների դիմաց վճարում, որոնք կարող են նախօրոք սահմանվել:

ՀՈԴՎԱԾ 263

Դատական ծախսերը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ գործը շահող կողմի կրած՝ հիմնավորված և համաչափ դատական ծախսերը և մյուս ծախսերը, որպես կանոն, կատարի պարտվող կողմը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է արդարության սկզբունքին:

ՀՈԴՎԱԾ 264

Դատական որոշումների հրապարակումը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ մտավոր սեփականության իրավունքի խախտման հարցով հարուցված վարույթում դատական մարմինները կարողանան, դիմումատուի պահանջով և իրավախախտի հաշվին, հանձնարարել ձեռնարկելու համապատասխան միջոցներ՝ որոշման վերաբերյալ տեղեկությունները տարածելու համար, այդ թվում՝ որոշումը ցուցադրելով և այն ամբողջությամբ կամ մասամբ հրապարակելով:

ՀՈԴՎԱԾ 265

Հեղինակ կամ սեփականատեր լինելու կանխավարկածը

Կողմերը գիտակցում են, որ սույն բաժնով նախատեսված միջոցները, ընթացակարգերը և իրավական պաշտպանության միջոցները կիրառելու նպատակով՝ հեղինակ լինելու փաստը ճանաչելու և, հետևաբար, մտավոր սեփականության իրավունքի խախտման հարցով վարույթ հարուցելու իրավունք ունենալու համար բավարար է, որ գրական կամ գեղարվեստական ստեղծագործության հեղինակի անունը սահմանված ձևով հայտնվի ստեղծագործության վրա, եթե չկան հակառակի վերաբերյալ ապացույցներ:

ԵՆԹԱԲԱԺԻՆ III

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ
ԱՊԱՀՈՎԵԼԸ

ՀՈԴՎԱԾ 266

Իրավունքների իրականացումը սահմանային մակարդակով ապահովելը

1. Մտավոր սեփականության իրավունքների իրականացման ապահովմանն ուղղված սահմանային միջոցները կիրառելիս յուրաքանչյուր Կողմ ապահովում է համապատասխանությունը ՍԱԳՀ 1994 և ԹԲԻՓՍ համաձայնագրերով սահմանված իրենց պարտավորություններին:

2. Կողմերի մաքսային տարածքներում մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով Կողմերի համապատասխան մաքսային մարմինները ձեռնարկում են մի շարք միջոցառումներ՝ 3-րդ և 4-րդ պարբերություններում նշված՝ մտավոր սեփականության իրավունքի խախտման մեջ կասկածվող ապրանքների փոխադրման դեպքերը բացահայտելու նպատակով: Այդ միջոցառումները ներառում են ռիսկերի վերլուծության մեթոդները, որոնք հիմնված են, *inter alia*, իրավունքի հիման վրա ստացված տեղեկությունների, հետախուզական գործողությունների և բեռների զննման արդյունքում ձեռք բերված տվյալների վրա:

3. Յուրաքանչյուր Կողմի մաքսային մարմինները, իրավատերերի պահանջի հիման վրա, միջոցներ են ձեռնարկում՝ մաքսային հսկողության ներքո այն ապրանքների բացթողումը արգելելու կամ կասեցնելու համար, որոնց մասով կասկածներ կան, որ դրանք խախտում են ապրանքային նշանների նկատմամբ իրավունքները, հեղինակային իրավունքները և հարակից իրավունքները, աշխարհագրական նշումների, արտոնագրային, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների և բույսերի սորտերի նկատմամբ իրավունքները:

4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան երեք տարի հետո Կողմերը նախաձեռնում են քննարկումներ իրենց համապատասխան մաքսային մարմինների՝ սեփական նախաձեռնությամբ մաքսային հսկողության ներքո այն ապրանքների բացթողումն արգելելու կամ կասեցնելու իրավունքների վերաբերյալ, որոնց մասով կասկածներ կան, որ դրանք խախտում են ապրանքային նշանների նկատմամբ իրավունքները, հեղինակային իրավունքները և հարակից իրավունքները, աշխարհագրական նշումների, արտոնագրային, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների և բույսերի սորտերի նկատմամբ իրավունքները:

5. Չնայած 3-րդ պարբերությանը՝ Կողմը որևէ պարտավորություն չունի կիրառելու, սակայն կարող է որոշել կիրառել այդ միջոցները մեկ այլ երկրի շուկայում իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ վաճառքի հանված ապրանքների ներմուծումների նկատմամբ:

6. Կողմերը համաձայնում են համագործակցել մտավոր սեփականության իրավունքի խախտման մեջ կասկածվող ապրանքների միջազգային առևտրի հարցում: Այդ նպատակով, յուրաքանչյուր Կողմ պատրաստ է իր մաքսային ծառայությունում ստեղծել կապի ապահովման կենտրոն և այդ մասին ծանուցել մյուս Կողմին: Այդպիսի համագործակցությունը ներառում է իրավատերերից տեղեկությունների ստացման մեխանիզմների, լավագույն գործելակերպերի և ռիսկերի կառավարման ռազմավարությունների հետ կապված փորձի վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը, ինչպես նաև այնպիսի տեղեկությունների փոխանակումը, որոնք կօգնեն բացահայտելու մտավոր սեփականության իրավունքի խախտման մեջ կասկածվող ապրանքներ պարունակող փոխադրումները: Ցանկացած տեղեկություն ներկայացվում է յուրաքանչյուր Կողմի տարածքում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ դրույթների լիակատար պահպանմամբ:

7. Չսահմանափակվելով համագործակցության մյուս ձևերով՝ կկիրառվի «Մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցության վերաբերյալ» II Արձանագրությունը՝ մտավոր սեփականության իրավունքների իրականացումը սահմանային մակարդակով ապահովելու նպատակով:

8. Չսահմանափակվելով Գործընկերության կոմիտեի ընդհանուր իրավասությամբ՝ 126-րդ հոդվածում նշված Մաքսային ենթակոմիտեն ապահովում է սույն բաժնի պատշաճ իրականացումն ու կիրառումը, սահմանում է առաջնահերթություններն ու նախատեսում երկու Կողմերի իրավասու մարմինների միջև համագործակցության համապատասխան ընթացակարգերը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ IV

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 267

Վարքագծի կանոնները

1. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է՝
 - (a) առևտրային կամ մասնագիտական միավորումների կամ կազմակերպությունների կողմից վարքագծի կանոնները մշակելը, որոնք ուղղված կլինեն մտավոր սեփականության իրավունքների իրականացման ապահովմանը նպաստելուն, և
 - (b) վարքագծի կանոնների նախագծի և վարքագծի կանոնների կիրառման ցանկացած գնահատման արդյունքները ներկայացնելը յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմիններ:

ՀՈԴՎԱԾ 268

Համագործակցությունը

1. Կողմերը համագործակցում են՝ սույն գլխով ստանձնած հանձնառությունների և պարտավորությունների իրականացմանն օժանդակելու նպատակով:
2. Կողմերի միջև համագործակցության ոլորտներն ընդգրկում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- (a) մտավոր սեփականության իրավունքները կարգավորող իրավական դաշտի և դրանց պաշտպանության ու իրականացման ապահովման համապատասխան կանոնների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում, ինչպես նաև Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում այդ հարցերի հետ կապված օրենսդրական առաջընթացի մասով փորձի փոխանակում,
- (b) մտավոր սեփականության իրավունքների իրականացման ապահովման վերաբերյալ փորձի և տեղեկությունների փոխանակում,
- (c) կենտրոնական ու տարածքային մակարդակներում մաքսային, ոստիկանության, վարչական և դատական մարմինների կողմից մտավոր սեփականության իրավունքների իրականացման ապահովման վերաբերյալ փորձի փոխանակում,
- (d) կեղծված ապրանքների արտահանումները կանխելու հետ կապված գործողությունների փոխհամաձայնեցում, այդ թվում՝ երրորդ երկրների հետ,
- (e) կարողությունների զարգացում և աշխատողների փոխանակում ու վերապատրաստում,
- (f) մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ տեղեկությունների հավաքում և տարածում, այդ թվում՝ բիզնես շրջանակներում և քաղաքացիական հասարակությունում, ինչպես նաև սպառողների և իրավատերերի շրջանում մտավոր սեփականության իրավունքների հետ կապված հարցերի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում,
- (g) ինստիտուցիոնալ համագործակցության ընդլայնում, օրինակ՝ երկու Կողմերի՝ մտավոր սեփականության հարցերով զբաղվող գրասենյակների միջև, և
- (h) մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության քաղաքականությունների վերաբերյալ լայն հասարակության իրազեկության բարձրացման և ուսուցման ակտիվորեն խրախուսում, այդ թվում՝ հիմնական լսարանը պարզելու նպատակով արդյունավետ ռազմավարություններ մշակելու և մտավոր սեփականության իրավունքների խախտումների հետևանքների, ինչպես օրինակ՝ առողջության ու անվտանգության համար ռիսկերի և կազմակերպված հանցագործությունների հետ կապի վերաբերյալ սպառողների և զանգվածային լրատվության միջոցների իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով հաղորդակցման ծրագրեր ստեղծելու միջոցով:

3. Չխախտելով և լրացնելով 1-ին ու 2-րդ պարբերությունները՝ Կողմերը պետք է անհրաժեշտության դեպքում արդյունավետ երկխոսություններ վարեն մտավոր սեփականության իրավունքների հետ կապված խնդիրների վերաբերյալ («IP Dialogue»)՝ անդրադառնալով սույն գլխով կարգավորվող մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և դրանց իրականացման ապահովման թեմաներին, ինչպես նաև դրան առնչվող այլ խնդիրների:

ԳԼՈՒԽ 8

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 269

ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի հետ կապը

Կողմերը հաստատում են 2012 թվականի «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրով¹ (ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագիր) իրենց ստանձնած փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները: ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրով սահմանված այդ իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում՝ յուրաքանչյուր Կողմի՝ իր I Առդիրի համապատասխան հավելվածներով սահմանված մասնագրերը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում և կիրառվում են վեճերի երկկողմ կարգավորման ժամանակ, ինչպես նախատեսված է 13-րդ գլխով:

¹ «Պետական գնումների մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրության հավելված (ՊԳՀ/113):

ՀՈԴՎԱԾ 270

Կիրառության լրացուցիչ ոլորտը

1. Կողմերն ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի I-IV, VI-XV, XVI.1-XVI.3, XVII և XVIII հոդվածների դրույթները *mutatis mutandis* կիրառում են սույն Համաձայնագրի XI Հավելվածում նշված գնումների նկատմամբ:

2. Գործընկերության կոմիտեն կարող է որոշել փոփոխություններ կատարել սույն Համաձայնագրի XI հավելվածի մեջ: Ինչ վերաբերում է Կողմի կողմից այդ Հավելվածում լրացումներ և ուղղումներ կատարելուն, ապա Կողմերը ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի XIX հոդվածը կիրառում են *mutatis mutandis*՝ այդ մասին ուղղակիորեն համապատասխան ծանուցում ներկայացնելով մյուս Կողմին, իսկ վեճերի կարգավորման մասին վկայակոչվում է 13-րդ գլխում:

ՀՈԴՎԱԾ 271

Լրացուցիչ կանոնները

Կողմերն ինչպես ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի I Առդիրի՝ իրենց համապատասխան հավելվածներով, այնպես էլ սույն Համաձայնագրի XI Հավելվածով կարգավորվող գնումների նկատմամբ կիրառում են հետևյալ լրացուցիչ կանոնները՝

Գնումների հայտարարությունների էլեկտրոնային հրապարակումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ նախատեսված գնումների բոլոր հայտարարություններն անվճար և ուղղակիորեն հասանելի լինեն էլեկտրոնային միջոցներով՝ համացանցում մուտքի մեկ ընդհանուր հնարավորությամբ: Բացի այդ, հայտարարությունները կարող են հրապարակվել նաև համապատասխան թղթային կրիչի վրա: Ցանկացած այդպիսի կրիչ պետք է լայնորեն տարածված լինի, իսկ այդ հայտարարությունները պետք է հեշտ հասանելի լինեն հանրությանը՝ առնվազն մինչև հայտարարության մեջ նշված ժամկետը լրանալը:

Գնահատման ընթացակարգերին ներկայացվող պահանջները

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի XVIII հոդվածում նշված գնահատման ընթացակարգերի առնչությամբ ձեռնարկված միջոցները ներառեն հետևյալ լիազորությունները՝

- (a) հնարավորինս շուտ և դատական կարգով ձեռնարկել միջանկյալ միջոցներ՝ ենթադրյալ խախտումը վերացնելու կամ շոշափվող շահերին պատճառվող հետագա վնասը կանխելու նպատակով, այդ թվում՝ միջոցներ պետական գնման պայմանագրի կնքման գործընթացը կամ պատվիրատուի կողմից ընդունված ցանկացած որոշման իրականացումը կասեցնելու կամ դրանց կասեցումն ապահովելու նպատակով,
- (b) վերացնել անօրինական որոշումները կամ ապահովել դրանց վերացումը, այդ թվում՝ նախատեսվող կամ պլանավորված գնումների հայտարարություններում, պայմանագրային փաստաթղթերում կամ պայմանագրի կնքման գործընթացին առնչվող որևէ այլ փաստաթղթում առկա խտրական բնույթի տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական բնութագրերի հանումը, և

(c) փոխհատուցում տրամադրել խախտման հետևանքով վնաս կրած անձանց:

3. Պայմանագիր կնքելու մասին որոշումը գնահատելիս յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պատվիրատուն չկարողանա կնքել պայմանագիրը, քանի դեռ գնահատող մարմինը միջանկյալ միջոցներ կիրառելու կամ գնահատում իրականացնելու մասին դիմումի մասով որոշում չի կայացրել: Կասեցումն ավարտվում է ոչ շուտ, քան 6-րդ պարբերության մեջ նշված անգործության ժամկետը լրանալը:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ գնահատման համար պատասխանատու մարմինների կողմից կայացված որոշումներն արդյունավետորեն իրականացվեն:

5. Անկախ գնահատման մարմինների անդամները չպետք է լինեն պատվիրատուների ներկայացուցիչներ:

Գնահատման ընթացակարգերի համար պատասխանատու մարմինների առնչությամբ, որոնք իրենց բնույթով դատական մարմիններ չեն, յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ`

(a) նրանց որոշումների համար միշտ տրվեն գրավոր հիմնավորումներ.

(b) անկախ գնահատող մարմնի կողմից ձեռնարկված ենթադրյալ ապօրինի ցանկացած միջոց կամ դրան վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում ենթադրյալ ցանկացած թերություն ենթակա լինի դատարանի կամ մեկ այլ անկախ մարմնի կողմից վերանայման, որը դատարան է կամ տրիբունալ և անկախ է թե՛ պատվիրատուից, և թե՛ գնահատող մարմնից.

(c) այդպիսի անկախ մարմնի անդամները պաշտոնում նշանակվում և պաշտոնից ազատվում են դատական համակարգի անդամներին պաշտոնում նշանակելու և պաշտոնից ազատելու համար սահմանված՝ նրանց նշանակման համար պատասխանատու մարմնին, նրանց պաշտոնավարման ժամկետին և պաշտոնից ազատելուն վերաբերող նույն պայմաններով.

- (d) առնվազն այս անկախ մարմնի նախագահն ունի այն նույն իրավական և մասնագիտական որակավորումները, որոնք ունեն դատական մարմինների անդամները, և
- (e) անկախ մարմինն իր որոշումները կայացնում է՝ առաջնորդվելով այնպիսի ընթացակարգով, որի դեպքում երկու կողմին էլ տրվում է իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն, իսկ այդ որոշումները յուրաքանչյուր Կողմի կողմից սահմանված միջոցներով պարտադիր իրավական ուժ ունեն:

Անգործության ժամկետը

6. Պատվիրատուն չի կարող պայմանագիրը կնքել սույն գլխով նախատեսված պայմանագիրը կնքելու մասին որոշման հիման վրա, նախքան՝
- (a) համապատասխան հայտ ներկայացրած մասնակիցներին և թեկնածուներին ֆաքսով կամ էլեկտրոնային միջոցներով պայմանագիրը կնքելու մասին որոշումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշվարկվող առնվազն 10 օրացուցային օր տևողությամբ անգործության ժամկետը լրանալը, կամ
 - (b) հաղորդակցության այլ միջոցներ օգտագործելու դեպքում՝ նախքան համապատասխան հայտ ներկայացրած մասնակիցներին և թեկնածուներին պայմանագիրը կնքելու մասին որոշումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշվարկվող առնվազն 15 օրացուցային օր տևողությամբ անգործության ժամկետը լրանալը, կամ պայմանագիրը կնքելու մասին որոշումն ստանալու օրվանից հետո առնվազն 10 օրացուցային օր տևողությամբ ժամկետը լրանալը:

Որպես այլընտրանք՝ Կողմը կարող է նախատեսել, որ անգործության ժամկետն սկսվի պայմանագիրը կնքելու մասին որոշումն անվճար հիմունքներով էլեկտրոնային կրիչի վրա հրապարակելուց հետո՝ ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի XVI.2 հոդվածի համաձայն:

Հայտ ներկայացրած մասնակիցները համարվում են ներգրավված, եթե նրանց մասնակցությունը դեռևս վերջնականորեն չի բացառվել: Բացառման մասին որոշումը համարվում է վերջնական, եթե դրա մասին ծանուցվել է հայտ ներկայացրած համապատասխան մասնակիցներին, և անկախ գնահատող մարմնի կողմից կամ համարվել է օրինական, կամ այլևս չի կարող գնահատվել: Թեկնածուները համարվում են ներգրավված, եթե պատվիրատուն, մինչև հայտ ներկայացրած համապատասխան մասնակիցներին պայմանագիրը կնքելու մասին որոշման մասին ծանուցելը, նրանց դիմումը մերժելու մասին տեղեկատվությունը հասանելի չի դարձրել:

7. Կողմը կարող է նախատեսել, որ 6-րդ պարբերության առաջին ենթապարբերության (a) և (b) կետերում նշված անգործության ժամկետները չկիրառվեն հետևյալ դեպքերում՝

- (a) եթե 6-րդ պարբերության երրորդ ենթապարբերության իմաստով հայտ ներկայացրած միակ ներգրավված մասնակիցն այն անձն է, ում հետ կնքվել է պայմանագիր, և ներգրավված այլ թեկնածուներ չկան,
- (b) շրջանակային համաձայնագրի հիման վրա կնքված պայմանագրի դեպքում, և
- (c) գնումների դինամիկ համակարգի վրա հիմնված հատուկ պայմանագրի դեպքում:

Չեղյալ հայտարարելը

8. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պայմանագիրը չեղյալ հայտարարվի պատվիրատուից կամ դատական մարմնից անկախ գնահատող մարմնի կողմից, կամ որ չեղյալ հայտարարելը լինի այդ մարմնի որոշմամբ, եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց նախապես պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու այն դեպքում, երբ դա թույլատրելի չէ:

Պայմանագիրը չեղյալ հայտարարելու հետևանքները նախատեսվում են յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ, որը կարող է նախատեսել պայմանագրային բոլոր պարտավորությունների հետադարձ ուժով դադարեցում կամ դեռ չկատարված պարտավորությունների դադարեցում: Այս դեպքում յուրաքանչյուր Կողմ նախատեսում է այլ պատժամիջոցների կիրառումը:

9. Կողմը կարող է նախատեսել, որ գնահատող մարմինը կամ դատական մարմինը չի կարող պայմանագիրը չեղյալ հայտարարել, նույնիսկ եթե պայմանագիրն արդեն կնքվել է անօրինականորեն, եթե գնահատող մարմինը կամ դատական մարմինը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ պահել պայմանագիրը: Յուրաքանչյուր Կողմ այդ դեպքում կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ:

Հիմնադրված կազմակերպությունների մասով խտրականության բացառումը

10. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ մյուս Կողմի մատակարարներին, որոնք իր տարածքում առևտրային գործունեություն են իրականացնում իրավաբանական անձ հիմնադրելու, կազմավորելու կամ որպես իրավաբանական անձ գործունեություն իրականացնելու եղանակով, շնորհիվի ազգային ռեժիմ՝ իր տարածքում այդ Կողմի կողմից իրականացվող պետական գնումների մասով: Այս պարտավորությունը գործում է՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք գնումը կարգավորվում է ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի I Առդիրի՝ Կողմերի վերաբերյալ հավելվածներով կամ սույն Համաձայնագրի XI Հավելվածով, թե՛ ոչ:

ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի III հոդվածով նախատեսված ընդհանուր բացառությունները կիրառվում են:

ԳԼՈՒԽ 9

ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 272

Նպատակները և գործողության ոլորտը

1. Կողմերը վկայակոչում են «Շրջակա միջավայրի և զարգացման մասին» ՄԱԿ-ի 1992 թվականի 21-րդ օրակարգը, «Աշխատանքի վայրում հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին» ԱՄԿ-ի 1998 թվականի հռչակագիրը, ՅՈՒՆԵՍԿՈՒՍԻ 2002 թվականի Կայուն զարգացման իրականացման ծրագիրը, «Ազգային և միջազգային մակարդակներում լրիվ և արդյունավետ զբաղվածության ու բոլորի համար արժանապատիվ աշխատանքի համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» խորագրով՝ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 2006 թվականի նախարարական հռչակագիրը, «Արդար գլոբալացման համար սոցիալական արդարության մասին» ԱՄԿ-ի 2008 թվականի հռչակագիրը, ՄԱԿ-ի՝ 2012 թվականի «Ապագան, որ մենք ուզում ենք» խորագրով Կայուն զարգացման համաժողովի ամփոփիչ փաստաթուղթը և «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» խորագրով՝ ՄԱԿ-ի՝ 2015 թվականին ընդունված «Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգը»: Կողմերը վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ խթանելու միջազգային առևտրի զարգացումն այնպես, որ նպաստեն կայուն զարգացման նպատակի իրականացմանը, ներկա ու ապագա սերունդների բարեկեցությանը և ապահովեն, որ այդ նպատակը ներառվի ու արտացոլվի իրենց առևտրային հարաբերությունների բոլոր մակարդակներում:

2. Կողմերը վերահաստատում են կայուն զարգացման ճանապարհով շարժվելու իրենց հանձնառությունը, որի հիմնական սկզբունքները՝ տնտեսական զարգացումը, սոցիալական զարգացումը և շրջակա միջավայրի պաշտպանությունն իրարից անկախ են և փոխլրացնում են միմյանց: Նրանք ընդգծում են առևտրին առնչվող աշխատանքը և շրջակա միջավայրի խնդիրներն առևտրի և կայուն զարգացման նկատմամբ գլոբալ մոտեցման մաս համարելու կարևորությունը:

3. Սույն գլխում «աշխատանք» հասկացությունը ներառում է ԱՄԿ-ի ռազմավարական այն նպատակներին վերաբերող խնդիրները, որոնք Արժանապատիվ աշխատանքի օրակարգի հիմքն են կազմում, ինչպես նախատեսվել է «Արդար գլոբալացման համար սոցիալական արդարության մասին» ԱՄԿ-ի 2008 թվականի հռչակագրով:

ՀՈԴՎԱԾ 273

Կարգավորելու իրավունքը և պաշտպանության մակարդակները

Ընդունելով յուրաքանչյուր Կողմի՝ իր կայուն զարգացման քաղաքականությունները և առաջնահերթությունները որոշելու, իր պետության ներսում շրջակա միջավայրի և աշխատանքի պաշտպանության մակարդակները հաստատելու և 274-րդ ու 275-րդ հոդվածներում նշված՝ միջազգայնորեն ճանաչված ստանդարտներով և համաձայնագրերով իր ստանձնած հանձնառությամբ առաջնորդվելով իր համապատասխան օրենքներն ու քաղաքականությունները մշակելու և փոփոխելու իրավունքը, յուրաքանչյուր Կողմ ձգտում է ապահովել, որ իր օրենքներն ու քաղաքականությունները նախատեսեն և խրախուսեն շրջակա միջավայրի ու աշխատանքի պաշտպանության բարձր մակարդակ և ձգտում են շարունակել բարելավել այդ օրենքներն ու քաղաքականությունները և դրանց համար հիմք հանդիսացող պաշտպանության մակարդակը:

Միջազգային աշխատանքային ստանդարտները և համաձայնագրերը

1. Կողմերը բոլորի համար լրիվ և արդյունավետ զբաղվածությունը և արժանապատիվ աշխատանքն ընդունում են որպես գլոբալացումը կառավարելու համար առանցքային տարրեր, և վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ խթանելու միջազգային առևտրի զարգացումն այնպես, որ այն նպաստի բոլորի համար լրիվ և արդյունավետ զբաղվածության ու արժանապատիվ աշխատանքի ապահովմանը: Այդ համատեքստում, Կողմերը պարտավորվում են անհրաժեշտության դեպքում խորհրդակցել և համագործակցել միմյանց հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ առևտրին առնչվող աշխատանքային խնդիրների լուծման հարցում:

2. Կողմերը՝ որպես ԱՄԿ-ի և ԱՄԿ-ի 1998 թվականի «Աշխատանքի վայրում հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին» հռչակագրի և դրա լրացումների անդամ, իրենց ստանձնած պարտավորություններին համապատասխան, պարտավորվում են հարգել, խրախուսել և իրենց օրենքներում ու գործելակերպերում և իրենց ամբողջ տարածքում կիրառել աշխատանքի՝ միջազգայնորեն ճանաչված հիմնարար ստանդարտները, ինչպես սահմանված են ԱՄԿ-ի հիմնարար կոնվենցիաներով և այդ կոնվենցիաների արձանագրություններով, և մասնավորապես՝

- (a) միավորման ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքի արդյունավետ ճանաչումը,
- (b) հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերի վերացումը,
- (c) երեխայի աշխատանքի արդյունավետ վերացումը, և
- (d) աշխատանքի և մասնագիտության մասով խտրականության բացառումը:

3. Կողմերը վերահաստատում են իրենց օրենքներում և գործելակերպերում անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության կողմից համապատասխանաբար վավերացված՝ ԱՄԿ-ի հիմնարար, առաջնահերթային և մյուս կոնվենցիաներն ու այդ կոնվենցիաների արձանագրություններն արդյունավետորեն կիրարկելու հանձնառությունը:

4. Կողմերը պետք է նաև դիտարկեն ԱՄԿ-ի առաջնահերթային և այլ այն կոնվենցիաները վավերացնելու հարցը, որոնք ԱՄԿ-ի կողմից դասակարգվում են որպես թարմացված: Այդ համատեքստում Կողմերը պարբերաբար տեղեկություններ են փոխանակում իրենց մոտ տիրող իրավիճակի և վավերացման գործընթացում առկա առաջընթացի վերաբերյալ:

5. Կողմերն ընդունում են, որ աշխատանքի վայրում հիմնարար սկզբունքների և իրավունքների խախտումը չի կարող վկայակոչվել կամ այլ կերպ օգտագործվել որպես հիմնավոր համեմատական առավելություն, և որ այդ աշխատանքային ստանդարտները չպետք է օգտագործվեն հովանավորչական առևտրի նպատակներով:

ՀՈԴՎԱԾ 275

Շրջակա միջավայրի բազմակողմ կարգավորումը և համաձայնագրերը

1. Կողմերն ընդունում են շրջակա միջավայրի միջազգային կարգավորման և համաձայնագրերի կարևորությունը միջազգային հանրության կողմից գլոբալ կամ տարածաշրջանային մակարդակներում շրջակա միջավայրի հետ կապված խնդիրների լուծման հարցում և շեշտում են առևտրի ու շրջակա միջավայրի միջև փոխադարձ աջակցությունը մեծացնելու անհրաժեշտությունը: Այդ համատեքստում, Կողմերը պարտավորվում են անհրաժեշտության դեպքում խորհրդակցել և համագործակցել շրջակա միջավայրի՝ առևտրին առնչվող խնդիրների և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ շրջակա միջավայրի՝ առևտրին առնչվող այլ հարցերի վերաբերյալ բանակցությունների մասով:

2. Կողմերը վերահաստատում են իրենց օրենքներում և գործելակերպերում շրջակա միջավայրի այն բազմակողմ համաձայնագրերն (ՇՄԲՀ) արդյունավետորեն իրականացնելու հանձնառությունը, որոնց կողմ են իրենք:

3. Կողմերը պարբերաբար տեղեկություններ են փոխանակում իրենց մոտ տիրող իրավիճակի և ՇՄԲՀ-ների կամ դրանց փոփոխությունների վավերացման հարցում առաջընթացի վերաբերյալ:

4. Կողմերը վերահաստատում են «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի 1992 թվականի շրջանակային կոնվենցիան (ՄԱԿԿՓՇԿ), դրա 1998 թվականի Կիոտոյի արձանագրությունը և 2015 թվականի Փարիզյան համաձայնագիրն իրականացնելու և դրանց նպատակներն իրագործելու իրենց հանձնառությունը: Նրանք պարտավորվում են փոխգործակցել՝ ՄԱԿԿՓՇԿ-ով սահմանված բազմակողմ կանոնների վրա հիմնված ռեժիմն ամրապնդելու նպատակով ու համագործակցել ՄԱԿԿՓՇԿ-ի և դրան առնչվող համաձայնագրերի ու որոշումների համաձայն՝ կլիմայի փոփոխության խնդրի վերաբերյալ միջազգային շրջանակային ծրագրի հետագա զարգացման և իրականացման հարցում:

5. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Կողմերի կողմից այնպիսի միջոցների ձեռնարկումն ու իրականացումը, որոնք ուղղված են այն ՇՄԲՀ-ների իրականացմանը, որոնց կողմ են իրենք հանդիսանում՝ պայմանով, որ այդ միջոցները չկիրառվեն այնպես, որ հանգեցնեն Կողմերի միջև կամայական կամ չարդարացված խտրականության դրսևորման կամ առևտրի քողարկված սահմանափակման:

ՀՈՒՎԱԾ 276

Կայուն զարգացմանը նպաստող առևտուրը և ներդրումները

Կողմերը վերահաստատում են տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի ոլորտներում կայուն զարգացման նպատակի իրականացման համար առևտրի դերը մեծացնելու իրենց հանձնառությունը: Այդ առնչությամբ, Կողմերը՝

(a) ընդունում են, որ աշխատանքի հիմնարար ստանդարտները և արժանապատիվ աշխատանքը կարող են դրական ազդեցություն ունենալ տնտեսական արդյունավետության, նորարարության և արտադրողականության վրա, և փորձում են առևտրային ու աշխատանքային քաղաքականությունների միջև ավելի մեծ համապատասխանություն ապահովել:

- (b) ձգտում են նպաստել և խրախուսել շրջակա միջավայրի համար անվտանգ ապրանքների և ծառայությունների առևտուրն ու դրանցում կատարվող ներդրումները, այդ թվում՝ համապատասխան ոչ սակագնային խոչընդոտների կարգավորման միջոցով.
- (c) ձգտում են աջակցել կլիմայի փոփոխությունների մեղմացման և դրանց հարմարեցման համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի ապրանքների և ծառայությունների առևտրի ու դրանցում կատարվող ներդրումների համար խոչընդոտների վերացմանը, ինչպիսիք են՝ կայուն վերականգնվող էներգիան և էներգաարդյունավետ արտադրանքն ու ծառայությունները, այդ թվում՝
- (i) այնպիսի քաղաքականություն որդեգրելու միջոցով, որը նպաստում է առկա լավագույն տեխնոլոգիաների օգտագործմանը,
 - (ii) այնպիսի ստանդարտները խրախուսելու միջոցով, որոնք համապատասխանում են շրջակա միջավայրի և տնտեսական կարիքներին, և
 - (iii) առևտրի համար տեխնիկական խոչընդոտները նվազագույնի հասցնելու միջոցով.
- (d) համաձայնում են խրախուսել այնպիսի ապրանքների առևտուրը, որոնք նպաստում են բարելավված սոցիալական պայմանների և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից խելամիտ գործելակերպերի ձևավորմանը, ներառյալ այն ապրանքների առևտուրը, որոնք կազմում են կայունության ապահովման այնպիսի կամավոր համակարգերի առարկան, ինչպիսիք են, օրինակ, արդար և պատշաճ առևտրային համակարգերն ու էկոլոգիական դրոշմավորումը, և
- (e) համաձայնում են խրախուսել կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը, այդ թվում՝ տեղեկությունների և լավագույն փորձի փոխանակման միջոցով: Այդ առնչությամբ, Կոդները վկայակոչում են միջազգայնորեն ճանաչված սկզբունքները և ուղեցույցները, ինչպիսիք են՝ Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ-ի ուղեցույցները, ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիրը և ԱՄԿ-ի՝ 1977 թվականի Բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագիրը:

Կենսաբանական բազմազանությունը

1. Կողմերն ընդունում են կայուն զարգացման հասնելու համար կենսաբանական բազմազանության՝ որպես առանցքային տարրի պահպանությունն ու կայուն օգտագործումն ապահովելու կարևորությունը և վերահաստատում են կենսաբանական բազմազանությունը պահպանելու և կայուն կերպով օգտագործելու իրենց հանձնառությունը՝ 1992 թվականի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիային և դրա վավերացված արձանագրություններին ու Կենսաբանական բազմազանության մասին ռազմավարական ծրագրին, 1973 թվականի «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիային (CITES) և միջազգային մյուս փաստաթղթերին համապատասխան, որոնց կողմ են իրենք հանդիսանում:

2. Այդ նպատակով Կողմերը պետք է՝

- (a) առևտրային գործունեություն ձեռնարկելիս խրախուսեն բնական պաշարների կայուն օգտագործումը և նպաստեն կենսաբանական բազմազանության պահպանմանը,
- (b) տեղեկություններ փոխանակեն բնական պաշարներից պատրաստված արտադրանքի առևտրի ուղղությամբ գործողությունների վերաբերյալ, որոնք նպատակ ունեն կանխելու կենսաբանական բազմազանության կորուստը և նվազեցնելու կենսաբանական բազմազանության վրա ճնշումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համագործակցեն՝ իրենց համապատասխան քաղաքականությունների ազդեցությունն առավելագույնի հասցնելու և դրանց միջև փոխադարձ աջակցություն ապահովելու նպատակով,
- (c) խրախուսեն «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում այնպիսի տեսակների ներառումը, որոնք համապատասխանում են նշված Կոնվենցիայի շրջանակներում ներառվելու համար սահմանված չափանիշներին.
- (d) ձեռնարկեն և իրականացնեն արդյունավետ միջոցներ՝ վայրի կենդանիների և բույսերի, այդ թվում՝ «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով պաշտպանվող տեսակների ապօրինի առևտուրը կանխելու համար և համագործակցեն այդ ապօրինի առևտրի դեմ պայքարի հարցում, և

- (e) համագործակցեն տարածքային և գլոբալ մակարդակներում՝ նպատակ ունենալով խրախուսելու՝
- (i) բնական կամ գյուղատնտեսական էկոհամակարգերում կենսաբանական բազմազանության, այդ թվում՝ վտանգված տեսակների, դրանց աճելավայրերի (բնակության միջավայրերի), հատկապես՝ բնության հատուկ պահպանվող տարածքների և գենետիկական բազմազանության պահպանումն ու կայուն օգտագործումը,
 - (ii) էկոհամակարգերի վերականգնումը և կենդանի ու անկենդան բնական պաշարների կամ էկոհամակարգերի օգտագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության վերացումը կամ նվազեցումը, և
 - (iii) գենետիկական պաշարների հասանելիության ապահովումը և դրանց օգտագործումից ստացված օգուտների արդար ու համարժեք բաշխումը:

ՀՈԴՎԱԾ 278

Անտառների կայուն կառավարումը և անտառային արտադրանքի առևտուրը

1. Կողմերն ընդունում են անտառների պահպանումն ու կայուն կառավարումն ապահովելու կարևորությունը և Կողմերի տնտեսական, շրջակա միջավայրի ու սոցիալական նպատակների իրագործման հարցում անտառների նշանակությունը:
2. Այդ նպատակով, Կողմերը պետք է՝
 - (a) խրախուսեն անտառային այն արտադրանքի առևտուրը, որն ստացվել է կայուն ձևով կառավարվող անտառներից և մթերվել է մթերման երկրի ներպետական օրենսդրությանը համապատասխան.

- (b) փոխանակեն տեղեկություններ կայուն ձևով կառավարվող անտառներից ստացված բնափայտի և բնափայտից ստացված արտադրանքի սպառմանն ուղղված միջոցների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համագործակցեն՝ այդպիսի միջոցներ մշակելու համար.
- (c) միջոցներ ձեռնարկեն՝ անտառածածկ տարածքների պահպանումը խրախուսելու և ապօրինի հատումների ու դրանց առնչվող առևտրի դեմ պայքարելու համար, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, երրորդ երկրների նկատմամբ.
- (d) փոխանակեն տեղեկություններ անտառների կառավարման բարելավման ուղղությամբ գործողությունների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համագործակցեն՝ ապօրինի մթերված բնափայտը և բնափայտից ստացված արտադրանքը առևտրային հոսքերից բացառելուն ուղղված իրենց համապատասխան քաղաքականությունների ազդեցությունն առավելագույնին հասցնելու և դրանց փոխադարձ աջակցություն ապահովելու համար.
- (e) խրախուսեն «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում բնափայտի այնպիսի տեսակների ներառումը, որոնք համապատասխանում են նշված Կոնվենցիայի շրջանակներում՝ ներառվելու համար սահմանված չափորոշիչներին, և
- (f) համագործակցեն տարածքային և գլոբալ մակարդակներում՝ անտառածածկ տարածքների պահպանումը և անտառների բոլոր տեսակների կայուն կառավարումը խրախուսելու նպատակով՝ անտառների պատասխանատու կառավարումը խթանող հավաստագրման գործընթաց օգտագործելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 279

Կենդանի ծովային ռեսուրսների առևտուրը և կայուն կառավարումը

Հաշվի առնելով ձկնային պաշարների պատասխանատու կառավարումը կայուն ձևով ապահովելու կարևորությունը, ինչպես նաև խրախուսելով առևտրի արդյունավետ կառավարումը՝ Կողմերը պետք է՝

- (a) խրախուսեն ձկնային տնտեսության կառավարման բնագավառում լավագույն գործելակերպերը՝ ձկնային պաշարների՝ էկոհամակարգային մոտեցման վրա հիմնված պահպանումը և կառավարումը կայուն ձևով ապահովելու նպատակով,

- (b) ձեռնարկեն արդյունավետ միջոցներ՝ ձկնորսության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու նպատակով,
- (c) խրախուսեն տվյալների հավաքման համակարգված մեթոդները և երկկողմ գիտական համագործակցությունը՝ ձկնորսական տնտեսության կառավարման հարցում ներկայիս գիտական խորհրդատվությունը բարելավելու նպատակով,
- (d) համագործակցեն ապօրինի, չգրանցված ու չկարգավորվող ձկնորսության և ձկնորսությանն առնչվող այլ գործունեության դեմ պայքարելու հարցում՝ համալիր, արդյունավետ և թափանցիկ միջոցներ ձեռնարկելով, և
- (e) մշակեն քաղաքականություններ և ձեռնարկեն միջոցներ՝ ապօրինի, չգրանցված ու չկարգավորվող արտադրանքն առևտրային հոսքերից և իրենց շուկաներից բացառելու համար՝ Միավորված ազգերի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ)՝ Ապօրինի, չգրանցված և չկարգավորվող ձկնորսությունը կանխարգելելուն, կանխելուն և վերացնելուն ուղղված գործողությունների միջազգային ծրագրին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 280

Պաշտպանության մակարդակների պահպանումը

1. Կողմերն ընդունում են, որ նպատակահարմար չէ աջակցել առևտրին կամ ներդրումներին՝ նվազեցնելով շրջակա միջավայրի կամ աշխատանքի վերաբերյալ ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության մակարդակները:
2. Կողմը չի հրաժարվում կամ շեղում կատարում, կամ չի առաջարկում հրաժարվել կամ շեղում կատարել շրջակա միջավայրի կամ աշխատանքի ոլորտը կարգավորող օրենքներից՝ որպես առևտրի կամ ներդրումների ապահովման, ձեռքբերման, ընդլայնման կամ պահպանման կամ իր տարածքում ներդրողի համար խրախուսում:

3. Կողմը չի հրաժարվում շարունակական կամ պարբերական գործողությունների կամ անգործության միջոցով շրջակա միջավայրի կամ աշխատանքի ոլորտները կարգավորող օրենքները՝ որպես առևտրի կամ ներդրումների կատարման համար խրախուսում, արդյունավետորեն կիրառելուց:

ՀՈԴՎԱԾ 281

Գիտական տեղեկությունները

Շրջակա միջավայրի և աշխատանքի պայմանների պաշտպանությանն ուղղված այն միջոցները նախապատրաստելիս և կիրառելիս, որոնք կարող են ազդել Կողմերի միջև առևտրի կամ ներդրումների վրա, յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում գիտական և տեխնիկական առկա տեղեկությունները, ինչպես նաև համապատասխան միջազգային ստանդարտները, ուղեցույցները և խորհրդատվությունները, եթե դրանք առկա են, այդ թվում՝ նախազգուշացման սկզբունքը:

ՀՈԴՎԱԾ 282

Թափանցիկությունը

Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական օրենսդրությանը և կանոնակարգերին ու 12-րդ գլխին համապատասխան, ապահովում է, որ շրջակա միջավայրի և աշխատանքի պայմանների պաշտպանությանն ուղղված ցանկացած միջոց, որը կարող է ազդել առևտրի կամ ներդրումների վրա, մշակվի, ներկայացվի և իրականացվի թափանցիկ ձևով՝ պատշաճ ծանուցման և հանրային խորհրդակցության, ինչպես նաև ոչ պետական սուբյեկտների հետ պատշաճորեն ու ժամանակին հաղորդակցվելու և նրանց հետ խորհրդակցություններ անցկացնելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 283

Կայուն զարգացման վրա ազդեցությունների գնահատում

Կողմերը պարտավորվում են վերանայել, վերահսկել և գնահատել կայուն զարգացման վրա սույն Համաձայնագրի իրականացման ազդեցությունը իրենց համապատասխան մասնակցային գործընթացների և հաստատությունների, ինչպես նաև սույն Համաձայնագրի համաձայն ստեղծվածների միջոցով, օրինակ՝ առևտրին առնչվող կայունության վրա ազդեցության գնահատումների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 284

Առևտրի և կայուն զարգացման ուղղությամբ համատեղ աշխատելը

1. Կողմերն ընդունում են սույն Համաձայնագրի նպատակներին հասնելու համար շրջակա միջավայրը և աշխատանքը կարգավորող քաղաքականությունների՝ առևտրին առնչվող ասպեկտների ուղղությամբ համատեղ աշխատելու կարևորությունը: Նրանք կարող են համագործակցել, *inter alia*, հետևյալ ոլորտներում՝

- (a) միջազգային հարթակներում, այդ թվում՝ մասնավորապես, ԱՀԿ-ի, ԱՄԿ-ի, Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի (ՄԱԿ-ի շրջակա միջավայր), Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի և ՇՄԲՀ-ների շրջանակներում առևտրի և կայուն զարգացման՝ աշխատանքի կամ շրջակա միջավայրի հայեցակետեր,
- (b) առևտրի կայունության վրա ազդեցության գնահատումների մեթոդաբանություն և ցուցիչներ,

- (c) աշխատանքի և շրջակա միջավայրի ոլորտը կարգավորող կանոնակարգերի, նորմերի և ստանդարտների՝ առևտրի վրա ազդեցություն, ինչպես նաև առևտրի և ներդրումների կանոնների՝ աշխատանքի և շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, այդ թվում՝ աշխատանքի և շրջակա միջավայրի ոլորտը կարգավորող կանոնակարգերի և քաղաքականության զարգացման վրա,
- (d) կայուն զարգացման վրա սույն Համաձայնագրի դրական և բացասական ազդեցություններ և դրանք ամրապնդելու, կանխարգելելու կամ մեղմացնելու եղանակները՝ հաշվի առնելով նաև Կողմերից մեկի կամ երկուսի կողմից իրականացված կայունության վրա ազդեցության գնահատումները,
- (e) առևտրի համատեքստում նշանակություն ունեցող հիմնարար, առաջնահերթային և այլ գործող ԱՄԿ կոնվենցիաների և այդ կոնվենցիաների արձանագրությունների, ինչպես նաև ՇՄԲՀ-ների վավերացման ու արդյունավետ իրականացման խթանում,
- (f) մասնավոր և պետական ոլորտներում հավաստագրման, հետազոտելիության և պիտակավորման, այդ թվում՝ էկոպիտակավորման սխեմաների խթանում,
- (g) կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խթանում, օրինակ՝ միջազգայնորեն ճանաչված ուղեցույցների և սկզբունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, դրանց հավատարիմ մնալուն, դրանք հետևողականորեն կատարելուն ուղղված գործողությունների միջոցով,
- (h) ԱՄԿ Արժանապատիվ աշխատանքի օրակարգի՝ առևտրին առնչվող հայեցակետեր, այդ թվում՝ առևտրի և լրիվ ու արդյունավետ զբաղվածության միջև փոխկապակցվածության, աշխատանքային շուկայի կարգավորման, աշխատանքային հիմնարար ստանդարտների, աշխատանքային իրավունքները պաշտպանելու համար իրավական պաշտպանության արդյունավետ համակարգերի (այդ թվում՝ աշխատանքային տեսչությունների), աշխատանքային վիճակագրության, մարդկային ռեսուրսների զարգացման և ողջ կյանքի ընթացքում կրթության, սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառման, սոցիալական երկխոսության ու կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ,

- (i) ՇՄԲՀ-ների՝ առևտրին առնչվող հայեցակետեր՝ ներառյալ մաքսային համագործակցությունը,
- (j) ներկայիս և ապագա՝ կլիմայի փոփոխության միջազգային ռեժիմի՝ առևտրին առնչվող հայեցակետեր՝ ներառյալ ցածր ածխածնային տեխնոլոգիաները և էներգաարդյունավետությունը խթանելու միջոցները,
- (k) կենսաբանական բազմազանության պահպանումը և կայուն օգտագործումը խթանելուն, այդ թվում՝ կենդանական ծագման արտադրանքի ապօրինի առևտրի դեմ պայքարին ուղղված՝ առևտրին առնչվող միջոցներ,
- (l) անտառների պահպանումը և կայուն կառավարումը խթանելուն ուղղված՝ առևտրին առնչվող միջոցներ՝ այդպիսով նվազեցնելով անտառահատման, այդ թվում՝ ապօրինի հատումների դեպքերը, և
- (m) կայուն ձկնորսության գործելակերպերը և կայուն կերպով կառավարվող ձկնային արտադրանքի առևտուրը խթանելուն ուղղված՝ առևտրին առնչվող միջոցներ:

2. Կողմերը փոխանակում են տեղեկություններ առևտրային, սոցիալական և շրջակա միջավայրի նպատակների միջև կապը և փոխադարձ աջակցությունը խթանելուն ուղղված իրենց գործողությունների վերաբերյալ և կիսում դրանց հետ կապված փորձը: Ավելին, Կողմերն ամրապնդում են կայուն զարգացման այնպիսի հարցերի վերաբերյալ իրենց համագործակցությունը և երկխոսությունը, որոնք առաջանում են իրենց առևտրային հարաբերությունների համատեքստում:

3. Այդպիսի համագործակցությունը և երկխոսությունն ընդգրկում են համապատասխան շահագրգիռ կողմեր, մասնավորապես, սոցիալական գործընկերներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններ, մասնավորապես՝ 366-րդ հոդվածի համաձայն ստեղծված Քաղաքացիական հասարակության հարթակի միջոցով:

4. Գործընկերության կոմիտեն կարող է ընդունել այդպիսի համագործակցության և երկխոսության համար կանոններ:

ՀՈՂՎԱԾ 285

Վեճերի կարգավորումը

Սույն մասի 13-րդ գլխի 3-րդ բաժնի II ենթաբաժինը չի կիրառվում սույն գլխի առնչությամբ առաջացած վեճերի նկատմամբ: Ցանկացած այդպիսի վեճի դեպքում՝ 325-րդ և 326-րդ հոդվածների համաձայն արբիտրաժային կոլեգիայի կողմից իր վերջնական զեկույցը ներկայացնելուց հետո, Կողմերը, հաշվի առնելով այդ զեկույցը, քննարկում են կիրառման ենթակա հարմար միջոցները: Գործընկերության կոմիտեն վերահսկում է ցանկացած այդպիսի միջոցի կիրառումը և հսկողության տակ պահում այդ հարցը, այդ թվում՝ 284-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված մեխանիզմի միջոցով:

ԳԼՈՒԽ 10

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ A

ՀՈՂՎԱԾ 286

Սկզբունքները

Կողմերն ընդունում են իրենց առևտրային և ներդրումային հարաբերություններում ազատ և չխաթարված մրցակցության կարևորությունը: Կողմերը հաստատում են, որ հակամրցակցային բիզնես գործելակերպերը և պետության միջամտությունները կարող են խաթարել շուկաների պատշաճ գործունեությունը և նվազեցնել առևտրի ազատականացման օգուտները:

ԲԱԺԻՆ Ե

ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀ ԵՎ ՄԻԱԶՈՒԼՈՒՄՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 287

Օրենսդրական դաշտը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ կիրառում է իր համապատասխան օրենքը, որը կիրառվում է տնտեսության¹ բոլոր ոլորտների նկատմամբ և արդյունավետորեն անդրադառնում է հետևյալ բոլոր գործելակերպերին.

- (a) այն ձեռնարկությունների միջև հորիզոնական և ուղղահայաց համաձայնությունները, ձեռնարկությունների միավորումների կողմից կայացված որոշումները և համաձայնեցված գործելակերպերը, որոնց նպատակը կամ ազդեցությունը մրցակցությունը կանխելը, սահմանափակելը կամ խաթարելն է,
- (b) մեկ կամ ավելի ձեռնարկությունների կողմից գերիշխող դիրքի չարաշահումները, և
- (c) ձեռնարկությունների միջև համակենտրոնացումները, որոնք էապես խոչընդոտում են արդյունավետ մրցակցությունը, մասնավորապես՝ գերիշխող դիրքի ստեղծման կամ ամրապնդման հետևանքով:

¹ Եվրոպական միությունում մրցակցության կանոնները կիրառվում են գյուղատնտեսության ոլորտի նկատմամբ՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միասնական կազմակերպություն ստեղծող Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 1308/2013 կանոնակարգին (ԵՄ) և, առկայության դեպքում, դրա հետագա փոփոխություններին կամ փոխարինումներին համապատասխան (ԵՄ ՊՏ L347/20.12.2013, էջ 671):

Սույն գլխի նպատակներով՝ այսուհետ սույն օրենքը կկոչվի մրցակցության մասին օրենք¹:

2. Բոլոր ձեռնարկությունները՝ մասնավոր թե պետական, ենթակա են 1-ին պարբերության մեջ նշված մրցակցության մասին օրենքի կարգավորմանը: Մրցակցության մասին օրենքի կիրառումը չպետք է խոչընդոտի հանրային շահ ներկայացնող որոշակի այնպիսի առաջադրանքներն ըստ օրենքի կամ փաստացի կատարելը, որոնք կարող են հանձնարարվել տվյալ ձեռնարկություններին: Կողմի մրցակցության մասին օրենքից բացառությունները պետք է սահմանափակված լինեն հանրային շահ ներկայացնող առաջադրանքներով՝ հանրային քաղաքականության ցանկալի նպատակին համաչափ և թափանցիկ:

ՀՈԴՎԱԾ 288

Իրականացումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է գործնականորեն անկախ մարմինների առկայությունը, որոնք պատասխանատու կլինեն 287-րդ հոդվածում նշված մրցակցության մասին օրենքի լրիվ կիրառման ու արդյունավետ իրականացման համար և կունենան դրա համար անհրաժեշտ համապատասխան լիազորություններն ու ռեսուրսները:

2. Կողմերը մրցակցության մասին իրենց համապատասխան օրենքը կիրառում են թափանցիկ և ոչ խտրական ձևով՝ պահպանելով ընթացակարգային արդարության սկզբունքները և տվյալ ձեռնարկությունների պաշտպանության իրավունքը՝ անկախ նրանց քաղաքացիությունից կամ սեփականության կարգավիճակից:

¹ Սույն բաժնի նպատակով՝ Հայաստանը մրցակցության մասին օրենքին հղումը դիտարկում է որպես հակամենաշնորհի և համաձայնությունների ու միաձուլումների ոլորտներն ընդգրկող մրցակցության կանոնների իր ամբողջ համակարգը:

Համագործակցությունը

1. Սույն Համաձայնագրի նպատակներն իրականացնելու և արդյունավետ մրցակցության իրականացումն ամրապնդելու համար Կողմերը հաստատում են, որ իրենց ընդհանուր շահերից է բխում ամրապնդել մրցակցության քաղաքականության զարգացման և հակամենաշնորհի ու միաձուլումների վերաբերյալ գործերի քննության հարցում համագործակցությունը:
2. Այդ նպատակով, Կողմերի՝ մրցակցության հարցերով մարմինները, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, կփորձեն համակարգել միևնույն կամ վերաբերելի գործերին առնչվող՝ կիրառման հետ կապված իրենց գործողությունները:
3. 1-ին պարբերության մեջ նշված համագործակցությունը դյուրացնելու համար Կողմերի՝ մրցակցության հարցերով մարմինները կարող են փոխանակել տեղեկություններ:

ԲԱԺԻՆ Ը

ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 290

Սկզբունքները

Կողմերը համաձայնում են, որ Կողմի կողմից սուբսիդիաները կարող են տրվել այն դեպքում, երբ դրանք անհրաժեշտ են հանրային քաղաքականության նպատակին հասնելու համար: Այնուամենայնիվ, Կողմերը հաստատում են, որ որոշ սուբսիդիաներ կարող են խաթարել շուկաների պատշաճ գործունեությունը և նվազեցնել առևտրի ազատականացման օգուտները: Որպես կանոն, Կողմը չպետք է ապրանքներ տրամադրող կամ ծառայություններ մատուցող ձեռնարկություններին տրամադրի սուբսիդիաներ, եթե այդ սուբսիդիաները բացասաբար են ազդում կամ կարող են բացասաբար ազդել մրցակցության կամ առևտրի վրա:

ՀՈԴՎԱԾ 291

Սահմանումները և գործողության ոլորտը

1. Սույն գլխի նպատակներով սուբսիդիան միջոց է, որ կատարում է ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում ընդգրկված «Սուբսիդավորման և փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագրի (ՄՓՄ համաձայնագիր) 1.1 հոդվածով սահմանված պայմանները՝ անկախ այն հանգամանքից, թե այն տրվել է ապրանքներ կամ ծառայություններ մատուցող ձեռնարկությանը, թե՛ ոչ:

Առաջին ենթապարբերությունը չի հակասում ԱՀԿ շրջանակներում իրականացվող՝ ծառայությունների դիմաց սուբսիդիաների սահմանման վերաբերյալ հետագա քննարկումների արդյունքներին: Կախված ԱՀԿ մակարդակով այդ քննարկումների զարգացումներից՝ Կողմերը կարող են Գործընկերության կոմիտեի կողմից այս առնչությամբ սույն Համաձայնագիրը թարմացնելու վերաբերյալ որոշում ընդունել:

2. Սույն գլուխը տարածվում է սուբսիդիայի վրա միայն այն դեպքում, երբ այդ սուբսիդիան համարվում է հատուկ՝ ՄՓՄ համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան: Սույն Համաձայնագրի 295-րդ հոդվածով կարգավորվող ցանկացած սուբսիդիա համարվում է հատուկ:

3. Սույն գլուխը տարածվում է բոլոր ձեռնարկություններին, այդ թվում՝ պետական և մասնավոր ձեռնարկություններին տրվող սուբսիդիաների վրա: Սույն բաժնի կանոնների կիրառումը չպետք է խոչընդոտի հանրային շահ ներկայացնող որոշակի այնպիսի ծառայությունների՝ ըստ օրենքի կամ փաստացի իրականացումը, որոնք հանձնարարվել են տվյալ ձեռնարկությանը: Սույն բաժնում կանոնների կիրառումից բացառությունները պետք է սահմանափակվեն հանրային շահ ներկայացնող առաջադրանքներով՝ դրանց վերապահված հանրային քաղաքականության նպատակին համաչափ և թափանցիկ:

4. Սույն Համաձայնագրի 294-րդ հոդվածը չի կիրառվում ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում ընդգրկված՝ Գյուղատնտեսության մասին համաձայնագրով (Գյուղատնտեսության մասին համաձայնագիր) կարգավորվող՝ ապրանքների առևտրին առնչվող սուբսիդիաների նկատմամբ:

5. 294-րդ և 295-րդ հոդվածները տեսալսողական ոլորտի նկատմամբ չեն կիրառվում:

ՀՈԴՎԱԾ 292

ԱՀԿ-ի հետ հարաբերությունները

Սույն գլխի դրույթները կիրառվում են՝ չխախտելով յուրաքանչյուր Կողմի՝ ԾԱԳՀ-ի XV հոդվածով, ՍԱԳՀ1994-ի XVI հոդվածով, ՄՓՄ համաձայնագրով և Գյուղատնտեսության մասին համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները:

ՀՈՂՎԱԾ 293

Թափանցիկությունը

1. Յուրաքանչյուր երկու տարին մեկ յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ծանուցում է հաշվետու ժամանակահատվածում տրամադրված սուբսիդիաների իրավական հիմքերի, ձևի, քանակի կամ բյուջեի և, հնարավորության դեպքում, այն ստացողի մասին:
2. Այդպիսի ծանուցումը համարվում է կատարված, եթե հաջորդ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ից Կողմը հասանելի է դարձնում համապատասխան տեղեկությունները կամ նրա անունից դրանք տեղադրվում են հանրամատչելի կայքէջում: Առաջին ծանուցումը հասանելի է դառնում ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում:
3. ՍՓՄ համաձայնագրի համաձայն ծանուցված սուբսիդիաների դեպքում այդ ծանուցումը համարվում է կատարված այն դեպքում, երբ Կողմը կատարում է ՍՓՄ համաձայնագրի 25-րդ հոդվածի համաձայն սահմանված ծանուցման պարտավորությունները՝ պայմանով, որ ծանուցումը պարունակի սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն պահանջվող բոլոր տեղեկությունները:

ՀՈՂՎԱԾ 294

Խորհրդակցությունները

1. Եթե Կողմը գտնում է, որ մյուս Կողմի կողմից տրված՝ 295-րդ հոդվածում չընդգրկված սուբսիդիան կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա շահերի վրա, ապա այդ Կողմը կարող է արտահայտել իր մտահոգությունն այն Կողմին, որը տրամադրել է սուբսիդիան, և պահանջել սվյալ հարցի շուրջ խորհրդակցություններ: Պահանջն ստացած Կողմը լիարժեքորեն և բարյացակամորեն դիտարկում է այդ պահանջը:

2. Չսահմանափակելով 293-րդ հոդվածով սահմանված թափանցիկության պահանջները և նպատակ ունենալով լուծել հարցը՝ խորհրդակցությունները պետք է, մասնավորապես, ուղղված լինեն քաղաքականության նպատակը կամ այդ սուբսիդիաների տրաման նպատակը, տվյալ սուբսիդիայի չափը սահմանելուն և առևտրի ու ներդրումների վրա սուբսիդիայի բացասական ազդեցությունների գնահատում իրականացնելու հնարավորություն տվող տվյալները հաստատելուն:

3. Խորհրդակցությունը դյուրացնելու նպատակով պահանջն ստացած Կողմը տվյալ սուբսիդիայի վերաբերյալ տրամադրում է տեղեկություններ՝ պահանջն ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում:

4. Եթե պահանջող Կողմը տվյալ սուբսիդիայի վերաբերյալ տեղեկություններն ստանալուց հետո համարում է, որ այդ սուբսիդիան անհամաչափ ձևով բացասական ազդեցություն է ունենում կամ կարող է բացասական ազդեցություն ունենալ իր առևտրային կամ ներդրումային շահերի վրա, ապա պահանջն ստացած Կողմը ջանքեր է գործադրում պահանջող Կողմի առևտրային և ներդրումային շահերի վրա այդ սուբսիդիայի հետևանքով առաջացած բացասական ազդեցությունները վերացնելու կամ նվազեցնելու համար:

ՀՈԴՎԱԾ 295

Որոշակի պայմաններով սուբսիդիաները

Յուրաքանչյուր Կողմ պայմաններ է կիրառում հետևյալ սուբսիդիաների նկատմամբ այնքանով, որքանով դրանք բացասական են ազդում կամ կարող են ազդել մյուս Կողմի առևտրի կամ ներդրումների վրա.

(a) այնպիսի իրավական պայմանավորվածությունը, որի համաձայն կառավարությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատասխանատու է որոշ ձեռնարկությունների պարտքերը կամ պարտավորությունները մարելու համար, թույլատրվում է այն պայմանով, որ պարտքերի և պարտավորությունների մարումը սահմանափակված է՝ այդ պարտքերի և պարտավորությունների չափի կամ այդ պատասխանատվության տևողության հետ կապված, և

(b) անվճարունակ կամ սնանկ ձեռնարկություններին տարբեր ձևերով (այդ թվում՝ փոխառություններ և երաշխիքներ, դրամաշնորհներ, կապիտալի ներդրումներ, շուկայական գներից ցածր գներով ակտիվների տրամադրում և հարկերից ազատում) մեկ տարուց ավելի ժամկետով սուբսիդիաների տրամադրումը թույլատրվում է՝ պայմանով, որ նախապատրաստվել է իրատեսական ենթադրությունների հիման վրա վերակազմավորման արդյունավետ ծրագիր՝ նպատակ ունենալով անվճարունակ կամ սնանկ ձեռնարկություններին ողջամիտ ժամանակում վերադարձնելու երկարաժամկետ կենսունակության և դարձնել այն ձեռնարկությունը, որն ինքնուրույն կարող է ծածկել վերակազմավորման ծախսերը:^{1 2}

ՀՈԴՎԱԾ 296

Սուբսիդիաների օգտագործումը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ձեռնարկությունները Կողմի կողմից տրամադրվող սուբսիդիաներն օգտագործեն միայն հանրային քաղաքականության այն նպատակով, որի համար սուբսիդիաները տրվել են:

¹ Սրանով Կողմին չի արգելվում տրամադրել ժամանակավոր իրացվելիության աջակցություն վարկային երաշխիքների կամ այնպիսի վարկերի ձևով, որոնց գումարը սահմանափակված է միայն այն չափով, որն անհրաժեշտ է սնանկ ձեռնարկությանը բիզնեսում պահելու համար այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է՝ վերակազմավորման կամ լուծարման ծրագիր ընդունելու համար:

² Փոքր և միջին ձեռնարկություններից չի պահանջվում ծածկել վերակազմավորման ծախսերը:

ԲԱԺԻՆ D

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 297

Վեճերի կարգավորումը

Կողմերից ոչ մեկը սույն Համաձայնագրի 13-րդ գլխով նախատեսված կարգով չի կարգավորում սույն գլխի B բաժնի կամ 294-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն ծագող ցանկացած հարցի հետ կապված վեճ:

ՀՈԴՎԱԾ 298

Գաղտնիությունը

1. Սույն գլխի համաձայն տեղեկություններ փոխանակելիս Կողմերը հաշվի են առնում մասնագիտական և բիզնես գաղտնիության առնչությամբ իրենց համապատասխան օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները և ապահովում են բիզնես գաղտնիքի ու այլ գաղտնի տեղեկությունների պաշտպանությունը:

2. Սույն գլխի համաձայն փոխանցված ցանկացած տեղեկություն այն ստացող Կողմի կողմից պետք է դիտարկվի որպես գաղտնի, եթե մյուս Կողմը, իր ներպետական օրենսդրությանը համապատասխան, չի թույլատրել այդ տեղեկության հրապարակումը կամ լայն հանրության համար այն հասանելի չի դարձրել:

ՀՈԴՎԱԾ 299

Վերանայման վերաբերյալ դրույթը

Կողմերը մշտապես վերանայում են այն հարցերը, որոնց անդրադարձ է կատարվում է սույն գլխում: Յուրաքանչյուր Կողմ կարող է այդ հարցերն ուղղել Գործընկերության կոմիտեին: Կողմերը պետք է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր հինգ տարին մեկ վերանայեն սույն գլխի իրականացման ընթացքը, եթե երկու Կողմերն այլ համաձայնության չեն գալիս:

ԳԼՈՒԽ 11

ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 300

Պատվիրակված լիազորությունը

Եթե այլ բան նախատեսված չէ, ապա յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ցանկացած ձեռնարկություն, այդ թվում՝ պետական ձեռնարկություն, հատուկ իրավունքներ կամ արտոնություններ կամ մենաշնորհի կարգավիճակ ստացած ձեռնարկություն, որին կառավարման որևէ մակարդակում Կողմը պատվիրակել է կանոնակարգող, վարչական կամ կառավարման այլ լիազորություն, այդ լիազորությունն իրականացնելիս գործի Կողմի՝ սույն Համաձայնագրով սահմանված պարտավորություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 301

Սահմանումները

Սույն գլխի նպատակների համար՝

- (a) «պետական ձեռնարկություն» նշանակում է այնպիսի ձեռնարկություն, այդ թվում՝ դուստր ձեռնարկություն, որտեղ Կողմն ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝
 - (i) տիրապետում է ձեռնարկության բաժնետիրական կապիտալի 50%-ից ավելին կամ ձեռնարկության կողմից տրված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 50%-ից ավելին,
 - (ii) կարող է նշանակել ձեռնարկության տնօրենների խորհրդի կամ համարժեք մարմնի անդամների կեսից ավելին, կամ
 - (iii) կարող է հսկողություն իրականացնել ձեռնարկության նկատմամբ.
- (b) «հատուկ իրավունքներ և արտոնություններ ստացած ձեռնարկություն» նշանակում է ցանկացած ձեռնարկություն, այդ թվում՝ ցանկացած սուբսիդիա՝ պետական կամ մասնավոր, որին Կողմը իրավունքի կամ փաստի ուժով տվել է հատուկ իրավունքներ կամ արտոնություններ: Կողմը տալիս է հատուկ իրավունքներ կամ արտոնություններ այն դեպքում, երբ դրանով սահմանվում է ապրանք կամ ծառայություն մատուցելու համար լիազորված ձեռնարկությունների թիվը կամ այդ թիվը սահմանափակվում է մինչև երկուսը կամ դրանից ավելի՝ ի տարբերություն այն օբյեկտիվ, համամասնական և ոչ խտրական չափորոշիչի, որն էապես ազդում է միևնույն աշխարհագրական տարածքում միևնույն ապրանքը կամ ծառայությունը էականորեն համարժեք պայմաններով մատուցող ցանկացած այլ ձեռնարկության կարողությունների վրա.

- (c) «մենաշնորհի կարգավիճակ ստացած» նշանակում է առևտրային գործունեությամբ զբաղվող անձ կամ անձանց խումբ կամ պետական գործակալություն կամ դրա ցանկացած դուստր կազմակերպություն, որը Կողմի տարածքի համապատասխան շուկայում նշանակվել է որպես ապրանքը կամ ծառայությունը միակ մատուցող կամ գնորդ, սակայն չի ներառում այն անձին, որին տրվել է մտավոր սեփականության բացառիկ իրավունք՝ միայն այդպիսի իրավունքի տրման պատճառով.
- (d) «առևտրային գործունեություն» նշանակում է այնպիսի գործողություններ, որոնց վերջնական արդյունքը այնպիսի ապրանքի արտադրությունը կամ ծառայության մատուցումն է, որը համապատասխան շուկայում վաճառվելու է ձեռնարկության կողմից սահմանված քանակով ու գնով, և որոնք ձեռնարկվում են շահույթ ստանալու նպատակով, սակայն չեն ներառում այն ձեռնարկության կողմից ձեռնարկված գործողությունները, որը՝
- (i) շահույթ չի հետապնդում,
 - (ii) գործում է ինքնարժեքով վաճառքի հիմքով, կամ
 - (iii) մատուցում է հանրային ծառայություններ.
- (e) «առևտրային նկատառումներ» նշանակում է գին, որակ, մատչելիություն, իրացվելիություն, տրանսպորտային փոխադրում և գնման կամ վաճառքի հետ կապված այլ պայմաններ, կամ այլ գործոններ, որոնք սովորաբար հաշվի են առնվում համապատասխան բիզնեսում կամ արդյունաբերության մեջ շուկայական տնտեսության սկզբունքներին համապատասխան գործող ձեռնարկության առևտրային որոշումների կայացման ժամանակ, և
- (f) «կարգավիճակ տալ» նշանակում է սահմանել մենաշնորհ կամ լիազորություն տալ դրա համար կամ ընդլայնել լրացուցիչ ապրանք կամ ծառայություն մատուցելու համար մենաշնորհի շրջանակները:

Կիրառության ոլորտը

1. Կողմերը հաստատում են ՍԱԳՀ 1994-ի XVII հոդվածի 1-3-րդ պարբերությունների, ՍԱԳՀ 1994-ի XVII հոդվածի մեկնաբանության մասին փոխհամաձայնության, ինչպես նաև ԾԱԳՀ-ի VIII հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ պարբերությունների համաձայն սահմանված իրենց իրավունքներն ու պարտավորությունները:

2. Սույն գլուխը կիրառվում է 300-րդ հոդվածում նշված բոլոր այն ձեռնարկությունների նկատմամբ, որոնք ներգրավված են առևտրային գործունեության մեջ: Եթե ձեռնարկությունը համատեղում է առևտրային և ոչ առևտրային գործունեությունները,¹ ապա սույն գլխով կարգավորվում է այդ ձեռնարկության միայն առևտրային գործունեությունը:

3. Սույն գլուխը կիրառվում է 300-րդ հոդվածում նշված՝ կառավարման կենտրոնական և տեղական մակարդակներում բոլոր ձեռնարկությունների նկատմամբ:

4. Սույն գլուխը չի կիրառվում Կողմի՝ 278-րդ և 279-րդ հոդվածներում ընդգրկված գնումների իմաստով կամ դրա գնումներով զբաղվող կազմակերպությունների կողմից կատարվող գնումների նկատմամբ:

5. Սույն գլուխը չի կիրառվում ցանկացած այնպիսի ծառայության նկատմամբ, որը մատուցվում է պետական իշխանության լիազորություններն իրականացնելիս՝ ԾԱԳՀ-ի իմաստով:

6. 304-րդ հոդվածը՝

(a) չի կիրառվում 143-րդ և 148-րդ հոդվածներով սահմանված ոլորտների նկատմամբ,

¹ Առավել հստակության համար և սույն գլխի նպատակներով՝ հանրային ծառայությունների տրամադրումը 301-րդ հոդվածի (d) կետի իմաստով չի համարվում առևտրային գործունեություն:

- (b) չի կիրառվում պետական ձեռնարկության, հատուկ իրավունքներ կամ արտոնություններ կամ մենաշնորհի կարգավիճակ ստացած ձեռնարկության ցանկացած միջոցի նկատմամբ, եթե Կողմի վերապահումը, որը կատարվել է 144-րդ հոդվածի համաձայն սահմանված ազգային ռեժիմի կամ ազգերի առավել բարենպաստության ռեժիմի պարտավորություններին հակառակ, ինչպես սահմանված է տվյալ Կողմի ժամանակացույցում՝ նախատեսված VIII-A հավելվածում՝ Եվրոպական միության դեպքում, կամ VIII-E հավելվածում՝ Հայաստանի Հանրապետության դեպքում, կիրառելի կլինի, եթե այդ նույն միջոցը ընդունվի կամ պահպանվի այդ Կողմի կողմից, և
- (c) կիրառվում է պետական ձեռնարկության, հատուկ իրավունքներ կամ արտոնություններ կամ մենաշնորհի կարգավիճակ ստացած ձեռնարկության առևտրային գործունեության նկատմամբ, եթե նույն գործողությունը կազմի այն ծառայությունների առևտրի վրա, որի առնչությամբ Կողմը, 149-րդ և 150-րդ հոդվածների համաձայն, հանձնառություն է ստանձնել՝ համապատասխանելով Եվրոպական միության դեպքում՝ VIII-B հավելվածով և Հայաստանի Հանրապետության դեպքում՝ VIII-F հավելվածով նախատեսված՝ տվյալ Կողմի ժամանակացույցում սահմանված պայմաններին կամ որակավորումներին:

ՀՈԴՎԱԾ 303

Ընդհանուր դրույթներ

1. Չսահմանափակելով Կողմերի՝ սույն գլխի համաձայն սահմանված իրավունքները և պարտավորությունները, սույն գլխում ոչինչ Կողմերին չի արգելում հիմնադրել կամ պահպանել պետական ձեռնարկություններ, սահմանել կամ պահպանել մենաշնորհներ, կամ ձեռնարկություններին հատուկ իրավունքներ կամ արտոնություններ տալ:
2. Կողմերից որևէ մեկը չպետք է սույն գլխի կիրառության ոլորտում ընդգրկվող ձեռնարկությունից պահանջի կամ խրախուսի, որ այն գործի սույն Համաձայնագրին ոչ համապատասխան ձևով:

Ոչ խտրական վերաբերմունքը և առևտրային նկատառումները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր պետական ձեռնարկությունները, մենաշնորհի կարգավիճակ ստացած և հատուկ իրավունքներ ու արտոնություններ ստացած ձեռնարկություններն առևտրային գործունեությամբ զբաղվելիս՝

(a) իրենց կողմից ապրանքներ կամ ծառայություններ գնելու կամ վաճառելու ժամանակ գործեն առևտրային նկատառումներին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարում են հանրային ծառայության՝ իրենց մանդատից բխող պայմանները, որոնք չեն հակասում (b) կետին.

(b) իրենց կողմից ապրանքներ կամ ծառայություններ գնելու ժամանակ՝

(i) մյուս Կողմի ձեռնարկության կողմից մատակարարվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների համար տրամադրեն ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը նրանք տրամադրում են այդ Կողմի ձեռնարկությունների կողմից մատակարարվող նույնանման ապրանքի կամ մատուցվող նույնանման ծառայության համար, և

(ii) մյուս Կողմի՝ իր տարածքում հիմնադրված ձեռնարկությունների կողմից մատակարարվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների համար տրամադրեն ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը նրանք տրամադրում են իր տարածքի համապատասխան շուկայում այնպիսի ձեռնարկությունների կողմից մատուցվող նույնանման ապրանքների կամ նույնանման ծառայությունների համար, որոնք այդ Կողմի՝ հիմնադրված ձեռնարկություններ են համարվում, և

- (c) իրենց կողմից ապրանքներ կամ ծառայություններ վաճառելու ժամանակ՝
- (i) մյուս Կողմի ձեռնարկությանը տրամադրեն ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը նրանք տրամադրում են Կողմի ձեռնարկություններին, և
 - (ii) մյուս Կողմի՝ իր տարածքում հիմնադրված ձեռնարկություններին տրամադրեն ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը նրանք տրամադրում են այդ Կողմի տարածքի համապատասխան շուկայում այնպիսի ձեռնարկություններին, որոնք այդ Կողմի՝ հիմնադրված ձեռնարկություններ են:

2. 1-ին պարբերությամբ պետական ձեռնարկություններին, հատուկ իրավունքներ կամ արտոնություններ կամ մենաշնորհի կարգավիճակ ստացած ձեռնարկություններին չի արգելվում՝

- (a) գնել կամ մատակարարել ապրանքներ կամ գնել կամ մատուցել ծառայություններ այլ, այդ թվում՝ գնի հետ կապված ժամկետներով կամ պայմաններով՝ պայմանով, որ այդ ժամկետների և պայմանների միջև տարբերությունները կատարվում են առևտրային նկատառումներին համապատասխան, և
- (b) հրաժարվել ապրանքներ գնելուց կամ մատակարարելուց կամ ծառայություններ գնելուց կամ մատուցելուց՝ պայմանով, որ այդ մերժումը կատարվում է առևտրային նկատառումներին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 305

Կարգավորման սկզբունքները

1. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ապահովել, որ 300-րդ հոդվածում նշված ձեռնարկությունները հետևեն կորպորատիվ կառավարման՝ միջազգայնորեն ճանաչված չափանիշներին:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր կողմից հիմնադրված կամ պահպանվող որևէ կարգավորող մարմին, այդ մարմնի կարգավորիչ գործառույթը դրա կողմից կարգավորվող բոլոր ձեռնարկությունների, այդ թվում՝ պետական ձեռնարկությունների, հատուկ իրավունքներ կամ արտոնություններ և մենաշնորհի կարգավիճակ ստացած ձեռնարկությունների նկատմամբ նույնանման հանգամանքներում արդյունավետորեն և անաչառորեն իրականացնելու նպատակով, հաշվետու չլինի դրա կողմից կարգավորվող ձեռնարկություններից որևէ մեկին¹:

Կարգավորման մարմնի՝ իր կարգավորիչ գործառույթներն իրականացնելու հարցում անաչառությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով տվյալ կարգավորման մարմնի որդեգրած ընդհանուր մեթոդը կամ գործելակերպը:

Այն ոլորտներում, որոնց համար Կողմերն այլ գլուխներում համաձայնության են եկել կարգավորման մարմնին առնչվող առանձնահատուկ պարտավորությունների շուրջ, գործում են այդ գլուխների համապատասխան դրույթները:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է օրենքների և կանոնակարգերի, այդ թվում՝ 300-րդ հոդվածում նշված ձեռնարկությունների վերաբերյալ իր օրենքների ու կանոնակարգերի հետևողական և ոչ խտրական ձևով կատարումը:

ՀՈՒՎԱԾ 306

Թափանցիկությունը

1. Եթե Կողմը հիմքեր ունի կարծելու, որ մյուս Կողմի՝ 300-րդ հոդվածում նշված որևէ ձեռնարկության առևտրային գործունեությունը բացասական ազդեցություն է ունենում սույն գլխով երաշխավորվող իր շահերի վրա, ապա այն սույն գլխի կիրառության շրջանակներում կարող է այդ Կողմից գրավոր պահանջել, որ վերջինս տեղեկություններ տրամադրի այդ ձեռնարկության այն գործառույթությունների վերաբերյալ, որոնք կապված են սույն գլխով կարգավորվող գործունեության հետ:

¹ Ավելի ստույգ՝ այն ոլորտներում, որոնց համար Կողմերն այլ գլուխներում համաձայնության են եկել կարգավորման մարմնին առնչվող առանձնահատուկ պարտավորությունների շուրջ, գործում են այդ գլուխների համապատասխան դրույթները, ինչպես սահմանված է սույն Համաձայնագրով:

Այդպիսի տեղեկություններ տրամադրելու պահանջում պետք է նշվեն համապատասխան ձեռնարկությունը, ապրանքները կամ ծառայություններն ու շուկաները, ինչպես նաև ներառվեն այնպիսի տվյալներ, որոնք վկայում են այն մասին, որ ձեռնարկությունը զբաղվում է Կողմերի միջև առևտուրը կամ ներդրումը խոչընդոտող գործունեությամբ:

2. 1-ին պարբերության համաձայն տրամադրված տեղեկությունները պետք է ներառեն հետևյալը.

- (a) ձեռնարկության բաժնետիրություն և ձայների բաշխման կառուցվածքը՝ նշելով բաժնեմասերի ընդհանուր տոկոսը և ձայների ընդհանուր տոկոսը, որոնք Կողմը կամ 300-րդ հոդվածում նշված ձեռնարկությունն ունի,
- (b) ցանկացած այնպիսի հատուկ բաժնեմասի կամ ձայնի հատուկ իրավունքի կամ այլ հատուկ իրավունքի նկարագրությունը, որն ունի Կողմը կամ 300-րդ հոդվածում նշված ձեռնարկությունը, եթե այդ իրավունքները տարբերվում են այդ անձի ընդհանուր հասարակ բաժնեմասերով երաշխավորվող իրավունքներից,
- (c) ձեռնարկության կազմակերպական կառուցվածքը, դրա սնօրենների խորհրդի կամ դրանում ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն իրականացնող համարժեք այլ մարմնի կազմը, ինչպես նաև 300-րդ հոդվածում նշված՝ տարբեր ձեռնարկությունների կամ ձեռնարկությունների խմբերի միջև բաժնեմասերի համատեղ տիրապետումը կամ այլ կապեր,
- (d) կառավարության այն ստորաբաժանումների կամ պետական այն մարմինների նկարագրությունը, որոնք կարգավորում կամ վերահսկողություն են իրականացնում ձեռնարկության նկատմամբ, հաշվետվություններ ներկայացնելու կարգի նկարագրությունը¹, ինչպես նաև կառավարիչներին պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու կամ նրանց վարձատրության բնագավառում կառավարության կամ նման լիազորություն ունեցող մյուս բոլոր պետական մարմինների իրավունքներն ու գործելակերպը,

¹ Ավելի ստույգ՝ Կողմը պարտավոր չէ հրապարակել հաշվետվությունները կամ որևէ հաշվետվության բովանդակությունը:

- (e) տարեկան եկամուտը կամ ընդհանուր ակտիվները, կամ երկուսն էլ, և
- (f) բացառությունները, չհամապատասխանող միջոցները, անձեռնմխելիությունները և ցանկացած այլ միջոց, այդ թվում՝ 300-րդ հոդվածում նշված ցանկացած ձեռնարկության նկատմամբ պահանջն ստացած Կողմի տարածքում կիրառելի առավել բարենպաստության ռեժիմը:

3. 2-րդ պարբերության (a)-ից (e) կետերը չեն տարածվում ՓՄՁ-ների վրա, ինչպես սահմանված է Կողմի օրենքներով և կանոնակարգերով:

4. 1-ին և 2-րդ պարբերություններում ոչինչ չի կարող մեկնաբանվել որևէ Կողմի պարտավորեցնող՝ հրապարակելու այնպիսի գաղտնի տեղեկություններ, որոնց հրապարակումը կհակասեր իր օրենքներին և կանոնակարգերին, կխոչընդոտեր օրենքի կատարման ապահովումը կամ այլ կերպ կհակասեր հանրային շահին կամ առանձին ձեռնարկությունների օրինական առևտրային շահերին:

ԳԼՈՒԽ 12

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 307

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

- (a) «ընդհանուր կիրառության միջոցները» ներառում են ընդհանուր կիրառության այն օրենքները, կանոնակարգերը, որոշումները, ընթացակարգերը և վարչական ակտերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի վրա, և
- (b) «շահագրգիռ անձ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի վրա կարող է ազդեցություն ունենալ ընդհանուր կիրառության միջոցը:

ՀՈԴՎԱԾ 308

Նպատակը և գործողության ոլորտը

Ընդունելով իրենց համապատասխան նորմատիվ-իրավական դաշտի՝ իրենց միջև առևտրի և ներդրումների վրա ունեցող ազդեցությունը՝ Կողմերը տնտեսական օպերատորների, մասնավորապես՝ ՓՄՁ-ների համար ապահովում են կանխատեսելի նորմատիվ-իրավական դաշտ և արդյունավետ ընթացակարգեր:

Հրապարակումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ընդունված ընդհանուր կիրառության միջոցները՝

- (a) պաշտոնապես սահմանված եղանակներով, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակներով անմիջապես և հեշտությամբ հասանելի դառնան այնպես, որ ցանկացած անձ կարողանա ծանոթանալ դրանց,
- (b) պարունակեն դրույթներ, որոնցում հնարավորինս հստակ նշվում են այդ միջոցների ընդունման նպատակը և հիմնավորումները, և
- (c) այդ միջոցների հրապարակումից հետո դրանք ուժի մեջ մտնելու համար նախատեսեն բավարար ժամկետ՝ բացառությամբ պատշաճ հիմնավորված դեպքերի:

2. Յուրաքանչյուր Կողմ՝

- (a) ձգտում է հրապարակել ընդհանուր կիրառության ցանկացած միջոց ընդունելու կամ փոփոխելու մասին ցանկացած առաջարկություն, այդ թվում՝ տվյալ առաջարկության նպատակի ու հիմնավորումների բացատրությունը, համապատասխան վաղ փուլերում,
- (b) շահագրգիռ անձանց համար ապահովում է ողջամիտ հնարավորություններ, որպեսզի նրանք մեկնաբանություններ անեն ընդհանուր կիրառության ցանկացած միջոց ընդունելու կամ փոփոխելու մասին ցանկացած առաջարկության վերաբերյալ, մասնավորապես՝ բավարար ժամանակ նախատեսելով այդ հնարավորությունների համար, և

- (c) ձգտում է հաշվի առնել շահագրգիռ անձանց կողմից ստացված՝ ցանկացած այդպիսի առաջարկության հետ կապված մեկնաբանությունները:

ՀՈԴՎԱԾ 310

Հարցումները և կապի ապահովման կենտրոնները

1. Յուրաքանչյուր Կողմ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից նշանակում է կապի ապահովման կենտրոն՝ սույն Համաձայնագրի արդյունավետ կիրարկումն ապահովելու և սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի առնչությամբ Կողմերի միջև հաղորդակցությունը դյուրացնելու համար:
2. Կողմի պահանջով մյուս Կողմի կապի ապահովման կենտրոնը պարզում է, թե որն է տվյալ հարցի համար պատասխանատու մարմինը կամ պաշտոնատար անձը և, անհրաժեշտության դեպքում, աջակցում է պահանջող Կողմի հետ հաղորդակցությունը դյուրացնելու հարցում:
3. Յուրաքանչյուր Կողմ ստեղծում և պահպանում է ցանկացած անձի կողմից ստացված՝ ընդհանուր կիրառության՝ առաջարկվող կամ գործող միջոցների, այդ թվում՝ այդպիսի միջոցների կիրառման վերաբերյալ հարցումներին արձագանքելու համապատասխան մեխանիզմներ: Հարցումները կարող են ուղղվել 1-ին պարբերության համաձայն ստեղծված կապի ապահովման կենտրոնների միջոցով կամ ըստ նպատակահարմարության՝ այլ մեխանիզմով, եթե սույն Համաձայնագրով չի սահմանվում հատուկ մեխանիզմ:

4. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է անձանց համար հասանելի ընթացակարգեր՝ սույն Համաձայնագրով սահմանված ընդհանուր կիրառության միջոցների կիրառման հետևանքով ծագած խնդիրները լուծելու նպատակով: Այդ ընթացակարգերի հետևանքով չպետք է սահմանափակվեն Կողմերի կողմից սույն Համաձայնագրի համաձայն սահմանվող կամ պահպանվող բողոքարկման կամ վերանայման ընթացակարգերը: Դրանք նաև չպետք է հանգեցնեն Կողմերի՝ 13-րդ գլխով սահմանված իրավունքների ու պարտավորությունների սահմանափակմանը:

5. Կողմերն ընդունում են, որ սույն հոդվածով նախատեսված կարգով տրված պատասխանը չի համարվում վերջնական կամ պարտադիր իրավական ուժ ունեցող, այլ ունի միայն տեղեկատվական բնույթ, եթե այլ բան նախատեսված չէ իրենց համապատասխան օրենքներով և կանոնակարգերով:

6. Կողմի պահանջով մյուս Կողմն առանց անհարկի ձգձգման տրամադրում է տեղեկություններ և պատասխանում է ընդհանուր կիրառության ցանկացած միջոցի վերաբերյալ այնպիսի հարցերի կամ ընդհանուր կիրառության ցանկացած միջոց ընդունելու կամ փոփոխելու մասին ցանկացած այնպիսի առաջարկության, որոնք, ըստ պահանջն ստացած Կողմի, կարող են ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրի գործողության վրա՝ անկախ նրանից, թե պահանջն ստացած Կողմը նախկինում ծանուցվել է այդ միջոցի մասին, թե՛ ոչ:

ՀՈԴՎԱԾ 311

Ընդհանուր կիրառության միջոցների կիրառումը

Յուրաքանչյուր Կողմ միասնական, օբյեկտիվ, անաչառ և ողջամիտ կերպով ապահովում է ընդհանուր կիրառության բոլոր միջոցների կիրառումը: Այդ նպատակով, առանձին դեպքերում մյուս Կողմի որոշակի անձանց, ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ այդ միջոցները կիրառելիս յուրաքանչյուր Կողմ՝

- (a) ձգտում է, իր ներպետական օրենսդրությանը համապատասխան, պատճառաբանված ծանուցում ուղարկել այն շահագրգիռ անձանց, որոնց վրա ուղղակիորեն ազդում է վարույթը, այն մասին, թե երբ է հարուցվել վարույթ՝ ներառյալ վարույթի բնույթի նկարագրությունը, իրավական մարմնի այն որոշումը, որի համաձայն հարուցվել է վարույթը, և վիճելի ցանկացած հարցի ընդհանուր նկարագրությունը,
- (b) այդ շահագրգիռ անձանց համար ապահովում է ողջամիտ հնարավորություններ, որպեսզի նրանք, նախքան վերջնական վարչական միջոցների կիրառումը, ներկայացնեն իրենց դիրքորոշումը հիմնավորող փաստեր և փաստարկներ՝ այնքանով, որքանով թույլ են տալիս առկա ժամանակը, վարույթի բնույթը և հանրային շահը, և
- (c) ապահովում է, որ իր ընթացակարգերը համապատասխանեն իր ներպետական օրենսդրությանը և հիմնված լինեն դրա վրա:

ՀՈԴՎԱԾ 312

Վերանայումը և բողոքարկումը

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական օրենսդրությանը համապատասխան, հաստատում կամ պահպանում է դատական, արբիտրաժային կամ վարչական ատյաններ կամ ընթացակարգեր՝ սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերի հետ կապված վարչական միջոցները շտապ վերանայելու և, հիմնավորված դեպքերում, ուղղելու նպատակով: Այդ ատյանները կամ ընթացակարգերը պետք է լինեն անաչառ և վարչական միջոցների կատարման լիազորությամբ օժտված գրասենյակից կամ մարմնից անկախ, և դրանց համար պատասխանատու մարմինները չպետք է էականորեն շահագրգռված լինեն գործի ելքով:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ցանկացած այդպիսի ատյանի ընթացակարգում վարույթի կողմերին տրվի՝

(a) իրենց համապատասխան դիրքորոշումները հիմնավորելու կամ պաշտպանելու ողջամիտ հնարավորության իրավունք, և

(b) ապացույցների և ներկայացված եզրակացությունների կամ, իր ներպետական օրենսդրությամբ պահանջվելու դեպքում, վարչական մարմնի կողմից կազմված արձանագրության հիմա վրա կայացված որոշման իրավունք:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ համապատասխան գրասենյակը կամ մարմինը կատարի տվյալ որոշումը և տվյալ վարչական միջոցի հետ կապված հարցերում իր գործելակերպում ղեկավարվի այդ որոշմամբ, որը, սակայն, իր ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգով կարող է բողոքարկվել կամ վերանայվել հետագայում:

ՀՈԴՎԱԾ 313

Նորմատիվ-իրավական լավ գործելակերպը և վարչական բարեվարքություն

1. Կողմերը պետք է համագործակցեն նորմատիվ-իրավական կարգավորումների որակը և արդյունավետությունը խթանելու հարցում, այդ թվում՝ իրենց համապատասխան նորմատիվ-իրավական բարեփոխումների գործընթացների և նորմատիվ-իրավական կարգավորումների ազդեցության վերլուծությունների վերաբերյալ տեղեկությունների և լավագույն փորձի փոխանակման միջոցով:

2. Կողմերը պահպանում են վարչական բարեվարքության սկզբունքները և համաձայնում են համագործակցել այդ սկզբունքները խթանելու հարցում, այդ թվում՝ տեղեկությունների և լավագույն փորձի փոխանակման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 314

Գաղտնիությունը

Սույն գլխի դրույթները չեն կարող մեկնաբանվել որպես որևէ Կողմի պարտավորեցնող՝ հրապարակելու այնպիսի գաղտնի տեղեկություններ, որոնց հրապարակումը կխոչընդոտեր օրենքի կատարման ապահովումը կամ այլ կերպ կհակասեր հանրային շահին կամ պետական կամ մասնավոր առանձին ձեռնարկությունների օրինական առևտրային շահերին:

ՀՈԴՎԱԾ 315

Հատուկ դրույթներ

Սույն գլխի դրույթները կիրառվում են՝ չխախտելով սույն Համաձայնագրի այլ գլուխներով սահմանված հատուկ կանոնները:

ԳԼՈՒԽ 13

ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԲԱԺԻՆ A

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

ՀՈԴՎԱԾ 316

Նպատակը

Սույն գլխի նպատակն է Կողմերի միջև ծագած՝ սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված վեճերից խուսափելու և դրանք կարգավորելու համար գործուն և արդյունավետ մեխանիզմ ստեղծելը՝ հնարավորության դեպքում փոխադարձ համաձայնությամբ լուծման հասնելու համար:

ՀՈԴՎԱԾ 317

Կիրառության ոլորտը

Սույն գլուխը կիրառվում է սույն մասի դրույթների մեկնաբանման և կիրառման հետ կապված ցանկացած վեճի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ Ե

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՂՎԱԾ 318

Խորհրդակցությունները

1. Կողմերը փորձում են ցանկացած վեճ լուծել բարեխղճորեն խորհրդակցություններ սկսելու միջոցով՝ փոխադարձ համաձայնությամբ լուծման հասնելու նպատակով:
2. Խորհրդակցություններ սկսելու ցանկություն ունեցող Կողմը մյուս Կողմին ներկայացնում է գրավոր պահանջ, որի պատճենը պետք է ներկայացվի Գործընկերության կոմիտեին, և որում պետք է նշվեն վիճարկվող միջոցը և սույն մասի այն դրույթները, որոնք այդ Կողմը համարում է կիրառելի:
3. Խորհրդակցություններն անցկացվում են պահանջն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում և, եթե Կողմերն այլ համաձայնության չեն գալիս, տեղի են ունենում այն Կողմի տարածքում, որին ուղղված է պահանջը: Խորհրդակցությունները պահանջն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում համարվում են ավարտված՝ բացառությամբ այն դեպքի, երբ երկու Կողմերն էլ համաձայնում են շարունակել խորհրդակցությունները: Խորհրդակցությունները և, մասնավորապես, բացահայտված բոլոր տեղեկությունները և խորհրդակցությունների ընթացքում Կողմերի դիրքորոշումները պետք է լինեն գաղտնի և չպետք է հիմք հանդիսանան հետագա որևէ ընթացակարգի ժամանակ Կողմերից որևէ մեկի իրավունքները սահմանափակելու համար:

4. Հրատապ հարցերի, այդ թվում՝ արագ փչացող ապրանքների, սեզոնային ապրանքների կամ ծառայությունների կամ էներգիային առնչվող հարցերի վերաբերյալ խորհրդակցություններն անցկացվում են պահանջն ստացած Կողմի կողմից պահանջն ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում և համարվում են ավարտված այդ 15 օրվա ընթացքում՝ բացառությամբ այն դեպքի, երբ Կողմերը համաձայնում են շարունակել խորհրդակցությունները:

5. Խորհրդակցություններ սկսելու ցանկություն ունեցող Կողմը կարող է 319-րդ հոդվածին համապատասխան դիմել արբիտրաժի, եթե՝

- (a) Կողմը, որին ուղղված է պահանջը, խորհրդակցություններ անցկացնելու պահանջին չի արձագանքում այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում,
- (b) խորհրդակցությունները չեն անցկացվում սույն հոդվածի 3-րդ կամ 4-րդ պարբերությամբ սահմանված ժամկետներում,
- (c) Կողմերը համաձայնության են գալիս խորհրդակցություններ չանցկացնելու շուրջ, կամ
- (d) խորհրդակցություններն ավարտվել են, սակայն Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որևէ լուծման չեն հանգել:

6. Խորհրդակցությունների ընթացքում յուրաքանչյուր Կողմ տրամադրում է փաստական բավարար տեղեկություններ, որպեսզի հնարավոր լինի լիովին ուսումնասիրել այն, թե ինչպես կարող էր վիճելի միջոցն ազդել սույն մասի դրույթների գործողության և կիրառության վրա: Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ապահովել իր իրավասու պետական կառավարման մարմինների այն աշխատակիցների մասնակցությունը, որոնք տիրապետում են խորհրդակցությունների առարկա հարցին առնչվող համապատասխան գիտելիքների:

Հոդված 319

Հաշտարարությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ցանկացած ժամանակ կարող է պահանջել, որ մյուս Կողմը ներգրավվի ցանկացած այնպիսի միջոցի հետ կապված հաշտարարության ընթացակարգում, որը բասացական ազդեցություն է ունենում Կողմերի միջև առևտրի կամ ներդրումների վրա:
2. Հաշտարարության ընթացակարգը նախաձեռնվում, իրականացվում և դադարեցվում է Հաշտարարության մեխանիզմին համապատասխան:
3. Հաշտարարության մեխանիզմն ընդունվում է Գործընկերության կոմիտեի որոշմամբ՝ դրա առաջին նիստի ժամանակ. Գործընկերության կոմիտեն կարող է որոշում կայացնել Հաշտարարության մեխանիզմում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ԲԱԺԻՆ Ը

ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԵՆԹԱԲԱԺԻՆ I

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 320

Արբիտրաժային ընթացակարգի նախաձեռնումը

1. Եթե Կողմերը վեճը չեն կարգավորում խոհրդակցությունների միջոցով, ինչպես նախատեսված է 318-րդ հոդվածով, ապա խորհրդակցություններ պահանջող Կողմը կարող է պահանջել ստեղծել արբիտրաժային կոլեգիա՝ սույն հոդվածին համապատասխան:

2. Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին պահանջը գրավոր ներկայացվում է մյուս Կողմին և Գործընկերության կոմիտեին: Բողոքարկող Կողմն իր պահանջում մատնանշում է վիճելի միջոցը և բացատրում է, թե ինչպես է այդ միջոցը հակասում սույն մասի դրույթներին՝ այնպես, որ հստակ ներկայացվի տվյալ բողոքը բերելու իրավական հիմքը:

Արբիտրաժային կոլեգիայի ստեղծումը

1. Արբիտրաժային կոլեգիան կազմված է երեք արբիտրից:
2. Կողմին, որի դեմ ներկայացվել է բողոքը, արբիտրաժային կոլեգիա ստեղծելու գրավոր պահանջը ներկայացվելուց հետո 14 օրվա ընթացքում Կողմերը խորհրդակցում են, որպեսզի համաձայնության գան արբիտրաժային կոլեգիայի կազմի վերաբերյալ:
3. Այն դեպքում, երբ Կողմերը սույն հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետում չեն կարողանում համաձայնության գալ արբիտրաժային կոլեգիայի կազմի վերաբերյալ, յուրաքանչյուր Կողմ, այդ պարբերության մեջ սահմանված ժամկետը լրանալուց հետո հինգ օրվա ընթացքում, այդ Կողմի՝ 339-րդ հոդվածի համաձայն սահմանված ցանկում ներառված ենթացանկից նշանակում է արբիտր: Եթե Կողմերից որևէ մեկը չի նշանակում արբիտր, ապա Գործընկերության կոմիտեի նախագահը կամ նախագահի կողմից պատվիրակված անձը մյուս Կողմի պահանջով այդ Կողմի՝ 339-րդ հոդվածի համաձայն սահմանված ցանկում ներառված ենթացանկից վիճակահանության միջոցով ընտրում է արբիտրի:
4. Եթե Կողմերը սույն հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետում արբիտրաժային կոլեգիայի նախագահի վերաբերյալ համաձայնության չեն գալիս, ապա Գործընկերության կոմիտեի նախագահը կամ նախագահի կողմից պատվիրակված անձը Կողմերից մեկի պահանջով 339-րդ հոդվածի համաձայն սահմանված ցանկում ներառված նախագահների ենթացանկից վիճակահանության միջոցով ընտրում է արբիտրաժային կոլեգիայի նախագահի:
5. Գործընկերության կոմիտեի նախագահը կամ նախագահի կողմից պատվիրակված անձը 3-րդ կամ 4-րդ պարբերություններում նշված պահանջն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում ընտրում է արբիտրներին:

6. Արբիտրաժային կոլեգիայի ստեղծման ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ ընտրված բոլոր երեք արբիտրները, Ընթացակարգային կանոնների համաձայն, ծանուցել են իրենց կողմից նշանակումն ընդունելու մասին:

7. Եթե սույն հոդվածի 3-րդ կամ 4-րդ պարբերություններում նշված պահանջը ներկայացնելու ժամանակ 339-րդ հոդվածով նախատեսված ցանկերից որևէ մեկը չի սահմանվում կամ չի պարունակում բավարար անուններ, ապա արբիտրների կազմը ձևավորվում է այն անձանցից վիճակահանության միջոցով, որոնք պաշտոնապես առաջարկվել են Կողմերից մեկի կամ երկուսի կողմից:

ՀՈԴՎԱԾ 322

Խնդիրները

1. Եթե արբիտրներին ընտրելուց հետո 5 օրվա ընթացքում Կողմերն այլ համաձայնության չեն գալիս, ապա արբիտրաժային կոլեգիայի խնդիրներն են՝

«Սույն Համաձայնագրի V մասի՝ վեճի Կողմերի կողմից վկայակոչված համապատասխան դրույթների լույսի ներքո ուսումնասիրել արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին պահանջում բարձրացված հարցը՝ այդ համապատասխան դրույթների հետ տվյալ միջոցի համատեղելիությունը որոշելու և սույն Համաձայնագրի 324-րդ, 325-րդ, 326-րդ և 338-րդ հոդվածներին համապատասխան զեկույց ներկայացնելու համար:»:

2. Կողմերն իրենց կողմից համաձայնեցված խնդիրների վերաբերյալ պետք է ծանուցեն արբիտրաժային կոլեգիային՝ համաձայնության գալուց հետո երեք օրվա ընթացքում:

Հոդված 323

Արբիտրաժային կոլեգիայի նախնական որոշումը հրատապության մասին

Կողմի պահանջով արբիտրաժային կոլեգիան, իր ստեղծման օրվանից 10 օրվա ընթացքում, որոշում է, թե արդյոք տվյալ դեպքը համարում է հրատապ: Մյուս Կողմը միաժամանակ ծանուցվում է արբիտրաժային կոլեգիա ներկայացված այդպիսի պահանջի մասին:

ՀՈԴՎԱԾ 324

Արբիտրաժային կոլեգիայի զեկույցները

1. Արբիտրաժային կոլեգիան Կողմերին ներկայացնում է միջանկյալ զեկույց՝ ներկայացնելով հաստատված փաստական հանգամանքները, համապատասխան դրույթների կիրառելիությունը և իր կողմից արվող բոլոր եզրահանգումների և առաջարկությունների հիմնական հիմնավորումները:
2. Յուրաքանչյուր Կողմ արբիտրաժային կոլեգիա կարող է ներկայացնել միջանկյալ զեկույցի որոշակի ասպեկտները վերանայելու գրավոր պահանջ՝ այն ստանալու օրվանից 14 օրվա ընթացքում: Այդ պահանջի մասին միաժամանակ ծանուցվում է մյուս Կողմը:
3. Քննարկելով միջանկյալ զեկույցի վերաբերյալ Կողմերի ներկայացրած բոլոր գրավոր մեկնաբանությունները՝ արբիտրաժային կոլեգիան կարող է փոփոխել իր զեկույցը և կատարել ցանկացած լրացուցիչ ուսումնասիրություն, որ անհրաժեշտ է համարում:

4. Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցում ներկայացվում են հաստատված փաստական հանգամանքները, սույն մասի համապատասխան դրույթների կիրառելիությունը և իր կողմից արվող բոլոր եզրահանգումների և եզրակացությունների հիմնական հիմնավորումները: Վերջնական զեկույցը պետք է ներառի միջանկյալ վերանայման փուլում արված փաստարկների բավարար վերլուծություն և պարունակի Կողմերի հարցերին և դիտարկումներին հստակ պատասխաններ:

ՀՈՒՎԱԾ 325

Արբիտրաժային կոլեգիայի միջանկյալ զեկույցը

1. Արբիտրաժային կոլեգիան Կողմերին ներկայացնում է միջանկյալ զեկույց՝ արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից ոչ ուշ, քան 90 օրվա ընթացքում: Եթե արբիտրաժային կոլեգիան համարում է, որ այս վերջնաժամկետը հնարավոր չէ պահպանել, ապա արբիտրաժային կոլեգիայի նախագահը Կողմերին և Գործընկերության կոմիտեին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն օրը, երբ արբիտրաժային կոլեգիան պլանավորում է ներկայացնել իր միջանկյալ զեկույցը: Միջանկյալ զեկույցը ոչ մի պարագայում չպետք է ներկայացվի ավելի ուշ, քան արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից 120 օրվա ընթացքում:

2. 323-րդ հոդվածում նշված հրատապ, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների, սեզոնային ապրանքների կամ ծառայությունների կամ էներգիային առնչվող դեպքերում, արբիտրաժային կոլեգիան գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը՝ միջանկյալ զեկույցն արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից 45 օրվա կամ ցանկացած դեպքում՝ ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում ներկայացնելու համար:

3. Յուրաքանչյուր Կողմ միջանկյալ զեկույցն ստանալու օրվանից 14 օրվա ընթացքում 324-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն արբիտրաժային կոլեգիա կարող է ներկայացնել այդ զեկույցի որոշակի ասպեկտները վերանայելու գրավոր պահանջ: Այդ պահանջի մասին միաժամանակ ծանուցվում է մյուս Կողմը: Կողմը կարող է մյուս Կողմի պահանջի վերաբերյալ ներկայացնել մեկնաբանություն՝ արբիտրաժային կոլեգիա գրավոր պահանջը ներկայացվելու օրվանից 7 օրվա ընթացքում:

ՀՈՒՎԱԾ 326

Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցը

1. Արբիտրաժային կոլեգիան Կողմերին և Գործընկերության կոմիտե ներկայացնում է վերջնական զեկույց՝ արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից ոչ ուշ, քան 120 օրվա ընթացքում: Եթե արբիտրաժային կոլեգիան համարում է, որ այս վերջնաժամկետը հնարավոր չէ պահպանել, ապա արբիտրաժային կոլեգիայի նախագահը Կողմերին և Գործընկերության կոմիտեին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն օրը, երբ արբիտրաժային կոլեգիան նախատեսում է ներկայացնել իր վերջնական զեկույցը: Վերջնական զեկույցը ոչ մի պարագայում չպետք է ներկայացվի ավելի ուշ, քան արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից 150 օրվա ընթացքում:

2. 323-րդ հոդվածում նշված հրատապ, այդ թվում՝ շուտ փչացող կամ սեզոնային ապրանքների կամ ծառայությունների կամ էներգիային առնչվող դեպքերում, արբիտրաժային կոլեգիան գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը՝ վերջնական զեկույցն արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից 60 օրվա ընթացքում ներկայացնելու համար: Վերջնական զեկույցը ոչ մի պարագայում չպետք է ներկայացվի ավելի ուշ, քան արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից 75 օրվա ընթացքում:

ԵՆԹԱԲԱԺԻՆ II

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 327

Համապատասխանությունը արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցին

Այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցները՝ արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցին անհապաղ և բարեխղճորեն համապատասխանելու համար՝ սույն մասի դրույթներին իր համապատասխանությունն ապահովելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 328

Համապատասխանությունն ապահովելու համար ողջամիտ ժամկետը

1. Եթե համապատասխանությունը հնարավոր չէ ապահովել անմիջապես, ապա Կողմերը ձգտում են համաձայնեցնել վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետ: Նման դեպքում այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, վերջնական զեկույցն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում բողոքարկող Կողմին և Գործընկերության կոմիտեին ծանուցում է համապատասխանությունն ապահովելու համար իրեն անհրաժեշտ ժամկետի («ողջամիտ ժամկետի») մասին:

2. Ողջամիտ ժամկետի շուրջ Կողմերի միջև տարաձայնության դեպքում բողոքարկող Կողմը 1-ին պարբերությունում նշված ծանուցումն ստանալու օրվանից 20 օրվա ընթացքում կարող է ներկայացնել գրավոր պահանջ՝ սկզբնական արբիտրաժային կոլեգիայի կողմից ողջամիտ ժամկետի տևողությունը որոշելու վերաբերյալ: Նման պահանջը միաժամանակ ներկայացվում է մյուս Կողմին և Գործընկերության կոմիտե: Արբիտրաժային կոլեգիան Կողմերին և Գործընկերության կոմիտե ներկայացնում է իր սահմանած ողջամիտ ժամկետը՝ պահանջն ստանալու օրվանից 20 օրվա ընթացքում:

3. Այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, բողոքարկող Կողմին գրավոր ծանուցում է վերջնական զեկույցին համապատասխանության ապահովման հարցում առաջընթացի մասին: Այդ ծանուցումն արվում է գրավոր և ներկայացվում է ողջամիտ ժամկետը լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ:

4. Ողջամիտ ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 329

Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցին համապատասխանելու համար
ձեռնարկված միջոցների վերանայումը

1. Այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, բողոքարկող Կողմին և Գործընկերության կոմիտեին ծանուցում է վերջնական զեկույցին համապատասխանելու համար իր ձեռնարկած բոլոր միջոցների մասին: Այդ ծանուցումը ներկայացվում է ողջամիտ ժամկետի ավարտից առաջ:

2. 1-ին պարբերությանը համապատասխան ծանուցված ցանկացած միջոցի առկայության կամ այդ միջոցի՝ սույն մասի դրույթներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի միջև տարաձայնության դեպքում բողոքարկող Կողմը սկզբնական արբիտրաժային կոլեգիա կարող է ներկայացնել հարցի վերաբերյալ որոշում կայացնելու գրավոր պահանջ: Այդ պահանջի մասին միաժամանակ ծանուցվում է այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը: Նման պահանջում մատնանշվում է խնդրո առարկա վիճելի միջոցը և բացատրվում է, թե ինչպես է այդ միջոցը հակասում սահմանված դրույթներին՝ այնպես, որ հստակ ներկայացվի տվյալ բողոքը բերելու իրավական հիմքը: Արբիտրաժային կոլեգիան պահանջն ստանալու օրվանից 45 օրվա ընթացքում Կողմերին և Գործընկերության կոմիտե է ներկայացնում իր զեկույցը:

ՀՈԴՎԱԾ 330

Իրավական պաշտպանության ժամանակավոր միջոցները անհամապատասխանության դեպքում

1. Եթե այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցների մասին չի ծանուցում՝ մինչև ողջամիտ ժամկետը լրանալը կամ եթե արբիտրաժային կոլեգիան որոշում է, որ առկա չէ որևէ այդպիսի միջոց, կամ որ միջոցը, որի մասին ծանուցվել է 329-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն, չի համապատասխանում Կողմի՝ սույն մասի դրույթներով սահմանված պարտավորություններին, ապա Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, բողոքարկող Կողմի պահանջով և այդ Կողմի հետ խորհրդակցություններից հետո, ներկայացնում է ժամանակավոր փոխհատուցման առաջարկ:

2. Եթե բողոքարկող Կողմը որոշում է չպահանջել 1-ին պարբերությունում նշված ժամանակավոր փոխհատուցման առաջարկը, կամ եթե նման պահանջ ներկայացվելու դեպքում ողջամիտ ժամկետն ավարտվելու կամ 329-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն արբիտրաժային կոլեգիայի կողմից զեկույցը ներկայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում ձեռք չի բերվում փոխհատուցման վերաբերյալ համաձայնություն, ապա բողոքարկող Կողմն իրավունք ունի կասեցնելու սույն մասի դրույթներից ծագող պարտավորությունները՝ այդ մասին ծանուցելով մյուս Կողմին և Գործընկերության կոմիտեին: Ծանուցման մեջ նշվում են պարտավորությունների կասեցման սահմանները, որոնք չպետք է գերազանցեն խախտման հետևանքով վերացած կամ պակասած օգուտների համարժեք սահմանները: Եթե Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, չի պահանջել սույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված արբիտրաժային ընթացակարգ, ապա բողոքարկող Կողմը կարող է կասեցում կիրառել մյուս Կողմի կողմից ծանուցումն ստանալուց հետո 10-րդ օրվանից սկսած:

3. Եթե Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, համարում է, որ պարտավորության նախատեսված կասեցումը գերազանցում է խախտման հետևանքով վերացած կամ պակասած օգուտների համարժեք սահմանները, ապա այն կարող է սկզբնական արբիտրաժային կոլեգիա ներկայացնել հարցի վերաբերյալ որոշում կայացնելու գրավոր պահանջ: Բողոքարկող Կողմը և Գործընկերության կոմիտեն ծանուցվում են նման պահանջի մասին մինչև 2-րդ պարբերությունում նշված տասնօրյա ժամկետը լրանալը: Սկզբնական արբիտրաժային կոլեգիան Կողմերին և Գործընկերության կոմիտե է ներկայացնում պարտավորությունների կասեցման սահմանների վերաբերյալ իր զեկույցը՝ պահանջը ներկայացվելու օրվանից 30 օրվա ընթացքում: Պարտավորությունները չեն կասեցվում, քանի դեռ սկզբնական արբիտրաժային կոլեգիան չի ներկայացրել իր զեկույցը: Կասեցումը պետք է համապատասխանի սկզբնական արբիտրաժային կոլեգիայի՝ կասեցման սահմանների վերաբերյալ զեկույցին:

4. Սույն հոդվածում նշված պարտավորությունների կասեցումը և փոխհատուցումը ժամանակավոր բնույթ են կրում և չեն կիրառվում այն բանից հետո, երբ՝

(a) Կողմերը, 334-րդ հոդվածի համաձայն, գտել են փոխհամաձայնեցված լուծում,

- (b) Կողմերը համաձայնել են, որ այն միջոցը, որի մասին ծանուցվել է 329-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համաձայն, ապահովում է Կողմի, որի դեմ ներկայացվել է բողոքը, համապատասխանությունը սույն մասի դրույթներին, կամ
- (c) բոլոր միջոցները, որոնք արբիտրաժային կոլեգիայի կողմից, 329-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, ճանաչվել են սույն մասի դրույթներին չհամապատասխանող, վերացվել կամ փոփոխվել են այնպես, որ համապատասխանեն այդ դրույթներին:

ՀՈԴՎԱԾ 331

Անհամապատասխանության դեպքում իրավական պաշտպանության ժամանակավոր միջոցներ ընդունելուց հետո համապատասխանությունն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցների վերանայումը

1. Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, համապատասխանաբար արտոնությունների կասեցումից կամ ժամանակավոր փոխհատուցման կիրառումից հետո բողոքարկող Կողմին և Գործընկերության կոմիտեին ծանուցում է արբիտրաժային կոլեգիայի զեկույցին համապատասխանությունն ապահովելու նպատակով իր կողմից ձեռնարկված միջոցի մասին: Բացառությամբ 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքերի՝ բողոքարկող Կողմը դադարեցնում է արտոնությունների կասեցումը՝ ծանուցումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Այն դեպքերում, երբ կիրառվել է փոխհատուցում, և բացառությամբ 2-րդ պարբերությունում նշված դեպքերի, Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, կարող է դադարեցնել նման փոխհատուցման կիրառումը՝ արբիտրաժային կոլեգիայի զեկույցին համապատասխանելու մասին իր ծանուցումից հետո 30 օրվա ընթացքում:

2. Եթե ծանուցումն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում Կողմերը չեն գալիս համաձայնության այն մասին, որ միջոցը, որի մասին ծանուցվել է, ապահովում է Կողմի, որի դեմ ներկայացվել է բողոքը՝ համապատասխանությունը կարգավորվող դրույթներին, ապա բողոքարկող Կողմը սկզբնական արբիտրաժային կոլեգիա ներկայացնում է հարցի վերաբերյալ որոշում կայացնելու գրավոր պահանջ: Նման պահանջը միաժամանակ ներկայացվում է մյուս Կողմին և Գործընկերության կոմիտե: Արբիտրաժային կոլեգիայի զեկույցը ներկայացվում է Կողմերին և Գործընկերության կոմիտե՝ պահանջը ներկայացնելու օրվանից 45 օրվա ընթացքում: Եթե արբիտրաժային կոլեգիան որոշում է, որ համապատասխանությունն ապահովելու համար ձեռնարկված միջոցը համապատասխանում է սույն մասի դրույթներին, համապատասխանաբար պարտավորությունների կասեցումը կամ փոխհատուցումը դադարեցվում է: Եթե արբիտրաժային կոլեգիան որոշում է, որ միջոցը, որի մասին 1-ին պարբերության համաձայն ծանուցել է Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, չի համապատասխանում սույն մասի դրույթներին, ապա պարտավորությունների կասեցման կամ փոխհատուցման սահմաններն անհրաժեշտության դեպքում փոփոխվում են՝ հաշվի առնելով արբիտրաժային կոլեգիայի զեկույցը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ III

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 332

Արբիտրների փոխարինումը

Եթե սույն գլխում նշված արբիտրաժային վարույթի ժամանակ սկզբնական արբիտրաժային կոլեգիան կամ դրա որոշ անդամներ չեն կարող մասնակցել, դուրս են գալիս կոլեգիայից կամ անհրաժեշտ է, որ փոխարինվեն՝ Վարքագծի կանոնների պահանջներին չհամապատասխանելու պատճառով, ապա կիրառվում է 321-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը: Ձեկույցը ներկայացնելու ժամկետը կարող է երկարացվել նոր արբիտր նշանակելու համար անհրաժեշտ ժամկետով՝ առավելագույնը մինչև 20 օրով:

ՀՈՒՎԱԾ 333

Արբիտրաժի և համապատասխանության ապահովման ընթացակարգերի կասեցումը և դադարեցումը

Արբիտրաժային կոլեգիան ցանկացած ժամանակ երկու Կողմերի պահանջով կասեցնում է իր աշխատանքը՝ Կողմերի միջև համաձայնեցված, սակայն ոչ ավելի, քան 12 հաջորդական ամիս ժամկետով: Արբիտրաժային կոլեգիան վերսկսում է իր աշխատանքները մինչև նշված ժամկետի ավարտը՝ երկու Կողմերի գրավոր պահանջով, կամ նշված ժամկետը ավարտվելուց հետո՝ Կողմերից մեկի գրավոր պահանջով: Պահանջը ներկայացնող Կողմն այդ մասին տեղեկացնում է, համապատասխանաբար, Գործընկերության կոմիտեի նախագահին և մյուս Կողմին: Եթե որևէ Կողմ չի պահանջում վերսկսել արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը մինչև կասեցման՝ համաձայնեցված ժամկետը լրանալը, ապա ընթացակարգը դադարեցվում է: Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքի կասեցման դեպքում սույն գլխում նշված համապատասխան ժամկետները երկարացվում են այն ժամկետով, որով կասեցվել էր արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը:

ՀՈՒՎԱԾ 334

Փոխհամաձայնեցված լուծում

1. Կողմերը սույն գլխով կարգավորվող ցանկացած վեճի առնչությամբ ցանկացած ժամանակ կարող են հանգել փոխհամաձայնեցված լուծման:
2. Եթե փոխհամաձայնեցված լուծումը ձեռք է բերվում կոլեգիայի ընթացակարգերի կամ հաշտարարության ընթացակարգի ընթացքում, ապա Կողմերը համատեղ ծանուցում են Գործընկերության կոմիտեին և համապատասխանաբար արբիտրաժային կոլեգիայի նախագահին կամ հաշտարարին նման լուծման մասին: Նման ծանուցմամբ դադարում են արբիտրաժային կոլեգիայի կամ հաշտարարության ընթացակարգերը:

3. Կողմերից յուրաքանչյուրը ձեռնարկում է համաձայնեցված ժամկետում փոխհամաձայնեցված լուծումն իրագործելու համար անհրաժեշտ միջոցներ: Իրագործող Կողմը ոչ ուշ, քան համաձայնեցված ժամկետի ավարտին մյուս Կողմին գրավոր տեղեկացնում է փոխհամաձայնեցված լուծման իրականացման համար ձեռնարկված բոլոր միջոցների մասին:

ՀՈՒՎԱԾ 335

Ընթացակարգային կանոնները և Վարքագծի կանոնները

1. Սույն գլխի շրջանակներում վեճերի կարգավորման ընթացակարգերը կարգավորվում են սույն գլխով, Ընթացակարգային կանոններով և Վարքագծի կանոններով:
2. Ընթացակարգային կանոնները և Վարքագծի կանոններն ընդունվում են Գործընկերության կոմիտեի որոշմամբ՝ դրա առաջին նիստի ժամանակ. Գործընկերության կոմիտեն կարող է որոշում կայացնել դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
3. Արբիտրաժային կոլեգիայի լսումները բաց են հանրության համար, եթե այլ բան նախատեսված չէ Ընթացակարգային կանոններով:

Տեղեկությունները և տեխնիկական հարցերով խորհրդատվությունը

1. Արբիտրաժային կոլեգիան Կողմի պահանջով, որի մասին պետք է միաժամանակ ծանուցվեն արբիտրաժային կոլեգիան և մյուս Կողմը, կամ իր սեփական նախաձեռնությամբ կարող է պահանջել ցանկացած տեղեկություն, որն այն իր գործառույթներն իրականացնելու համար համարում է անհրաժեշտ, այդ թվում՝ վեճի մեջ ներգրավված Կողմերից: Կողմերն անհապաղ և ամբողջությամբ պատասխանում են արբիտրաժային կոլեգիայի՝ նման տեղեկության վերաբերյալ պահանջին:

2. Արբիտրաժային կոլեգիան Կողմի պահանջով, որի մասին պետք է միաժամանակ ծանուցվեն արբիտրաժային կոլեգիան և մյուս Կողմը, կամ իր սեփական նախաձեռնությամբ կարող է հայցել ցանկացած տեղեկություն, որն այն իր գործառույթներն իրականացնելու համար համարում է անհրաժեշտ: Արբիտրաժային կոլեգիան իրավունք ունի իր հայեցողությամբ հայցելու փորձագիտական կարծիքներ: Արբիտրաժային կոլեգիան, նման փորձագետներ ընտրելուց առաջ, խորհրդակցում է Կողմերի հետ:

3. Կողմի տարածքում հիմնադրված ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, Ընթացակարգային կանոնների համաձայն, կարող են արբիտրաժային կոլեգիա ներկայացնել համառոտ *amicus curiae* կարծիքներ:

4. Սույն հոդվածի համաձայն ձեռք բերված ցանկացած տեղեկություն պետք է բացահայտվի յուրաքանչյուր Կողմի և ներկայացվի նրանց՝ մեկնաբանությունների համար:

Հոդված 337

Մեկնաբանման կանոններ

Արբիտրաժային կոլեգիան մեկնաբանում է սույն մասի դրույթները միջազգային հանրային իրավունքում այդ թվում՝ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թվականի Վիեննայի կոնվենցիայով ամրագրված՝ մեկնաբանության սովորության կանոնների համաձայն: Արբիտրաժային կոլեգիան նաև հաշվի է առնում ԱՀԿ-ի Վեճերի կարգավորման մարմնի կողմից ԱՀԿ կոլեգիաների զեկույցներում և Բողոքարկման մարմնի զեկույցներում ընդունված համապատասխան մեկնաբանությունները: Արբիտրաժային կոլեգիայի զեկույցներով չեն կարող ավելացվել կամ պակասեցվել սույն Համաձայնագրով սահմանված Կողմերի իրավունքները և պարտավորությունները:

ՀՈՒՎԱԾ 338

Արբիտրաժային կոլեգիայի որոշումները և զեկույցները

1. Արբիտրաժային կոլեգիան գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը՝ բոլոր որոշումները կոնսենսուսով ընդունելու համար: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ հնարավոր չէ որոշումը կայացնել կոնսենսուսով, վիճարկվող հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է ձայների մեծամասնությամբ: Արբիտրների չհամընկնող կարծիքները ոչ մի դեպքում չեն բացահայտվում:
2. Արբիտրաժային կոլեգիայի զեկույցում ներկայացվում են հաստատված փաստական հանգամանքները, համապատասխան դրույթների կիրառելիությունը և արբիտրաժային կոլեգիայի կողմից արվող բոլոր եզրահանգումների և եզրակացությունների հիմնական հիմնավորումները:

3. Արբիտրաժային կոլեգիայի որոշումները և զեկույցները անվերապահորեն ընդունվում են Կողմերի կողմից և չեն առաջացնում որևէ իրավունք կամ պարտավորություն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

4. Գործընկերության կոմիտեն արբիտրաժային կոլեգիայի զեկույցը հասանելի է դարձնում հանրության համար՝ ընթացակարգով սահմանված կարգով ապահովելով գաղտնի տեղեկությունների պաշտպանությունը:

ԲԱԺԻՆ Ը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՒՎԱԾ 339

Արբիտրների ցանկերը

1. Գործընկերության կոմիտեն, Կողմերի առաջարկների հիման վրա և սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 6 ամիս հետո, ձևավորում է առնվազն 15 անձից բաղկացած ցանկ, որոնք ցանկանում են և կարող են հանդես գալ որպես արբիտրներ: Ցանկը պետք է բաղկացած լինի երեք ենթացանկից՝ մեկական ենթացանկ յուրաքանչյուր Կողմի համար և մեկ այնպիսի անձանց ենթացանկ, որոնք Կողմերից ոչ մեկի քաղաքացի չեն և հանդես են գալու որպես արբիտրաժային կոլեգիայի նախագահ: Յուրաքանչյուր ենթացանկ պետք է ներառի առնվազն հինգ անձի: Գործընկերության կոմիտեն ապահովում է, որ ցանկում միշտ առկա լինեն առնվազն պահանջվող թվով անձինք:

2. Արբիտրները պետք է ունենան իրավագիտության, միջազգային առևտրի և սույն մասի դրույթներին վերաբերող այլ ոլորտներում ցուցաբերված փորձառություն: Նրանք պետք է լինեն անկախ, հանդես գան իրենց անունից և չստանան ցուցումներ որևէ կազմակերպությունից կամ կառավարությունից կամ չպետք է փոխկապակցված լինեն որևէ Կողմի կառավարության հետ, ինչպես նաև պետք է համապատասխանեն Վարքագծի կանոնների պահանջներին: Նախագահը պետք է նաև փորձ ունենա վեճերի կարգավորման ընթացակարգերի բնագավառում:

3. Գործընկերության կոմիտեն կարող է ձևավորել սույն մասի դրույթներով կարգավորվող առանձին ոլորտներում գիտելիքներ և փորձ ունեցող 15 անձանցից բաղկացած լրացուցիչ ցանկեր: Կողմերի համաձայնությամբ՝ նման լրացուցիչ ցանկերն օգտագործվում են 321-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն արբիտրաժային կոլեգիա կազմավորելու համար:

ՀՈՒՎԱԾ 340

Վեճի կարգավորման հարթակի ընտրությունը

1. Երբ ծագում է վեճ որևէ առանձին միջոցի շուրջ, որով խախտվում է սույն Համաձայնագրով սահմանված որևէ պարտավորություն և երկու Կողմերի մասնակցությամբ մեկ այլ միջազգային համաձայնագրով, այդ թվում՝ ԱՀԿ համաձայնագրով սահմանված որևէ էականորեն համարժեք պարտավորություն, ապա իրավական պաշտպանություն փնտրող Կողմն ընտրում է վեճի կարգավորման հարթակը:

2. Վեճի կարգավորման հարթակն ընտրելուց և սույն գլխով կամ այլ միջազգային համաձայնագրով սահմանված կարգով վեճի կարգավորման ընթացակարգեր նախաձեռնելուց հետո Կողմը չի կարող 1-ին պարբերության մեջ նշված առանձին միջոցի առնչությամբ նախաձեռնել այլ համաձայնագրով սահմանված վեճի կարգավորման ընթացակարգեր՝ բացառությամբ, եթե վեճի կարգավորման՝ առաջինը ընտրված հարթակը չի կարգավորում վեճը՝ ընթացակարգային կամ իրավագործության հետ կապված պատճառներով:

3. Սույն հոդվածի նպատակներով՝

(a) վեճերի կարգավորման՝ սույն գլխով նախատեսված ընթացակարգերը համարվում են նախաձեռնված Կողմի կողմից՝ 320-րդ հոդվածով սահմանված կոլեգիա ստեղծելու պահանջի ներկայացմամբ,

(b) վեճերի կարգավորման՝ ԱՀԿ համաձայնագրով նախատեսված ընթացակարգերը համարվում են նախաձեռնված՝ Կողմի կողմից ԱՀԿ-ի «Վեճերի կարգավորումը կանոնակարգող կանոնների և ընթացակարգերի մասին համաձայնության» 6-րդ հոդվածով սահմանված կոլեգիա ստեղծելու պահանջի ներկայացմամբ, և

(c) վեճերի կարգավորման՝ ցանկացած այլ համաձայնագրով նախատեսված ընթացակարգերը համարվում են նախաձեռնված՝ այդ համաձայնագրի համապատասխան դրույթների համաձայն:

4. Չսահմանափակելով 2-րդ պարբերության շրջանակները՝ սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Կողմին իրականացնել ԱՀԿ Վեճերի կարգավորման մարմնի կողմից թույլատրված՝ պարտավորությունների կասեցում: ԱՀԿ համաձայնագիրը չի կարող վկայակոչվել որպես սույն գլխի համաձայն պարտավորությունների կասեցումը խոչընդոտող հիմք:

ՀՈՒՎԱԾ 341

Վերջնաժամկետները

1. Սույն գլխում սահմանված բոլոր վերջնաժամկետները, այդ թվում՝ արբիտրաժային կոլեգիաների կողմից իրենց զեկույցները ներկայացնելու համար նախատեսված ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով, առաջին օր է համարվում այն գործողությանը կամ փաստին հաջորդող օրը, որին դրանք վերաբերում են, եթե այլ բան սահմանված չէ:

2. Սույն գլխում նշված ցանկացած վերջնաժամկետ կարող է փոփոխվել վեճի Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ: Արբիտրաժային կոլեգիան ցանկացած ժամանակ կարող է Կողմերին առաջարկել փոփոխել սույն գլխում նշված ցանկացած ժամկետ՝ նշելով առաջարկի պատճառները:

ՀՈՒՎԱԾ 342

Եվրոպական միության արդարադատության դատարան ուղղված հարցումները

1. 2-րդ պարբերությամբ նախատեսված ընթացակարգը կիրառվում է 169-րդ, 180-րդ, 189-րդ և 192-րդ հոդվածների՝ մոտարկման վերաբերյալ դրույթների մեկնաբանման առնչությամբ առաջացող վեճերի նկատմամբ:

2. 1-ին պարբերության մեջ նշված վեճի արդյունքում Եվրոպական միության օրենսդրության դրույթի մեկնաբանության հարց առաջանալու դեպքում արբիտրաժային կոլեգիան դիմում է Եվրոպական միության արդարադատության դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ ընթացակարգային որոշում կայացնելու համար՝ պայմանով, որ այդ հարցն անհրաժեշտ է արբիտրաժային կոլեգիայի որոշման համար: Նման դեպքերում արբիտրաժային կոլեգիայի ընթացակարգային որոշումների նկատմամբ կիրառվող վերջնաժամկետները կասեցվում են՝ մինչև Եվրոպական միության արդարադատության դատարանը որոշման կայացումը: Եվրոպական միության արդարադատության դատարանի որոշումը պարտադիր է արբիտրաժային կոլեգիայի համար:

ՄԱՍ VII

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 343

Հայաստանի Հանրապետությունը պետք է օգտվի Եվրոպական միության համապատասխան ֆինանսավորման մեխանիզմների և գործիքների միջոցով տրամադրվող ֆինանսական աջակցությունից: Հայաստանի Հանրապետությունը կարող է նաև օգտվել Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի և միջազգային այլ ֆինանսական կառույցների կողմից տրամադրվող վարկերից: Ֆինանսական աջակցությունը նպաստում է սույն Համաձայնագրի նպատակներին հասնելուն և տրամադրվում է սույն գլխին համապատասխան:

ՀՈՒՎԱԾ 344

1. Ֆինանսական աջակցության հիմնական սկզբունքները պետք է համապատասխանեն Եվրոպական միության ֆինանսական գործիքների վերաբերյալ համապատասխան կարգավորումներին:

2. Եվրոպական միության ֆինանսական աջակցության՝ Կողմերի կողմից համաձայնեցված առաջնահերթ ոլորտները պետք է նշված լինեն տարեկան գործողությունների ծրագրերում, որոնք կիրառելիության դեպքում՝ հիմնված են քաղաքականությունների համաձայնեցված առաջնահերթություններն արտացոլող բազմամյա ծրագրերի վրա: Այդ ծրագրերում սահմանված ֆինանսական աջակցության գումարներում հաշվի են առնվում Հայաստանի Հանրապետության կարիքները, ոլորտների հնարավորությունները և, մասնավորապես, սույն Համաձայնագրով նախատեսված ոլորտներում բարեփոխումների առաջընթացը:

3. Առկա ռեսուրսների օպտիմալ կիրառումը հնարավոր դարձնելու նպատակով՝ Կողմերը պետք է ձգտեն ապահովել, որ Եվրոպական միության աջակցությունն իրականացվի այլ դոնոր երկրների, դոնոր կազմակերպությունների և միջազգային ֆինանսական կառույցների հետ սերտ համագործակցությամբ ու համակարգմամբ, և օգնության արդյունավետության միջազգային սկզբունքներին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության կողմից պահանջ ներկայացվելու և կիրառելի պայմանների առկայության դեպքում Եվրոպական միությունը կարող է մակրոֆինանսական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:

ՀՈՒՎԱԾ 345

Ֆինանսական աջակցության իրավական, վարչական և տեխնիկական անկյունաքարային հիմքերը պետք է սահմանվեն Կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրերի շրջանակներում:

ՀՈՂՎԱԾ 346

Գործընկերության խորհուրդը պետք է տեղեկացվի ֆինանսական աջակցության իրականացման և առաջընթացի ու սույն Համաձայնագրի նպատակներն ապահովելու գործընթացի վրա դրա ազդեցության մասին: Հետևաբար, Կողմերի համապատասխան մարմինները փոխադարձաբար և մշտապես պետք է տրամադրեն մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ համապատասխան տեղեկություններ:

ՀՈՂՎԱԾ 347

Կողմերը պետք է աջակցությունն իրականացնեն կայուն ֆինանսական կառավարման սկզբունքներին համապատասխան և համագործակցեն ի պաշտպանություն Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության ֆինանսական շահերի՝ սույն մասի 2-րդ գլխի համաձայն:

ԳԼՈՒԽ 2

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 348

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով կիրառվում են սույն Համաձայնագրի I Արձանագրության մեջ սահմանված սահմանումները:

ՀՈԴՎԱԾ 349

Գործողության ոլորտը

Սույն գլուխը կիրառելի է Կողմերի միջև հետագայում կնքվելիք ցանկացած համաձայնագրի կամ ֆինանսավորման փաստաթղթի, ինչպես նաև Եվրոպական միության ցանկացած այլ՝ ֆինանսավորման այնպիսի փաստաթղթի դեպքում, որին Հայաստանի Հանրապետության իշխանությունները կամ Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո գտնվող այլ մարմիններ կամ անձինք կարող են միանալ՝ չհակասելով լրացուցիչ ցանկացած այլ դրույթի, որով կարգավորվում են աուդիտի, տեղում իրականացվող ստուգումների, տեսչական զննությունների, հսկողության գործընթացները և խարդախության դեմ պայքարի միջոցառումները՝ ներառյալ Աուդիտորների եվրոպական դատարանի և Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ) կողմից իրականացվող միջոցառումները:

ՀՈԴՎԱԾ 350

Խարդախությունը, կոռուպցիան և ցանկացած այլ անօրինական գործունեություն կանխելուն և դրա դեմ պայքարելուն ուղղված միջոցառումները

Կողմերը պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցառումներ՝ ԵՄ ֆինանսական միջոցների իրականացման հետ կապված խարդախությունը, կոռուպցիան և ցանկացած այլ անօրինական գործունեություն կանխելու և դրա դեմ պայքարելու համար, այդ թվում՝ սույն Համաձայնագրով նախատեսված ոլորտներում փոխադարձ վարչական աջակցության և փոխադարձ իրավական աջակցության միջոցով:

ՀՌԴՎԱԾ 351

Աշխատանքային մակարդակով տեղեկությունների փոխանակումը և հետագա համագործակցությունը

1. Սույն գլխի պատշաճ իրականացման նպատակով Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները պետք է կանոնավոր փոխանակեն տեղեկություններ և, Կողմերից որևէ մեկի պահանջով, իրականացնեն խորհրդակցություններ:
2. Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը Հայաստանի Հանրապետության իր գործընկերների հետ կարող է համաձայնության գալ խարդախության դեմ պայքարի ոլորտում հետագա համագործակցության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ աշխատանքային պայմանավորվածությունների վերաբերյալ:
3. Անձնական տվյալների փոխանցման և մշակման համար կիրառվում է 13-րդ հոդվածը:

ՀՌԴՎԱԾ 352

Եվրոն և դրամը կեղծումից պաշտպանելու մասով համագործակցությունը

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները պետք է համագործակցեն՝ եվրոն և դրամը կեղծումից արդյունավետորեն պաշտպանելու նպատակով: Այդ համագործակցությունը պետք է ներառի եվրոյի և դրամի կեղծումը կանխելու և դրա դեմ պայքարելու համար անհրաժեշտ աջակցությունը՝ ներառյալ տեղեկությունների փոխանակումը:

Խարդախության, կոռուպցիայի և չարաշահումների կանխարգելումը

1. ԵՄ ֆինանսական միջոցների իրականացումը Հայաստանի Հանրապետության իշխանություններին վերապահվելու դեպքում վերջիններս պետք է կանոնավոր ստուգեն, որ ԵՄ ֆինանսական միջոցներով ֆինանսավորվող գործունեություններն իրականացվեն պատշաճորեն: Նրանք պետք է ձեռնարկեն համապատասխան ցանկացած միջոցառում և վերացնեն չարաշահումներն ու խարդախությունը:
2. Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է ձեռնարկեն համապատասխան ցանկացած միջոցառում՝ ակտիվ կամ պասիվ կոռուպցիոն գործելակերպերը կանխելու և վերացնելու և ԵՄ ֆինանսական միջոցների իրականացմանն առնչվող ընթացակարգերի ցանկացած փուլում շահերի բախումը բացառելու ուղղությամբ:
3. Հայաստանի Հանրապետության իշխանությունները Եվրոպական հանձնաժողովին պետք է տեղեկացնեն կանխարգելմանն ուղղված ձեռնարկված ցանկացած միջոցառման մասին:
4. Այդ նպատակով, Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Եվրոպական հանձնաժողովին պետք է տրամադրեն ԵՄ ֆինանսական միջոցների իրականացմանն առնչվող ցանկացած տեղեկություն և անհապաղ տեղեկացնեն իրենց ընթացակարգերում կամ համակարգերում ցանկացած էական փոփոխության մասին:

ՀՈԴՎԱԾ 354

Քննությունը և քրեական հետապնդումը

Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է ապահովեն խարդախության, կոռուպցիայի կամ ցանկացած այլ չարաշահման, այդ թվում՝ շահերի բախման կասկածվող և փաստացի դեպքերով քննություն և քրեական հետապնդում՝ հետամուտ լինելով ազգային կամ ԵՄ հսկողության իրականացմանը: Անհրաժեշտության դեպքում Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակն այդ հարցով կարող է աջակցել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին:

ՀՈԴՎԱԾ 355

Խարդախության, կոռուպցիայի և չարաշահումների վերաբերյալ հաղորդումները

1. Հայաստանի Հանրապետության իշխանությունները Եվրոպական հանձնաժողովին պետք է անհապաղ փոխանցեն ԵՄ ֆինանսական միջոցների իրականացման հետ կապված խարդախության, կոռուպցիայի կամ ցանկացած այլ չարաշահման, այդ թվում՝ շահերի բախման կասկածվող կամ փաստացի դեպքերի մասին իրենց հայտնի դարձած ցանկացած տեղեկություն: Խարդախության և կոռուպցիայի կասկածի դեպքում պետք է տեղեկացվի նաև Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը:
2. Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է նաև հաղորդեն սույն հոդվածին համապատասխան փոխանցվող փաստերի առնչությամբ ձեռնարկված բոլոր միջոցառումների մասին: Եթե խարդախության, կոռուպցիայի կամ ցանկացած այլ չարաշահման կասկածվող կամ փաստացի դեպքերի մասին չի հաղորդվում, ապա Հայաստանի Հանրապետության իշխանությունները Եվրոպական հանձնաժողովին պետք է տեղեկացնեն դրա մասին՝ համապատասխան ենթակումիտեի տարեկան հանդիպման ժամանակ:

Աուդիտները

1. Եվրոպական հանձնաժողովը և Աուդիտորների եվրոպական դատարանն իրավասու են ուսումնասիրելու՝ արդյոք ԵՄ ֆինանսական միջոցների իրականացմանն առնչվող բոլոր ծախսերը կատարվել են օրինական ու կանոնավոր ձևով և արդյոք ֆինանսական կառավարումը կայուն է եղել:

2. Աուդիտները պետք է իրականացվեն ստանձնած պարտավորությունների և կատարված վճարումների հիման վրա: Դրանք պետք է հիմնված լինեն գրանցված տվյալների վրա, և անհրաժեշտության դեպքում՝ իրականացվեն տեղում՝ ԵՄ ֆինանսական միջոցների իրականացման գործընթացը կառավարող կամ դրան մասնակցող ցանկացած մարմնի, այդ թվում՝ ԵՄ ֆինանսական միջոցներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացած բոլոր շահառուների, կապալառուների և ենթակապալառուների գրասենյակներում: Աուդիտները կարող են անցկացվել նախքան տվյալ ֆինանսական տարվա համար հաշիվների փակումը և հաշվեկշռային մնացորդի վճարման օրվանից հետո հինգ տարվա կտրվածքով:

3. Եվրոպական հանձնաժողովի տեսուչները կամ Եվրոպական հանձնաժողովի կամ Աուդիտորների եվրոպական դատարանի կողմից լիազորված այլ անձինք կարող են անցկացնել փաստաթղթային կամ տեղում ստուգումներ և և աուդիտներ ԵՄ ֆինանսական միջոցների իրականացման գործընթացը կառավարող կամ դրան մասնակցող ցանկացած մարմնի և Հայաստանի Հանրապետությունում դրա ենթակապալառուների գրասենյակներում:

4. Եվրոպական հանձնաժողովի կամ Եվրոպական հանձնաժողովի կամ Աուդիտորների եվրոպական դատարանի կողմից լիազորված այլ անձանց համար պետք է պատշաճորեն ապահովվի տեղանքների, աշխատանքների ու փաստաթղթերի և այդ աուդիտներն անցկացնելու համար անհրաժեշտ ամբողջ տեղեկությունների հասանելիությունը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով: Այդ Հասանելիության իրավունքի մասին պետք է հաղորդվի Հայաստանի Հանրապետության բոլոր պետական կառույցներին և այն պետք է հստակ սահմանվի սույն Համաձայնագրում նշված միջոցառումներն իրականացնելու համար կնքված պայմանագրերում:

5. Իրենց գործառնությունները կատարելիս Աուդիտորների եվրոպական դատարանը և Հայաստանի Հանրապետության՝ աուդիտ իրականացնող մարմինները պետք է համագործակցեն վստահության ոգով՝ միևնույն ժամանակ պահպանելով իրենց անկախությունը:

ՀՈԴՎԱԾ 357

Տեղում իրականացվող ստուգումները

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակն իրավասու է տեղում իրականացնել ստուգումներ և տեսչական զննություններ՝ Եվրոպական միության ֆինանսական շահերը պաշտպանելու նպատակով:

2. Տեղում իրականացվող ստուգումները և տեսչական զննությունները պետք է նախապատրաստվեն և անցկացվեն Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի կողմից՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

3. Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է ժամանակին տեղեկացվեն ստուգումների և տեսչական զննությունների առարկայի, նպատակի և իրավական հիմքի մասին, որպեսզի կարողանան անհրաժեշտ աջակցություն տրամադրել: Այդ նպատակով, Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների պաշտոնատար անձինք իրավասու են մասնակցելու տեղում իրականացվող ստուգումներին և տեսչական զննություններին:

4. Եթե Հայաստանի Հանրապետության՝ շահագրգիռ իշխանությունները նման ցանկություն են հայտնում, ապա տեղում իրականացվող ստուգումները և տեսչական զննությունները կարող են անցկացվել համատեղ՝ Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի և իրենց կողմից:

5. Եթե տնտեսական օպերատորը խոչընդոտում է տեղում իրականացվող ստուգումը կամ տեսչական զննությունը, ապա Հայաստանի Հանրապետության իշխանությունները Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, այդ հարցում աջակցություն են տրամադրում Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին, քանի որ դա անհրաժեշտ է, որպեսզի վերջինս կարողանա կատարել իր պարտականությունը՝ տեղում ստուգում կամ տեսչական զննություն իրականացնելիս:

ՀՈԴՎԱԾ 358

Վարչական միջոցառումները և պատժամիջոցները

Եվրոպական հանձնաժողովի կողմից տնտեսական օպերատորների նկատմամբ կարող են սահմանվել վարչական միջոցառումներ և պատժամիջոցներ՝ Խորհրդի 1995 թվականի դեկտեմբերի 18-ի Եվրոպական համայնքների ֆինանսական շահերի պաշտպանության մասին թիվ 2988/95 կանոնակարգին (ԵՀ, Եվրատոմ), Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի Միության ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառելի ֆինանսական կանոնների մասին թիվ 966/2012 կանոնակարգին (ԵՀ, Եվրատոմ) և Հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի Միության ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառելի ֆինանսական կանոնների մասին թիվ 966/2012 կանոնակարգի կիրառման կանոնների մասին թիվ 1268/2012 պատվիրակված կանոնակարգին (ԵՄ) համապատասխան: Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից կարող են սահմանվել առաջին նախադասության մեջ նշված վարչական միջոցառումները և պատժամիջոցները լրացնող լրացուցիչ միջոցառումներ և պատժամիջոցներ՝ կիրառելի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Ֆինանսական միջոցների հետ վերադարձը

1. ԵՄ ֆինանսական միջոցների իրականացումը Հայաստանի Հանրապետության իշխանություններին վերապահվելու դեպքում Եվրոպական հանձնաժողովն իրավասու է հետ վերադարձնել անհարկի վճարված ԵՄ ֆինանսական միջոցները, մասնավորապես՝ ֆինանսական շտկումների միջոցով: Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է ձեռնարկեն ցանկացած համապատասխան միջոց՝ անհարկի վճարված ԵՄ ֆինանսական միջոցները հետ վերադարձնելու համար: Եվրոպական հանձնաժողովը պետք է հաշվի առնի տվյալ ԵՄ ֆինանսական միջոցների կորուստը կանխելուն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցները:
2. 1-ին պարբերության մեջ նշված դեպքերում Եվրոպական հանձնաժողովը նախքան հետ վերադարձի վերաբերյալ որևէ որոշում կայացնելը հարցի շուրջ պետք է խորհրդակցի Հայաստանի Հանրապետության հետ: Հետ վերադարձի վերաբերյալ վեճերը պետք է քննվեն Գործընկերության խորհրդում:
3. Սույն մասի դրույթները, որով ֆինանսական պարտավորություն է սահմանվում պետություններից բացի նաև անձանց նկատմամբ, ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետությունում՝ հետևյալ սկզբունքների համաձայն.
 - (a) կատարումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքացիական դատավարության նորմերով: Կատարման վերաբերյալ հրամանը, առանց կատարման վերաբերյալ որոշման իսկության հաստատումից բացի այլ ձևակերպության, տրվում է այն ազգային մարմնի կողմից, որին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը նշանակում է այդ նպատակով: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Եվրոպական հանձնաժողովին և Եվրոպական միության արդարադատության դատարանին տեղեկացնում է այդ ազգային մարմնի մասին:

- (b) (a) կետում նշված ընթացակարգերը Եվրոպական հանձնաժողովի պահանջով կատարելուց հետո Եվրոպական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան կարող է ընթացք տալ որոշման կատարմանը՝ հարցն ուղղակիորեն ներկայացնելով իրավասու մարմին.
- (c) կատարման վերաբերյալ որոշման օրինականությունը ենթակա է Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից հսկողության: Կատարումը կարող է կասեցվել միայն Եվրոպական միության արդարադատության դատարանի որոշմամբ: Եվրոպական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության իշխանություններին տեղեկացնում է կատարումը կասեցնելու վերաբերյալ Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից կայացված ցանկացած որոշման մասին: Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավասու են քննելու որոշումները սահմանված կարգի խախտմամբ կատարելու վերաբերյալ բողոքները:

4. Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից կայացված վճիռները, սույն գլխի շրջանակներում նախատեսված պայմանագրում սահմանված արբիտրաժային դրույթի համաձայն, ենթակա են կատարման նույն պայմաններով:

ՀՈՒՎԱԾ 360

Գաղտնիությունը

Սույն գլխով նախատեսված ցանկացած ձևով փոխանցված կամ ձեռք բերված տեղեկությունները դիտարկվում են որպես մասնագիտական գաղտնիք և պաշտպանվում են այնպես, ինչպես նմանատիպ տեղեկությունները պաշտպանվում են Հայաստանի Հանրապետության օրենքով և Եվրոպական միության կառույցների նկատմամբ կիրառելի համապատասխան դրույթներով: Այդպիսի տեղեկությունները չեն կարող փոխանցվել այլ անձանց, բացի Եվրոպական միության կառույցներում, անդամ պետություններում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող այնպիսի անձանցից, որոնք, իրենց գործառնություններից ելնելով, պետք է տեղյակ լինեն դրանց մասին, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել՝ Կողմերի ֆինանսական շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելուց բացի, այլ նպատակներով:

ՀՈԴՎԱԾ 361

Օրենսդրության մոտարկումը

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում XII Հավելվածում նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթների համաձայն:

ՄԱՍ VIII

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ

ՀՈԴՎԱԾ 362

Գործընկերության խորհուրդը

1. Սույնով ստեղծվում է Գործընկերության խորհուրդ: Այն վերահսկում և պարբերաբար դիտարկում է սույն Համաձայնագրի կիրարկումը:

2. Գործընկերության խորհուրդը բաղկացած է Կողմերի նախարարական մակարդակով ներկայացուցիչներից և հանդիպում է պարբերաբար՝ տարին առնվազն մեկ անգամ և երբ հանգամանքները պահանջում են: Գործընկերության խորհուրդը կարող է հանդիպել ցանկացած կազմով՝ փոխադարձ համաձայնությամբ:

3. Գործընկերության խորհուրդն ուսումնասիրում է սույն Համաձայնագրի շրջանակներում ծագած ցանկացած էական նշանակություն ունեցող հարց և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող երկկողմանի կամ միջազգային բնույթի այլ հարցեր՝ սույն Համաձայնագրի նպատակներն իրագործելու համար:

4. Գործընկերության խորհուրդը սահմանում է իր սեփական ընթացակարգը:

5. Գործընկերության խորհրդում հաջորդաբար նախագահում են Եվրոպական միության ներկայացուցիչը և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը:

6. Սույն Համաձայնագրի նպատակների իրագործման համար, սույն Համաձայնագրով սահմանված դեպքերում, Գործընկերության խորհուրդն ունի սույն Համաձայնագրի շրջանակներում որոշումներ ընդունելու լիազորություն: Որոշումները պարտադիր են Կողմերի համար, որոնք պետք է ձեռնարկեն դրանց կիրարկման համար պատշաճ միջոցներ: Գործընկերության խորհուրդը կարող է նաև ներկայացնել առաջարկություններ: Այն իր որոշումները և առաջարկություններն ընդունում է Կողմերի միջև համաձայնությամբ՝ պատշաճորեն պահպանելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման գործընթացը:

7. Գործընկերության խորհուրդը ծառայում է որպես Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության մշակման փուլում գտնվող և գործող օրենսդրության, ու դրանց կիրարկման, իրականացման ու համապատասխանության ապահովման միջոցների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման հարթակ:

8. Գործընկերության խորհուրդն ունի Հավելվածները թարմացնելու կամ փոփոխելու լիազորություն՝ չհակասելով սույն Համաձայնագրի VI մասով սահմանված հատուկ դրույթներին:

Գործընկերության կոմիտեն

1. Սույնով ստեղծվում է Գործընկերության կոմիտե: Այն աջակցում է Գործընկերության խորհրդին՝ դրա պարտականությունների և գործառույթների կատարման հարցում:
2. Գործընկերության կոմիտեն, կազմված է որպես կանոն, Կողմերի բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով ընտրված ներկայացուցիչներից:
3. Գործընկերության կոմիտեում հաջորդաբար նախագահում են Եվրոպական միության ներկայացուցիչը և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը:
4. Գործընկերության խորհուրդն իր ընթացակարգով սահմանում է Գործընկերության կոմիտեի պարտականությունները և գործառույթները, որի պատասխանատվությունը ներառում է Գործընկերության խորհրդի հանդիպումների նախապատրաստումը: Գործընկերության կոմիտեն հանդիպում է առնվազն տարեկան մեկ անգամ:
5. Գործընկերության խորհուրդը Գործընկերության կոմիտեին կարող է պատվիրակել իր ցանկացած լիազորություն, այդ թվում՝ կատարման համար պարտադիր որոշումներ ընդունելու լիազորությունը:
6. Գործընկերության կոմիտեն ունի որոշումներ ընդունելու լիազորություն այն ոլորտներում, որոնցում Գործընկերության խորհուրդն իր լիազորությունները պատվիրակել է նրան, ինչպես նաև՝ սույն Համաձայնագրով սահմանված դեպքերում: Այդ որոշումները պարտադիր են Կողմերի համար, որոնք պետք է ձեռնարկեն դրանց կիրարկման համար պատշաճ միջոցներ: Գործընկերության կոմիտեն իր որոշումներն ընդունում է Կողմերի միջև համաձայնությամբ՝ պատշաճորեն պահպանելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման գործընթացը:

7. Գործընկերության կոմիտեն հանդիպում է հատուկ կազմով VI մասին առնչվող խնդիրները քննարկելու նպատակով: Գործընկերության կոմիտեն այդ կազմով հանդիպում է առնվազն տարին մեկ անգամ:

ՀՈԴՎԱԾ 364

Ենթակոմիտեներ և այլ մարմիններ

1. Գործընկերության կոմիտեին աջակցում են սույն Համաձայնագրի շրջանակներում ստեղծված ենթակոմիտեները և մյուս մարմինները:
2. Գործընկերության խորհուրդը կարող է որոշում ընդունել՝ սույն Համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ ենթակոմիտեներ և այլ մարմիններ հատուկ ոլորտներում ստեղծելու մասին՝ սահմանելով դրանց կազմը, պարտականությունները և գործառույթները:
3. Ենթակոմիտեները Գործընկերության կոմիտեին պարբերաբար հաշվետվություն են ներկայացնում իրենց գործունեության մասին:
4. Որևէ ենթակոմիտեի գոյությունը չի խոչընդոտում Կողմերից որևէ մեկի կողմից ցանկացած հարց ուղղակիորեն Գործընկերության կոմիտե ներկայացնելը, այդ թվում՝ դրա առևտրային ձևաչափով հանդես գալու դեպքում:

Խորհրդարանական գործընկերության կոմիտեն

1. Սույնով ստեղծվում է Խորհրդարանական գործընկերության կոմիտե: Այն կազմված է մի կողմից՝ Եվրոպական խորհրդարանի անդամներից, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անդամներից, և նրանց համար ծառայում է հանդիպումների և կարծիքներ փոխանակելու հարթակ: Դրա հանդիպումներն անցկացվում են դրա կողմից սահմանված պարբերականությամբ:
2. Խորհրդարանական գործընկերության կոմիտեն սահմանում է իր ընթացակարգը:
3. Խորհրդարանական գործընկերության կոմիտեում հերթականությամբ նախագահում են, համապատասխանաբար, Եվրոպական խորհրդարանի ներկայացուցիչը և Հայաստանի Ազգային ժողովի ներկայացուցիչը՝ դրա ընթացակարգով սահմանվելիք դրույթների համաձայն:
4. Խորհրդարանական գործընկերության կոմիտեն կարող է սույն Համաձայնագրի կիրարկման մասին համապատասխան տեղեկություններ պահանջել Գործընկերության խորհրդից, որն այդ դեպքում Խորհրդարանական գործընկերության կոմիտեին է տրամադրում պահանջված տեղեկությունները:
5. Խորհրդարանական գործընկերության կոմիտեն տեղեկացվում է Գործընկերության խորհրդի որոշումների և առաջարկությունների մասին:
6. Խորհրդարանական գործընկերության կոմիտեն կարող է առաջարկություններ ներկայացնել Գործընկերության խորհուրդ:
7. Խորհրդարանական գործընկերության կոմիտեն կարող է ստեղծել խորհրդարանական գործընկերության ենթակոմիտեներ:

Քաղաքացիական հասարակության հարթակ

1. Կողմերը խթանում են իրենց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների պարբերաբար հանդիպումները՝ սույն Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ նրանց տեղեկացված պահելու և նրանց համապատասխան ներդրումն ապահովելու նպատակով:
2. Սույնով ստեղծվում է Քաղաքացիական հասարակության հարթակ: Այն կլինի հանդիպումների և կարծիքների փոխանակման հարթակ և կազմված կլինի Եվրոպական միության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի անդամներից, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ցանցերի և հարթակների, այդ թվում՝ Արևելյան գործընկերության ազգային հարթակի ներկայացուցիչներից: Դրա հանդիպումներն անցկացվում են դրա կողմից սահմանված պարբերականությամբ:
3. Քաղաքացիական հասարակության հարթակը սահմանում է իր ընթացակարգը: Այդ ընթացակարգը, *inter alia*, ներառում է թափանցիկության, ներառականության և ռոտացիայի սկզբունքները:
4. Քաղաքացիական հասարակության հարթակում հաջորդաբար նախագահում են, համապատասխանաբար, Եվրոպական միության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը՝ դրա ընթացակարգով սահմանվելիք դրույթների համաձայն:
5. Քաղաքացիական հասարակության հարթակը տեղեկացվում է Գործընկերության խորհրդի որոշումների և առաջարկությունների մասին:

6. Քաղաքացիական հասարակության հարթակը կարող է առաջարկություններ ներկայացնել Գործընկերության խորհուրդ, Գործընկերության կոմիտե և Խորհրդարանական գործընկերության կոմիտե:

7. Գործընկերության կոմիտեն և Խորհրդարանական գործընկերության կոմիտեն կազմակերպում են կանոնավոր շփումներ Քաղաքացիական հասարակության հարթակի ներկայացուցիչների հետ՝ սույն Համաձայնագրի նպատակների իրագործման մասին նրանց կարծիքներն ստանալու նպատակով:

ԳԼՈՒԽ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 367

Դատարանների և վարչական մարմինների մատչելիությունը

Սույն Համաձայնագրի շրջանակներում, յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ապահովել, որ մյուս Կողմի ֆիզիկական և իրավաբանական անձինք ունենան իրենց անձնական և գույքային իրավունքների պաշտպանության նպատակով իր իրավասու դատարաններ և վարչական մարմիններ դիմելու իրավունք՝ առանց խտրականության՝ իր քաղաքացիների համեմատ:

Անվտանգությանն առնչվող բացառությունները

Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ՝

- (a) Կողմերից որևէ մեկից պահանջվի ներկայացնել ցանկացած այնպիսի տեղեկություն, որի հրապարակումը դրա կողմից կհամարվի իր անվտանգության էական շահերին հակասող.
- (b) Կողմերից որևէ մեկին խոչընդոտի ձեռնարկել ցանկացած այնպիսի գործողություն, որն այն կհամարի անհրաժեշտ՝ ելնելով իր անվտանգության էական շահերի պաշտպանությունից, որը՝
 - (i) կապված է զենքի, զինամթերքի կամ ռազմական գույքի արտադրության կամ առևտրի հետ,
 - (ii) վերաբերում է ռազմական հաստատության մատակարարման նպատակով ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացված տնտեսական գործունեությանը,
 - (iii) վերաբերում է տրոհվող և ջերմամիջուկային նյութերին կամ այն նյութերին, որոնցից պատրաստվել են դրանք, կամ
 - (iv) ձեռնարկվել է պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակում.
- (c) Կողմերից որևէ մեկին խոչընդոտի ձեռնարկել ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված իր պարտավորությունների կատարմանն ուղղված ցանկացած գործողություն՝ խաղաղության ու միջազգային անվտանգության ապահովման համար:

Հոդված 369

Խտրականության բացառում

1. Սույն Համաձայնագրով կարգավորվող ոլորտներում և չհակասելով դրանում պարունակվող որևէ հատուկ դրույթի՝
 - (a) Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական միության կամ դրա անդամ պետությունների մասով կիրառվող կարգավորումները չեն առաջացնում որևէ խտրականություն անդամ պետությունների կամ դրանց ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև, և
 - (b) Եվրոպական միության կամ դրա անդամ պետությունների կողմից Հայաստանի Հանրապետության մասով կիրառվող կարգավորումները չեն առաջացնում որևէ խտրականություն Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև:
2. 1-ին պարբերությունը չի հակասում հարկաբյուջետային օրենսդրության համապատասխան դրույթները բնակչության վայրի հիմքով համանման իրավիճակում չգտնվող հարկատուների նկատմամբ կիրառելու Կողմերի իրավունքին:

ՀՈԴՎԱԾ 370

Աստիճանական մոտարկումը

Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության աստիճանական մոտարկում ԵՄ օրենսդրությանը՝ ինչպես նշված է Հավելվածներում՝ հիմք ընդունելով սույն Համաձայնագրով նախատեսված հանձնառությունները, և այդ Հավելվածների դրույթների համաձայն: Սույն հոդվածը չի հակասում VI մասով նախատեսված որևէ հատուկ դրույթի:

ՀՈԴՎԱԾ 371

Դինամիկ մոտարկումը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը աստիճանական մոտարկման նպատակին համահունչ՝ Գործընկերության խորհուրդը պարբերաբար դիտարկում և թարմացնում է սույն Համաձայնագրի հավելվածները, *inter alia*, ԵՄ օրենսդրության զարգացումը և Կողմերի կողմից պատշաճ համարվող միջազգային փաստաթղթերով սահմանված կիրառելի ստանդարտներն արտացոլելու նպատակով՝ հաշվի առնելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարումը: Սույն հոդվածը չի հակասում VI մասով սահմանված որևէ հատուկ դրույթի:

Մոտարկման գործընթացի մոնիթորինգը և գնահատումը

1. Մոնիթորինգ նշանակում է սույն Համաձայնագրով կարգավորվող միջոցների կիրարկման և իրականացման հարցում գրանցված առաջընթացի շարունակական գնահատում: Կողմերը համագործակցում են սույն Համաձայնագրով ստեղծված ինստիտուցիոնալ մարմինների շրջանակներում:

2. Եվրոպական միությունը գնահատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկելու գործընթացը՝ սույն Համաձայնագրով սահմանված կարգով: Այդ գնահատումը ներառում է կիրարկման և իրականացման ասպեկտները: Այդ գնահատումները կարող են իրականացվել Եվրոպական միության կողմից առանձին կամ Հայաստանի Հանրապետության հետ համաձայնությամբ: Գնահատման գործընթացը դյուրացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական միությունը հաշվետվություն է ներկայացնում մոտարկման գործընթացում գրանցված առաջընթացի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում՝ նախքան սույն Համաձայնագրով սահմանված անցումային ժամանակահատվածի ավարտը: Հաշվետվության ներկայացման և գնահատման գործընթացները, այդ թվում՝ գնահատման մեթոդները և հաճախականությունը, պետք է հաշվի առնեն սույն Համաձայնագրով սահմանված հատուկ մեթոդները կամ սույն Համաձայնագրով ստեղծված ինստիտուցիոնալ մարմինների որոշումները:

3. Մոտարկման գործընթացի գնահատումը կարող է, անհրաժեշտության դեպքում, ներառել տեղում իրականացվող առաքելություններ՝ Եվրոպական միության հաստատությունների, մարմինների և գործակալությունների, հասարակական կառույցների, վերահսկիչ մարմինների, անկախ փորձագետների և այլոց մասնակցությամբ:

ՀՈԴՎԱԾ 373

Մոնիթորինգի, այդ թվում՝ մոտարկման գործընթացի գնահատման արդյունքները

1. 372-րդ հոդվածում նշված մոնիթորինգի հետ կապված գործողությունների, այդ թվում՝ մոտարկման գործընթացի գնահատման արդյունքները քննարկվում են սույն Համաձայնագրի շրջանակներում ստեղծված համապատասխան մարմիններում: Այդ մարմինները կարող են ընդունել համատեղ առաջարկություններ, որոնք ներկայացվում են Գործընկերության խորհուրդ:

2. Եթե Կողմերը համաձայնում են VI մասով կարգավորվող անհրաժեշտ միջոցները կիրարկված լինելու և տվյալ պահին իրականացվելու շուրջ, ապա Գործընկերության խորհուրդը, 319-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ և 335-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, որոշում է ընդունում շուկայի հետագա բացման վերաբերյալ՝ VI մասով նախատեսված դեպքերում:

3. 1-ին պարբերության համաձայն՝ Գործընկերության խորհուրդ ներկայացված համատեղ առաջարկության կամ նման առաջարկություն չընդունելու վրա չի տարածվում VI մասով սահմանված վեճերի լուծման գործընթացը: Աշխարհագրական նշումների հարցերով ենթակումիտեի կողմից ընդունված որոշման կամ որոշում չընդունելու վրա չի տարածվում VI մասով սահմանված վեճերի լուծման գործընթացը:

ՀՈԴՎԱԾ 374

Սահմանափակումները վճարային հաշվեկշռի և արտաքին ֆինանսական դժվարությունների դեպքում

1. Որևէ Կողմի մոտ վճարային հաշվեկշռի հետ կապված կամ արտաքին ֆինանսական լուրջ դժվարությունների առկայության կամ դրանց առաջացման վտանգի դեպքում, տվյալ Կողմը կարող է սահմանել կամ պահպանել այնպիսի պաշտպանական կամ սահմանափակող միջոցներ, որոնք ազդում են կապիտալի, վճարումների կամ տրանսֆերտների շարժի վրա:

2. 1-ին պարբերության մեջ նշված միջոցները`
 - (a) համանման իրավիճակում որևէ Կողմի համար չպետք է սահմանեն նվազ նպաստավոր պայմաններ, քան Կողմ չհանդիսացող սուբյեկտի համար.
 - (b) պետք է, կիրառելի լինելու դեպքում, համահունչ լինեն 1944 թվականի Միջազգային արժույթային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին.
 - (c) պետք է խուսափեն մյուս Կողմի առևտրային, տնտեսական և ֆինանսական շահերին անհիմն վնաս պատճառելուց.
 - (d) պետք է լինեն ժամանակավոր և աստիճանաբար վերացվեն 1-ին պարբերության մեջ նշված իրավիճակի բարելավման հետ մեկտեղ:
3. Ապրանքների առևտրի դեպքում Կողմը կարող է սահմանել կամ պահպանել սահմանափակող միջոցներ` իր վճարային հաշվեկշիռը կամ արտաքին ֆինանսական դիրքը պաշտպանելու համար: Նման միջոցները պետք է համապատասխանեն ՍԱԳՀ 1994թ.-ի և ՍԱԳՀ 1994թ.-ի Վճարային հաշվեկշռի դրույթների մասին համաձայնությանը:
4. Ծառայությունների առևտրի դեպքում Կողմը կարող է սահմանել սահմանափակող միջոցներ` իր վճարային հաշվեկշիռը կամ արտաքին ֆինանսական դիրքը պաշտպանելու նպատակով: Նման միջոցները պետք է համապատասխանեն ԾԱԳՀ-ին:
5. 1-ին պարբերության մեջ նշված սահմանափակող միջոցներ պահպանող կամ սահմանած ցանկացած Կողմ անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմին դրանց մասին, և հնարավորինս շուտ դրանց վերացման վերաբերյալ ժամանակացույց է ներկայացնում:

6. Սույն հոդվածի համաձայն սահմանափակումներ սահմանվելու կամ պահպանվելու դեպքում, Գործընկերության կոմիտեում անհապաղ անցկացվում են խորհրդակցություններ, եթե նման խորհրդակցություններ այլ կերպ չեն անցկացվում սույն Համաձայնագրի շրջանակներից դուրս:

7. Խորհրդակցությունների շրջանակներում գնահատվում են՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելուն հանգեցրած՝ վճարային հաշվեկշռի հետ կապված կամ արտաքին ֆինանսական դժվարությունները՝ հաշվի առնելով, *inter alia*, այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- (a) դժվարությունների բնույթը և աստիճանը,
- (b) արտաքին տնտեսական և առևտրային միջավայրը, կամ
- (c) այլընտրանքային ուղղիչ միջոցները, որոնք կարող են հասանելի լինել:

8. Խորհրդակցությունների շրջանակներում քննարկվում է ցանկացած սահմանափակող միջոցի համապատասխանությունը 1-ին և 2-րդ պարբերություններին:

9. Նման խորհրդակցությունների ժամանակ Կողմերը պետք է ընդունեն Միջազգային արժութային հիմնադրամի կողմից ներկայացված՝ արտարժույթի, դրամային պահուստների և վճարային հաշվեկշռի հետ կապված բոլոր վիճակագրական գնահատականները և այլ փաստեր, իսկ եզրակացությունները պետք է հիմնված լինեն Միջազգային արժութային հիմնադրամի կողմից համապատասխան Կողմի վճարային հաշվեկշռի և արտաքին ֆինանսական դիրքի գնահատման վրա:

ՀՌԴՎԱԾ 375

Հարկումը

1. Սույն Համաձայնագիրը հարկման միջոցների նկատմամբ կիրառվում է միայն այնքանով, որքանով այդ կիրառումն անհրաժեշտ է սույն Համաձայնագրի դրույթներն իրականացնելու համար:
2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի մեկնաբանվում այնպես, որ խոչընդոտի հարկերից խուսափելու կամ դրանք շրջանցելու դեպքերը կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերով, այլ հարկային կարգավորումներով կամ ներպետական հարկաբյուջետային օրենսդրությամբ նախատեսված հարկային դրույթների համաձայն կանխարգելելուն ուղղված ցանկացած միջոց սահմանելը կամ իրականացնելը:

ՀՌԴՎԱԾ 376

Պատվիրակված լիազորությունը

Սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ցանկացած անձ, այդ թվում՝ պետական ձեռնարկություն, ձեռնարկություն, որին շնորհվել են հատուկ իրավունքներ կամ արտոնություններ կամ մենաշնորհի կարգավիճակ ստացած ձեռնարկություն, որին կառավարական որևէ մակարդակում Կողմը պատվիրակել է կանոնակարգող, վարչական կամ այլ կառավարական լիազորություն, գործի սույն Համաձայնագրով սահմանված՝ Կողմի՝ այդ լիազորության իրականացմանն ուղղված պարտավորությունների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 377

Պարտավորությունների կատարումը

1. Կողմերը պետք է ձեռնարկեն պահանջվող ցանկացած միջոց՝ սույն Համաձայնագրով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու համար: Նրանք պետք է ապահովեն սույն Համաձայնագրով սահմանված նպատակների իրագործումը:
2. Կողմերը համաձայնում են, ցանկացած Կողմի պահանջով, պատշաճ ուղիներով անհապաղ անցկացնել խորհրդակցություն՝ սույն Համաձայնագրի մեկնաբանությանը կամ կիրարկմանը և Կողմերի միջև հարաբերությունների այլ համապատասխան ասպեկտների վերաբերող ցանկացած հարց քննարկելու համար:
3. Յուրաքանչյուր Կողմ, սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրարկման վերաբերյալ ցանկացած վեճ հանձնում է Գործընկերության խորհրդի քննությանը՝ 378-րդ հոդվածի համաձայն:
4. Գործընկերության խորհուրդը կարող է լուծել վեճը կատարման համար պարտադիր որոշում ընդունելու միջոցով՝ 378-րդ հոդվածի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 378

Վեճերի լուծումը

1. Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրարկման հետ կապված վեճ ծագելու դեպքում, ցանկացած Կողմ մյուս Կողմին և Գործընկերության խորհրդին ներկայացնում է պաշտոնական պահանջ՝ վեճի առարկա հարցը լուծելու համար: Շեղում կատարելով սահմանվածից՝ VI մասի մեկնաբանման կամ կիրարկման վերաբերյալ վեճերը բացառապես կարգավորվում են VI մասի 13-րդ գլխով:
2. Կողմերը պետք է ձգտեն լուծել վեճը՝ բարեխղճորեն խորհրդակցություններ անցկացնելով Գործընկերության խորհրդում՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածում փոխադարձաբար ընդունելի լուծման հասնելու համար:
3. Վեճի վերաբերյալ խորհրդակցությունները կարող են անցկացվել նաև Գործընկերության կոմիտեի կամ 364-րդ հոդվածով նախատեսված որևէ այլ համապատասխան մարմնի ցանկացած հանդիպման ժամանակ՝ Կողմերի միջև համաձայնությամբ կամ Կողմերից յուրաքանչյուրի պահանջով: Խորհրդակցությունները կարող են անցկացվել նաև գրավոր:
4. Կողմերը Գործընկերության խորհրդին, Գործընկերության կոմիտեին կամ որևէ այլ համապատասխան ենթակոմիտեների կամ մարմինների տրամադրում են իրավիճակի մանրամասն ուսումնասիրության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

5. Վեճը համարվում է լուծված այն դեպքում, երբ Գործընկերության խորհուրդը, 377-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն ընդունում է կատարման համար պարտադիր որոշում՝ վեճի առարկա հարցը լուծելու համար, կամ երբ հայտարարում է, որ վեճը լուծվել է և ավարտվել:

6. Խորհրդակցությունների ժամանակ հրապարակված բոլոր տեղեկությունները պետք է գաղտնի պահվեն:

ՀՈՒՎԱԾ 379

Պարտավորությունները չկատարելու դեպքում համապատասխան միջոցները

1. Կողմը կարող է ձեռնարկել համապատասխան միջոցներ, եթե վիճարկվող հարցը չի լուծվում՝ 378-րդ հոդվածի համաձայն վեճի լուծման պաշտոնական պահանջի մասին ծանուցելուց հետո երեք ամսվա ընթացքում, և եթե բողոքարկող Կողմը շարունակում է համարել, որ մյուս Կողմը չի կատարել սույն Համաձայնագրով նախատեսված համապատասխան պարտավորությունը: Խորհրդակցության անցկացման համար նախատեսված եռամսյա ժամկետի վերաբերյալ պահանջը չի կիրառվում սույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված բացառիկ դեպքերի վրա:

2. Համապատասխան միջոցներ ընտրելիս նախապատվությունը տրվում է այն միջոցներին, որոնք նվազագույն չափով են խաթարում սույն Համաձայնագրի գործողությունը: Բացառությամբ սույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված դեպքերի՝ նման միջոցները չեն կարող ներառել սույն Համաձայնագրի դրույթներով նախատեսված՝ VI մասով սահմանված իրավունքների կամ պարտավորությունների կասեցումը: Սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված միջոցների մասին պետք է անհապաղ տեղեկացնել Գործընկերության խորհրդին, և դրանք պետք է, 377-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, հանդիսանան խորհրդակցությունների առարկա և 378-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ վեճի լուծման առարկա:

3. 1-ին և 2-րդ պարբերություններով նախատեսված բացառությունները վերաբերում են՝

- (a) սույն Համաձայնագիրը միջազգային իրավունքի ընդհանուր կանոններով չթույլատրվող ձևով դադարեցնելուն, կամ
- (b) մյուս Կողմի կողմից սույն Համաձայնագրի՝ 2-րդ հոդվածի 1-ին պարբերության և 9-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված ցանկացած էական պայման խախտելուն:

ՀՈԴՎԱԾ 380

Կապն այլ համաձայնագրերի հետ

1. Սույն Համաձայնագիրը փոխարինում է ԳՀՀ-ն: Կողմերի միջև կնքված բոլոր այլ համաձայնագրերում ԳՀՀ-ին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն Համաձայնագրին կատարվող հղում:

2. Մինչև սույն Համաձայնագրի շրջանակներում չապահովվեն հավասար իրավունքներ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, սույն Համաձայնագիրը չի ազդի այն իրավունքների վրա, որոնք վերապահվել են նրանց՝ մի կողմից՝ մեկ կամ մի քանի անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության համար պարտադիր՝ գործող համաձայնագրերով:

3. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության կոնկրետ ոլորտներին վերաբերող՝ գործող համաձայնագրերը դիտվում են սույն Համաձայնագրով կարգավորվող ամբողջական երկկողմ հարաբերությունների մաս և ընդհանուր ինստիտուցիոնալ շրջանակի մասն են կազմում:

4. Կողմերը կարող են լրացնել սույն Համաձայնագիրը՝ կնքելով հատուկ համաձայնագրեր վերջինիս շրջանակներում գտնվող ցանկացած ոլորտում: Նման հատուկ համաձայնագրերը սույն Համաձայնագրով կարգավորվող ամբողջական երկկողմ հարաբերությունների անբաժանելի մասն են և ընդհանուր ինստիտուցիոնալ շրջանակի մասն են կազմում:

5. Չհակասելով «Եվրոպական միության մասին» պայմանագրի և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի համապատասխան դրույթներին՝ ո՛չ սույն Համաձայնագիրը, ո՛չ էլ դրա շրջանակներում ձեռնարկված գործողությունները որևէ ձևով չեն ազդում անդամ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության հետ երկկողմանի համագործակցության գործողություններ նախաձեռնելու կամ, անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության նոր համաձայնագրեր կնքելու իրավասության վրա:

ՀՈԴՎԱԾ 381

Գործողության ժամկետ

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:
2. Ցանկացած Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է նման ծանուցում ստանալու օրվանից 6 ամիս հետո:

ՀՈՒՎԱԾ 382

Կողմերի սահմանումը

Սույն Համաձայնագրի նպատակներով՝ «Կողմեր» եզրույթը նշանակում է մի կողմից՝ Եվրոպական միությունը կամ դրա անդամ պետությունները, կամ՝ Եվրոպական միությունը և դրա անդամ պետությունները՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրով և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրով դրանց վերապահված համապատասխան իրավասությունների համաձայն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն վերաբերում է նաև Եվրատոմին՝ Ատոմային էներգիայի եվրոպական համայնքը հիմնադրող պայմանագրով սահմանված իր լիազորությունների համաձայն, և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը:

ՀՈՒՎԱԾ 383

Տարածքային կիրառություն

Սույն Համաձայնագիրը կիրառվում է, մի կողմից՝ այն տարածքներում, որտեղ կիրառվում են «Եվրոպական միության մասին» պայմանագիրը, «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքը հիմնադրող պայմանագիրը և այդ պայմանագրերով սահմանված պայմաններով, և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՀՈՒՎԱԾ 384

Համաձայնագրի ավանդապահը

Եվրոպական միության խորհրդի Գլխավոր քարտուղարությունը սույն Համաձայնագրի ավանդապահն է:

ՀՈՒՎԱԾ 385

Ուժի մեջ մտնելը, եզրափակիչ դրույթները և ժամանակավոր կիրառումը

1. Կողմերը վավերացնում կամ հաստատում են սույն Համաձայնագիրը՝ իրենց ընթացակարգերին համապատասխան: Վավերացման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման կամ հաստատման մասին վերջին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:
3. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել գրավոր ձևով՝ Կողմերի ընդհանուր համաձայնությամբ: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում՝ սույն հոդվածի դրույթների համաձայն:
4. Սույն Համաձայնագրի հավելվածները, արձանագրությունները և հայտարարությունը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:
5. Չնայած 2-րդ պարբերությանը՝ Եվրոպական միությունը և Հայաստանի Հանրապետությունը կարող են ժամանակավորապես կիրառել սույն Համաձայնագիրն ամբողջությամբ կամ մասամբ՝ իրենց համապատասխան ներքին ընթացակարգերի համաձայն՝ ըստ կիրառելիության:

6. Ժամանակավոր կիրառումն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից հետևյալն ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը՝

(a) Եվրոպական միության ծանուցումը՝ այդ նպատակի համար անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին՝ սույն Համաձայնագրի այն մասերի մատնանշմամբ, որոնք պետք է կիրառվեն ժամանակավորապես, և

(b) Հայաստանի Հանրապետության՝ իր ներպետական ընթացակարգերի համաձայն ի պահ հանձնված վավերացման մասին փաստաթուղթը:

7. Սույն Համաձայնագրի համապատասխան դրույթների, այդ թվում՝ դրա հավելվածների և արձանագրությունների նպատակով՝ նման դրույթներում «սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան» կատարված ցանկացած հղում ենթադրում է «այն օրը, որից սկսած սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է»՝ 5-րդ պարբերության համաձայն:

8. Ժամանակավոր կիրառման ժամանակահատվածում ԳՀՀ-ի դրույթները շարունակում են գործել այնքանով, որքանով դրանց վրա չի տարածվում սույն Համաձայնագրի ժամանակավոր կիրառումը:

9. Ցանկացած Կողմ կարող է ավանդապահին ներկայացնել գրավոր ծանուցում՝ սույն Համաձայնագրի ժամանակավոր կիրառումը դադարեցնելու մասին: Ժամանակավոր կիրառումը դադարեցնելն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից ծանուցումն ստանալուց վեց ամիս հետո:

ՀՈՂՎԱԾ 386

Նույնական տեքստերը

Սույն Համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ հայերեն և բուլղարերեն, խորվաթերեն, չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իտալերեն, լատիշերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովակերեն, սլովեններեն, իսպաներեն, շվեդերեն. բոլոր տեքստերը հավասարազոր են:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ, ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը: